

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԱՏԼԱՍ

ՊՐԱԿ 4

ԵՐԵՎԱՆ
2016

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԱՏԼԱՍ

ՊՐԱԿ 4

Ժողովածուն նվիրվում է Հայոց ցեղասպանության
100-րդ տարելիցին



«Աստղիկ» հրատարակչություն

Երևան 2016

ՀՏԴ 811.19'282.2

ԳՄԴ 81.2Հ-67

Հ 249

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Գիրքը հրատարակության է երաշխավորել
ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհուրդը

Պատասխանատու խմբագիրներ՝
Վ.Լ. Կատվայան, Ա.Ա. Աբրահամյան

Գրախոս՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Լ.Շ. Հովհաննիսյան

Հայերենի բարբառագիտական ատլաս (ուսումնասիրու-
թյուններ և նյութեր), պրակ 4: – Ե., «Ասողիկ» հրատ., 2016,
146 էջ:

Ժողովածուում տեղ են գտել հայերենի բարբառների արև-
մտյան խմբակցության՝ եղեռնագարկ մի շարք բարբառային
միավորներին (Ակնի, Ռոդոսթոյի, Տավորիկ-Մոտկանի բար-
բառներ, Եվդոկիայի միջբարբառ, Նիկոմեդիայի, Դերիկի խոս-
վածքներ) նվիրված ուսումնասիրություններ:

Գիրքը կարող է օգտակար լինել բանասերներին, արև-
մտահայ բարբառների ուսումնասիրությամբ զբաղվող մասնա-
գետներին, ուսանողներին:

ՀՏԴ 811.19'282.2

ԳՄԴ 81.2Հ-67

ISBN 978-9939-50-356-1

© ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2016

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայոց ցեղասպանության հետևանքով հայ ժողովուրդը ոչ միայն ունեցավ մարդկային անդառնալի կորուստներ, այլև զրկվեց իր պատմական հայրենիքի մեծագույն մասից, դարերի ընթացքում իր բնօրրանում ստեղծած նյութական ու հոգևոր մշակութային բազմաթիվ արժեքներից:

Ծանրագույն կորուստներ կրեց նաև հայոց լեզուն:

XIX դարում և XX դ. սկզբներին հայերենը ներկայանում էր աշխարհաբարի գրական երկու՝ արևելահայ ու արևմտահայ ճյուղերով և մոտ չորս տասնյակ բարբառներով¹: Իր զանազան դրսևորումներով բարբառային հայերենը գործառում էր ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: 1911 թ. Հ.Աճառյանը իր «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ վկայում է. «Հայութեան մեծագույն մասը դեռ այսօր ալ կը գտնուի իր հայրենիքին մէջ. բայց իր հայրենիքէն դուրս տարածուած է նաև բազմաթիւ ուրիշ երկիրներու մէջ...»²: Օսմանյան կայսրությունում հայությունը թե՛ բուն հայկական տարածքներում, թե՛ այլ վայրերում ենթարկվում էր մշտական հալածանքների, կոտորածների, կրոնափոխության ու ուժացման: Արևմտահայության մշակութային ու լեզվական կենտրոն Պոլիսում, ըստ Հ.Աճառյանի, համիդյան կոտորածներից առաջ կար 250 հազար հայ բնակչություն, իսկ 1911 թ. այդտեղ բնակվում էր ընդամենը 180 հազար հայ³: Այդ պայմաններում աստիճանաբար սահմանափակվում էին հայերենի գործառության հնարավորությունները: Թե՛ Արևմտյան Հայաստանում և թե՛ Փոքր Ասիայի հայաբնակ վայրերում հայերենի գործառության պայմանների մասին ահա թե ինչ է գրում ֆրանսիացի նշանավոր լեզվաբան Ա.Մեյեն. «Թուրքերենը գրեթե ամենուրեք տիրող լեզու է կամ գոնե՛ հայերենի հաւասար կարևոր, մանաւանդ այժմ՝ Համիդեան վարչութեան կոտորածներից և մշտական ճնշումներից

¹ Տե՛ս **Աճառյան Հ.**, *Հայոց լեզվի պատմություն*, հ. 2, Եր., 2013, էջ 436:

² **Աճառեան Հ.**, *Հայ բարբառագիտություն* (=Էմիլենեան ազգագրական ժողովա՝
ծու, հ. Ը), Մոսկուա-Նոր-Նախիջեւան, 1911, էջ 25:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 29:

յետոյ»⁴: Նման իրավիճակում դեռևս նախքան եղեռնը հայության թուրքահպատակ շատ հատվածներ արդեն կորցրել էին մայրենի լեզուն և դարձել թուրքախոս: «Միջերկրականի ծովեզերքները գտնուած բոլոր հայերը տաճկախօս են: ...Փոքր Հայոց մէջ Նիքսար Եւոկլիոյ հիւսիսային արևելեան կողմը, որ թրքախօս հայոց կղզեակ մը կը ներկայացնէ և արդիւնք է տեղացի բազմաթիւ թուրք տարրին զազանային բարբարոսութեան: ...Թրքախօս հայոց շրջան մ' է նմանապէս Եւրոպական Թուրքիա, Պուլղարիա և Արևելեան Ռումելի՝ սկսեալ Մարմարայի միւս երեսէն»⁵:

Հայոց ցեղասպանության հետևանքով նահատակված միլիոնավոր հայերի հետ զոհ գնաց նաև նրանց շուրթերից հնչող տարատեսակ հայերենը, Արևմտյան Հայաստանն ու Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերը ոչ միայն հայաթափվեցին, այլև հայերենագրկվեցին:

Գրական արևմտահայերենը, ծվեն-ծվեն եղած, սփռվեց աշխարհով մեկ և արդեն մեկ դարից ավելի զրկված է միասնական գործառույթյան ու զարգացման հնարավորությունից, բարձրագույն կրթության, գիտության լեզվի իր դերից: Իսպառ անհետացան բանավոր զարգացման դարերի ճամփա անցած, ժողովրդական իմաստնությունն ու հիշողություն ամբարած, հնչունաքերական ու բառապաշարային յուրահատուկ կազմություն ունեցող տասնյակ հայ բարբառներ, բարբառային հայերենի համակարգային դրսևորումներ: Հ.Աճառյանը հայոց ցեղասպանությունից առաջ Օսմանյան կայսրության տարածքում (ներառյալ նաև Արևմտյան Հայաստանն ու Կիլիկիան) առանձնացնում էր հայերենի արևմտյան կամ Կը ճյուղի հետևյալ բարբառները. Կարևո, Խոտրջուրի, Մշո, Վանի, Տիգրանակերտի, Խարբերդի և Երզնկայի, Շապին-Գարահիսարի, Տրապիզոնի, Համշենի, Մալաթիայի, Կիլիկիայի, Սյուրիայի, Արաբկիրի, Ակնա, Մեբաստիայի, Եվրոկիայի, Ամասիայի, Օրդուի, Ջմյունիայի, Նիկոմեդիայի, Պուլսի և Ռոտոսոթյոյի⁶: Եղեռնի հետևանքով ներկայումս այս բարբառները (թերևս

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ XI (ըստ՝ **Meillet A.**, *H.Adjarian, Classification des dialectes arméniens.* - Journal Asiatique, Paris, 1909, mai-juin, էջ 558-560):

⁵ **Աճառյան Հ.**, *Հայ բարբառագիտություն*, էջ 31:

⁶ Տե՛ս **Աճառյան Հ.**, *Հայոց լեզվի պատմություն*, հ. 2, էջ 337-356: Հետագայում ուումնասիրողները կատարել են բարբառային միավորների որոշ ճշգրտումներ: Այսպես ըստ Գ.Ջահուկյանի՝ հայ բարբառների արևմտյան

բացառությամբ Պոլսի և Քեսաբի բարբառների, Վազրֆ գյուղի խոսվածքի⁷⁾ այլևս իրենց բնօրրանում չեն գործառում: Ավելին, սրանցից միայն փոքր քանակությունն է, որ շարունակում է գործառել որևէ տարածքում իբրև կենդանի հաղորդակցման միջոց: Եղեռնից փրկված և այլ տարածքում ապաստան գտած բարբառային միավորներն են Կարնո, Մշո, Սասունի, Դիադինի, Համշենի և Բայազետի բարբառները: Փաստորեն, կորստից հիմնականում փրկվել են արևմտահայ այն բարբառները, որոնք նախքան Մեծ եղեռնը տեղի ունեցած բռնագաղթերի հետևանքով սկսել էին գործառել նաև Արևելյան Հայաստանում ու Կովկասում:

Արևմտյան մնացած բարբառները այլևս գոյություն չունեն, չեն գործառում իբրև լեզվական համակարգ, հաղորդակցման միջոց: Բարբառային շատ միավորներ բնաջնջվեցին իրենց կրողների հետ միասին, անհետացան նաև հայության սպանդից փրկված բեկորների բռնի կրոնավորխության և ուժացման հետևանքով: Եղեռնից մազապուրծ եղած հայության զանգվածները իրենց բարբառային խոսքը տարան ինչպես Արևելյան Հայաստան, այնպես էլ այլ երկրներ: Աշխարհի այս կամ այն կետում թերևս դեռ կարելի է գտնել տարեցներ, ավանդապահ առանձին ընտանիքներ, որոնք պահպանել են իրենց նախնիների բնիկ խոսքի հիշողությունը կամ պատառիկներ այդ խոսքից, սակայն բնօրրանից, կենսական պայմաններից զրկված արևմտյան բարբառային խոսքը, հատվածաբար սփռվելով օտար ափերում, սերնդից սերունդ մոռացության է մատնվել ու մատնվում է այլախոս (նաև հայախոս այլաբարբառ) միջավայրերում:

խմբակցության մեջ են նաև Միվրիհիսարի, Կյուրինի, Մյուլոզի, Կեսարիայի, Ասլանբեկի, Տավրոիկ-Մոտկանի, Սասունի, Դիադինի բարբառները, Կիլիկիայի դիմաց առանձնացված են Հաջրնի և Մարաշ-Ձեյթունի բարբառները, Մյուրիայի դիմաց՝ Քեսաբ-Սվեդիայի և Բեյլանի բարբառները, իսկ Զմյուռնիայի, Նիկոմեդիայի, Ռոդոսյոյի, Օրդուի, Տրապիզոնի բարբառները ընդգրկված են Պոլսի միջբարբառի մեջ և այլն: Սակայն բոլոր դեպքերում խոսքը տարածական նույն ընդգրկման բարբառային հայերենի մասին է (**Ձառուկյան Գ.**, *Հայ բարբառագիտության ներածություն*, Եր., 1972, էջ 132-135):

⁷⁾ Պոլսի բարբառի ներկա գործառության վերաբերյալ հավաստի տեղեկություններ չունենք: Քեսաբի բարբառը գործառում է Միրիայի Քեսաբի շրջանում (Տե՛ս **Չոլաքեան Յակոբ**, Քեսապի բարբառը, Եր., 2009, էջ 9):

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին է նվիրվում «Հայերենի բարբառագիտական ատլասի» սույն ժողովածուն, որտեղ նկարագրվում են եղեռնագարկ արևմտյան բարբառային մի քանի միավորներ: Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրի և այլ աղբյուրների ընձեռած նյութերի հիման վրա հեղինակները ներկայացնում են Ակնի, Նիկոմեդիայի, Ռոդոսթոյի, Տալվորիկ-Մոսկանի բարբառների, Եվդոկիայի միջբարբառի և Դերիկի խոսվածքի ընդհանուր բնութագրերը, նաև բարբառային խոսքի նմուշներ:

Իբրև հաղորդակցման միջոց այլևս չգործածվող բարբառային միավորների հետազոտությունը կրելու է շարունակական բնույթ՝ նպատակ ունենալով գիտական հանրությանը և ընթերցողներին ներկայացնել կորսված լեզվական մեծ հարստությունը, նաև վերաարժևորել ու պահպանել մեզ ավանդված բարբառային անսպառ նյութը:

Վ. Կատվայան

Անահիտ Արքահայկյան

(ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ)

ԱՎՆԸ ԵՎ ՆՐԱ ԲԱՐԲԱՌԸ

Ներածություն

1912 թ. Հ. Աճառյանը Մեսրոպ վրդ. Մաքսուդյանի՝ Ակնի բարբառին նվիրված գրքի գրախոսությունը սկսում է հետևյալ տողերով. «Բախտաւոր է Ակնայ բարբառը» (նկատի ունենալով այդ բարբառի վերաբերյալ հրատարակված 3 աշխատանք)¹: «Բախտավոր» բառը գրելիս ի՛նչ իմանար անվանի լեզվաբանը, որ շատ քիչ ժամանակ անց կթերթվի հայոց պատմության ամենատխուր էջը, և հայերենի մի շարք բարբառների հետ միասին եղեռնագարկ կլինի նաև Ակնի բարբառը:

Այնուամենայնիվ պետք է ընդունել Ակնի բարբառի բախտավոր լինելը՝ նկատի ունենալով 3 հանգամանք. ա. տվյալ բարբառով խոսող մարդկանց անսահման սերը դեպի իրենց լեզուն, ծննդավայրը, մշակույթը, բ. տվյալ բարբառի վերաբերյալ հրատարակված ուսումնասիրությունները, գ. տվյալ բարբառով հրատարակված բանահյուսական գործերի մեծ ծավալը, որոնք հիմք են բարբառի հետագա ուսումնասիրությունների համար:

ա. Ակնը և ակնցիք

Ակնի բարբառը խոսվել է Արևմտահայաստանի Ակն քաղաքում և շրջակա գյուղերում: Այդ բարբառը կրողներ են եղել հայ մշակութային և հասարակական բազմաթիվ գործիչներ՝ Արփիար Արփիարյանը, Միսաք Մեծարենցը, Գրիգոր Զոհրապը, Միամանթոն, Արշակ Զոպանյանը, Մինաս Զերազը, Նիկոլ Գալանտերյանը և շատ ու շատ այլ անվանիներ: Այդտեղից են սերել հայ բազմաթիվ մեծատուններ, ամիրայական ընտանիքներ, որոնց գերակշռող մասը հայանպաստ և

¹ Հ.Աճառեան, *M. Maxudianz (Մեսրոպ վրդ. Մաքսուդեանց). Le parler arménien d'Akn (quartier bas), Paris, 1912.* – Հանդես ամսօրեայ, 1912, 4 (ապրիլ), էջ 248:

ազգոգուտ վիթխարի գործունեություն է ծավալել²: Այդտեղ են ծնվել Մինաս Ա Ակնեցի Ամենայն Հայոց կաթողիկոսը, Մխիթարյան միաբանության անդամ, թարգմանիչ Ջաքարիա վրդ. Ակնեցին, Հովհան երեց Ակնեցին, որը դեռևս 1712 թ. Կ.Պոլսում կազմել ու հրատարակել է «Գիրք այբուբենեանց: Յաղագս վարժման մանկանց...» դասագիրքը³, և եկեղեցական շնորհալի շատ այլ գործիչներ: Թերևս պատահական չէ այդ փոքրիկ տարածաշրջանից այդքան շատ երևելիների սերումը: Ա. Չոպանյանը նշում է, որ ակնցու՝ ուժեղ լինելու, մեծավոր դառնալու, անպաշտպանին հովանի կանգնելու ձգտումը ձևավորվում է դեռ մանկուց լսած օրորներից, «գոր Ակնայ մայրերը կ'երգեին իրենց փոքրիկները քնացնելու համար»⁴.

«Օրոր կանչիմ իմանաս,
Պառկիս 'ւ անուշ քրնանաս,
Քրնանաս ու մեծանաս,
Մեծնաս ու մեծ մի լընիս,
Բոլորիս ու գեղ մի լընիս,
Ան գեղն ուր մեծ չի կենայ՝
Ան գեղին մեծը դուն լընիս.
Դուն լընիս անտառ մօրուն,
Ջարնես քօքիկըդ խորուն.
Քօքիկըդ խօրուն զարնես,
Ծառըդ շուք անե՝ նեղերուն»⁵:

Ինչպես նշվեց, ակնցիք շատ են սիրել իրենց ծննդավայրը, լեզուն, մշակույթը, և այդ սերն ամրագրվել է իրենց հրատարակած կենսապատումներում, պատմական ու բանասիրական բազմաթիվ աշխատություններում:

² Ակնցի մեծատունների, ամիրակայական ընտանիքների և նրանց բարերարության մասին հանգամանորեն տե՛ս **Յ.Մըրմըրեան**, *Մասնական պատմություն հայ մեծատուններու 1400էն 1900*, Կ.Պոլիս, Գրատուն Պ.Պալեց, 1909, էջ 27, 61-68, 90-91 և այլն:

³ Տե՛ս *Այբբենարան եւ քրիստոնէական*, կազմ.՝ **Հովհան երեց Ակնեցի**, Կ.Պոլիս, տպ. Գրիգոր դարի Մարգուանեցոյ, 1712:

⁴ **Ա.Չոպանեան**, Յառաջաբան. – Թ.Ազատեան, *Քառասնակ*, Կ.Պոլիս, տպ. Դ.Յովհաննէսեան, 1930, էջ XIV:

⁵ Նույն տեղում, էջ XV:

Ակնի մասին մեր գտած հայերեն ամենահին գրառումը Ակնի գավառի Ջմարա գյուղում ծնված հայ մատենագիր, մանկավարժ, մեկնիչ, եկեղեցական գործիչ, Կ.Պոլսի հայոց պատրիարք Հակոբ Բ Նալյանի «Գանձարան ծանուցմանց» գրքում է, որը հրատարակվել է 1758 թ.⁶: Ակնի և նրա շրջակայքի տեղագրությանն ու պատմությանն անդրադարձել են հայ բանահավաք ազգագրագետ, ծնունդով ակնցի Հովսեփ Կ. Ճանիկյանը իր «Հնութիւնք Ակնայ» գրքում⁷, ծնունդով ակնցի գրող, հրապարակախոս, բանասեր, հասարակական գործիչ Առաքել Մ. Քեչյանը իր «Ակն եւ ակնցիք» գրքում⁸, Ակն գավառի Ապուչեխ գյուղում ծնված բանասեր, բանաստեղծ, հասարակական գործիչ Թորոս Մ. Ազատյանը իր «Ակն եւ ակնցիք» գրքում⁹: Հրատարակված են Ակնի տեղագրությանը նվիրված մի քանի այլ աշխատանքներ ևս¹⁰: Ակնի մասին պատմական ակնարկ ունի Գարեգին Սրվանձտյանը իր «Թորոս աղբար» գրքում¹¹, Ա. Չոպանյանը՝ Թ. Ազատյանի «Քառասնակ» գրքի առաջաբանում¹²: Ակնի վարչաժողովրդագրական նկարագրին են անդրադարձել Ա. Բաբլումյանը, Ա. Սահակյանը¹³: Հրատարակված են այլ աշխատություններ ևս, որոնցում առանձին բաժնով տեղեկատվություն կա Ակնի պատմության ու տեղագրության

⁶ Տե՛ս **Յակոբ Նալեան**, *Գիրք կոչեցեալ Գանձարան ծանուցմանց*, Կ.Պոլիս (՝), 1758, էջ 309–310 (813–814):

⁷ Տե՛ս **Յ.Կ.Ճանիկեան**, *Հնութիւնք Ակնայ*, Թիֆլիս, տպ. Մ.Դ.Ռոսինեանցի, 1895, էջ 7–64:

⁸ Տե՛ս **Առաքել Մ. Քեչեան**, *Ակն եւ ակնցիք*, Փարիզ, Հրատարակություն Ամերիկայի Ակնայ հայրենակցական միութեան, 1952:

⁹ Տե՛ս **Թ.Ազատեան**, *Ակն եւ ակնցիք. ազգագրական ու կենսագրական յիշատակարան*, Իսթանպուլ, տպագր. Յ.Աբրահամեան, 1943, էջ 14–22:

¹⁰ Տե՛ս **Ա.Նաթանեան**, *Ակն*. – Մասիս (Կ.Պոլիս), 1885, թ. 3764, էջ 870–872, թ. 3766, էջ 917–918, **Մ.Գիլամիբեանց**, *Ակն*. – Սրաքս (Ս.Պետերբուրգ), 1897, գիրք Բ, էջ 33–37 և այլն:

¹¹ Տե՛ս **Գ.Վ.Սրուանձտեանց**, *Թորոս աղբար Հայաստանի ճամբորդ*, մասն առաջին, Կ.Պոլիս, տպագր. Է.Ս.Տնտեսեան, 1879, էջ 243–270:

¹² Տե՛ս **Ա.Չոպանեան**, Յառաջաբան, էջ IX–XVIII:

¹³ Տե՛ս **Ա.Բաբլումյան**, *Ակնի գավառակի հայ բնակչության թվաքանակը Բ դարի սկզբին*. – Էջմիածին, 2012, մայիս, էջ 118–123, **Ա.Գ.Սահակյան**, *Ակնի կազայի վարչաժողովրդագրական նկարագիրը (XIX դ. վերջ–XX դ. սկիզբ)*. – Լրաբեր հասարակական գիտությունների, 2008, 2, էջ 57–62:

վերաբերյալ¹⁴: Պահպանվել է Աստվածատուր, Հովհան և Առաքել Ակնեցիների «Ժամանակագրությունը», որ սկսվում է 1722 թ. մայիսի 7-ի և ավարտվում 1808 թ. օգոստոսի վկայություններով¹⁵: Նշված գործերի հիման վրա կարելի է համառոտ ներկայացնել Ակնի տեղագրության, պատմության և ժողովրդագրության հետևյալ պատկերը:

Ակն քաղաքը, որը սկզբում կոչվել է Մարընտունիկ, հիմնադրել են Վասպուրականի Արծրունիները, որոնք, իրենց թագավորությունը 1021–1022 թթ. Բյուզանդիային հանձնելով, Մեքաստիայի հետ միասին իբրև փոխհատուցում ստացել էին նաև Ակնի տարածքը: 1300–1321 թթ. Անիից Ակն գաղթած հայերը հիմնադրել են իրենց թաղամասը՝ Ս.Հակոբ եկեղեցով (Ակնում եղել է նաև Անի անունով բերդ): Ակն անունը հավանաբար ծագում է քաղաքի միջով հոսող Ակնաղբյուրի անվանումից, որը աղավաղելով՝ թուրքերը կոչել են Էզին: Այսօր քաղաքը կոչվում է Քեմալիե:

Ակնը պատմական Հայաստանի ամենագեղատեսիլ քաղաքներից մեկն էր՝ գտնվելով Արևմտյան Եփրատի (Կարասու) ափին՝ Երզնկայից Խարբերդ տանող ճանապարհին: Հնում այն մտել է Փոքր Հայքի Երկրորդ Հայք գավառի մեջ: Ավելի ուշ ընդգրկվել է Մեքաստիայի, այնուհետև՝ Մալաթիայի, իսկ հետագայում՝ Խարբերդի վիլայեթների մեջ: XX դ. սկզբին Ակնի գավառակը ներառված էր Արաբկիրի սանջակում՝ հյուսիսից սահմանակցելով Մեքաստիայի և Կարինի վիլայեթներին, արևելքից՝ Դերսիմի սանջակին, հարավից՝ Արաբկիրի գավառակին, արևմուտքից՝ դարձյալ Մեքաստիայի վիլայեթին:

Ակն քաղաքը բաժանված էր 2 գլխավոր՝ Վերի և Վարի թաղերի: Այն վարելահող գրեթե չուներ, տներն ունեին իրենց փոքրիկ այգիները: Քաղաքի հայ բնակչությունը վարպետ արհեստավորներ ու առևտրականներ էին: Արհեստներից տարածված էին դերձակությունը, ջուլիակությունը, կոշկակարությունը, դարբնությունը, երկաթագործությունը, մանածագործությունը և այլն: XIX դ. վերջերին քաղաքում

¹⁴ Տե՛ս Էկին, *հյ. Ակն.* – **Հ. Ղուկաս վրդ. Բնճիճեան**, *Մշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի՝ Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկոյ և Ամերիկոյ*, մասն Ա. Ասիա, հ.Ա, Վենետիկ–Ս.Ղազար, 1806, էջ 301–309, *Ակն.* – **Հ.Ս.Էփրիկեան**, *Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան*, հ.Ա (Ա–Ը), Վենետիկ–Ս.Ղազար, 1902, էջ 76–81, և այլն:

¹⁵ Տե՛ս *Մանր ժամանակագրություններ, XIII–XVIII դդ.*, հ. 2, կազմեց՝ Վ.Ա.Հակոբյան, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1956, էջ 473–478:

գործում էին 2 եկեղեցի՝ Ս.Աստվածածին և Ս.Գևորգ¹⁶, 3 վարժարան՝ Ներսիսյան, Նարեկյան, Հռիփսիմյանց, 4 մասնավոր դպրոց, մշակութային ընկերություններ, հրատարակվում էին թերթեր:

XIX դ. վերջերին քաղաքն ունեցել է շուրջ 10 հազար բնակիչ, որի կեսից ավելին հայեր էին: 1880 թ. տվյալներով՝ քաղաքում բնակվել են 5442 հայ և 4286 թուրք ու հույն, Ելնելով սոցիալական ծանր վիճակից՝ ակնցիները պանդխտել են Կ.Պոլիս և այլ քաղաքներ:

XIX դ. վերջերին գավառակի հայերը, Ակնից բացի, կենտրոնացած էին Կամարակապ, Ապուչեխ, Բինկյան, Լիճք, Նարվեր, Վանք, Չորակ, Շրգու, Մուշեղկան և այլ գյուղերում: Յուրաքանչյուր գյուղ ուներ իր վարժարանը, մեծ գյուղերը՝ 2 վարժարան [Կամարակապն ուներ 2 եկեղեցի (Ս.Աստվածածին և Ս.Գևորգ) և երկսեռ վարժարան (Արամյան - Սանդուխյան), Բինկյանն ուներ 3 եկեղեցի (Ս.Աստվածածին, Ս.Հրեշտակապետ, Երեք Մանկունք), 2 վարժարան (Մեսրոպյան և Նունեյան)]:

Այդ տարիներին գավառակում գործում էին հայկական 24 դպրոց, 20-ից ավելի հայկական եկեղեցի¹⁷: Գավառակի հայ բնակչության մեծ մասը գրագետ էր: Այն հայաշատ զարգացած տարածքներից մեկն էր՝ իր ուխտատեղիներով, սովորություններով¹⁸, մշակութային և հասարակական բուռն կյանքով: Այդտեղ կազմակերպվել և գործում էին Ազգասիրական, Ուսումնասիրական, Արամյան և Նարեկյան ազգային ընկերությունները: Ակնցիք նաև արտերկրում ունեին ազգային կազմակերպություններ. 1898 թ. Բոստոնում կազմակերպվել էր «Ակնայ ուսումնասիրաց ընկերությունը»:

1880-ական թթ. արտագաղթի և կոտորածների հետևանքով զգալիորեն նվազում է գավառակի հայ բնակչության թվաքանակը:

¹⁶ Ակնի եկեղեցական թեմն ունեցել է հայտնի շատ առաջնորդներ. 1879 թ. թեմի առաջնորդ էր Գարեգին Սրվանձտյանցը (տե՛ս **Բ.Ա. Կոստանյան**, *Գարեգին Սրվանձտյանցը և արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները*. – Լրաբեր հասարակական գիտությունների, 1970, 1, էջ 23–24):

¹⁷ Ակնի և նրա շրջակա գյուղերի եկեղեցիների մասին տե՛ս **Տրդատ Կապ. Պալեան**, *Հայ վանորայք*, Ս.Էջմիածին, Մայր Աթոռ Ս.Էջմիածնի հրատ., 2008, էջ 211–2015:

¹⁸ Ակնի սովորությունների և ուխտատեղիների մասին հոդվածների շարք է հրատարակել Ա.Յ.Շեփիկեանը. տե՛ս Բիրակն, 1900, թիւ 6, էջ 90–93, թիւ 25, էջ 379–380, թիւ 26, էջ 388–389, թիւ 44, 692–694:

1896 թ. սեպտեմբերին թուրքերը հարձակվում են Ակնի, իսկ քրդերը՝ շրջակա հայկական գյուղերի վրա, կոտորում բնակիչներին, կողոպտում և հրդեհում տները: Ձուլվում է մոտ 3000 հայ: Հետագա երկու տասնամյակում հայերը վերակառուցում են Ակնը և աշխուժացնում քաղաքի հասարակական և մշակութային կյանքը:

Ընդհանուր առմամբ, ըստ հետազոտողների, XX դ. սկզբին՝ մինչ Մեծ եղեռնը, Ակնի գավառակը Արաբկիրի սանջակում ամենահայաշատն էր, որտեղ բնակվում էր ավելի քան 15,5 հազար հայ¹⁹:

1915 թ. Ակնը և շրջակա գյուղերը իսպառ դատարկվում են հայերից, որոնց մեծ մասը զոհվում է գաղթի ճանապարհին:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո 400-ի հասնող տարագիր ակնցի հայեր նորից են վերահաստատվում իրենց հայրենի քաղաքում, սակայն թուրքական նոր բռնությունների հետևանքով նրանց զգալի մասը լքում է Ակնը և դիմում արտագաղթի: 1929 թ. տվյալներով Ակնում մնացել էր միայն 41 հայ բնակիչ: Ակնի գավառակի գյուղերում նույնպես շատ քիչ հայ էր մնացել. ըստ «Ազդարարի» թղթակցի վիճակագրական տեղեկությունների՝ 1928 թ. Ակնի գյուղերում բնակվում էր 80–100 հայ²⁰:

Մեծ եղեռնից հետո Ակնի բնակիչներից ողջ մնացածները, սփռվելով աշխարհով մեկ, տարբեր տեղերում համախմբվել և հիմնել են ուսումնասիրաց և հայրենակցական միություններ: ԱՄՆ գաղթած ակնցիները 1945 թ. հիմնել են «Ակնայ հայրենակցական միությունը», որը նյութապես օժանդակել է տարբեր երկրներում ապաստանած ակնցիներին, կապեր հաստատել նրանց միջև: Միությունը նյութական օգնություն է ցույց տվել նաև Խորհրդային Հայաստան ներգաղթած ակնցիներին:

Այդ կազմակերպությունները, անշուշտ, օժանդակել են նաև Ակնի բարբառի պահպանմանը՝ դառնալով բարբառակիրների շփման տեղիներ: XX դարակեսին նման կառույցներ կային ԱՄՆ-ում, Կանադայում, Ֆրանսիայում, Միրիայում, Եգիպտոսում: Ենթադրելի է, որ դեռևս XX դ. 50-ական թթ. Ակնի բարբառով խոսողներ կային աշխարհի տարբեր անկյուններում: Հայաստանում նույնպես հանգրվա-

¹⁹ Տե՛ս **Ա.Բարբումյան**, նշվ. աշխ., էջ 123, **Ա.Գ.Մահակյան**, նշվ. աշխ., էջ 62:

²⁰ Տե՛ս **Ա.Աթան**, *Հայ կեանքը /ամսական տեսություն/*. – Հայրենիք /ամսագիր, Բոստոն/, 1928, 2 տարի, թիւ 6, ապրիլ, էջ 173):

նել էին մեծ թվով ակնցիներ: Երևանի Նուբարաշեն արվարձանում կար թաղամաս՝ Նոր Ակն անվամբ՝ բնակեցված ակնցիներով: Հ.Ա.Ճառյանի անվ. լեզվի ինստիտուտի՝ Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով 1977 թ. լրացվել է Ակնի բարբառի տեսքը Նախրիի շրջանի Պողոսյան սովխոզում: Բարբառախոսները՝ 1893 թ. ծնված Հարություն Պետրոսի Մալխասյանը, 1896 թ. ծնված Խոսրով Ստեփանի Խանարյանը, 1945 թ. ծնված Արաքսյա Խոսրովի Խանարյանը Ակնի բարբառով ազատ խոսող ակնցիներ էին:

Այսօր Ակնի բարբառով խոսող մարդկանց մասին մենք տեղեկություն չունենք:

բ. Ակնի բարբառի ընդհանուր նկարագիրը

Ակնի բարբառի մասին առանձին ուսումնասիրություն ունի ծնունդով ակնցի բանասեր, բժիշկ, հասարակական գործիչ Մմբատ Ս. Գաբրիելյանը՝ «Ակնայ գաւառաբարբառը եւ արդի հայերէն լեզուն» խորագրով, սովարածավալ մի աշխատություն, որը նախ հատվածաբար հրատարակվել է «Հանդես ամսօրեայ»-ի 1908–1911 թթ. համարներում, իսկ 1912 թ. տպագրվել առանձին գրքով Վիեննայում /Մխիթարյան միաբանության կողմից²¹: Հ. Աճառյանը իր 1911 թ. հրատարակած «Հայ բարբառագիտություն» մենագրության մեջ, խոսելով Ակնի բարբառով գրվածքների մասին, Ս. Գաբրիելյանի այդ աշխատությունը համարում է «ընդարձակ, բայց ոչ գիտական մեթոտով գրուած ուսումնասիրութիւն»²²: Նշենք, որ Ս. Գաբրիելյանի այդ աշխատությունը վերջում ունի Ակնի բարբառի ընդարձակ բառարան²³:

Ակնի բարբառի մասին մյուս առանձին ուսումնասիրությունը բնիկ ակնցի, Փարիզի լեզվաբանների ընկերության անդամ Մեսրոպ վարդապետ Մաքսուդյանցի՝ Սորբոնի համալսարանում պաշտպանած «Ակնի հայերեն խոսվածքը» խորագրով դոկտորական ատենա-

²¹ Տե՛ս **Ս.Ս.Գաբրիելյան**, *Ակնայ գաւառաբարբառը եւ արդի հայերէն լեզուն*, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1912:

²² **Հ.Աճառեան**, *Հայ բարբառագիտութիւն* (= Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ը), Մոսկուա–Նոր Նախիջեւան, Լազարեան ճեմարան արեւելեան լեզուաց, 1911, էջ 222:

²³ Տե՛ս **Ս.Ս.Գաբրիելյան**, *Ակնայ գաւառաբարբառը եւ արդի հայերէն լեզուն*, էջ 231–357:

խոսությունն է, որը 1911 թ. ֆրանսերենով հրատարակվել է, իսկ 1912 թ. վերահրատարակվել է Փարիզում²⁴: Մինչ այդ՝ 1910 թ., Մ. Մաքսուդյանը «Հանդես ամսօրեայ»-ում հրատարակել էր Ակնի բարբառի փոխառյալ բառերի մի ընդարձակ ցանկ՝ հակիրճ առաջաբանով²⁵: Հ.Աճառյանը «Հայոց լեզվի պատմության» մեջ նշում է, որ Մ. Մաքսուդյանցի «Ակնի հայերեն խոսվածքը» աշխատությունը «լուրջ գիտական ուսումնասիրություն» է²⁶: Հարկ է նշել, որ այդ աշխատությունը իր ժամանակին ունեցել է լայն արձագանք, որի մասին դրական գրախոսություններ են հրատարակվել ինչպես հայկական, այնպես էլ եվրոպական գիտական առաջատար օտարալեզու պարբերականներում: Այդ գրախոսությունները հեղինակել են անվանի հայագետներ Հրաչյա Աճառյանը, Մանուկ Աբեղյանը, Անտուան Մեյեն, Յոզեֆ Կարստը (հրատարակել է 2 գրախոսություն) և ուրիշներ²⁷: Հ. Աճառ-

²⁴ Տե՛ս *Le parler arménien d'Akn (quartier bas)*, thèse de doctorat d'Université de Paris, par **M.Maxudianz**, Paris, P.Geuthner, 1912: Սույն զեկուցման տեքստը պատրաստելու ժամանակ Մ.Մաքսուդյանցի գիրքը մենք ձեռքի տակ չունեինք, քանի որ չէինք գտել Հայաստանի ազգային և ԳՍԱ հիմնարար գրադարաններում, իսկ Համացանցի որոշ ռեսուրսներում /Google, Hathitrust և այլն/ տեղադրված տարբերակը բաց էր սահմանափակ թվով օգտատերերի համար: Զեկուցումից որոշ ժամանակ անց Մայր Աթոռ Ս.Էջմիածնի մատենադարանի տնօրեն Տ. Արարատ քին. Պողոսյանի միջնորդությամբ Ֆրանսիայի Հայոց թեմի մատենադարանի տնօրեն Տ. Ժիրայր ծ. վրդ. Թաշճեանը մեզ տրամադրեց գրքի էլեկտրոնային տարբերակը, որի համար նրանց հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

²⁵ Տե՛ս **Մեսրոպ վրդ. Մաքսուդեանց**, *Ակնայ բարբառի փոխ առած բառերը օտար լեզուներից*. – Հանդես ամսօրեայ, 1910, 2, էջ 57–63:

²⁶ **Հ.Աճառյան**, *Հայոց լեզվի պատմություն*, մաս. 2, Ե., Հայպետհրատ, 1951, էջ 349:

²⁷ Քանի որ բոլոր գրախոսություններն էլ ունեն միևնույն մատենագիտական խորագիրը՝ *M.Maxudianz, Le parler arménien d'Akn (quartier bas), Paris, 1912*, ներքոնշյալ հղումներում գրախոսությունների խորագրերը բաց են թողնվում: Տե՛ս **Հ.Աճառեան**, *M.Maxudianz,...* – Հանդես ամսօրեայ, 1912, 4, էջ 248–253, **Մ.Աբեղեան**, *M.Maxudianz,...* – Արարատ, 1912, 10–11, էջ 1029–1033, **A.Meillet**, *M.Maxudianz,...* – Journal asiatique (Paris), Série 10, Tome 20, 1912, էջ 177–179, **J.Karst**, *M.Maxudianz,...* – Orientalistische Literaturzeitung (Leipzig), 1914, 8, էջ 374–375, **J.Karst**, *M.Maxudianz,...* – Indogermanische Forschungen (Strassburg), 1914, Vol. 33, Issue s1, էջ 495–496, **Ch. Lallemand**, *Maxudianz,...* –

յանը, վերլուծելով Մ. Մաքսուդյանցի աշխատությունը, գրում է, որ այդ «ուսումնասիրութիւնը հետեւած է այն մեթոտին, որ լեզուաբանական գիտութեան մէջ վերջին ընդունուածն ու կատարելագոյնն է», իսկ վերջում եզրափակում. «Երանի թէ մեր միւս հայ բարբառներն ալ այսպիսի արժանաւոր ձեռքերու ուսումնասիրութեանն արժանային»²⁸: Յո. Կարստը վերոհիշյալ գրախոսություններում նշում է, որ Մ. Մաքսուդյանցի գիրքը նոր և արժեքավոր ներդրում է հայ բարբառագիտության մէջ²⁹, որը կարող է նաև օգտագործվել որպէս օրինակ այլ բարբառների հետագա հետազոտության համար³⁰: Մ. Մաքսուդյանցի ատենախոսության գիտական դեկավար Ա. Մելեն, բարձր գնահատելով իր սանի հետազոտությունը՝ որպէս ընդհանրապէս բարբառի լավագոյն նկարագրություն, նույնպէս հույս է հայտնում, որ հայերենի «շատ բարբառներ կուսումնասիրվեն այդ մեթոդով և այդպիսի խստությամբ»³¹:

Նշված անվանի լեզվաբանների կողմից բարձր գնահատականի արժանացած հայ գիտնականի ատենախոսությունը նվիրված է Ակնի Վարի թաղի խոսվածքին, սակայն հեղինակը այն համեմատության մէջ է դնում ինչպէս Վերի թաղի, այնպէս էլ Ակնի շրջակա Ապուչէխ, Կամարակապ, Լիճք, Վանք և Շոգու գյուղերի խոսվածքների հետ, որը Հ. Աճառյանին հիմք է տալիս պնդելու, «թէ գրուածքը Ակնայ ամբողջական բարբառին ուսումնասիրութիւնն է»³²: Պետք է նշել, որ հեղինակը թէև մանուկ հասակում էր դուրս եկել Ակնից, սակայն հիշում էր Ակնի բարբառը: Ինչ խոսք, այդքանը բավարար չէր այդ բարբառի մասին գիտական աշխատանք գրելու համար, այդ պատճառով նա Փարիզում հանդիպում և լսում է մի քանի բարբառախոսների³³:

Revue de l'Orient chrétien (Paris), 1912, Série 10, Tome 17, էջ 328–330, **D.Servière**, *M.Maxudianz*,... – Échos d'Orient, 1912, Vol. 15, N 95, էջ 383:

²⁸ **Հ.Աճառյան**, *M.Maxudianz*,... , էջ 249, 253:

²⁹ Տե՛ս **J.Karst**, *M.Maxudianz*,... – Indogermanische Forschungen, էջ 496:

³⁰ Տե՛ս **Նույնի**, *M.Maxudianz*,... – Orientalistische Literaturzeitung, էջ 375:

³¹ **A.Meillet**, *M.Maxudianz*,... – Journal asiatique, էջ 179:

³² **Հ.Աճառյան**, *M.Maxudianz*,... , էջ 249:

³³ Այդ բարբառախոսներն էին՝ փարիզաբնակ Խ.Մանուկյանը /ծնվ. Ակնում, 65 տարեկան/, բարբառի Լիճքի և Կամարակապի ենթախոսվածքների գերագանց տիրապետող ուսանող Ռ.Շիշմանյանը /ծնվ. Լիճքում, 25 տ./ և Գ.Արծ-

Գիրքն ունի 3 բաժին: Առաջինը «Հնչյունաբանություն» բաժինն է, երկրորդը՝ «Ձևաբանություն», երրորդը՝ Ակնի բարբառի փոխառյալ բառերը³⁴: Վերջում կա հավելված՝ նվիրված Ակնի Վերի թաղի խոսվածքին³⁵:

1993 թ. հրատարակվել է Վ. Բերթի /Քեմբրիջի համալսարան/ հետազոտությունը՝ նվիրված Ակնի բարբառի հնչյունական առանձնահատկություններին³⁶:

Ակնի բարբառի վերաբերյալ այլ առանձին ուսումնասիրություններ չկան, բայց կան լեզվաբանական աշխատություններ, որոնցում տրված է նաև Ակնի բարբառի համառոտ նկարագրությունը: Նման նկարագրություններ կան Հ. Աճառյանի «Հայ բարբառագիտություն», «Հայերեն գաւառական բառարան», «Հայոց լեզվի պատմություն» աշխատություններում³⁷ և այլ հեղինակների գործերում³⁸, բարբառի հնչյունաբանությանն ու ձևաբանությանը անդրադարձներ կան Յո. Կարստի «Կիլիկյան հայերենի պատմական քերականություն» գրքում³⁹:

րունին /ծնվ. Կամարակապում, 22 տ./, նաև ուիշներ (տե՛ս **M. Maxudianz**, նշվ. աշխ., էջ 3–4):

³⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 12–63 (Phonétique), 64–102 (Morphologie), 107–137 (Mots empruntés):

³⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 139–141 (Appendice):

³⁶ **Vaux Bert**, Coronal Fronting in the Akn Dialekt of Armenian. – *Annual of Armenian Linguistics* 14, 1993, էջ 15–29:

³⁷ Տե՛ս **H. Adjarian**, *Classification des dialectes arméniens* (=Bibliothèque de l'École pratique des hautes études, Vol. 173), Paris, Librairie H. Champion, 1909, էջ 66–67, **Նույնի**, *Հայ բարբառագիտություն*, էջ 222–224, **Նույնի**, *Հայերեն գաւառական բառարան* (=Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ), Թիֆլիս, Լազարեան ճեմարան արեւելեան լեզուաց, 1913, էջ 34, **Նույնի**, *Հայոց լեզվի պատմություն*, մաս. 2, էջ 349:

³⁸ Տե՛ս **որինակ, Գ. Մարտիրոսյան**, *Армянские диалекты (характеристика отдельных диалектов)*. – Языки мира: Реликтовые индоевропейские языки Передней и Центральной Азии, М., Academia, 2013, էջ 361 և այլն:

³⁹ Տե՛ս **Յո. Կարստ**, *Կիլիկյան հայերենի պատմական քերականություն*, Ե., Երևանի համալս. հրատ., 2002, էջ 53–54, 63, 66, 111–113, 375 /թարգմ. **J. Karst**. *Historische grammatik des kilikisch-armenischen*, Strassburg, K.J. Trübner, 1901, էջ 106–107/:

Ակնի ազգագրությունը լուսաբանող մի քանի աշխատություններ նույնպես ունեն բաժիններ՝ նվիրված բարբառի նկարագրությանը: Ակնի բարբառի առաջին նկարագրությունը հանդիպում է Հ. Ճանիկյանի «Հնութիւնք Ակնայ» գրքում⁴⁰: Նշված բարբառի մեկ այլ նկարագրություն կա Ա. Քեչյանի «Ակն եւ ակնցիք» գրքում⁴¹: Այս երկու աշխատություններն էլ վերջում ունեն Ակնի բարբառի ընդարձակ բառարան⁴²:

Ինչպես նշվեց, Ակնի բարբառով խոսել են համանուն քաղաքում և նրա շրջակա մի քանի հայկական գյուղերում: Ակնի բարբառը, ըստ ձևաբանական դասակարգման, պատկանում է *կը* ճյուղին⁴³, ըստ հնչյունական դասակարգման՝ եռաստիճան խլազուրկ բաղաձայնական համակարգ ունեցող բարբառախմբին⁴⁴, ըստ բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման՝ բարբառների արևմտյան խմբակցության Փոքր Ասիայի կամ արևմտյան բարբառախմբին⁴⁵ (Ա.Այտընյանի աշխարհագրական դասակարգման մեջ ինչպես բազմաթիվ բարբառներ, այնպես էլ Ակնի բարբառը անվանական նշում չունի, բայց, անկասկած, այն ներառվում է «Երկրորդ գաւառական հայերէն /Փոքր Ասիոյ եւ Կոստանդնուպոլսոյ/» խմբում⁴⁶):

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ բարբառի հնչյունական և քերականական համակարգերը լուսաբանված են վերոնշյալ ուսումնասիրություններում, և նաև այն, որ մեր կողմից հրատարակության է պատրաստվում առանձին աշխատություն Ակնի բարբառի

⁴⁰ Տե՛ս **Յ.Կ.Ճանիկեան**, նշվ. աշխ., էջ 281–305:

⁴¹ Տե՛ս **Ա.Քեչեան**, նշվ. աշխ., էջ 361–366:

⁴² Տե՛ս **Յ.Կ.Ճանիկեան**, նշվ. աշխ., էջ 306–403, **Առաքել Ս. Քեչեան**, նշվ. աշխ., Յաւելուածներ. Բառարան Ակնայ բարբառին, էջ 1–123:

⁴³ Տե՛ս **H. Adjarian**, *Classification des dialectes arméniens*, էջ 44, **Նույնի**, *Հայ բարբառագիտութիւն*, էջ 103:

⁴⁴ Տե՛ս **Ա.Ղարիբջան**, *Հայ բարբառագիտություն. հնչյունաբանություն և ձևաբանություն*, Ե., ՀՄՍՌ պետ. հեռ. մանկ. ին-տ, 1953, էջ 60:

⁴⁵ Տե՛ս **Գ.Բ.Զահուկյան**, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., ՀՄՍՀ ԳԱ հրատ., 1972, էջ 133:

⁴⁶ Տե՛ս **Հ. Արսէն վ. Այտընեան**, *Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի հանդերձ ներածութեամբ եւ յաւելուածով*, Վիեննա, Մլիթարեանց տպ., 1866, էջ 176–180:

վերաբերյալ՝ կից բառարանով, սույն հոդվածում կներկայացնենք միայն բարբառի գլխավոր հատկանիշները⁴⁷:

1. Բարբառի հնչյունական համակարգը բնութագրվում է հետևյալ գլխավոր հատկանիշներով:

ա. Ունի եռաստիճան անտեղաշարժ, շնչեղ ձայնեղներով բաղաձայնական համակարգ, որոնց հնչյունական փոփոխությունը նույնն է, ինչպես Խարբերդ-Երզնկայի, Արաբկիրի և Սեբաստիայի բարբառներում:

բ. Ունի 8 ձայնավոր՝ *ա, է, ը, ի, օ, էօ, ու, իւ*:

գ. Բարբառում *ա* ձայնավորը ռնգականից առաջ դառնում է *օ*, օրինակ՝ *ճանճ* > *ջօնջ*, *անալի* > *օլլի*, *անձրն* > *օրզեվ* և այլն, *ու* ձայնավորը դառնում է *իւ*, իսկ *ո*-ն և *օ*-ն՝ *էօ*, օրինակ՝ *ունիս* > *իւնիս*, *ութ* > *իւթ*, *չորս* > *չէօրս*, *դուռ* > *դէօռ*, *այսօր* > *ասէօր* և այլն:

դ. Երկբարբառները ենթարկվում են հետևյալ փոփոխության՝ *այ* > *ա* (օրինակ՝ *մայր* > *մար*, *հայր* > *հար* և այլն), *ոյ* > *ու* (օրինակ՝ *կոյր* > *կուր*, *լոյս* > *լուս* և այլն), *իւ* > *ու* (օրինակ՝ *ձիւն* > *ձ'ուն*, *արիւն* > *արուն* և այլն):

ե. Բառավերջի *հ*-ից առաջ ավելանում է *յ* կիսաձայնը, օրինակ՝ *մահ* > *մայհ*, *գոհ* > *գ'ոյհ*, *շահ* > *շայհ*, *ահ* > *այհ* և այլն (Չ. Աճառյանը նման հավելումը յուրահատուկ է համարում Ակնի բարբառի համար):

2. Բարբառի քերականական համակարգը, ինչպես նշում է Չ. Աճառյանը, «չի ներկայացնել առանձին յատկանշական գծեր. Իսկ եղած ինչ ինչ տարբերությունները յառաջացած են ընդհանուր ձայնաբանական օրենքներու ազդեցութեամբ», օրինակ՝ սեռականի *իւ* մասնիկը՝ *Աստուծոյ* > *Ասդիւծիւ*, *հոգւոյն* > *հօքիւն*, *մեռելներուն* > *մէռէլներին*, սահմանական ներկայի և անկատարի *կու* > *գիւ* մասնիկը՝ *կու տամ* > *գիւ դամ*, *կու լամ* > *գիւլ լամ*⁴⁸:

Բայական վերջավորություններում *ե* ձայնավորը ռնգականների մոտ դառնում է *ի*, իսկ մյուս բոլոր դեպքերում մնում է անփոփոխ.

գիւ խըրգիւմ	գիւ խըրգիւմք
գիւ խըրգէս	գիւ խըրգէք
գիւ խըրգէ	գիւ խըրգին

⁴⁷ Տե՛ս Չ.Աճառյան, *Հայ բարբառագիտութիւն*, էջ 223-224, **Նույնի**, *Հայոց լեզվի պատմություն*, մաս. 2, էջ 349:

⁴⁸ Տե՛ս Չ.Աճառյան, *Հայ բարբառագիտութիւն*, էջ 223:

Բայերի հոգնակի առաջին դեմքի վերջավորությունը *-ինք*-ի փոխարեն *-անք* է, օրինակ՝ *կուտեհինք > գիւղեանք, բերինք > բ' էրանք* և այլն:

Ապառնիի *պիտի* եղանակիչի առաջին վանկը սղվում է՝ *ղի*, որը ձայնավորից առաջ դառնում է *ղ*, օրինակ՝ *պիտի բերեմ > ղի բ' էրիմ, պիտի ուտեք > ղիւղեք* և այլն⁴⁹:

Ինչ վերաբերում է Ակնի բարբառի բառապաշարին, ապա, ըստ Ա.Քեչյանի, այն ամենից քիչ աղճատվածն է: Նա նաև նշում է, որ էրզրումցիների լեզվից հետո այն ամենից ավելի քաղցրահնչյուն գավառաբարբառն է, և ներկայացնում է իր բնորոշմամբ գունագեղ բառերի շարք, որոնցով հարուստ է բարբառը. *բարբարական* «թափառական», *մճրիկ* «դյուրաշարժ», *շուշտիկ* «շվարած, ապուշացած», *լափստիկ* «թափթփված հագուստով մարդ», *խնդամուղիկ* «շարունակ խնդացող», *անպարտակ* «անգուսպ» և այլն⁵⁰: Ըստ Ա.Քեչյանի՝ մինչև XIX դ. կեսերը ակնցի տղամարդկանց, հատկապես առևտրականների բանավոր և գրավոր խոսքում գերակշռում էին թուրքերեն և մանավանդ արաբերեն բառերը, իսկ կանանց լեզուն հիմնականում բարբառային էր, թուրքերեն բառերը քիչ էին:

3. Ակնի բարբառով մեզ հասած ժառանգությունը

Այսօր շատ է կարևորվում Ակնի բարբառով մեզ հասած ժառանգությունը, քանի որ բարբառի կորստից հետո բարբառով գրվածքները զանձի արժեք ու նշանակություն են ստանում ինչպես սովյալ լեզուն կրող ժողովրդի մշակույթի, այնպես էլ ապագա հետազոտողների համար: Այն բարբառի պահպանման և հետագա ուսումնասիրությունների ծավալման գրավականներից մեկն է:

Ակնը մեծ դեր է խաղացել հայ մշակույթի զարգացման գործում: Այն գրչության կենտրոն էր. այդտեղ գրվել են բազմաթիվ մատյաններ ու հիշատակարաններ: Ակնը, որտեղից սերել են ժողովրդական շատ երգիչներ, հայտնի էր իր ժողովրդական երգերով, անտունիներով, տաղերով: Ա.Զոպանյանը գրում է, որ «Ակնեն, Ապուչեխեն, Կամարա-

⁴⁹ Տե՛ս նույն տեղում:

⁵⁰ Տե՛ս Ա.Քեչյան, նշվ.աշխ., էջ 363-364:

կապեն և Հայ Հոռոմ գիւղերէն բղխած անտունիները, վիպերգները, սիրերգները, հարսներգները, օրօրները, աղօթերգները, մահերգները, և սրտաճմլիկ պանդուխտի երգերը, մանաւանդ պանդուխտներու կանանց երգերը, ամէնէն փափուկ, նրբագագ, կատարելաձև, հակիրճ ու հիւթալից, ու նոյն ատեն՝ մինչև ցաւն երգած ատեն՝ ամէնէն լուսաւոր ու ներդաշնակ էջերն են հայ ժողովրդական բանաստեղծութեան»⁵¹:

Ակնի բարբառով ժամանակին հրատարակվել են բազմաթիվ ազգագրական նյութեր, գրական ստեղծագործություններ:

Նախ պետք է նշել արդէն հիշատակված Սմբատ Մ. Գարրիելյանի «Ակնայ գաւառաբարբառը եւ արդի հայերէն լեզուն», Հովսէփ Կ. Ըանիկյանի «Հնութիւնք Ակնայ» և Առաքել Մ. Քեչյանի «Ակն եւ ակնցիք» գրքերը: Կարևոր նշանակություն ունի Արշակ Հ. Չոպանյանի կողմից համախմբված և Փարիզում 1940 թ. հրատարակված «Հայրեններու բուրաստանը» ժողովածուն, որի 4-րդ մասը նվիրված է «Ակնայ հայրեններին»՝ օրորոցայիներ, հարսանեկան երգեր, անտունիներ, մահերգեր և այլն, իսկ վերջում հավելված է մի բառարան, որտեղ բացատրված են նաև գրքում գործածված բարբառային բառերը⁵²: Հիշատակելի են Ակնի գավառի Ապուչէի գյուղում ծնված բանասեր, բանաստեղծ, հասարակական գործիչ Թորոս Մ. Ազատյանի՝ 1943 թ. Մտամբուլում տպագրված «Ակն եւ ակնցիք» գիրքը, որի մի բաժինը խորագրված է՝ «Գոհարներ Ակնայ ժողովրդական բանահիւսութեան»⁵³, հայ մանկավարժ Մելքոն Գալենտերի՝ 1948 թ. Հալեպում հրատարակած «Ակնայ բարբերն ու գաւառաբարբառը» պատմվածքների ժողովածուն⁵⁴: Ակնի բարբառով տպագրվել են նաև երգիծական գործեր, ինչպէս ծնունդով ակնցի Հովհաննէս Ամիրենցի «Ծիծաղներ: Կատակերգութիւն Ակնայ գաւառաբարբառով: Դրվագներ բնատոհ-

⁵¹ Ա.Չոպանեան, Յառաջաբան, էջ XVII:

⁵² Տե՛ս Հայրեններու բուրաստանը, համախմբեց եւ ի լոյս ընծայեց քննական ուսումնասիրութեամբ մը եւ ծանօթագրութիւններով **Արշակ Չոպանեան**, Փարիզ, Հ.Բ.Ը. Միութեան հրատ., 1940, էջ 415-483, բառարանը՝ էջ 490-540:

⁵³ Տե՛ս **Թ.Ազատեան**, Ակն եւ ակնցիք. ազգագրական ու կենսագրական յիշատակարան, Իսթանպուլ, տպագր. Յ.Աբրահամեան, 1943, էջ 29-48:

⁵⁴ Տե՛ս **Մ.Գալենտեր**, Ակնայ բարբերն ու գաւառաբարբառը, Հալեպ, տպ. Անի, 1948, էջ 13-148:

միկ գաւառական կեանքէ» զիրքը՝ հրատարակված 1910 թ. Կ.Պոլսում և այլն⁵⁵:

Ակնի բարբառով մեզ հասած բազմաթիվ երգերից մի քանիսը հավաքել, մշակել և 1895 թ. հրատարակել է Կոմիտասը⁵⁶: Ակնի բարբառով ժողովրդական երգերի շարք է հրատարակել Գարեգին Մրվանձտյանցը⁵⁷, որտեղ առանձին բաժին են կազմում Ակնի անտունիները, մահերգերը⁵⁸:

Այսօր էլ Ակնի բարբառով տպագրվում են ժողովրդական երգեր: Օրինակ՝ վերջին տարիներին Երևանում տպագրվել է երկու գրքույկ՝ «Ակնը՝ ավանդական երգի բնօրրան» և «Ակնա ժողովրդական երգաշար» խորագրերով⁵⁹: Ընդ որում վերջին գրքույկն ունի Ակնի ժողովրդական երգերով ձայնագրված խտասկավառակ:

Ստորև տրվում են Ակնի բարբառով որոշ նմուշներ, այդ թվում՝ Հ. Թումանյանի «Սուտասանը» հեքիաթը:

Սուղբսանը

Կուլլի, չիլլի թաքավոր մը: Աս թաքավորը իր էրգըրին մէշ կու հայդընէ.

– Վէլ անանգ սուդ մ՛ըսէ, ուր էս ըսիմ՝ սուդ է, իմ թաքավորության գէսը անօր գուդամ:

Չօբան մը գուքա: Կըսէ.

⁵⁵ Տե՛ս **Յ.Յ.Յ.Ամիրենց** (Յ. Օտա-Բագարատ), Ծիծաղներ: Կատակերգութիւն Ակնայ գաւառաբարբառով: Դրվագներ բնատոհմիկ գաւառական կեանքէ, Կ. Պոլիս, Ա. հ, 1910, **Նույնի**, Ակնցի Հաճի աղան եւ սամաթիացի Գոհար սուտուն: (Երեք հարսնիք մէկ յարկի մէջ): Քրքջալիր կատակերգութիւն երեք արար, [Կ. Պոլիս], Յ.Աբրահամեան, 1920:

⁵⁶ Տե՛ս Շար Ակնայ ժողովրդական երգերի, ձայնագրեց **Կոմիտաս վարդապետ**, [Էջմիածին], տպ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, 1895:

⁵⁷ Տե՛ս **Գ.Վ.Մրուանձտեանց**, *Համով-հոտով*, Կ.Պոլիս, տպագր. Գ.Պաղտատլեան (Արամեան), 1879, էջ 290–304:

⁵⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 295-299, 299-304:

⁵⁹ Տե՛ս **Մ.Գ.Շահիկյան**, Ակնը՝ ավանդական երգի բնօրրան [Արևմտյան Հայաստանի Ակն քաղաքի XI-XX դդ. պատմությունն ու մշակույթը], Ե., Ա. հ., 2014, **Ա.Ոսկանյան**, Ակնա ժողովրդական երգաշար, Ե., Անահիտ, 2013:

– Թաքավորն արբաս կենա, իմ հարը դ՛ագանագ մ՛ունէր, ուր ասկէ գերզնցընէր, էրզինքին մէջ ասխէրը գու խառնէր:

– Կու բադահի, – պադասխան գուդա թաքավորը, – իմ բաբն ալ չիբուլի մ՛ունէր. մի ձայրը բ՛ էրանին գու դ՛ ընէր, մէգալ ձայրը գերզնցընէր, արեգ՛ ագէն գու վառէր:

Սուդ ըսողը գ ըլօխը քերէլէն դո՛ւրս կէրթա:

Թարզի մը գ՛ ուքա: Կըսէ.

– Նէրօդութո՛ն, թաքավոր, էս վաղ դի գ՛այի, ուշ մընացի: Էրէկ շաղ օրգէվ էգավ, կյաձագնէրը գարգին, էրզինքը բադըմվէցավ, գ՛ ընացէր էյի գարգըդէլու:

– Հա, աղէգ էս ըրէր, – գ՛ ըսէ թաքավորը, – ամմա աղէկ չէյիր գարգըդէր. աս առդուն քիչ մ՛օրգէվ թափէցավ:

Աս ալ դ՛ ո՛ւրս կէրթա:

Նէրս կու մըննէ ախկատ գ՛էդացի մը՝ օ՛րբն թէվին դագը:

– Դ՛ ուն ի՞ շ կուգէս, ա՛ յ մարթ, – կու հարցընէ թաքավորը:

– Ինձի օ՛րբն մ՛օսկի էս պարտք, էգէր էմ դանիմ:

– օ՛րբն մ՛օսկի՞, – կու գարմանա թաքավորը, – սուտ կըսես, էս քեզի օսկի բարտք չիմ:

– Ագսր սուտ կըսիմ, քու թաքավորութեան գէսը դուր:

– Չէ՛, չէ՛, շիդդակ կըսես, – խօսքը գու փօխէ թաքավորը:

– Շիդդակ կըսիմ նը, օ՛րբն մ՛օսկին դուր:

Հարսնէրգ⁶⁰

Մենք ալ, ադուր աղջիկ, եկեր ենք ձերը,

Քեզ հագար նագերով տի տանինք մերը:

Աղջիկն ալ կու տանին առօր ու փառօր,

Մագերն ալ կու հիւսին սըրմայի թէլօր:

Քեզ տանիլ ենք եկեր, մայրիկդ լացո՛ւր,

Ոտքըդ ուղուրոք է, դուն մեզ խնդացուր:

Մի՛ լար ադուր աղջիկ, աչկունքըդ կ՛արի,

Քեզ պգտիկ կարգողին տընասկն աւերի:

⁶⁰ Բերվում է ըստ՝ **M.Barsamian**, Histoire du village qui meurt: Aboutcher, de Aghen (Turquie, 1895-96), Paris, 1990, էջ 20:

Չի ծախուած, չի փոխուած, հարս եղեր մըզի,
 Եախութ, զիւմրիւթ անգին, մալ եղիր մըզի:
 Քալէ՛, մանտրիկ քալէ՛, պոյիկդ երեւայ,
 Ականջդ իս արե, ի՛նչ ըսեմ՝ ամուր ծըրարե:
 Թէ գան ու հազար ըսեն, հազարէն մէկ խօսք լըսե,
 Ան ալ չը գիտեմ ըսե, դուն քեզ հազար չարէն ազատե:
 Նազ ըրէ՛, նազըդ վերցընեմ, ալաթօզ շաքար կերցնեմ,
 Ջուր ուզես՝ շէրպէթ խըմցընեմ:

Ա՛յ իմ հարստի դըստրիկ,
 Ծոցըդ էգի, ծառդ արմաւենի,
 Քու ծառն ու ճեղըդ ոսկի,
 Քու տերեւը վարդ կու մանի,
 Ես քու ծոցուն տէր պիտէի,
 Ճըղերուդ արմաւ քաղէի:

Ողբերգներ⁶¹

Մայրիկն է տաքուկ հացիկ, ո՛վ ուտե, կու կշտացնէ,
 Հայրիկն է անպակ գինի, ո՛վ խըմե, կու արբեցնէ,
 Աղբարն արեգակ նըման, սար ու ձոր հաւսար կու ցաթէ:

Կագուն ձագը տանին, մարը կու ճըչէ,
 Գիշեր ցորեկ կասկամ կուլլի կու կանչէ,
 Կանչէ հէ՛յ, մարիկ, կանչէ՛,
 Ատ խըտար կանչելդ ալ ի՞նչ է:

Հա՛ւ եար, դուն ինչո՞ւ կուլաս,
 Դուն կ'երթաս, ես մէն կու մընամ,
 Յերեկն հըլա, հըլա,
 Ծով գիշերն ի՞նտոր տի մընամ:

⁶¹ Նույն տեղում, էջ 26:

Ջեմմա Բառնասյան

(ՀՀ ԳԱԱ Ն.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ)

ՄԱՆԱԶԿԵՐՏԻ ԴԵՐԻԿ ԳՅՈՒՂԻ ԽՈՍՎԱԾՔԸ

Մեծ եղեռնի բերած արհավիրքների շարքում մեր ինքնության ամենամեծ վկայի՝ հայոց լեզվի կրած մեծագույն վնասներից մեկն էլ արևմտահայերենի և արևմտահայ բարբառների գլխին կախված կորստյան սպառնալիքն է: Հարյուր տարվա ընթացքում բնօրրանից կտրված և աստիճանական մահվան դատապարտված բարբառներից շատերն արդեն վերացել են և չունեն լեզվակիրներ: Այդ առումով՝ իստ կարևոր են արդեն իսկ գործածությունից դուրս եկած արևմտահայ բարբառների նկարագրությանն ուղղորդված աշխատանքները: Հարկ է նշել, որ նկարագրական բարբառագիտության ասպարեզում համապատասխան հարուստ փորձը պակասում է:

Այնուամենայնիվ, առաջնորդվելով բարբառագիտական մենագրություններում Ն. Աճառյանի կողմից որդեգրված սկզբունքով ու հաջորդականությամբ, լեզվաբան-բարբառագետների ներկայիս սերունդը ձգտում է լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնում կուտակված բարբառային միավորների գրանցումներից և առկա բանահյուսական նմուշներից քաղել համապատասխան տեղեկություններ՝ այս կամ այն բարբառային խոսվածքի նկարագրությունը տալու համար: Այդ առումով հատկապես կարևոր են «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով»¹ (այսուհետև՝ Ծրագիր) իրականացված գրանցումները: ՀՀ ԳԱԱ Ն.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի աշխատակիցներս բարբառային միավորներ գրանցելիս միշտ առաջնորդվել ենք արևմտահայ բարբառների խոսվածքները գրառելու առաջնահերթությամբ: Այդ նույն սկզբունքով անցյալ դարավերջին գործի կարևորությունն ըմբռնող շատ մտավորականներ, ըստ վերոհիշյալ Ծրագրի, հանրապետության տարբեր տարածքներում գրառել և ինստիտուտին են հանձնել ցեղասպանությունից փրկվածների մայրենի խոսվածքները:

¹ Տե՛ս նաև *Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր*, Ե., 1977:

Դրա շնորհիվ հնարավորություն ունենք նկարագրորեն ներկայացնելու տասնամյակներ առաջ գրառված, բայց հիմա արդեն մեռած համարվող այս կամ այն բարբառային խոսվածքը: Ըստ մեր հավաքած տեղեկությունների՝ «մեռած» կարելի է համարել նաև Մանազկերտի Դերիկ կամ Դերլկ գյուղի խոսվածքը:

Մեծ եղեռնից հետո Անդրանիկի զորքի ուղեկցությամբ Արևելահայաստանում իրենց փրկությունը գտած գաղթական հայերի մի ստվար զանգված բնակություն հաստատեց Շիրակի մարզի սահմանամերձ գյուղերում՝ առաջին իսկ հնարավորության դեպքում *էրզհր* վերադառնալու հույսով: Գյումրիից 6 կմ հեռավորության վրա գտնվող սահմանամերձ գյուղերից մեկում՝ Մոլլա-Մուսայում, մինչև 1922 թ. բնակվում էին կարափափախ ցեղի թուրքեր: Հայաստանի կառավարության որոշմամբ նրանց տեղահանել ու վերաբնակեցրել են Ամասիայի շրջանում, իսկ այդ գյուղն աստիճանաբար դարձել է բացառապես գաղթականներով բնակեցված և հետագայում Ոսկեհասկ անվանակոչված մի շեն բնակավայր, ուր ապաստան են գտել հատկապես Մուշի, Խուրթի ու Կարսի 43 տարբեր գյուղերից գաղթածներ: Աստիճանաբար ձևավորվել են գյուղի 3 թաղերը՝ մշեցիների, խութեցիների և, այսպես կոչված, եռլականների (տեղացիների), թեև այդ թաղում ապրում էին Կարսի մարզի գյուղերից գաղթածները:

Հայտնի իրողություն է, որ հայրենի բնօրրանից բռնագաղթածները նոր բնակատեղի ընտրելիս ձգտել են իրենց գերդաստաններով, համագյուղացիներով խմբավորվել նոր բնակավայրի առանձին թաղերում, որն էլ նպաստել է մայրենի բարբառներն ու խոսվածքներն իբրև հաղորդակցման միջոց գործածելուն ու պահպանելուն: Տարբեր թաղերում ապրող և տարբեր բարբառներով խոսող ոսկեհասկցիները, ինչպես հնաբնակներն էին վկայում, սկզբնական շրջանում շփման դժվարություններ են ունեցել, սակայն տասնամյակների ընթացքում բարբառային էական տարբերությունները նկատելիորեն հարթվել են, ինչն արդեն իսկ նկատելի էր XX դ. 80-ական թթ., երբ ամեն ամառ արևմտահայ բարբառները ըստ վերոհիշյալ ծրագիր-հարցարանի գրառելու նպատակով գործուղվում էի Ոսկեհասկ: Այդ ընթացքում գրանցել են Մշո գավառի Մկրագոմ, Քրդագոմ, Հացիկ, Կոպ, Բոստաքյանդ, Խուրթի Փիջունք և Կարսի Ուչքիլիսա գյուղերի խոսվածքները:

Արևմտյան Հայաստանից գաղթած և Ոսկեհասկ գյուղում վերաբնակվածների գերակշիռ մասը Մշո դաշտի 25 տարբեր գյուղերից էր գաղթել: Դերիկ գյուղից ընդամենը 2-3 գերդաստան էր ապաստանել Ոսկեհասկում: Մանազկերտում թուրք և քուրդ ջարդարարների իրականացրած ցեղասպանությունից քչերն էին փրկվել՝ մի կերպ հասնելով Մշո դաշտի մեծ բնակավայրերից մեկը համարվող Խասգեղից գաղթի ճանապարհը բռնած գաղթականների քարավանին և երկար դեգերումներից հետո փրկություն գտել Արաքսի այս ափին: Նրանց վկայությամբ XIX դ. կեսերին Մանազկերտի տարբեր գյուղերից գաղթածներ կան նաև Ապարանում, սակայն Դերիկ գյուղից գաղթածների մասին տեղեկություններ չկան: Նոր բնակավայրում՝ Ոսկեհասկ գյուղում, մինչև XX դ. 70-ական թթ. դերիկցիները (համագյուղացիների և հենց իրենց խոսքով՝ դերկըցիներ) հնարավորինս պահպանել էին իրենց մայրենի խոսվածքը:

Ըստ վերոհիշյալ Ծրագրի՝ Մանազկերտի Դերիկ գյուղի խոսվածքը 1987 թ. սկսել և մեծ ընդմիջումից հետո (երկրաշարժի և այլ հանգամանքների պատճառով) ավարտին է հասցրել մայրս՝ բանագետ, ազգագրագետ ուսուցչուհի Մարուսյա Հովհաննիսյանը: Նա ծնվել և մինչև բուհ ընդունվելն ապրել էր Ոսկեհասկում: Դեռ 1960-ական թթ. նա իր համագյուղացիներից գրառել էր ջարդերի, գաղթի և նրանց հայրենի բնօրրանի մասին վկայություններ, որոնք ժամանակին տպագրվել են «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթում և մանկավարժական մամուլում, իսկ հետագայում գրառումները հանձնել է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտին: Շիրակի մարզի Ոսկեհասկ գյուղի պատմությանը, ազգագրությանը և բանահյուսությանը նվիրած իր ուսումնասիրությունները Մ. Հովհաննիսյանը հետագայում ամփոփել է արժեքավոր մի գրքում, որտեղ ներկայացրել է նաև Դերիկ գյուղից գաղթածներից քաղած տեղեկություններ, բանահյուսական պատահիկներ²: Գրանցումների առաջին փուլում տարեց բարբառախոսներից հընթացս գրառվել ու ձայնագրվել էին նաև բանահյուսական հետաքրքիր նյութեր, որոնք հետագայում տեղ գտան Ոսկեհասկ գյուղի ազգագրությանը նվիրված վերոհիշյալ գրքում: Մանազկերտի Դերիկ գյուղի խոսվածքն ըստ Ծրագրի գրա-

² Տե՛ս Մ. Հովհաննիսյան, *Ոսկեհասկ (Մոլլա-Մուսա) գյուղի պատմությունը, ազգագրությունը և բանահյուսությունը*, Ե., 2010:

ռելիս Մ. Հովհաննիսյանի համար տեղեկատու բարբառախոսներ են եղել գյուղի՝ Էրզրից գաղթած նահապետներից երկուսը՝ 87-ամյա Մանուկյան Եղիշը (Դերկա Էղիշ) և Մանուկյան Խաչոն (Դերկա Խաչո): Ինչ վերաբերում է նրանցից գրառված բանահյուսական նյութերին, դրանք գտնվում են ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի պահոցում: Վերոհիշյալ գրքում բերված է նաև Դերիկ գյուղի խոսվածքով գրառված «Արա Գեղէժիգ ու Շամիրամ» ավանդազրույցը:

Տառը տարվա ընդմիջումից հետո Մ. Հովհաննիսյանի կողմից խոսվածքի գրանցումն ավարտին հասցնելու փորձն այն դժվարությունն ուներ, որ 1988 թ. երկրաշարժից խիստ տուժած գյուղից շատերն էին արտագաղթել, տարեց բարբառախոսներն արդեն վախճանվել էին, իսկ նրանց զավակներն ու թոռները լավ չէին կողմնորոշվում տեղեկություններ հաղորդելիս, համագյուղացիների հետ հաղորդակցվում էին միջբարբառային խոսվածքով՝ հնարավորինս օգտագործելով նաև գրական արևելահայերենը: Հիմա արդեն, երբ գյուղում մնացած դերիկցիների հատուկենտ ընտանիքների նոր սերունդը միայն աղոտ պատկերացում ունի պապերի բնօրրանի և սեփական տոհմաճառի մասին, հենվելով Մ. Հովհաննիսյանի կողմից ըստ վերոհիշյալ Ծրագրի գրանցված նյութերում առկա տեղեկությունների վրա, կարելի է տալ խոսվածքի նկարագրությունը:

«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում» Դերիկ տեղանունը նշվում է *Դերիկ* ձևով³: Բառարանում տեղեկատվություն կա այն մասին, որ այդ գյուղի բնակիչները 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ հիմնականում գաղթել են Կովկաս: Մանազկերտ գավառի Դերիկ գյուղի մոտակայքում էին գտնվում հայոց հեթանոսական անցյալի սրբավայրերից մեկի՝ Աշտիշատի տաճարի ավերակները: Ունեցել է եկեղեցի՝ Ս. Աստվածածին:

Մշո բարբառը, որին պատկանում է նաև Դերիկի խոսվածքը, տարածված է Վանա լճի հյուսիսային, արևմտյան և հարավարևմտյան սահմաններում: Հյուսիսից նրա կիրառման սահմանը հասել է մինչև Ալաշկերտ (ներառյալ), արևմուտքից՝ մինչև Բուլանուխ,

³ Տե՛ս Թ.Խ.Հակոբյան, Մո.Տ.Մելիք-Բախշյան, Հ.Խ.Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 2, Ե., 1988, էջ 88:

հարավից՝ մինչև Բաղեշ: Այդպիսի մեծ տարածք ընդգրկող բարբառի խոսվածքներն իհարկե զգալիորեն տարբերվում են միմյանցից: Տարբերություններն առկա են թե՛ հնչյունական և թե՛ ձևաբանական համակարգում:

Մշո բարբառի Մանագկերտի Դերիկ գյուղի խոսվածքի գրառումները հնարավորություն են տալիս նկարագրական եղանակով ներկայացնելու այդ ինքնատիպ խոսվածքը: Կարելի է ասել, որ առավել վստահելի և արժեքավոր են Ծրագրի առաջին երկու (հասկացական-բառանվանողական և բառիմաստային) բաժինների, ինչպես նաև քերականական իրողություններն արտացոլող բաժնի գերակշիռ մասի գրանցումները և Հ. Թումանյանի «Մուտասանը» հեքիաթի «թարգմանությունը», որի միջոցով կարելի է ստուգել բառանվանական և քերականական տարբեր իրողություններ:

Այս խոսվածքի գրանցումներում առկա իրողությունները նկարագրելիս հնարավորություն ունենք դրանք հընթացս համեմատել Մշո բարբառի տարբեր խոսվածքներում առկա ձևերի հետ և որոշ դեպքերում մատնանշել խոսվածքի յուրահատկությունները:

- **Բառասպաշարային** զգալի տարբերություններ Դերիկ գյուղի խոսվածքը Մշո բարբառի այլ խոսվածքների համեմատությամբ չի դրսևորում: Որոշ դեպքերում հանդիպում են հոմանշային տարբերակներ, ինչպես, ասենք, **թօն** և **անձրեկ** բառանվանումներն իբրև հոմանիշներ են ներկայացվել Թումանյանի հեքիաթի «թարգմանության» մեջ: Օրինակ՝ *Հ ընծուզ օր շաղ անձրեկ էգավ... Իդա հ՛ առավօդուն քիճ մի թօն մաղէծ:*

Մշո բարբառի տարբեր խոսվածքներում առկա է **անձրև** բառանվանումը: Հնարավոր է, որ տասնամյակներ շարունակ կարսեցիների հարևանությամբ ապրելու ընթացքում է **թօն** ձևը թափանցել դերիկցիների բառասպաշար:

- **Բառիմաստային** խնդիրներ քննելիս դարձյալ կարելի է նշել, որ լեզվամտածողությամբ պայմանավորված տարբերություններ Մշո բարբառի այլ խոսվածքներից գրեթե չկան: Ասենք, օրինակ, 511 կետի պահանջով նշվում է **կուղ** (կուտ) բառի բազմիմաստությունը՝ *հացահատիկի տականք, թռչունի կեր, կորիզ և թոնրից պոկված հաց*: Հենց այդ իմաստներն էլ նշված են Մշո բարբառի այլ խոսվածքների գրանցումներում: Ավելացնենք, որ բարբառախոսին անձանոթ հասկացությունները այս կամ այն կերպ սովյալ կետի պահանջներին համա-

պատասխանեցնելու միանգամայն հասկանալի ցանկությունը անմիջապես նկատելի է դառնում մյուս բաժինների ընձեռած նյութերը համադրելիս: Շատ դեպքերում բառային զուգաբանությունների բաժնում առկա նախադասությունների թարգմանություններն օգնում են խոսվածքի՝ ժամանակային մեծ ընդմիջումով գրանցված տարբեր բաժինների նյութերի հաղորդած տեղեկությունները ստուգելու գործին:

• **Քերականական** զուգաբանությունների բաժնում առկա իրողությունները ներկայացնենք ըստ ընդունված կարգի: Ընդհանուր զծերով տանք խոսվածքի անվանական (գոյական, ածական, թվական, դերանուն) և բայական համակարգերը բնութագրող տեղեկություններ:

1. Գոյական անուն

Գոյականի հոգնակի թվի կազմությունը

Ինչպես հայերենի բոլոր դրսևորումներում, այնպես էլ Մշո բարբառում և նրա բոլոր խոսվածքներում հոգնակի թվի քերականական իմաստն արտահայտվում է հոգնակիանիշ թեքություններով: Մշո բարբառում առկա *ք, էք, էր, ներ, էնք, անք, իք, դիք, վրդիք, դանք, վրդանք, վանք, րանք* և նմանօրինակ պարզ ու բաղադրյալ հոգնակիակերտ բոլոր թեքություններն էլ գործածական են այս խոսվածքում: Սակայն առավել գործածական են **-էր, -նէր** հոգնակիակերտ մասնիկները:

• Բազմավանկ բառերի հոգնակիի կազմությունն արտացոլող կետում (560) հիմնականում փաստված է **-նէր** հոգնակերտի գործածությունը՝ *անուն- անըններ, դ'անագ-դ'անգըներ, ծաղիգ-ծաղըներ, շաբիգ-շաբըներ, պառավ-պառվըներ, տախտագ-տախտըներ* և այլն: Սակայն գրանցված են նաև **-էր** հոգնակիակերտ ստացող բազմավանկ բառեր՝ հավանաբար **ն**-ով ավարտվող բառի և **-նէր** հոգնակիակերտի միացման արդյունքում առաջացող կրկնակ բաղաձայնից խուսափելու և արտասանությունը հեշտացնելու համար, ինչպես՝ *աման-ամներ, բերան-բերներ*: Գործածական է նաև **-դան** հոգնակիակերտը՝ *հ'ընգեր-հ'ընգերդան, գ'ըմէշ-գրմշըդան*: Առավել սակավադեպ են **-ան** (էձ-իձան, ձի-ձիյան), **-վան** (էշ-իշվան, տեր-տիրվան) թեքությունները: Ինչպես արդեն նշել ենք, հասկացական-բառանվանողական զուգաբանությունների բաժնում ներկայացված նախադասությունների մեջ առկա ձևերը կարող են օգնել բառի հոգնակին կազ-

մեկիս: Օրինակ՝ *տէխ>տէխեր* կազմությունից բացի, պիտի նշել նաև *տէխրան* հոգնակին, որն առկա է *խխունջ* հասկացության բառանվանումը ստուգող կետում: Բերենք օրինակ՝ *Նամ տէխրան օրօջիզ (խխունջ) շաղ կէղի*: Գործածական է նաև *տէխրաներ* (եր+ան+եր) ձևը:

▪ Մեկուկեսականի բառերը **-ներ** հոգնակիակերտ են ստանում, ինչպես՝ *օսկըռներ*, *մանդըռներ* և այլն:

▪ Միավանկ վերջնաբաղադրիչով բարդ բառերի հոգնակիի կազմությունը հիմնականում որոշակի օրինաչափություն չի դրսևորում. դրանք կարող են ստանալ **-եր** (մաձնաջըրեր), **-ներ** (խօրկուրներ) կամ **-դան** (խօրկուրդան), **-դիկ** (տեկերգընդիկ) հոգնակիանիշ թեքությունները:

• Ազգակցություն ցույց տվող բառերի հոգնակին կազմելիս կիրառվում են **-եր**, **-դիկ** մասնիկները, ինչպես՝ *քուրեր* և *քուրվըդիկ*, *ախպըրդիկ*: Իսկ *մարդ* բառը ստանում է **-եր** հոգնակիակերտը՝ *մարտեր*:

• Գրաբարյան **ն** վերջնահնչյունը հոգնակի թվում վերականգնվում է, ինչպես՝ *եզներ*, *ձեռներ*, *օղներ*:

• Չայնավորով ավարտվող բազմավանկ բառերի համար սովորական է **-եկ** հոգնակիակերտ ընդունելը՝ *կաշի-կաշեկ*, *խայլի-խայլեկ*, *փեսա-փեսեկ*:

• Տոհմի, գերդաստանի ճանաչված անդամներից մեկի անվանը կցվելով՝ **-ներ** ձևույթը հավաքական իմաստ, ազգանվան արժեք է տալիս անձանվանը, ինչպես՝ *էղօներու Վալօդ* (Եղիազարյան Վալոդ), *Մըռդեներու Խարիբ* (Մուրադյան Ղարիբ) և այլն:

Գոյականի հոլովումը

Դերիկ գյուղի խոսվածքի հոլովական համակարգը միանգամայն համապատասխանում է Մշո բարբառի հոլովական համակարգին: Թերևս միայն որոշյալ հայցականը **զ** նախդրով արտահայտելը, որ շատ բնորոշ է Մշո բարբառի խոսվածքներին, այս խոսվածքի գրանցումներում արտացոլված չէ: Այդ իրողությունը վկայված չէ նաև ծեր դերիկցիներից գրառված բանահյուսական նյութերում:

• Հայտնի իրողություն է, որ ազգակցություն ցույց տվող բառերը հայերենում, ինչպես և Մշո բարբառի տարբեր խոսվածքներում, հիմնականում **ոջ** հոլովման են պատկանում: Այդպես է նաև Դերիկ գյուղի խոսվածքում:

• Կենդանիների անունները հիմնականում **ու** հոլովման են պատկանում՝ *իձու, գիլու, կօվու, կակվու, խավու, ճիդու* և այլն:

• Խոսվածքի գրանցումներում հաստատված է ժամանակահատվածների՝ *վա* հոլովման պատկանելը՝ *ամըրվա, ճըմըրվա, հ'առավօղվա, շապտըրվա* և այլն: Պետք է նշել, որ խոսքի շղթայում ի հայտ է գալիս ժամանակ ցույց տվող բառերի՝ նաև այլ հոլովիչներով ներկայանալը: Խոսվածքում առկա *հ'առդու կանուխ*, *շապտու գրլուխ, գարնան գրլուխ* կայուն բառակապակցություններն այդ մասին են վկայում:

• Հետաքրքիր է մարդկանց անունների հոլովումը: Խոսվածքի գրանցումներում առավել համոզիչ կարելի է համարել այն անձնանունների հոլովված ձևերը, որոնք տարածված և գործածական են բարբառախոսների հարազատ միջավայրում: Դժվար է համոզիչ համարել սեռական հոլովում գրական հայերենի նման **ի** հոլովման ենթարկվող *Առշագի, Ջրվառտի* ձևերը: Նույնը կարելի է ասել **-ի**-ով վերջացող որոշ անձնանունների սեռական հոլովն արտացոլող օրինակների մասին (*Սըրպույու, Թակույու*): Ակնհայտ է, որ այդ անձնանունները գործածական չեն տվյալ խոսվածքում: Այլ պատկեր ենք տեսնում բարբառախոսներին առավել ծանոթ անձնանունների սեռական հոլովածները փնտրելիս: Վերոհիշյալ անունների կրճատ ձևերը՝ *Առշօ, Ջրվօ, Բակօ, Գըրկէ, Սըրկէ*, սեռական հոլովում վերջավորություն չեն ստանում, ինչպես *Խաճօ կընիգ* (Խաչոյի կինը), *Ջագօ ախպէր* (Ջագոյի եղբայրը), *Գըրկէ պաբ* (Գրիգորի հայրը): Այս խոսվածքում գրանցված հետաքրքիր ձևեր են սեռական հոլովով կազմությունները՝ *Գուրգէ* (Գուրգենի), *Վագգէ* (Վագգենի): Օրինակ՝

Վագգէ տուն բըլավ: Կարօ Լուսօ տըղէն կարկըվեր ա:

• Բաղաձայնով ավարտվող անձնանունները սեռական հոլովում ունեն **ա** (*Մատիգ-Մատըգա, Ըռոզիգ-Ըռօզգա*) կամ **ի** հոլովիչը՝ (*Խուզաս-Խուզասի, Խագար-Խագարի*):

• Ծրագրով տեղանունների հոլովմանը նվիրված գրանցումներում նույնպես կարելի է առանձնացնել և առավել ընդունելի համարել բարբառախոսներին ծանոթ տեղանունների հոլովումն արտացոլող ձևերը՝ *Մասնու, Սըշու, Վանա, Խարսա* և այլն:

• Մշո բարբառի խոսվածքներին բնորոշ է հոգնակի թվով արտահայտված գոյականը **ու** հոլովման ենթարկելը: Այդպես է նաև այս խոսվածքում՝ *տընէրու, ջըրէրու, օսկընէրու* և այլն:

• Ներգոյականի արտահայտությունը փաստող բառահողվածի դիմաց գրանցված ձևերից պարզ է դառնում, որ Դերիկ գյուղի խոսվածքում, ինչպես և Մշո բարբառի այլ խոսվածքներում, ընդունված է սեռական հոլովով դրված բառով և *մեջ* հետադրությամբ ներգոյականի իմաստ արտահայտելը: Դրան համարժեք է նաև հայցական հոլովաձևով ներգոյականի իմաստ արտահայտելու հնարավորությունը, ինչպես՝ *տրգու մեճ կամ տիգ, ջրրու մեճ կամ ջուր*:

2. Ածական անուն

• Ածականի բաղդատական աստիճանը կազմելիս գործածվում է սաստկական իմաստ հաղորդող և շեշտով արտաբերվող *-է* բառաձևը՝ *է՛լ հ էրգէն* (ավելի երկար):

• Գերադրական աստիճանը կազմելիս հավելվում է *սամեն* բառի բացառական հոլովաձևը՝ *հ ըմբնուծ ջօճ*:

3. Թվական անուն

• Թվականի բաշխականությունն այս խոսվածքում դրսևորվում է կրկնությամբ, ինչպես՝ *Էրգու-էրգու խընձօր* :

• Մշո բարբառի այլ խոսվածքների նման Դերիկի խոսվածքը դասական թվական կազմելու հատուկ ձև նույնպես չունի: Կարելի է ասել, որ դասական թվականը արտահայտվում է քանակական թվականով, ինչպես՝ *խինգ դասարան, չօրս խունց* (չորրորդ դասարան) և այլն: *Հ՛անձի* կրնիգ, *վեռձի* կրնիգ և նմանատիպ որոշչային կառույցներում առկա է հերթագայության իմաստը: Շատ դեպքերում գուտ նկարագրական ձևով է ներկայացվում դասական թվականը, ասենք, *վըրա* կապի միջոցով՝ *վըրա խինգ էրէխին* (հինգերորդ երեխայի ժամանակ): Այլ կերպ ասած՝ դասական թվականն արտահայտվում է քանակական թվականով:

4. Դերանուն

• Խոսվածքի անձնական դերանունները ճշտությամբ համապատասխանում են Մշո բարբառի մնացած խոսվածքներում առկա ձևերին և հոլովման մեջ էլ տարբերություն չեն դրսևորում: Նկատելի է, որ անձնական դերանունների հայցական հոլովում *գ* նախդրով ձևեր գրանցված չեն: Հնարավոր է, որ բարբառախոսների տված տեղեկությունն է թերի՝ միջբարբառային խոսվածքի ձևավորման հետևանքով:

• Անձնական դերանուններն են՝ **յէս, դու, ընի, մէնկ, դուկ, ընդօկ**: Անձնական դերանունների տրականի արտահայտությանը բնորոշ է **-ի** հավելված ընդունելը՝ **ընձի, քրզի, մրզի, ձրզի**: Ի տարբերություն Մշո բարբառի այլ խոսվածքների՝ անձնական **ես, դու, մէնկ, դուկ** դերանունների հայցական հոլովը **զ** նախդրով չի արտահայտվում. այն տրականաձև կազմությամբ է դրսևորվում՝ **ընձի, քրզի, մրզի, ձրզի**: Բացառական և գործիական հոլովները կազմվում են տրականից՝ **ընձնէ-ընձնօվ, քրզնէ-քրզնօվ, մրզնէ-մրզնօվ**: Նախդրավոր բացառական այս խոսվածքում չեն գործածում: Անձնական դերանվան եզակի երրորդ դեմքի արտահայտությունն է **ընի** կամ **հ ինկ**, ինչպես **Ընի գրնած**: **Հ ինկ գրնած**: Հոգնակի երրորդ դեմքի արտահայտությունն է **ընդօկ**, այսպես՝ **Ընդօկ գածին**:

• Յուցական դերանունները համապատասխանում են բարբառի համար օրինաչափ ձևերին: Հատկապես նշենք այս, այդ, այն ցուցականների եռանդամության դիմաց երկանդամության առկայությունը՝ **իդա, իդա, ինա**, որը սովորական է Մշո բարբառի խոսվածքներում:

• Ո՞վ հարցական դերանվան եզակի սեռականը խոսվածքում արտահայտվում է **որ** հիմքով՝ **վի ը**: Ասենք՝ **Իդա վի ը տունն ա**: 610 կետի պահանջով որոշվում է **ով** դերանվան հոգնակի ուղղականի արտահայտությունը: Մշո բարբառի տարբեր խոսվածքներում այդ դերանունը թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվի համար նույն բառաձևով է հանդես գալիս՝ **վօ ը**, ինչպես՝ **Վօ ը էգավ**: **Վօ ը էգան**. այսինքն՝ հոգնակիությունն արտացոլվում է նախադասության ստորոգյալի թվով: Իսկ Դերիկ գյուղի խոսվածքի գրանցումներում այս կետի դիմաց առկա է հետաքրքիր բառաբաղադրություն՝ **վօ նուվօն** (կից արտասանությամբ): Օրինակ՝ **Վօ նուվօն էգան**:

5. Բայական համակարգ

Դերբայական ձևեր

Խոսվածքն ունի անորոշ, սպառնի, վաղակատար, հարակատար, ենթակայական և ժխտական դերբայներ: Անորոշ դերբան ունի **-ել** և **-ալ** վերջավորություն՝ **աղալ, էրէվալ, արբէլ, բէրէլ և այլն**: **Տալ, լալ, գալ** միավանկ բառերի դիմաց առկա է նախահավելված՝ **իդալ, հ իկալ, հ իլալ**: Խոսվածքում ենթակայական դերբայը ժամանակաձև կազմելուն չի մասնակցում: Այն հանդես է գալիս որոշյի պաշտոնում,

ինչպես՝ *էպօղ-թապօղ խարս*: Գործառուս է նաև փոխանվանաբար, ասենք՝ *Շուղ կարկըվօղ չը փօշմընի*:

Ժխտական դերբայը անորոշի լ-ի անկումով է առաջացել և ժամանակաձև կազմում է միայն օժանդակ բայի ժխտական ձևի հետ: Մասնակցում է սահմանական եղանակի ժխտական խոնարհման ներկա, անցյալ անկատար, ապառնի, անցյալի ապառնի ժամանակաձևերի, ինչպես նաև ենթադրական, հարկադրական, ըղձական եղանակների կազմությանը:

Մշո բարբառին հատուկ է ժխտական խոնարհման ժամանակ ժխտական դերբայի առաջին վանկը շեշտելը: Այդպես է նաև այս խոսվածքում: Օրինակ՝ *յես չըմ է րտա, դու չըս խա սկընա , ընի ջու գա* և այլն: Հետաքրքիր է *չը* ժխտական մասնիկի *ջը* հնչումը ենթադրական և հարկադրական եղանակների բայերի ժխտական խոնարհման մեջ, ասենք՝ *ջը մը նամ, ջու գիմ* կամ *բըղի ջըզըրի*, ինչպես նշված է խոսվածքի գրանցումներում:

Բայական ժամանակաձևեր

• Սահմանական եղանակի ապառնի ժամանակը դերբայով, թե՛ եղանակիչով կազմելու մասին հարցում անող բառահոդվածի դիմաց փաստված է թե՛ *պիսի* և թե՛ *կը* եղանակիչով ձևերի գործառույթը, ինչպես *բըղի ուղիմ, բըղի ուղիս, բըղի ուղա* կամ *կուղիմ, կուղիս, կուղա* :

• Խոսվածքը *ե* խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը զուգահեռաբար կազմում է թե՛ ներգործաձև, թե՛ կրավորաձև, ինչպես *կիսեծի, կիսեծիր, կիսեծ* կամ *կիսի, կիսիր, կիսեծ*:

• Նշենք, որ *ե* խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կազմվում է թե՛ անցյալի ցոյական հիմքով (*չապեծի, չապեծիր, չապեծ*) և թե՛ անորոշի հիմքով (*աբրա, աբրար, աբրամ*) :

• Սահմանական եղանակի վաղակատար ժամանակի ձևերը կազմվում են *-էր* վերջավորությամբ հանդես եկող վաղակատար դերբայի և օժանդակ բայի խոնարհված ձևերի զուգորդմամբ՝ *զըրէր իս, զըրէր իս, զըրէր ա... զըրէր ի, զըրէր իր, զըրէր էր...*:

• Հայտնի է, որ Մշո բարբառում *-էր* վերջավորություն ունեցող վաղակատար դերբայը, օժանդակ բայի հոլովված ձևերի հետ զուգորդվելով, սահմանական եղանակի վաղակատար ներկա ու անցյալ ժամանակաձեռ է կազմում: Սպասելի էր, որ հոգնակի երրորդ դեմքի համար խոսվածքի գրանցումներում կլինեն հարակատար դերբայի -

աձ վերջավորությամբ ձևերը՝ վաղակատարի նշանակությամբ: Ինչպես Մշո բարբառի ամենատարբեր խոսվածքներում, Դերիկ գյուղի խոսվածքում ևս, *հոգնակի երրորդ դեմքի* համար վաղակատար ժամանակի իմաստն արտահայտվում է նաև հարակատար դերբայով՝ **բէրած ա** (նրանք բերել են): Այս մասին նշվում է նաև Մշո բարբառի ուսումնասիրությանը նվիրված մենագրության մեջ. «Այս դեպքում եզակի ձևը բացառված է»⁴: Ավելացնենք, որ վաղակատարի իմաստով այս խոսվածքում հավասարապես գործածական են 2 ձևերն էլ (թե՛ վաղակատարով և թե՛ հարակատարով), ինչպես՝ *Փարէն մօռծած ա տունն, գածած ա շուգէն*: *Փարէն մօռծէր ին տունն, գածէր ին շուգէն*:

• Այս խոսվածքի (ինչպես և Մշո բարբառի այլ խոսվածքների) հարակատար դերբային բնորոշ է **-ուկ** վերջավորությունը՝ *բէրուգ, դըրուգ, գըրուգ* և այլն: Իսկ օժանդակ բայի խոնարհված ձևերի գուգորդմամբ որոշ բայեր սահմանական եղանակի հարակատար ժամանակ կարող են կազմել՝ *քընուգ իմ* և *քընուգ ի* (քնած եմ և քնած էի):

• Քերականական գուգաբանություններն ընդգրկող բաժնի բառահողվածներից մեկի պահանջով ներկայացվում է **է** խոնարհման պարզ բայերի հրամայական եղանակի կազմությունը եզակի թվում: Ըստ գրանցումների՝ դրանք հիմնականում **-ա** վերջավորությամբ են հանդես գալիս, ինչպես՝ *բըռնա՛, գըրա՛, էպա՛, ծիճղա՛, փակա՛*, սակայն կան նաև **-ի** վերջավորությամբ ձևեր. այսպես՝ *աբրի՛, նըստի* և այլն: **Ա** խոնարհման պարզ բայերի հրամայականը կազմվում է ներկայի հիմքով՝ *աղա՛, խաղա՛, պատմա՛* և այլն, իսկ ածանցավորներինը, ինչպես Մշո բարբառի այլ խոսվածքներում (թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվում), կազմվում է անցյալի ցոյական հիմքով և **-ի** վերջավորությամբ՝ *բանծըրծի՛ -բանծըրծէ՛ք, մօռծի՛ -մօռծէ՛կ* և այլն:

• **Չալ** բայի հրամայականը, *արի-արէ՛կ* ձևերից բացի, ունի նաև *էգօ՛* ձևը: Այս ձևն առավել կիրառելի է հարադիր բայի կազմում՝ *բի էգօ՛* (բեր ու արի նշանակությամբ): Հաճախադեպ են նաև *տար էգօ՛, առ էգօ՛* և այլ կապակցություններ: Շեշտվում է վերջին բաղադրիչը: Ընդունելի է նաև դրանց կից գրությունը: Ասենք՝ *Մըր փարէն բիէգօ՛*:

• Հատկանշական է նաև օժանդակ բայի կրկնությունը հաստատական և ժխտական խոնարհման մեջ, ինչպես *յէս իմ տէսէր իմ*: Այդ

⁴ Տե՛ս Ս.Բաղդասարյան-Թափայցյան, *Մշո բարբառը*, Ե., 1958, էջ 110:

մասին են վկայում նաև բառային գուգաբանությունների բաժնում գրանցված բառանվանումների հավաստիությունը փաստող նախադասությունները: Օրինակ՝ *Խօղերու վրբեն շաղ էր նըստեր էր*:

• Որոշյալության իմաստը խոսվածքում ինչպես և առհասարակ Մշո բարբառում միայն **և** հոդով է արտահայտվում՝ *Ձին սաղգավ: Տունըն բըլեր ա*:

Հնչյունական իրողություններ

• Ըստ գրանցումների խոսվածքի բաղաձայնական համակարգը Մշո բարբառի խոսվածքների գերակշիռ մասին բնորոշ քառաշար համակարգի (բ՛-բ-պ-փ և այլն) դիմաց հանդես է բերում եռաշարություն՝ բ-պ-փ: Սակայն խոսվածքն ունի ձայնեղ հագագ՝ **հ՛** (հ ընդեր, չ՛ օվիգ):

• Բառասկզբում խուլ բաղաձայնները՝ պայթական (պ-կ-տ) և կիսաշփական (ծ-ճ), խոսվածքում փոփոխություններ չեն կրել, թեև կան բացառություններ, ինչպես՝ *պղտոր>բըղոր, պիտի>բըղի, ծմակ>ձրմա, պղպջակ>բըխպյոջ* և այլն:

• Խոսվածքի խուլ բաղաձայնները բառասկզբում չեն հնչյունափոխվում, բայց բառամիջում և բառավերջում օրինաչափորեն ձայնեղանում են՝ *աբրուստ, աբուր, պար, կօբ, զաղիգ, լուձ* և այլն:

• Ու ձայնավորին հաջորդելիս **տ** խուլ բաղաձայնը մնում է անփոփոխ (*օկուտ, կարգուտ*), սակայն **ա**-ից հետո էլ չի ձայնեղացել *ճագատ* բառում:

• Բառասկզբի դիրքում շնչեղ խուլ պայթական ու կիսաշփական բաղաձայնները խոսվածքում մնում են անփոփոխ, ինչպես՝ *թան, թանգ, փուշ, քար, ցօրեն, չօր* և այլն:

• Բառամիջում և բառավերջում շնչեղ խուլի խլացումը օրինաչափ է, ինչպես՝ *էպել, չապել, ծապ, թէպ, թանակ* և այլն: Նույն կերպ էլ **ու**ություն ածանցն է **-ուտեն** հնչմամբ հանդես գալիս՝ *բանծրուտեն, ախպրրուտեն, անուշուտեն, կառջուտեն*:

• Բառասկզբի դիրքում ձայնեղ շփական **ղ**-ն հետնալեզվային խուլ շփական **խ** է հնչում՝ *խագ, խուշ, խարիբ, խալմախալ, Խագար, Խուզաս* և այլն: Դրանք հիմնականում փոխառյալ բառեր են:

• Բառամիջում և բառավերջում ձայնեղ շփական **ղ**-ն առկա է հետձայնավորական դիրքում, այսպես՝ *աղ, մաղ, գէղ, մաղել, թաղել* և այլն:

• Բառամիջում **դ**-ն վերածվում է **խ**-ի, եթե նրան նախորդում կամ հաջորդում է խուլ բաղաձայն՝ *խաղալ>խախձուծել*, *քաղակ>քախկըծի* և այլն:

• Բառասկզբի հին հայերենի **խ**-ի դիմաց խոսվածքն ունի ձայնեղ **հ** (**հ'**), ինչպես՝ *հ իշադագ*, *հ իստագ*, *հ իծուն*, *Հ'ագօպ*, *Հ'օվիգ* և այլն: Մա ընդհանրական հատկանիշ է Մշո բարբառի բոլոր խոսվածքների համար:

• Բառամիջի և բառավերջի **հ**-ի դիմաց առկա է թույլ լսվող **յ**, ինչպես՝ *մայ*, *դայիջ*, *շայ*, իսկ որոշ ձևերում՝ **խ**, ինչպես՝ *ակախի*, *պախել*, *ջախրա* և այլն:

• Դերիկ գյուղի խոսվածքին բնորոշ է բառասկզբի **խ**-ի դիմաց **խ**-ի առկայությունը: Այդ մասին են վկայում 740-րդ բառահոդվածի, ինչպես նաև հասկացական-բառանվանողական բաժնի համապատասխան նյութերը: Այսպես՝ *հագ>խագ*, *հագալ>խագալ*, *հագար>խագար*, *հալել>խալել*, *հայ>խայ*, *հայելի>խայլի* և այլն:

1980-ական թթ. Ոսկեհասկ գյուղում Մշո երկու տարբեր գյուղերի խոսվածքներ գուցահեռաբար գրանցելիս իմ բարբառախոսներից փորձում էի տեղեկանալ Մշո բարբառի յուրօրինակ՝ մյուսներից տարբերվող խոսվածքների մասին: Բոլորն էլ նշում էին Մանազկերտի Դերիկ գյուղից գաղթածների խոսվածքը՝ իրենց համար օտարոտի ձևերով, և մատնացույց էին անում հատկապես բառասկզբի **հ** հնչյունի **խ** արտասանությունը (*խաց*, *խարս*, *խօղ*), օժանդակ բայի **ա** տարբերակը՝ *բէրէր ա*, *տարէր ա*, հրամայական եղանակում՝ *խանա՛*, *ժամա՛*, *բրգա՛*: Այդ առիթով նույնիսկ զվարճախոսություններ էին պատմում գյուղի ամենածեր դերիկցիներից մեկի՝ Դերկա Խաչոյի հետ պատահած ծիծաղաշարժ դեպքերից: Բերենք մեկ օրինակ:

Մի անձրևոտ ու մութ գիշեր Դերկա Խաչոն ու իր թոռ Ջնդիկը գյուղի մյուս ծայրից գողանում և դեպի իրենց գոմն են քշում մի եգ: Գիշերային լռության մեջ համագյուղացիներից շատերն են լսում ցեխի մեջ թաղված եզանը գոռգոռոցով քշող թոռնիկին սաստող Խաչոյի իրատական խոսքը. «Ջընդիկ, լա՛օ, «հո՛» մէ՛նա, խրդա՛, բրգա՛, գիշէր ա: Խարիբ յէգ ա, գը բօռա...»: Առավոտյան բոլորն արդեն գիտեին ձախողված գողության մասին: Ինքնատիպ խոսվածքը մատնել էր գողերին:

Մշո բարբառի Մանազկերտի Դերիկ գյուղի խոսվածքն արդեն իսկ չունի բարբառակիրներ: Այդ հանգամանքն ավելի է արժևորում խոսվածքի ժամանակին արված գրանցումները:

Մեր անդրադարձը Մանազկերտի Դերիկ գյուղի խոսվածքին ավարտենք՝ Հովհաննես Թումանյանի «Մուտասանը» հեքիաթի «Թարգանությունը» ներկայացնելով:

Սուղբսան (կամ՝ փրճան)

Կեղի, չեղի, թակավոր մի կեղի:

Իդա թակավոր ուր էրգրրի մեճ հ'իմած կիդա. «Կօն հ'ըմլա սուդ ըսա, օր յես ըսիմ՝ սուդ ա, իմ թակավորուտենի կես ուրին կիդամ»:

Գիկա չօբան մի: Կըսա.

– Թակավոր աբռաս կենա, իմ պաբ գօմպալ մի ուներ, օր իդատեխեն գերգընծուծեր, էրգընկու աստըղներ գը խառներ:

– Կեղի օր,– կըսա թակավոր,– իմ կեկեն լէ խայլօն մի ուներ, մեզ ծեր գը դըրեր ուր բերան, մեզլ ծեր գերգընծուծեր, արեվուծ գը վառեր:

Իդա փրճան ուր գըլուխ քերելեն դուս ա կերտա:

Թարգի մի գիկա: Կըսա.

– Ներօդուտեն, թակավոր, յես թեզ բըդի գի, հ'անկըծա: Հ'ընծուգ օր շադ անձրեվ էգավ, կեձգըներ տըրական, էրգինկ պադռավ, գաձեր ի՝ կարգըղնենկ:

– Խա՛, աղեզ իս էներ իս, հըմը աղեզ մի չըկարգըղներեր: Իդա հ'առավօդուն քիճ մի թօն մաղեծ:

– Իդա լա դուս կերտա: Նես գըմըդի ախկադ գեղածի մի՝ կօդ դըրուգ հ'ընտետագ:

– Դու՞ ինձ ա գուզիս, ա՛յ մառտ,– գը խառծու թակավոր:

– Ընիճի կօդ մի օսկի իս տալիկ, էգեր իմ՝ տանիմ:

– Կօդ մի օսկի՞,– գըգարմանա թակավոր: – Սու՛դ ա կըսիս, յես քըզի օսկի տալիկ չիմ:

– Օտե՛ սուդ ա կըսիմ, քու թակավորուտենի կես տուր:

– Չէ՛, չէ՛, օդօրտ ա կըսիս,– ուր խօսկ գը փօխա թակավոր::

– Օդօրտ ա կըսիմ՝ կօդ մի օսկին տուր:

Գայանե Գևորգյան

(Երևանի Վ.Բրյուսովի անվ. պետական լեզվաբանական համալսարան,
ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ)

ՆԻԿՈՄԵՂԻԱՅԻ ԽՈՍՎԱԾՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Նիկոմեդիայի խոսվածքը գործածվել է Նիկոմեդիայում և նրա շրջակա գյուղերում: Նիկոմեդիայի՝ 1915 թ. Մեծ եղեռնից փրկված բնակիչները գաղթել և բնակություն են հաստատել աշխարհի տարբեր կողմերում, այդ թվում՝ նաև Արևելյան Հայաստանում, որոնց օգնությամբ էլ Հայերենի բարբառագիտական ատլասի (այսուհետև՝ ՀԲԱ) ծրագրով գրանցվել են Նիկոմեդիայի Արմաշ և Խասկալ գյուղերի ենթախոսվածքները: Երկու գյուղերի ենթախոսվածքներն էլ գրանցել է բարբառագետ Դարիկո Կոստանոյանը: Նիկոմեդիայի Արմաշ գյուղի ենթախոսվածքը¹ նա լրացրել է 1985 թ. գարնանը Արարատի շրջանի Նոր կյանք գյուղում բնիկ արմաշցի Գեղանուշ Մինանյանից (ծնվ. 1912 թ.): Բարբառախոսի վկայությամբ՝ 1918 թ. ամբողջ գյուղով տեղափոխվել են Հունաստան: 1947 թ. Գեղանուշ Մինանյանը ծնողների հետ հայրենադարձվել է: Ամուսինը ևս եղել է արմաշցի: 20-րդ դարի սկզբին Արմաշն ունեցել է 1500 բնակիչ: Նրանք զբաղվել են երկրագործությամբ, անասնապահությամբ և շերամապահությամբ: Արմաշում եղել է Դպրեվանք, որը 1915 թ. թալանվել է: Հարևան գյուղերից է Խասկալը, որի խոսվածքը Դ. Կոստանոյանը լրացրել է 1985 թ. Ամռանը բնիկ խասկալցի, երևանաբնակ ութսունամյա Մուշեղ Հակոբյանի օգնությամբ²: Վերջինիս վկայությամբ՝ 1921 թ. գյուղի բնակիչները թողել են բնակավայրը և մեկնել Հունաստանի Մալոնիկ քաղաքը: 1947 թ. եկել են Հայաստան և բնակություն հաստատել Երևանում:

Ըստ բարբառախոսի՝ Խասկալ գյուղը դարեր առաջ հիմնել են Ակն քաղաքից գաղթած հայերը: Խասկալին հարևան էին հայկական հետևյալ գյուղերը՝ Արմալու, Արմաշ, Դաղկեղ, Ֆերիզլի: Ամենամոտ

¹ Արմաշ գյուղի մասին տվյալները բերվում են ՀԲԱ ծրագրով լրացված «Նիկոմեդիայի նահանգ, գ. Արմաշ» նյութից (304):

² Խասկալ գյուղի մասին տվյալները բերվում են ՀԲԱ ծրագրով լրացված «Նիկոմեդիայի նահանգ, գ. Խասկալ» նյութից (283):

բնակավայրը Արմաշ գյուղն էր, որը Խասկալից բաժանվում էր գետով, որին «ծօր» էին ասում: Առևտրի քաղաքներն էին Աղաբազարը (մոտ 1 ժամվա ճանապարհ) և Իզմիրթը (4 ժամվա ճանապարհ): Ըստ բարբառախոսի՝ Նիկոմեդիային քաղաք են ասել, իսկ Աղաբազարը թեն քաղաք էր, բայց քաղաք չէին անվանում:

Խասկալ գյուղն ունեցել է մոտավորապես 800 տնտեսություն: Գյուղում, բացի մեկ թուրք ընտանիքից, բոլորը հայեր են եղել: Գյուղն ունեցել է եկեղեցի՝ Ս.Հակոբ անունով, վարժարան (Արսենյան), որում սովորելիս է եղել բարբառախոսը, սակայն ուսումը կիսատ է մնացել գյուղը հարկադրաբար թողնելու պատճառով: Հետաքրքիր սովորություն է եղել Խասկալ գյուղում. որևէ ընտանիքի, անձի հարսանիք հրավիրելիս մոմ են ուղարկել:

Նիկոմեդիայի խոսվածքը ուսումնասիրված չէ. նրա վերաբերյալ բարբառագիտական գրականության մեջ կան մասնակի դիտարկումներ միայն, մինչդեռ նրա ամբողջական բնութագիրը կարևոր է հայ բարբառագիտության համար:

Նիկոմեդիայի խոսվածքին (ըստ Հ. Աճառյանի՝ Նիկոմեդիայի բարբառ) անդրադարձել է Հ. Աճառյանը³: *Կը ճյուղի բարբառների ընդհանուր բնութագիրը տալիս նա ներկայացրել է Նիկոմեդիայի բարբառը ևս, սակայն խիստ համառոտ. «Նիկոմեդիայի բարբառ.—Այս հայաշատ շրջանը, որ Փոքր-Ասիայի հյուսիսարևմտյան ծայրում աննկուն պահել է հայ լեզուն, երկու գլխավոր քաղաք ունի՝ Նիկոմիդիա և Ստափազար: Սրանց շուրջը ցրված են բազմաթիվ մեծ-մեծ գյուղեր, որոնցից հիշատակելի են Յալովա, Ասլանբեկ, Պարտիզակ...: Այս զանազան տեղերից կան մանր-մունր նմուշներ, բայց մի ամբողջական ուսումնասիրություն չկա»⁴:*

Խոսվածքին անդրադարձել է նաև Գ. Զահուկյանը բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգում կատարելիս⁵:

Նիկոմեդիայի խոսվածքը, ըստ միահատկանիշ ձևաբանական դասակարգման, պատկանում է *Կը ճյուղին*, ըստ վիճակագրական-

³ Տե՛ս Հ. Աճառյան, *Հայ բարբառագիտություն, Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների* (= Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ը), Մոսկուա-Նոր Նախիջևան, 1911, էջ 241, **Նույնի**, *Հայոց լեզվի պատմություն*, մաս 2, Ե., 1951:

⁴ Հ. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, էջ 352-353:

⁵ Տե՛ս Գ. Զահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 133:

բազմահատկանիշ դասակարգման՝ Փոքր Ասիայի կամ արևմտյան բարբառախմբի Պոլսի միջբարբառին:

Սույն աշխատանքում ներկայացվում են Նիկոմեդիայի խոսվածքի Արմաշ և Խասկալ բնակավայրերի հնչյունական և քերականական առանձնահատկությունները համաժամանակյա քննությամբ:

Հնչյունական առանձնահատկություններ

Նիկոմեդիայի խոսվածքում գործառուում են հետևյալ ձայնավոր հնչյունները՝ *ա, ի, է, օ, ու, ը*, որոնք իրենց որակական հատկանիշներով չեն տարբերվում հինհայերենյան ձայնավորներից: *Ա* հնչյունը համապատասխանում է գրաբարյան *ա*-ին: Այն գործառուում է հին հայերենի *բ, գ, դ, ձ, ջ*-ից կամ դրանցից առաջացած խուլերից հետո (*բամբակ-պանբագ, բան-պան, բարակ-պարագ, բարձ-պարց, դաստաս, ձագ-ձաք, գագան-կագան, գանգատ-կանգադ*), *ւ, ն* ռնգայիններից առաջ (*աման-աման, ամիս-ամիս, ամպ-ամբ, մանգադ-մանգադ, մանել-մանել, ցամաքել-ցամքել, քամել-քամել, համար-համար, նշան-նշան* և այլն), ինչպես նաև շչականների հարևանությամբ (*աշուն-աշունք, խարշել-խաշել, խաշել-խաշել, քարշել-քաշել, արժել-արժել, խաշ-խաշ, ճանճ-ջանջ, չանչ-չանչ, չար-չար* և այլն):

Չին հայերենի *ո* ձայնավոր հնչյունին համապատասխանող *օ* ձայնավորը գործառուում է միավանկ և երկվանկ բառերի սկզբում (*որօր, որբօրփ, ոխօխ, ովօվ, ոչխարօչխար, ոջիլօձիլ, ոռնալօռնալ, ոսկիօսկի, որոճալօրօջալ* և այլն): *Օ* է առկա հին հայերենի *բ, գ, դ, ձ, ջ*-ից կամ դրանցից առաջացած խուլերից հետո գտնվող *ո*-ի դիմաց, այսպես՝ *բողկօյողգ, գործօկորձ, դողօտող, գողօկող* և այլն: Այն գործածվում է նաև բառամիջի շեշտակիր (*թոքթօք, լողլօղ, խոզխօզ, խոտխօղ, կոշտկօշող, մումօմ, նորնօր, խմորխմօր, շնորհքշրնօրք, սողոցօրողց, գոռալօրոալ, գովելօգովել* և այլն), ինչպես նաև նախաշեշտ դիրքում գտնվող *ո*-ի դիմաց (*գումեշօմեշ, մորիօմ, ցորենօրեն, փոխելօփոխել* և այլն):

Նիկոմեդիայի խոսվածքում հին հայերենի *բ, գ, դ, ձ, ջ*-ից կամ դրանցից առաջացած խուլերից հետո գտնվող *ու*-ին համապատասխանում է *ու*, ինչպես օրինակ՝ *բուրդօպուրթ, գունդօկունդ, դուռօտուռ, ձուկօծուկ, ջուրօձուր* և այլն: Շեշտակիր *ու*-ի դիմաց նույնպես առկա է *ու* ձայնավոր, այսպես՝ *թուշթուշ, թուրթուր, ութուրթ, սուգսուք, սուրսուր, սուրբսուրփ, ուտելուղել, ուրիշուրիշ* և այլն:

Միավանկ և երկվանկ բառերի բառասկզբում հինհայերենյան *ե*-ի դիմաց գործածվում է *է* ձայնավոր, ինչպես օրինակ՝ *եզն-եզ, եփ-էփ, էլանել-էլլալ, երկու-երգու, երես-երես, երևալ-երեվալ, երկիր-երգիր, երկինք-երգինք* և այլն: *է* ձայնավոր է համապատասխանում նաև բառամիջի շեշտակիր *ե*-ին, այսպես՝ *թեփ-թեփ, խելք-խելք, հետ-հեղ, նեղ-նեղ, վեց-վեց, դեղ-դեղ, ցեց-ցեց, աներ-աներ, ավեր-ավեր, մորթել-մորթել, փեսա-փեսա, շերեփ-շերեփ* և այլն: *Տ*-ից առաջ գտնվող բառասկզբի *ե*-ի դիմաց առկա է *է* կամ *ի* ձայնավոր՝ *երեկոյ-իրիկուն, երեք-իրեք, երիցակին-իրիսգին, բայց՝ երես-երես, երևալ-երեվալ, երեկ-երեզ, երինջ-երինջ* և այլն: Բառասկզբի *ե*-ի դիմաց *ղ* ձայնորդից առաջ միայն *եղբայր* բառում է գործածվում *ա* ձայնավոր (*ախպար*), մյուս բառերում դրան համապատասխանում է *է* հնչյունը, այսպես՝ *երեսուն-էսուն, երկանք-երգանք, երկու-երգու* և այլն: *Ռ* ձայնորդից առաջ գտնվող գրաբարյան *ե*-ին նույնպես համապատասխանում է *է* ձայնավոր, այսպես՝ *բեռն-պեռ, մեռնել-մեռնել, սիսեռն-սիսեռ, մեռոն-մեռուն, ձմեռն-ձրմեռ, ձեռն-ձեռք* և այլն:

Հինհայերենյան *ի* ձայնավորը ևս խոսվածքում փոփոխություններ չի կրել: Բառամիջում և բառավերջում գրաբարյան *ի*-ին համապատասխանում է *ի* ձայնավոր, օրինակ՝ *թի-թի, կծիկ-գըծիգ, կին-գին, կնիկ-գընիգ, միս-միս, միտք-միղ, սիրտ-սիրդ, խնամի-խընամի, տարի-դարի, ջորի-ձորի, քանի-քանի, քենի-քենի* և այլն:

Վերոբերյալից հետևում է, որ *ե* և *ո* տառերը բացակայում են խոսվածքում: *Ե*-ի դիմաց բոլոր դիրքերում գործածվում է *է* հնչյունը, իսկ *ո*-ի դիմաց՝ *օ*-ն:

Նիկոմեդիայի խոսվածքում հինհայերենյան երկբարբառները չեն պահպանվել: Դրանց համապատասխանում են ձայնավորներ: Այսպես՝ հին հայերենի շեշտակիր *այ* երկբարբառի դիմաց առկա է *ա* ձայնավոր (*այդ-ադ, այլ-ալ, այն-ան, լայն-լան, ծայր-ձար, կայծ-գաձ, հայր-հար* և այլն): Նախաշեշտ դիրքում դրան համապատասխանում են *է* (*այրիկ-երիգ, այրել-երել*) և *ա* (*վայրի-վարի, քայլել-քալել, այսօր-ասօր*) ձայնավորները: *Ա* ձայնավոր է առկա նաև բառավերջի *այ*-ի դիմաց, այսպես՝ *աստանայ-սադանա, տղայ-ղըդա, փեսայ-փեսա, ակոնայ-ագոա* և այլն: Հին հայերենի բառասկզբի *առ* երկբարբառի դիմաց առկա է *օ* (*առել-օձել, արեկնք-օրենք, արհնակ-օրենագ, արհնել-օթենել* և այլն): *Առ* երկբարբառին *օյս* հնչյունախումբ է համապատասխանում միայն *եալթն* և դրանով կազմված բառերում, այսպես՝

օխտ, օխտանասուն: Հին հայերենի *ոյ* և *իւ* երկբարբառների դիմաց խոսվածքն ունի *ու* ձայնավոր, այսպես՝ *անոյշ-անուշ, բոյթ-բուր, մաստմաթ, բոյն-բուն, թոյլ-թուլ, կապոյտ-գաբուր, լոյս-լուս, ոյժ-ուժ* և *ալիւր-ալուր, արիւն-արուն, հարիւր-խարուր, հիւսել-հուսալ* և այլն: Ու ձայնավորով է փոխարինվել նաև *-ութիւն* ածանցի *իւ-ն՝ ալեւորութիւն-էլստիարութուն, եղբայրութիւն-ախպարութուն, երկայնութիւն-երգանութուն, ուրախութիւն-ուրախութուն, չորութիւն-չորութուն, տէրութիւն-դիրութուն* և այլն: Եւ երկբարբառին համապատասխանում է է ձայնավոր հնչյուն (*ատեան-ադէն, լեառն-լէռ, կորեակ-գորէգ, ցորեան-ցորէն, սեաւ-սէվ, գրեաց-գըրէց, սիրեաց-սիրէց*):

Նիկոմեդիայի խոսվածքի բաղաձայնները իրենց հնչյունախտական բնութագրով համապատասխանում են հինհայերենյան բաղաձայններին: Ըստ Ա. Ղարիբյանի հնչյունաբանական դասակարգման՝ Նիկոմեդիան տեղաշարժ-տեղափոխության ենթարկված բարբառների երկաստիճան խլագուրկ ենթախմբին է պատկանում⁶: Սրանից հետևում է, որ Նիկոմեդիայի խոսվածքում ձայնեղները վերածվում են շնչեղ խուլերի, իսկ խուլերը՝ ձայնեղների: Սակայն, ըստ ՀԲԱ-ի ծրագրով լրացված նյութերի, Նիկոմեդիայի Արմաշ և Խասկալ բնակավայրերի ենթախոսվածքներում բառակցքի *բ, գ, դ, ձ, ջ*-ին համապատասխանում են *պ, կ, տ, ծ, ճ խուլ* հնչյուններ՝ *բազուկ-պազուկ, բանալ-պանալ, բարեկամ-պարեգամ, բարի-պարի, բերան-պերան, գիրկ-կիրգ, դեղին-տեղին, դիմանալ-տիմանալ, ջերմ-ձերմ, ջիղ-ձէղ, ջնջել-ճընձէլ, ջուր-ձուր* և այլն: Այս հնչյունները, սակայն, Դ. Կոստանյանի կարծիքով, հստակ խուլեր չեն. տատանվում են ձայնեղի և խուլի միջև Խասկալ գյուղի ենթախոսվածքում, իսկ Արմաշում՝ նաև շնչեղ խուլի միջև. «Արմաշի բնորոշ հատկանիշներից է հին ձայնեղների դիմաց ձայնեղ-խուլ-շնչեղ խուլ շարքերի գրեթե հավասար գործածությունը: Այս է պատճառը, որ մինևս հնչյունն ունի զուգահեռ տառադարձումներ: Անկախ դիրքում դրանց մեջ իշխում է խլությունը, իսկ հնչյունական համապատասխան շղթայում դրանք ստանում են ձայնեղ արտասանություն: Իհարկե, հիմնականում ձայնեղի և խուլի խաղն է իշխում. որոշ դեպքերում միայն առկա է շնչեղ խուլ»⁷:

⁶ Տե՛ս Ա. Ղարիբյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1953, էջ 61:

⁷ Հայերենի բարբառագիտական ասլասի նյութեր (այսուհետև՝ ՀԲԱՆ), *Արմաշ* (Նիկոմեդիա), 304:

Միջձայնավորային և բառավերջի ետձայնավորային դիրքերում գտնվող *բ, գ, դ, ձ, ջ* հնչյունները, կորցնելով ձայնեղության որակը, վերածվել են շնչեղ խուլ *փ, թ, ք, ց, չ* հնչյունների, այսպես՝ *թագ-թաք, թագավոր-թաքավոր, խաբել-խափել, մարագ-մարաք, ուրագ-ուրաք, հաջել-հաչել, ուրագ-ուրաք, մեջ-մէչ, օձ-օց* և այլն: Դրանք շնչեղ խուլերի են վերածվել նաև ձայնորդ *ր-ին* հաջորդելիս, օրինակ՝ *բարձ-բարց, թրջել-թըրջել, որբ-օրփ, ուրբաթ-ուրփաթ, վարդ-վարթ, փորձանք-փօրցանք, սրբել-սըռփել* և այլն: Ղ>խ-ից հետո գտնվող *բ, գ, դ, ձ, ջ* ձայնեղները հատկանշվում են խլացման հատկանիշով, այսպես՝ *աղբ-ախպ, աղջիկ-ախճիգ, եղբայր-ախպար, խեղդել-խըխտել, ողջ-օխճ* և այլն:

Բառասկզբի *պ, կ, տ, ծ, ճ*-ի դիմաց մերթ ձայնեղ (*բ, գ, դ, ձ, ջ*), մերթ խուլ (*պ, կ, տ, ծ, ճ*) հնչյուններ են առկա՝ պայմանավորված հնչյունական շղթայում նրանց նախորդող հնչյունի բնույթով (խուլից հետո՝ խուլ, ձայնավոր, ձայնեղ և ձայնորդ հնչյուններից հետո՝ ձայնեղ), այսպես՝ *Կա չրգա բան մը կա: Չօրս հատ կօջագ, էրգու գօջագ, հինգ դարվա, վէս տարվա* և այլն:

Բառամիջի միջձայնավորային և բառավերջի ետձայնավորային դիրքերում գտնվող *պ, կ, տ, ծ, ճ* հնչյունները վերածվում են ձայնեղ *բ, գ, դ, ձ, ջ-ի*, օրինակ՝ *պպուր -աբուր, շապիկ-շաբիգ, նամակ-նամագ, շիտակ-շիդագ, պատառ-բադառ, կուտ-գուդ, հավատ-հավադ, խավիճ-խավիճ, կարիճ-գարիջ* և այլն: Դրանք անփոփոխ են մնում խուլ շփականներից հետո գտնվող դիրքում, այսպես՝ *Աստվածածին-Աստվածածին, բախտ-բախտ, նստել-նըստել, ոսկի-օսկի, ոսկոր-օսկոր, ապրուստ-աբրուստ* և այլն: Փոփոխության չեն ենթարկվում նաև բառամիջի և բառավերջի *փ, թ, ք, ց, չ* շնչեղ խուլ հնչյունները (*եփել-էփել, խփել-խըփել, մութ-մութ, մրափել-մըրափել, ութ-ութ, չափել-չափել, փչել-փըչել* և այլն), միայն շփականներից հետո գտնվող *թ և ք* շնչեղ խուլերի դիմաց առկա են ապաշնչեղացած *տ և կ* խուլ հնչյուններ, օրինակ՝ *աչք-աշկ, աղքատ-ախկադ, խոսք-խօսկ, մեղք-մէխկ, ճեղք-ճէխկ* և այլն:

Շփական *ջ, ճ, չ, ժ* հնչյունները ևս փոփոխության չեն ենթարկվում (աշուն-աջուն, նշխարք-նըշխարք, չարչարել-չարչարել, շուն-շուն, փչել-փըչել և այլն): Բառամիջի նախաբաղաձայնական դիրքում հին կիսաշփականների դիմաց առկա են *ս, շ, գ, ժ* շփական հնչյուններ, այսպես՝ *ամաչկոտ-ամըշկոդ, աչք-աշկ, խաճանել-խաճնել, միջ-*

նակ-միշնագ, ծածկել-ձագգել, կծկել-գրգգել, իրիցակին-իրիսկին, իշանել-իշնալ և այլն:

Ձգ, գր հնչյունակապակցությունների դիմաց առկա են *սպ, սկ* կապակցությունները, որոնցում նախ կատարվել է *q>կ* փոփոխությունը, ապա *կ-ի* առնմանությամբ *q-ն* խլացել է՝ վերածվելով *ս-ի*, այսպես՝ *ազգ-ասկ, ազգական-ասկական, անզգամ-անըսկամ, Վագ-գէն-Վասկէն* և այլն:

Հ խուլ հնչյունը գործառում է բառի բոլոր դիրքերում՝ բառասկզբում, բառամիջում, բառավերջում, օրինակ *հագ-հագ, համ-համ, հալել-հալել, հայ-հայ, հայելի-հալլի, հաստ-հաստ, հաց-հաց, հինգ-հինգ, հինել-հինել, հիւանդ-հրվանդ, հորթ-հորթ, հոտ-հոդ, հոտել-հոդել, հոս-հոս, դահիճ-տահիջ, ռեհան-ռըհան* և այլն: «Հոդ» և «հագար» բառերում առկա է *h>խ* հնչյունական անցումը՝ *խօդ, խագար*:

Խ խուլ հնչյունը նույնպես, գործածվելով բառի բոլոր դիրքերում, փոփոխություն չի կրում, օրինակ *խաղ-խաղալ, խեղճ-խեղջ, խեղդել-խըխտել, խաղացնել-խախցընել, խրատ-խըրադ, ծախել-ձախել, խմեցնել-խըմցընել, նախիր-նախըր, ախոռ-ախօռ, գլուխ-գըլոխ* և այլն:

Բառասկզբի հին հայերենի *յ-ի* դիմաց առկա է խուլ *հ*, այսպես՝ *յիսուն-հիսսուն, յղի-հըղի, յաջողիլ-հաջօղվել, յիշատակ-հիշադագ, Յովսեփ-Հօսեփ*: Որոշ բառերում նկատելի է *յ-ի* անկում գաղտնավանկի *ը-ի* պահպանմամբ, օրինակ՝ *յտակ-ըստակ, յտակել-ըստակնալ*:

Պայթական և կիսաշփական հնչյուններից առաջ գտնվող *ր* ձայնորդը մնում է անփոփոխ, այսպես՝ *արծաթ-արձաթ, արծիվ-արձիֆ, գորտ-գօրդ, զարթուն-արթուն, վարտիք-վարդիք* և այլն: Ռ ձայնորդը նույնպես փոփոխություն չի կրում՝ գործառելով բառամիջի և բառավերջի դիրքերում, օրինակ *ախոռ-ախօռ, խառնել-խառնել, վառել-վառել, փառք-փառք, քառասուն-քառսուն, քուռակ-քուռագ* և այլն:

Փոխազդեցական հնչյունափոխության են ենթարկվել բառամիջի *նլ* հնչյունակապակցությունը, որի դիմաց առկա է առնմանական *լլ* (*անալի-անլի, բանալի-բալլի, ելանել-էլլալ, լինել-ըլլալ* և այլն), ինչպես նաև *տր-ն*, որի դիմաց առկա է *յր* (*ընտրել-հըյրել, կտրել-կօյրել, կտրել-գըյրել, Պետրոս-Բէյրօս* և այլն):

Նիկոմեդիայի բարբառում շեշտակիր է վերջին վանկը: Շեշտանախորդ վանկերի ձայնավորների թուլացում է առկա. դրանք սղվում են կամ փոխարկվում *ը-ի*, այսպես՝ *ամաչկոտ-ամըշկօդ, երկայնանալ-երգըննալ, թեթևանալ-թէթէվնալ, ժողովել-ժօղվել, վախե-*

նալ-վախնալ և այլն: Որոշ բառերում պահպանվում են, ինչպես օրինակ՝ *աշխատողի, ավելանալ-էվելանալ, հեռանալ-հեռանալ, նեղանալ-նեղանալ* և այլն:

Եռավանկ բառերում առկա է ձայնավորների սդում, այսպես՝ *աղաջուր-ախճուր, առաջնակ-էռճինէգ, գողանալ-կողնալ, թաթախել-թաթխել, լոգանալ-լոյնալ, զարկանել-զարնել, բուսանել-պուսնել* և այլն: Նախաշեշտ դիրքի *ա*-ն հիմնականում փոփոխության չի ենթարկվում, օրինակ՝ *ասեղ-ասէխ, ծամել-ձամել, ցանել-ցանէլ, քացախ-քացախ, կակուղ-գագուղ, կապել-գաբէլ* և այլն (*լակել և ամաչել* բառերում փոխվել է *ը*-ի՝ *լըգէլ, ամըշնալ*): Չի փոփոխվում նաև շեշտի տակ գտնվող *ա*-ն, այսպես՝ *աղ-աղ, աջ-աչ, թաս-թաս, թաթ-թաթ, մագ-մագ, մաղ-մաղ, մարթ-մարթ, նագ-նագ, չափ-չափ* և այլն:

Խոսվածքում առկա են բաղաձայնների անկման մի շարք դեպքեր: Հինհայերենյան *ն* վերջնահնչյունով միավանկ բառերը գործառուում են առանց վերջնահնչյուն *ն*-ի, այսպես՝ *ամառն-ամառ, ատամն-ատամ, թոռն-թոռ, ծունկն-ձունգ, մուրն-մուր, մուկն-մուգ* և այլն: *Ինն (ինը)* և *ինքն (ինքը)* բառերում *ն*-ի անկումը ուղեկցվել է գաղտնավանկի *ը*-ի պահպանմամբ: Նկատելի է նաև *ը* ձայնորդի անկում որոշ բառերի բաղաձայնական կապակցություններում, այսպես՝ *արժան-արժան, բաղարջ-բաղաջ, խարշել-խաշէլ: Խնդրել-խընթթել, մանրել-մայրէլ, բորբոս-պօրպօս* բառերում *ը*-ն պահպանվել է:

Խոսվածքը հատկանշվում է նաև հնչյունների հավելման դեպքերով: Պայթականներից ու կիսաշփականներից առաջ որոշ բառերում առկա է *ն*-ի հավելում, այսպես՝ *ամաչել-ամըշնալ, կանաչ-գանանչ, կտուց-գըղնօց, ճանաչել-ջանշընալ, մեծ-մէնձ, մեք-մէնք*: Նր հնչյունակապակցության մեջ *ղ*-ի հավելում է առկա *ծանր* բառում և դրանով կազմված բաղադրություններում, օրինակ՝ *ձանդրը, ձանդրություն, ձանդրանալ*:

Օտար բառերի *ֆ* հնչյունի դիմաց առկա է խուլ շփական *ֆ*՝ *ֆաստն-ֆաստն, ֆինջան-ֆիջան, ֆիթիլ-ֆիթիլ, ֆլան-ֆըլան* և այլն: Օտար բառերի բառասկզբի *ղ*-ին համապատասխանում է ետնալեզվային խուլ շփական *խ*, օրինակ՝ *ղագ-խագ, ղալմաղալ-խալմաղալ, ղավուրմա-խավուրմա, ղամաթ-խըսմէթ, ղարիբ-խարիբ, ղափաղ-խափաղ, ղոչ-խօչ* և այլն:

Նիկոմեդիայի բարբառում շեշտակիր է վերջին վանկը, այսպես՝ *արածել-արձէլ, մոռանալ-մօռնալ, սատակել-սադգէլ, փաթթաթէլ-*

փայթթէ՛լ, ցամաքել-ցամքէ՛լ, տասանոց-դասնօ՛ց և այլն: Բառաթեքման ժամանակ փակ վանկի շեշտազրկված *ի* ձայնավորը պահպանվում է, օրինակ՝ *ձիլ-ձիլին, սիրդ-սիրդին, դիզ-դիզին, քիթ-քիթին* և այլն: Այն փոփոխության չի ենթարկվում նաև բառավերջի բաց վանկում, օրինակ՝ *գոտի-կօղիին, հայելի-հալլիին, խընամի-խընամիին, փոշի-փօշիին* և այլն: Բառաթեքման ժամանակ չեն փոփոխվում նաև փակ և բաց վանկերի շեշտազրկված *ու* (*թուր-թուրին, թուզ-թուզին, թուր-թուրին, ջուր-ջուրին, մուխ-մուխին, կաղու-կաղույին, թուրթուր-թուրթույին, մեղու-մեղույին, փեսացու-փեսացույին* և այլն), փակ վանկի շեշտազրկված *է* (*դէզ-դէզին, էշ-էշուն, ձէթ-ձէթին, սէզ-սէզին, սէր-սէրին, դէր-դէրօջ* և այլն) և *ա* (*դանագ-դանագին, կաքավ-կաքավին, հավադ-հավադին, ջագադ-ջագադին, քաղաք-քաղաքին* և այլն) ձայնավորները:

Ձևաբանական առանձնահատկություններ

Խոսվածքում թվի կարգը դրսևորվում է եզակի և հոգնակի թվերի հակադրությամբ: Հոգնակի թիվը կազմվում է եզակիից հոգնակերտ մասնիկների հավելումով: Խոսվածքում գործառում են թվաձևային - *էր* (եր) և - *ներ* (ներ) վերջավորությունները, որոնք միմյանց նկատմամբ գտնվում են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ՝ որպես նույն քերականական իմաստն արտահայտող ձևայիններ: Դրանց ընտրությունը պայմանավորված է թվանիշ հիմքերի վանկաքանակությամբ և իմաստային առանձնահատկություններով:

Հոգնակերտ - *էր* վերջավորությունը խոսվածքում գործառում է - *էր* հնչյունական տարբերակով: - *էր* թվանիշ թեքույթ են ստանում միավանկ բառերը, այսպես՝ *ճուր-ճուրէր, դուն-դունէր, միս-միսէր, փու-փուէր, քար-քարէր* և և այլն: Ինչպես երևում է օրինակներից, *ու, ի* ձայնավորներով միավանկ բառերի հոգնակի թվաձևերը հատկանշվում են անհնչյունափոխ հիմքով: - *էր* հոգնակերտով են կազմվում նաև կենդանիների՝ միավանկ հիմքով անունների հոգնակի թվի ձևերը, այսպես՝ *անձ «արջ»-անձէր, էզ «եզ»-էզէր, էշ-էշէր* և այլն:

Գրաբարյան - *ն* վերջնահնչյունով միավանկ բառերի հոգնակին և կազմվում է - *էր* հոգնակերտ մասնիկով, ընդ որում՝ բառերի գերակշիռ մասում *ն* վերջնահնչյունը հոգնակերտից առաջ ընկնում է (*էզ-էզէր, սերս-սերսէր, ծունգ-ծունգէր, մադ-մադէր, մուզ-մուզէր, նուր-նուրէր, ծէռք «ձենոն»-ծէռքէր, օրթ-օրթէր, գամ-գամէր*)՝ պահպանվելով

սակավաթիվ բառերում (*պէտ «բեռն»-պէտներ, կատ «գառն»-կատներ, տուտ «դուռն»-տուտներ, թօռ-թօռներ, լէր «լեռն»-լէրներ*): Հարս բառը հատկանշվում է հոգնակի թվաձևերի գուգահեռ կիրառությամբ (*հարսեր/հարսներ*): *-էր* հոգնակերտ են ստանում նաև այն երկվանկ բառերը, որոնց վերջին վանկը գաղտնավանկ է, այսպես՝ *ասխ «աստղ»-ասխներ, սանդրը «սանր»-սանրեր, մայրը «մանր»-մայրեր*:

Բազմավանկ բառերի հոգնակի թվաձևերը կազմվում են *-ներ* հոգնակերտ վերջավորությամբ, այսպես՝ *ախպուր «աղբյուր»-ախպուրներ, անուն-անուններ, գօւէշ «գօւմէշ»-գօւմէշներ, իլիգ «իլիկ»-իլիգներ, խընձօր «խնձօր»-խընձօրներ, ձաղիգ «ձաղիկ»-ձաղիգներ, էրէս «երես»-էրէսներ* և այլն: Չայնավորով վերջացող բազմավանկ բառերը նույնպես ստանում են *-ներ* հոգնակերտ վերջավորություն, օրինակ՝ *քէնի «քենի»-քէնիներ, ճօրի «ջորի»-ճօրիներ, գինի-գինիներ, սադանա «սատանա»-սադանաներ, հարսունցու «հարսնացու»-հարսունցուներ, վըզա «վկա»-վըզաներ* և այլն:

-էր հոգնակերտ են ստանում միավանկ վերջնաբաղադրիչով այն բարդ բառերը, որոնց վերջնաբաղադրիչը պահպանում է իր իմաստային ինքնուրույնությունը, այսպես՝ *վերնադուն «վերնատուն»-վերնադուններ, հօրաքուր «հորաքուր»-հօրաքուրեր, դունիդէր «տանուտեր»-դունիդէրեր, աղջուր «աղաջուր»-աղջուրեր* և այլն:

Մայր և *կին* վերջնաբաղադրիչներով կազմված *գընգամար «կնքամայր»* և *քէոզին «քեռակին»* բառերի հոգնակի թվաձևերը բաղադրվում են *-ներ* հոգնակերտ վերջավորությամբ, այսպես՝ *գընգամար-գընգամարներ, քէոզին-քէոզիններ*: Բացակայում են *-վի*-ով կամ նրանով բաղադրված հոգնակերտները:

Այսպիսով, խոսվածքում համակարգային արժեքով գործառում են *-էր (էր)* և *-ներ (ներ)* հոգնակերտները, որոնց գուգորդելիությունը թվանիշ հիմքերին, ինչպես արդեն նշվեց, պայմանավորված է դրանց ձևաիմաստային առանձնահատկություններով:

Անվանական հոլովման համակարգում ձևային արտահայտությամբ հատկանշվում են ուղղական, սեռական-տրական, բացառական, գործիական հոլովաձևերը: Մեռական-տրական հոլովաձևերը, որոնք բնութագրվում են նաև հողառությամբ, կազմվում են վերջավորություններով և հնչունական հերթագայություններով: Դրանք ընդգրկում են գործառության հետևյալ ոլորտները: *Ի*-ն ամենատարածված և ընդհանրական արժեք ունեցող հոլովանիշ թեքույթն է

եզակի թվի ձևերում: Այս հոլովման են պատկանում գրաբարյան *ն վերջնահնչյունով բառերը (պէտ «բեռն»-պէտին, կատ «գառն»-կատին, տուտ «դուտն»-տուտին, ձունգ «ծունկն»-ձունգին, գաթ «կաթն»-գաթին, ծուգ «ձունկն»-ծուգին, մուգ-մուգին, մադ-մադին, հարս-հարսին և այլն), նախկին ք հոգնակերտով բառերը (խէլկ-խէլկին, մէշկ-մէշկին, միտկ-միտկին, հարսնիք-հարսնիքին, բաղնիք-բաղնիքին և այլն), կենդանիների և թռչունների անունները (կաքավ-կաքավին, գաղու-գաղուին, առճ-առճին, գով-գովին, հավ-հավին, աղվես-աղվեսին և այլն), անձնանունները (Կիրկոր-Կիրկորին, Հայգանուշ-Հայգանուշին, Սաթէնիգ-Սաթէնիգին, Վասկէն-Վասկէնին, Մարկար-Մարկարին և այլն) և տեղանունները (Բօլիս-Բօլիսին, Արմաշ-Արմաշին, Խասկալ-Խասկալին և այլն):*

Ազգակցական հարաբերություն ցույց տվող բառերից *ի* հոլովական վերջավորություն են ստանում *ընկեր «ինգեր» (ինգեր-ինգերի), տերտեր «դերդեր» (դերդեր-դերդերի), կին «զընիգ» (զընիգ-զընիգի)* բառերը և դրանցով բաղադրված բարդությունները: *Սկեսուր, տալ, տեգր, տեր, քույր* ազգակցանիշ բառերը և դրանցով բաղադրված բարդությունների սեռական հոլովաձևերը կազմվում են հոլովանիշ հիմքի և ոջ թեքույթի համադրությամբ, օրինակ՝ *դեր «տեր»-դիրօջ «տիրոջ», քուր «քույր»-քրօջ, դաքր «տեգր»-դաքրօջ, կեսուր «սկեսուր»-կեսրօջ, դալ «տալ»-դալօջ* և այլն: *Ի* հոլովանիշ թեքույթը ընդգրկում է նաև փոխանվանաբար գործածվող մյուս խոսքի մասերը (*մէնձը «մեծը»-մէնձին, աղվօրը «գեղեցիկը»-աղվօրին, սէվը-սէվին, էփօղը-էփօղին, բըզդիգը «փոքրիկը»-բըզդիգին* և այլն):

Ժամանականիշ բառերի սեռական հոլովաձևերը կազմվում են *-վան* հոլովական վերջավորությամբ, այսպես՝ *ամառ-ամառվան, առդուն «առավոտ»-առդվան, քըշեր «գիշեր»-քըշերվան, իրգուն «երեկո»-ըրգըվան, սահաթ «ժամ»-սահաթվան, գէսօր «կեսօր»-գէսօրվան, շափաթ «շաբաթ»-շափաթվան, ցօրէգ «ցերեկ»-ցօրէգվան, օր-օրվան* և այլն:

Ու հոլովական վերջավորությունը գործածվում է հոգնակի թվաձևերի սեռական հոլովը կազմելիս, այսպես՝ *շունէր «շներ»-շունէրուն, ձաղիգներ «ձաղիկներ»-ձաղիգներուն, գօվեր «կովեր»-գօվերուն, ճուրէր «ջրեր»-ճուրէրուն, քըշերներ «գիշերներ»-քըշերներուն, դըրացին «հարևան»-դըրացիններուն, դունէր «տներ»-դունէրուն, քաղաքներ-քաղաքներուն* և այլն:

Ու>ա հերթագայությամբ է կազմվում *-ություն* ածանցով բառերի սեռական հոլովաձևը, այսպես՝ *ախկաղություն* «աղքատություն»-*ախկաղության, լանություն* «լայնություն»-*լանության, չարություն* «չարություն»-*չարության, մենծություն* «մեծություն»-*մենծության* և այլն:

Խոսվածքը հասկանալի է իրի և անձի առումների տարբերակմամբ. ուղիղ ինդիքը իրանիշ գոյականների դեպքում դրվում է ուղղականաձև, իսկ անձանիշների դեպքում՝ տրականաձև հայցականով: Հայցական հոլովի որոշյալությունը իր ձևաբանական դրսևորումն է ստանում *ը* կամ *ն* հոդով, որը իրի առման դեպքում ավելանում է ուղղականաձև (*Հացը գերավ* «Հացը կերավ»: *Դունը շինեցինք* «Տունը շինեցինք»), իսկ անձի առման դեպքում՝ տրականաձև հայցականի կազմություններին (*Ախչիզը հարիզին շաղ գրսիրե* «Աղջիկը հորը շատ է սիրում»: *Պաբիզը չօջուխին ձեձեց* «Պապը երեխային ծեծեց»):

Բացառական հոլովաձևը կազմվում է *-են* վերջավորությամբ, այսպես՝ *աղվեսեն* «աղվեսից»-*աղվեսներեն, թօռեն* «թոռից»-*թօռերեն, հացեն-հացերեն, լերեն* «լեռից»-*լերներեն, դունեն* «տնից»-*դուներեն* և այլն: Գործիական հոլովի իմաստը արտահայտվում է *-ով* վերջավորությամբ բաղադրված կազմություններով, այսպես՝ *կեղով* «գյուղով»-*կեղերով, ձուլով* «ծովով»-*ձուլերով, ախկաղով* «աղքատով»-*ախկաղներով, ամիսով* «ամսով»-*ամիսներով, քարով-քարերով* և այլն:

Ոջ, վա, ան արտաքին հոլովումների և ներքին թեքման գոյականների բացառական և գործիական հոլովները կազմվում են ուղղականի հիմքից, այսպես՝ *ախպար* «եղբայր»-*ախպարեն-ախպարով, գրնիզ* «կնիկ»-*գրնիզեն-գրնիզով, մար* «մայր»-*մարեն-մարով, մուզ* «մուկ»-*մուզեն-մուզով, դուն* «տուն»-*դունեն-դունով, թոռ* «թոռ»-*թօռեն-թօռով, ամիս-ամիսեն-ամիսով* և այլն:

Ներգոյական հոլովի իմաստը Նիկոմեդիայի խոսվածքում արտահայտվում է վերլուծական և համադրական կազմություններով: Վերլուծական կազմությամբ կառույցը բաղադրվում է *մէչ* հետադրությամբ և սեռական հոլովաձևերով (*խօղին մէչը, ճուրին մէչը, տաշտին մէչը, աշխարին մէչը, փօրին մէչը* և այլն), իսկ համադրականը համընկնում է հայցական հոլովաձևին (*խօղը «հողը», ճուրը «ջուրը», տաշտը «դաշտը», աշխարը «աշխարհը», փօրը «փորը»* և այլն):

Այսպիսով, խոսվածքի անվանական հոլովման համակարգը հատկանշվում է արտաքին թեքմամբ հոլովանիշ վերջավորություն-

ներով ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի թվի ձևերում, ինչպես նաև եզակի թվի հարացույցում *ի* հոլովանիշ թեքույթի, իսկ հոգնակի թվում՝ *ու* հոլովանիշի ընդհանրական արժեքով:

Ածականի գերադրական աստիճանը կազմվում է *ամեն* բառի հոլովված ձևով, այսպես՝ *ամենէն աղվօրը, ամենէն պարսը «բարձրը», ամենէն բրզդիզը, ամենէն ձանդրը* և այլն: Թվականի բաշխականության իմաստը դրսևորվում է քանակական թվականի կրկնությամբ՝ *երգու-երգու, իրէք-իրէք, վէց-վէց, օխտը-օխտը* և այլն: Դասական թվականները կազմվում են *-օրթ, -րօրթ, -էրօրթ* ածանցներով՝ *վէցէրօրթ, չօրօրթ, հինգէրօրթ, յէգրօրթ* և այլն: *Յոթանասուն* (օխտանասուն), *ութսուն* (ութանասուն), *իննսուն* (իննիսուն) թվականների դիմաց փոխառյալ թվականներ չեն գործածվում: Խոսվածքում բացակայում են անձներական թվականները:

Ես, դու, մենք, դուք անձնական դերանունների տրական հոլովը արտահայտվում է գրաբարյան հոլովաձևերի (ինձ, մեզ, քեզ, ձեզ) հնչյունական տարբերակների և *ի* վերջավորության բաղադրությամբ, այսպես՝ *ընձի, քեզի, մեզի, ձեզի*: Հայցական հոլովի արտահայտությունը տրականաձև է (*Անիգագ գրսիրէ ընձի, քեզի, մեզի, ձեզի*): Անձնական դերանունների բացառական հոլովաձևը կազմվում է տրականի հիմքից *-մէ* հոլովանիշ վերջավորության համադրմամբ, այսպես՝ *ընձմէ, քեզմէ, մեզմէ, ձեզմէ*: Անձնական դերանունների գործիական հոլովաձևերը բաղադրվում են տրականի հիմքի և *-մօլ* վերջավորության զուգադրությամբ, այսպես՝ *ընձրմօլ, քեզմօլ, մեզմօլ, ձեզմօլ, իրմօլ*: Եզակի 3-րդ դեմքը (նա) արտահայտվում է *անի* կամ *անիգա* (Անի/անիգա կրնաց «Նա գնաց»), իսկ հոգնակի 3-րդ դեմքը՝ *անօնք* (Անօնք կացին «Նրանք գնացին») ձևերով: Եզակի 3-րդ դեմքի անձնական դերանվան սեռական հոլովաձևը գործածվում է *անօր* ձևով (*անօր դունը* «նրա տունը», *անօր անունը* «նրա անունը»): *Ինքը* դերանվան հայցականը տրականաձև է՝ *իրէն, իրէնց* (*Անիգագ իրէն գրսիրէ* «Նա իրեն է սիրում», *Անօնք իրէնց գրսիրին* «Նրանք իրենց են սիրում»):

Ցուցական դերանունները դրսևորվում են *այս, այդ, այն* դերանունների *աս, ադ, ան* հնչյունափոխական տարբերակների միջոցով: *Սա, դա, նա* դերանունները ունեն արտահայտման մի քանի ձևեր, այսպես՝ *սա*՝ *ասի/աս/սա/ասիգա/ասիգագ, դա*՝ *ադի/ ադ/ դա/ադիգա/ ադիգագ, նա*՝ *անի/ան/նա, անիգա, անիգագ*: Օրինակ՝ *աս դունը* «այս

տունը», աղ ձառը «այդ ծառը», ան մարթը «այն մարդը»: Ասիգա ձառ է «Մա ծառ է»: Աղիգա Ագոսին է «Դա Հակոբն է»: Անիգա գրսիր է աղի «Նա սիրում է դա»: Աղիգա դուն է «Դա տուն է»: Վերոնշյալ դերանունների հոգնակի թվի ձևերն են՝ *ասօնք, աղօնք, անօնք*:

Խոսվածքում պահպանված է *այս, այդ, այն* (սա, դա, նա) ցուցական դերանունների եռանդամությունը՝ *աս մարթը, աղ մարթը, ան մարթը*: *Ասի/աս/ասիգա(գ) է բրզդիգը*: *Աղի/աղ/աղիգա(գ) է բրզդիգը*: *Անի/ան/անիգա(գ) է բրզդիգը*: Սրանց սեռական- տրական հոլովաձևերը կազմվում են *այսը, այդը, այնը* տիպի հիմքով, այսպես՝ *ասօր, աղօր, անօր* դունը, *ասօր, աղօր, անօր* մօղիգցավ: Բացառական և գործիական հոլովաձևերը ունեն գուգահեռ կազմություններ. Կազմվում են հինհայերենյան սեռականի (ասօրմէ-ասօրմօլ, աղօրմէ-աղօրմօլ, անօրմէ-անօրմօլ) կամ ուղղականի հիմքից (*ասկէ-ասօլ, աղգէ-աղօլ, անգէ-անօլ*): Հոգնակի թվի ձևերն են՝ *ասէնցմէ-ասեամէ, աղէնցմէ-աղէամէ, անէնցմէ-անէամէ, ասէնցմօլ-ասընցմօլ-ասէամօլ, աղէնցմօլ-աղէամօլ, անէնցմօլ-անէամօլ*:

Ամենքը որոշյալ դերանունը հոլովվում է անվանական հոլովմամբ՝ *ամէնուն (Ամէնուն ա գանչէցին «Բոլորին էլ կանչէցին»*: *Ամէնուն ըսածը չիմ ընէր «Բոլորի ասածը չեմ անի»*): Որպես գուգաձևություն գործածվում է *բոլթունին* ձևը:

Ով դերանվան եզակի սեռականը արտահայտվում է *որ* հիմքով բաղադրված կազմություններով (օրի), այսպես՝ *Ասի օ՞րի դունն է «Մա ու՞մ տունն է»*: Հայցական հոլովաձևը տարարմատ է (ում), այսպես՝ *Անիգա ու՞մ դէսավ «Նա ու՞մ տեսավ»*: *Ով* դերանվան հոգնակի ուղղականի համար հիմք է ծառայում եզակի ուղղականը՝ *-էր* հոգնակերտի համադրմամբ՝ *օվէ՞ր (Օ՞վէր էին էգաձ «Ովքե՞ր էին եկել»*): Հոգնակի սեռական-տրական հոլովաձևը տարբերակված չէ: Դրա իմաստը արտահայտվում է եզակի սեռական-տրականի ձևով՝ *օ՞րի (Օ՞րի ազգէն էք «Ու՞մ ազգից էք»*):

Անորոշ դերբայը հատկանշվում է 3 լծորդությամբ (գրաբարյան 4 լծորդություններից (ա, ի, ե, ու) խոսվածքում պահպանվել են 3-ը)՝ *ա, ի, ե*, օրինակ՝ *էրթայ, բօռայ, վըլայ, նըստիլ, դէսնայ, առնէլ, իըմէլ, մէռնիլ* և այլն: Միայն *թողնէլ* բայն է պատկանում *ու* լծորդության՝ *թողուլ*: Խոսվածքում բացակայում են *տայ, գայ, լայ* միավանկ բայերի նախահավելվածավոր ձևերը. դրանք գործածվում են առանց նախահավելվածի՝ *դայ, գայ, լայ* ձևային արտահայտությամբ:

Արևմտահայ խմբակցության բարբառների դերբայների շարքը համեմատաբար աղբար է: Այդպես է նաև Նիկոմեդիայի խոսվածքում, որում բացակայում են անկատար և ապառնի դերբայները: Վաղակատար դերբային բնորոշ է *-էր* վերջավորությունը՝ *մընացէր իմ, գարմացէր իմ* և այլն: Հարակատար դերբայը, բայասեռով պայմանավորված, դրսևորվում է *-ած* վերջամասնիկն ունեցող ձևով, այսպես՝ *քընացած չօջուխ* «քնած երեխա», *էփած հաց* «թխած հաց», *նըշանված ախշիգ* «նշանված աղջիկ» և այլն: *Ա* խոնարհման բայերի ենթակայական դերբայը կազմվում է անցյալի հիմքով, օրինակ՝ *աղցող, գողցող, գարմանցող, խախցող, հասկըցող, վախէցող, ուրախացող* և այլն: *Գալ, տալ, լալ* բայերի ենթակայական դերբայը արտահայտվում է *էգող, լացող, դըվօղ* ձևերով: Ժխտական դերբայը ձևավորվում է անորոշի հիմքի և *-էր, -ար, -իր* վերջավորությունների գուգորդությամբ՝ (*չիմ*) *ըսէր, (չիմ) մընար, (չիմ) խօսիր*: Խոսվածքին բնորոշ է նաև ընթացակցական դերբայի գործածությունը, որը կազմվում է անորոշի հիմքի և *-էն* վերջավորության բաղադրությամբ, այսպես՝ *ուղէլէն, խօսալէն, վանգէլէն, խընդալէն* և այլն (Ուղէլէն գերթա «Ուտելով գնում է», Խօսալէն գրմօղէնա «Խոսելով մտտենում է», Վանգէլէն էգավ «Վագելով եկավ»):

Ծանոթակ բայի եզակի 3-րդ դեմքը արտահայտվում է *է-ով*, օրինակ՝ *Անիգագ աղվօր մարթ է*: «Նա լավ մարդ է»: *Չօջուխը հիվանդ է*: «Երեխան հիվանդ է»: Ծանոթակ բայի անցյալ ժամանակը դրսևորվում է պարզ ձևերով, այսպես՝ *էս է(յ)ի, դուն է(յ)իր, անիգագ էր, մէնք է(յ)հանք, դուք է(յ)իք, անօնք է(յ)ին*:

Նիկոմեդիայի խոսվածքում, ինչպես արևմտյան խմբակցության բարբառների մի մասում, եղանակային իմաստները արտահայտության պլանում դրսևորվում են 4 կառուցատիպերով, որոնց բովանդակության պլանում համապատասխանում է եղանակային 5 իմաստ՝ սահմանական-ենթադրական, հարկադրական, ըղձական և հրամայական: Սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերի իմաստներն արտահայտվում են հինհայերենյան ներկայի ձևերի և *կու* (գը, գ) եղանականիշի գուգորդմամբ, այսպես՝ *գըկըրիմ «գրում եմ», գըկըրէս, գըկըրէ, գըկըրինք, գըկըրիք, գըկըրին, գուղիմ «ուտում եմ», գուղէս, գուղէ, գուղինք, գուղիք, գուղին*:

Նիկոմեդիայի խոսվածքում տարբերակվում են ընդհանրական և շարունակական ներկաները: Շարունակականի իմաստը դրսևոր-

վում է հինհայերենյան ներկայի ձևերի և հայե ժամանականիշ բառմասնիկի՝ գուգորդությամբ⁸: Այս մասնիկը, ի տարբերություն ընդհանրական ներկայի ցուցիչների, գործառականորեն բազմաթեք չէ, գործածվում է միայն սահմանականի ոլորտում՝ ձևավորելով նրա շարունակական ենթիմաստը, այսպես՝ *գուղիմ հայե, գուղէս հայե, գուղէ հայե, գուղինք հայե, գուղիք հայե, գուղին հայե, գրկըրիմ հայե, գրկըրէս հայե, գրկըրէ հայե, գրկըրինք հայե, գրկըրիք հայե, գրկըրին հայե*: Բարդ նախադասություններում անցյալ անկատարի ձևերին նույնպես հարադրվում է հայե բառ-մասնիկը, այսպես՝ Էս գրխօսելի հայե, դու(ն) եգար «Ես խոսում էի, դու եկար»:

Սահմանական եղանակի ապառնի ժամանակը դրսևորվում է *կու* (գը, գ) եղանականիշի և բայի դիմավոր ձևերի հարադրությամբ՝ *գուղիմ, գուղէս, գուղէ, գուղինք, գուղիք, գուղին կամ գըմընամ, գըմընաս, գըմընա, գըմընանք, գըմընաք, գըմընան*: Անցյալ կատարյալը կազմվում է պարզ ձևերով՝ *խըմէցի, խըմէցիր, խըմէց, խըմէցինք, խըմէցիք, խըմէցին, հասս, հասար, հասսալ, հասսանք, հասսաք, հասսան*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալի իմաստը դրսևորվում է անցյալի ցոյական հիմքով և ներգործաձև վերջավորություններով բաղադրված կազմություններով, այսպես՝ *սիրէցի, սիրէցիր, սիրէց, սիրէցինք (անք), սիրէցիք, սիրէցին*: Մի խումբ անկանոն բայերի (առնել, բանալ, բերել, դնել, գալ, տալ, զարկել, թողնել, տեսնել) անցյալ կատարյալի եզակի 3-րդ դեմքը կազմվում է կրավորաձև *ալ* վերջավորությամբ՝ *առալ, պացալ, պէրալ, տըրալ, եզալ, լացալ, դէսալ, դըվալ, նըսդէցալ, հասսալ, գարգալ*: Վաղակատար ժամանակի իմաստը արտահայտվում է վաղակատար դերբայի և օժանդակ բայի խոնարհված ձևերի հարադրությամբ՝ *գըրէր իմ, գըրէր էս, գըրէր է, գըրէր ինք, գըրէր էք, գըրէր ին, անցյալ գըրէր էյի, գըրէր էյիր, գըրէր էր, գըրէր էյանք, գըրէր էյիք, գըրէր էյին*: Հարակատար ժամանակը կրավորական սեռի բայերի դեպքում դրսևորվում է *-ամ* վերջամասնիկն ունեցող հարակատար դերբայով՝ *խափված իմ, խափված էս, խափված է, խափված ինք, խափված էք, խափված ին*: Ներգործական և չեզոք սեռի բայերի դեպքում հարակատար ժամանակի նշանակությամբ գործածվում են վաղակատար դերբայով բաղադրված կառույց-

⁸ Հ. Աճառյանը Նիկոմեդիայի բարբառում շարունակական ներկայի մասնիկ է նշում *յոր*-ը (տե՛ս Հ. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, մաս 2, էջ 563):

ները, այսպես՝ *զրրէր իւ, զրրէր էս, զրրէր է, զրրէր ինք, զրրէր էք, զրրէր ին*:

Հղձական եղանակը գուրկ է նախամասնիկից. նրա եղանակային իմաստը դրսևորվում է բայաձևով (հիմնականազմութայմբ, լծորդ ձայնավորների առկայությամբ և դիմաթվանիշ վերջավորություններով): Ինչպես գրական լեզուներում և տարածքային այլ տարբերակներում, այնպես էլ Նիկոմեդիայի խոսվածքում ըղձականի իմաստով գործածվում են գրաբարյան ներկա և անցյալ անկատար բայաձևերը, որոնք կրել են միայն հնչյունական փոփոխություններ և հայերենի ոչ մի դրսևորման մեջ ձևային տարբերակվածություն հանդես չեն բերում, այսպես՝ *զրրէյի, զրրէյիր, զրրէր, զրրէյանք, զրրէյիք, զրրէյին, մընայի, մընայիր, մընար, մընայանք, մընայիք, մընային*:

Ենթադրական եղանակի իմաստը արտահայտվում է ըղձական եղանակի բայաձևերի և *զը (զ)* եղանականիշի համադրմամբ, այսպես՝ *զըկըյիւ, զըկըյիս, զըկըյէ, զըկըյինք, զըկըյիք, զըկըյին, զըսէյի, զըսէյիր, զըսէր, զըսէյանք, զըսէյիք, զըսէյին*:

Չարկադրական եղանակի իմաստը դրսևորվում է ըղձական եղանակի բայաձևերի և *դը (պիտի)* եղանականիշի հարադրմամբ, օրինակ՝ *դը զըրիւ «պիտի գրես», դը զըրիս, դը զըրէ, դը զըրիւք, դը զըրիք, դը զըրիւն, անցյալ՝ դը զըրէյի «պիտի գրէի», դը զըրէյիր, դը զըրէր, դը զըրէյանք, դը զըրէյիք, դը զըրէյին*:

Չրամայական եղանակի եզակի թվի ձևերը կազմվում են *է, ա, իր* վերջավորություններով: Է վերջավորությունն են ստանում *է* խոնարհման պարզ բայերը, այսպես՝ *արբէ, ձամէ, զըրէ, գարբէ, պաղմէ, սիրէ, նըսդէ, փօխէ, քամէ* և այլն: Ե և *ա* խոնարհման ածանցավոր բայերը հրամայական եղանակի ժամանակաձևերը կազմվում են *-իր* վերջավորությամբ, այսպես՝ *անցի՛ր, էլի՛ր, իճի՛ր, հասի՛ր, մըղի՛ր* և այլն: Ընդ որում՝ *ա* խոնարհման ածանցավոր բայերը *-իր* վերջավորությունը հավելում են անցյալի ցոյական հիմքին, այսպես՝ *տըմացի՛ր, իմացի՛ր, հասկըցի՛ր, մէծցի՛ր, մօղէցի՛ր* և այլն: Ը խոնարհման պարզ բայերի հրամայական եղանակի ձևերը ստանում են *-ա* վերջավորություն, որը համադրվում է անկատարի հիմքին, օրինակ՝ *մընա՛, իընդա՛, կարթա՛, հավաղա՛* և այլն: Աղալ և խաղալ բայերի հրամայականը կազմվում է անցյալի ցոյական հիմքի և *-իր* վերջավորությամբ՝ *ախցի՛ր, խախցի՛ր*:

Հրամայականի հոգնակի թվի ձևերին հատուկ է *-էք* վերջավորությունը, որը համադրվում է անցյալի ցոյական հիմքին, այսպես՝ *բըռնեցէք, լըսեցէք, խըմեցէք, մաղեցէք, բաղմեցէք, պարսըցէք, իմացէք, վըլացէք, հասկըցէք, սօղեցէք, սօցեք, ուրախացէք* և այլն: Գալ բայի հրամայականը կազմվում է *եկ* հիմքով՝ *էգօ ը-էգօք*:

Այսպիսով, Նիկոմեդիայի խոսվածքում իմաստային տարբերակվածություն են դրսևորում *զը (զ)* եղանականիշ մասնիկով կազմությունները, որոնք արտահայտում են ենթադրական ապառնիի և անցյալի ապառնիի, սահմանական ներկայի և անցյալ անկատարի, ապառնիի և անցյալի ապառնիի իմաստներ: Մրանից հետևում է, որ այս խոսվածքում *զը (զ)* եղանականիշով ժամանակաձևերը դրսևորում են ոչ միայն խոսելու պահին, դրանից առաջ կամ դրանից հետո կատարվող, այլև հաստատապես և ենթադրաբար կատարելի գործողություն, իսկ *պիտի*-ով կազմությունները՝ միայն հարկադրաբար կատարվելիք գործողության իմաստ:

Ժխտական խոնարհման կառուցվածքը, ինչպես բարբառների գերակշիռ մասում, Նիկոմեդիայի խոսվածքում ևս բնորոշվում է նախամասնիկավորումով: Ժխտական նախամասնիկներն են *չ-ն* և *մի-ն*: *Մի-ն* հանդես է գալիս որպես *չ* մասնիկի դիրքային տարբերակ՝ փոխարինելով նրան հրամայականի ձևերում և կազմելով արգելական հրամայականի ժամանակաձևեր: Եղանականիշ նախամասնիկ չունեցող ժամանակաձևերի (դերբայակազմ ժամանակաձևեր, անցյալ կատարյալ, ըղձական (անցյալ-ապառնի) հաստատական և ժխտական կազմությունները ունեն միևնույն ձևը (տարբերությունը միայն *չ* ժխտական մասնիկի մեջ է): Անցյալ կատարյալի և ըղձական եղանակի ժամանակաձևերի ժխտական խոնարհումը դրսևորվում է հաստատական խոնարհման ձևերի և *չ* ժխտական մասնիկի նախադաս գործածությամբ, այսպես՝ անց. կատ.՝ *չըզըրեցի, չըզըրեցիր, չըզըրեց, չըզըրեցինք, չըզըրեցիք, չըզըրեցին, ըղձ. ապառնի չըխըմիմ, չըխըմես, չըխըմե, չըխըմինք, չըխըմեք, չըխըմին: Գը (զ)* եղանականիշ ունեցող ժամանակաձևերի ժխտականը կազմվում է ժխտական դերբայի (կամ նրա փոփոխակների) և օժանդակ բայի ժխտական ձևերի հարադրությամբ, այսպես՝ *չիմ սիրեր, չես սիրեր, չըսիրեր, չինք սիրեր, չէք սիրեր, չին սիրեր*: Հարկադրական եղանակի ժխտական խոնարհման ձևերում *չ* մասնիկը հանդես է գալիս եղանականիշին զուգակցված, այսպես՝ *չըղըխըմիմ «չպիտի խմես», չըղըխըմես, չըղը-*

խըմէ չըղըխըմինք, չըղըխըմիք, չըղըխըմին: Արգելական հրամայականի իմաստը արտահայտվում է *մի* (մը) արգելական մասնիկի նախադաս կիրառությամբ, այսպես՝ *մը խաղա՛ր, մը մընա՛ր, մերթա՛ր, մը գարթա՛ր, մը խօսի՛ր* և այլն:

Շարահյուսական առանձնահատկություններ

Նիկոմեդիայի խոսվածքում որոշյալությունը դրսևորվում է *ը* և *ն* որոշիչ հոդերով, այսպես՝ *Չառը ձաղիգ դըվավ* «Ծառը ծաղկեց»: *Գօվը ձընէր էր* «Կովը ծնել էր»: *Դունը ավըրվավ* «Տունը ավերվեց»: *Չօջուխը ամանը գօյրեց* «Երեխան ամանը ջարդեց»: *Ն* որոշիչ հոդը գործառում է ձայնավորահանգ բառերի դեպքում: Խոսվածքը հատկանշվում է անորոշ հոդի հետադաս գործածությամբ, այսպես *Գըլլի-չըլլիր մարթ մը, գընիգ մը գըլլիր* «Մի մարդ ու մի կին են լինում»: *Օր մը աս մարթը գըհըվըն(դ)նա* «Մի օր այս մարդը հիվանդանում է»:

Հատկացուցիչի և հատկացյալի համաձայնությունը արտահայտվում է համանիշ կառույցների գործածությամբ՝ որոշյալ հատկացյալի հետ որոշյալ հատկացուցիչ (*ձառին յափրախը «տերև», գէղին ջուրը արդին խօղը, ձիին բօջը*) և որոշյալ հատկացյալի հետ անորոշ հատկացուցիչ (*ձառի յափրախը, գէղի ջուրը, արդի խօղը, ձիի բօջը*): Ենթակայի և ուղիղ խնդրի շարադասությունը ազատ է: Ուղիղ խնդիրը կարող է դրվել ստորոցյալին նախադաս (Գադուն մուգ բըռնեց) կամ հետադաս (Գադուն բըռնեց մուգ): Անձի անունների դեպքում ուղիղ խնդիրը դրվում է տրական հոլովով (*Գիրքօրը գուզէ Արշավիլին «Գրիգորը սիրում է Արշավիլին»:* *Էզան հարսին դարին* «Հարսին տարան»: *Հարը չօջուխին ձէձէց* «Հայրը երեխային ծեծեց»), իսկ իրի անունների դեպքում՝ ուղղականով (*Մինասը քար գըղաշէ, խօղ գըբերէ* «Մինասը քար է տաշում, հող է բերում»: *Չամուռ դու՛ր վարբէղին* «Ցեխ տու՛ր վարպետին»): Անորոշ դերբայով արտահայտված նպատակի պարագան դրվում է ուղղականաձև հայցականով, այսպես՝ *Գընաց արդը ջուր ընէլ* «Գնաց արտը ջրելու»: *Էզավ դունը՛ հաց ուղէլ* «Եկավ տուն՛ հաց ուտելու»: *Գացինք մօռ քաղէլ* «Գնացինք՝ մոշ քաղելու»: Տեղի պարագայի իմաստը դրսևորվում է վերլուծական (*մէչ կապ+սեռական հոլովաձև՝ Գըբանէ էքիին մէչը: Ամանին մէչ ջուր չըքա: Դաշտին մէչ հաս չըքա*) և համադրական (հայցական հոլովաձև՝ *Դըդաս գաբրի գէղը*) կառույցներով:

Խոսվածքը հատկանշվում է հետ, մոտ, մեջ, վրա, առջև կապերի հետադաս կիրառությամբ, այսպես՝ քարին քօլ «քարի մոտ», ախպարին մօղ «եղբոր մոտ», ինգերներուն հեղ «ընկերների հետ», դունին էռճէվը «տան առաջ», ջամփուն վըրա «ճանապարհի վրա», ջուրին մէջը «ջրի մեջ» և այլն:

Ներքոբերյալ բառերը Նիկոմեդիայի բարբառում ունեն ձևային հետևյալ արտահայտությունը՝

աղանի-աղունիգ	աղտ-աղդ
աղտոտ-աղդօդ	այգի-էկի/էքի
այս-աս	այդ-ատ
այն-ան	անանուխ-աննուխ
անուն-անուն	առաւօտ-առդոտ
առնել-ընել	արտասուք-արցունք
բռնել-բըռնել	գիշեր-գիշեր
գրտնակ-օխլամուր	դգալ-թըքալ
էկէդէցի-ժամ	լնուլ-լէցնել
խստոր-սըխտոր	կաթն-կաթ
կորիգ-գուդ	կրեայ-գիրյա
հիմա-հիմա	հօրաքոյր-հօրաքուր
հօրեղբայր-հօյրախպար	ճանապարհ-ճամփա
մասուր-մասուր	մրջին-մուռճում/մըռճում
մօրաքոյր-մորաքուր	յորանջել-բերան չափել
նապաստակ-նաբասդագ	ներքս-ներս
նաւթ-կագ	նման-լըման
նմանել-լըմանել	շոր-լաթ
շուրջ(ս)-բըլօր(ս)	ոզնի-օզնի
ուղարկել-խըրգել	ուղեղ-օղեղ
ուղղորդ-օղօրթ	պարապ-բարաբ
ջրյորդան-ճօռօք	սա-սսիգա(գ)/ասի/աս
դա-աղիգա(գ)/աղի/աղ	նա-անիգա(գ)/անի/ան
սալոբ-սալօր	սեամ-շէմիգ
վիշապ-վիշաբ	տալ-դալ
տեսանել-տէսնալ	փոխինդ-փօշի
քսան-քըսան	օրհնել-օրթնել
օրհնանք-օրթնյանք	

Ստորև տրվում է Հ. Թումանյանի «Մուտասանը» հեքիաթը Նիկոմեդիայի խոսվածքով:

Մուտասանը

Գըլլի-չըլլի թաքավոր մը: Աս թակ(ք)ավորը իրեն յերգիրին մեչ կըհայնէ. «Օվ անանգ սուդ ըսէ, վոր էս ըսիմ սուդ է, իմ թաքավորութանըս գէսը գուդամ իրէն»:

Կուգա չօբան մը: Գըսէ.

– Թաքավոր արբաձ գէնաս, իմ հարըս չըբուխ մը ունէր, վոր աստեղէն գըպարսըցնէր վէրէվ, յերգինքին վըրա ասխէրը գըխառնէր:

– Գըբադայի, – բադասխան գուդա թաքավորը: – Իմ բաբիգըս ա զիվէնէ մը ունէր, մի ձարը պէրանը գըղընէր, մեգ ալ ձարը գըպարսացընէր, արեվէն գըվառէր:

Մուտասանը գըլօխը քէրէլօվ տուրս կէրթա: Կուգա թէրզի մը: Գըսէ.

– Ներօդութուն, թակավօր, էս շուդ դուգայի (պիտի գայի), ուշացա: Էրեգ շադ արգէվ էգավ, գայձայնէրը բայթեցան, յերգինքը բադըռովավ, գացէր էի կարգըդէլ:

– Հա, աղվօր ըրէր էս, – կըսէ թաքավորը, – ամա աղվօր չէիր կարգըդէր, աս առդու քիշ մը արգէվ թափավ:

Ասիգագ ա տուրս կէրթա:

Նէրս կըմը(տ)նա ախկադ կէղացի մը՝ չինին խօլթըխին դագը դըրաձ:

– Դուն ի՞նչ կուգէս, ձօ մարթ, – գըհարցընէ թակավորը:

– Ընձի չինի մը օսկի բառդք էս, էգէր իմ դանիմ:

– Չինի մը օսկի՞, – գըզարմաննա թակավորը: – Մուդ կըսէս, էս քէզի օսկի բառդքը չիմ:

– Թէ վոր սուտ կըսիմ, թակավորութանըս գէսը դու՛ր:

– Չէ՛, չէ՛, – օդորթ կըսէս, – լաֆը կըփօխէ թակավորը:

– Օդորթ կըսիմ, չինի մը օսկի տու՛ր:

Հասմիկ Խաչատրյան

(ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ)

ԵՎԴՈՎԻԱՅԻ ՄԻՋԲԱՐՐԱՌԸ

Եվդոկիան համարվում է հնագույն բնակավայր, և նրա պատմությունը սկսվում է մ.թ.ա. 4-րդ հազարամյակից: Հին ժամանակներից բնակեցված է եղել նախախեթական, իեթական, այնուհետև՝ հայկական ցեղերով: Մ.թ.ա. 190 թ. մտել է Փոքր Հայքի թագավորության մեջ, որը հետագայում միացվել է Պոնտոսի թագավորությանը: Հռոմեա-պոնտական պատերազմում Միհրդատ Վեցերորդ Եվպատորի պարտությունից հետո միացվել է Հռոմեական կայսրությանը: 4-րդ դարի վերջից մինչև 1071 թ. եղել է Բյուզանդիայի կազմում: Ենթադրվում է, որ իր անունը ստացել է բյուզանդական կայսր Թեոդորիոս Առաջինի մոր՝ Եվդոքսիայի անունից: 8-9-րդ դդ. Արաբները հարձակումներ են գործել Եվդոկիայի վրա, բայց չեն կարողացել գրավել: 1174-1307 թթ. այն տիրել են սելջուկ թուրքերը, 1307-1398 թթ.՝ մոնղոլները: 1398 թ. Եվդոկիան միացել է Օսմանյան Թուրքիային, և թուրքերը այն վերանվանել են Թոքատ: Դեռևս հնագույն ժամանակներից Եվդոկիայում բնակվում էր հայ հոծ բնակչություն:

1914 թ. ուներ 50000 բնակիչ (թուրքեր, հայեր, հույներ, լազեր, չերքեզներ և այլն): Մեծ եղեռնից առաջ, Եվդոկիայում հայերի թիվը հասնում էր մոտ 14 հազարի:

Եվդոկիա քաղաքը գտնվել է Սեբաստիա-Ամասիա-Մամսուն խճուղու վրա: Տեղակայված է Ալիս գետի (այժմ՝ Էջիլ Իրմակ) Թոզանլու կամ Թոքատ սու վտակի ձախ ափին՝ շրջապատված ոչ բարձր լեռներով: Եվդոկիան ընկած է լեռների միջև՝ արևելքից արևմուտք ձգված 650 մ բարձրության հովտում: Ունի գեղեցիկ դիրք, շրջապատված է փարթամ այգիներով ու պարտեզներով, օդը առողջարար է, աղբյուրները՝ սառնորակ ու քաղցրահամ¹:

Հայերը կարևոր դեր են ունեցել Եվդոկիայի տնտեսության և մշակութային կյանքում, զբաղվում էին արհեստներով, առևտրով, շերամապահությամբ, այգեգործությամբ: Լուսավորչական հայերն ունե-

¹ Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հ. 3, Ե., 1977, էջ 526:

ին յոթ եկեղեցի: Հնուց եղել է հոգևոր թեմական կենտրոն: Գործել է հայկական հինգ վարժարան՝ Ազգային, Ոսկյան, Վարդուհյան, Ս.Եր-րոդրություն և Ներսիսյան: Առանձին եկեղեցիներ ու վարժարաններ ունեին հայ կաթոլիկական ու բողոքական համայնքները:

Եվդոկիայի հայերի տնտեսական, հոգևոր, մշակութային աշխույժ կյանքը խաթարվեց Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ կոտորվեցին բազմաթիվ եվդոկահայեր, տեղահանվեցին Եվդոկիայի գավառի 23 հայկական գյուղերի բնակիչները:

Եվդոկիայի միջբարբառը հայերենի արևմտյան տարածքի քիչ ուսումնասիրված բարբառներից է: Եվդոկիայի բարբառին վերաբերող լուրջ հետազոտություններ և բանահյուսական նյութեր գրեթե չկան, միայն 1899 թ. Հ. Գազանձյանը Վիեննայում հրատարակում է «Քննություն Եւդոկիոյ հայոց գաւառաբարբառի» աշխատությունը, ինչպես նաև Բյուրակնի 1900 թ. հրատարակած համարներում զետեղված են բանահյուսական եզակի նմուշներ Մարզվանի ենթաբարբառից և որոշ տեղեկություններ Օրդուի ենթաբարբառի վերաբերյալ²: Հ. Գազանձյանը իր գրքի առաջաբանում գրում է. «... բարբառախօսական (...) կատարեալ ուսումնասիրութիւն մ'ընելու համար ո'չ հարկ եղած լեզուաբանական ձեռնհասությունն ունէինք եւ ո'չ ալ գէթ ձեռքի տակ նմանօրինակ աշխատասիրութիւն մը իբրև ուղեցոյց ծառայելու համար մեզի...»³: Հեղինակի նպատակն է եղել գավառական բառերի մի ցուցակ հրատարակել, բայց հետո, «Հանդես Ամսօրեայի» խմբագրության և Հ. Աճառյանի հորդորներից քաջալերված, որոշել է նույն բարբառի ձայնագիտական (այսինքն՝ հնչյունաբանական) և քերականական հատվածն էլ պատրաստել:

Հ. Գազանձյանի ուսումնասիրությունը բաղկացած է 4 բաժնից՝ 1. Ձայնագիտություն, 2. Բառացուցակ, 3. Քերականություն, 4. Առածներ, ոճեր, ասացվածքներ: Բերված են բարբառից մի քանի նմուշներ, հեղինակը ուշադրություն է դարձրել դարձվածքներին, աշխատության հիմնական մասը կազմում է բառարանը, և հնչյունական ու քերականական համակարգերի որոշ դիտարկումներ են արվում: Մեծ երախտավորը շատ համեստորեն է գնահատում իր աշխատանքը.

² Տե՛ս Բիւրակն, Կ.Պոլիս, 1900, էջ 427, 73:

³ Հ.Գազանձեան, *Եւդոկիոյ հայոց գաւառաբարբառը*, Յառաջաբան, Վիեննա, 1899, էջ Ե:

«Նախափորձ մը պարզապես՝ սկսնակէ մը գրուած, առանց գոնէ որեւէ առաջնորդող գործի օգնութեան, որ բնականաբար գիտութեան բոլոր պահանջները գոհացնելու կարող գիտնական մեթոտաւոր հետազոտութիւն մը համարուելու յավակնութիւնը չի կրնար ունենալ»⁴:

Եվդոկիայի բարբառին անդրադարձել է նաև Հ. Աճառյանը Էմիւնեան ազգագրական ժողովածուում և Հայոց լեզվի պատմության երկրորդ հատորում⁵: Իր դիտարկումները կատարելիս գիտնականը ամենայն հավանականությամբ օգտագործել է Հ. Գազանճյանի տրամադրած փաստացի նյութերը:

Դեռևս 1988 թ. մենք, ըստ «Հայ բարբառագիտական ասոլապի ծրագրի», Եվդոկիայի միջբարբառի վերաբերյալ նյութեր ենք քաղել Եվդոկիացիներ Հարություն Խաչատրյանից (ծնվ. 1888 թ.), Իսկուհի Չաքրյանից (ծնվ. 1890 թ.), Աղասի Մարզվանյանից (ծնվ. 1895 թ.) և Մարիամ Օսքույանից (1897 թ.): Ըստ մեր երջանկահիշատակ բարբառախոսների հաղորդած տվյալների՝ 1924 թ. Եղեռնից մազապուրծ մոտ 30-40 Եվդոկիացի ընտանիքներ ապրել են Վրաստանի Մառնեուլի շրջանի Շահումյան սովխոզում և միայն 1960-1970-ական թթ. են տեղափոխվել Երևան: Այս հանգամանքով է պայմանավորված այն, որ նրանք զերծ են մնացել արևմտյան այլ տարածքների բարբառների ազդեցություններից, հատկապես գրական արևմտահայերենից, որովհետև նրանք նաև անգրագետ են եղել:

Ըստ բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման՝ Եվդոկիայի խոսվածքը պատկանում է Փոքր Ասիայի կամ արևմտյան բարբառախմբին: Գ. Ջահուկյանը իր «Հայ բարբառագիտության ներածությունում» այն համարում է Եվդոկիայի միջբարբառ⁶:

Հ. Աճառյանը փաստում է, որ Եվդոկիայի բարբառով խոսում են Եվդոկիա քաղաքում, որը գաղթականության միջոցով տարածված է մինչև Ամասիա, Մարզվան, Օրդու, Մամսոն և Միտոպ, այսինքն՝ այս երեք քաղաքների գաղթականության մեծագույն մասը Եվդոկիայից է

⁴ Նույն տեղում, էջ 9:

⁵ Տե՛ս Հ.Աճառեան, *Հայ բարբառագիտություն. Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների* (= Էմիւնեան ազգագրական ժողովածու, հ. Ը), Մոսկուա-Նոր Նախիջեան, 1911, էջ 232, **Նույնի**, *Հայոց լեզվի պատմություն* (այսուհետև՝ ՀԼՊ), մաս 2, Ե., 1951, էջ 350:

⁶ Տե՛ս Գ.Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 132-133:

եկել և բնականաբար սեփական բարբառ ունենալ չէր կարող: Առանձին ենթաբարբառ ունի Գրիգորես գյուղը⁷:

Եվրոկիայի միջբարբառի հնչյունական առանձնահատկությունները

Չայնավորական համակարգը

Եվրոկիայի միջբարբառի ձայնավորական համակարգը հին հայերենի համեմատությամբ նույնն է, միայն ավելանում է *ü* առաջնալեզվային ձայնավորը: Ըստ Հ.Մուրադյանի՝ որոշ վայրերում *ü*-ն հանդես է գալիս *n*-ից առաջ գտնվող *k*-ի դիմաց⁸: Այսպիսի օրինակափություն ունի Եվրոկիայի միջբարբառը: Այսպես՝ մեռնել>*münnel*, քեռի>*pünni*, ձեռք>*dünp*, լեռն>*lünn*, բեռն>*pünn* և այլն:

Քմային *ü*-ն միջբարբառում առկա է նաև Աճառյանի օրենքին ենթարկվող որոշ բառերում՝ *փյւզուկ, պյւննւյ, պյւրնւգ, տւրնւն*, իսկ երբեմն էլ հանդես է գալիս առանց որևէ օրինակափության ենթարկվելու: Օրինակ՝ *հւնու, Սւնքօ, նւյել, բւնւն, թւնգրւնի* և այլն:

Եվրոկիայի միջբարբառը փոխառյալ բառերում առաջնալեզվային *ü*-ից բացի ունի *ni*, *ö* ձայնավորները (*սուքանն, չօրնւք, քուքր* և այլն): Միավանկ և երկվանկ բառերի բառասկզբի *k*-ի դիմաց բարբառը հիմնականում ունի *k*: Օրինակ՝ ես>*ես, եփ>եփ, երթ>երթ, երկաթ>երկաթ, երկայն>երգան, երկիր>երգիր* և այլն:

Չ. Գազանձյանը ժամանակին իրավացիորեն նկատել է երևույթներ, որոնք այժմ մեր բարբառախոսների խոսքում բացակայում են: Այսպես՝ նա գտնում է, որ *n* ձայնավորը Եվրոկիայի բարբառում *ok* կամ *nik* է հնչում⁹, այսինքն՝ *n*-ն երկբարբառային արտասանություն ունի (սոխ>*սուէխ*, հոտ>*հուէտ*, որք>*ուէրք*, գործ>*գուէրծ* և այլն): Իսկ ըստ մեր հավաքած նյութերի՝ միջբարբառում երկբարբառային հնչյուններ չեն հանդիպել, և բառասկզբի *n*-ի դիմաց առկա է հետին շարքի միջին բարձրացման *o* (նոք>*ոդք*, ոչխար>*ոշխար*, ոջուտ>*ոշուտ*, ով>*ով*, որ>*որ* և այլն): Մենք կարծում ենք, որ, հայրենի բնօրրանից և բարբառախոս միջավայրից կտրված լինելով, անհատ բարբառախոս-

⁷ Տե՛ս Հ.Աճառյան, ՀԼՊ, մաս 2, էջ 350:

⁸ Տե՛ս Հ.Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, Ե., 1982, էջ 46:

⁹ Տե՛ս Հ.Գազանձեան, նշվ. աշխ., էջ 12:

ների խոսքում ժամանակի ընթացքում երկբարբառային հնչյունները հնարավոր է՝ պարզեցված լինեն:

Բաղաձայնական համակարգը

Հ. Աճառյանը, վկայակոչելով Հ. Գազանճյանին, այս բարբառի մասին գրում է. «Բաղաձայնների երեք աստիճանը վերածվել է երկուսի, այն է՝ *բ, փ, գ, թ, դ, թ* նն, ըստ որում հին հայերենի թե՛ թրթռուն, թե՛ խուլ բաղաձայնները հավասարապես վերածված են թրթռունի, իսկ թավերը կմնան անփոփոխ»¹⁰:

Համեմատելով Հ. Գազանճյանի և Հ. Աճառյանի՝ այս հարցի շուրջ արված դիտարկումները՝ տեսնում ենք եզրակացությունների մեջ հակասություն: Ահա թե ինչ է գրում Հ. Գազանճյանը. «Եվդոկիոյ բարբառին մեջ *ւյ, կ, տ, ծ, ճ* նուրբ բաղաձայններն ... *բ, գ, դ, ձ, ջ* միջակներուն ձայներն առած են...». *ւյատկեր>badger* (*բ*), *տոպրակ>dobrag* (*դ*), «իսկ *փ, թ, ց, չ* թաւերուն ձայներն ալ շփոթուած են նուրբերուն հետ և կը հնչուին պարզապէս *բ (ւյ), կ(կ) տ(տ), տ(ճ) ...*, որով բաղաձայններու այս երբեակ աստիճանատրումը (...) երկեակի վերածուած է: Միայն *բ, գ, դ, ձ, ջ* ձայները ... տակաւին կարծես թէ աստիճան մը կը պահեն իրենց նախնական հարազատ հնչումը...». *բան>ban, գետ-ged*: «Բայց դիտելի է, որ այս միջակներն ալ հետզհետեւ ընդհանուր ձայնափոխութիւն մը կրելու վրայ են՝ փոխանակուելով *ւյ, կ, տ, ծ, ճ...*». *գիշեր>kischer* և այլն¹¹:

Այսպիսով, ըստ Հ. Աճառյանի՝ Եվդոկիայում բաղաձայնական համակարգը երկաստիճան իլրագուրկ է՝ *բ, փ, գ, թ, դ, թ*, իսկ ըստ Հ. Գազանճյանի՝ երկաստիճան է, բայց ձայնեղ և խուլ համակարգով՝ առանց շնչեղ խուլերի՝ *բ, ւյ, գ, կ, դ, տ*: Սակայն մեր հավաքած նյութերի քննությունից պարզվում է, որ Եվդոկիայի միջբարբառում բաղաձայնական համակարգը խախտված է: Պայթական և կիսաշփական բաղաձայնները բնորոշվում են որոշ անկայունությամբ. Հին հայերենի խուլերը բառակարգի դիրքում տատանվում են բուն խուլերի և ձայնեղների միջև՝ արտաբերվելով մերթ որպես խուլ, մերթ որպես ձայնեղ: Օրինակ՝ պաղ>*ւյաղ*, պաղ>*բաղ*, տուն>*տուն*, տուն>*դուն* և այլն:

Ի դեպ, այսպիսի երևույթ նկատել է նաև Դ. Կոստանոյանը Խոտրջուրի խոսվածքում: Նա գրում է. «Բառակարգի խուլ պայթական

¹⁰ Հ. Աճառյան, ՀԼՊ, մաս 2, էջ 350, **Նույնի**, Հայ բարբառագիտություն, էջ 233:

¹¹ Հ. Գազանճեան, նշվ. աշխ., էջ 12-13:

և պայթաշփական բաղաձայնները Խոտրջուրի խոսվածքում չունեն հստակ արտաբերական հատկանիշ: Դրանք ընկալվում են մերթ խուլ, մերթ ձայնեղ: Այսպիսի՝ միջին դիրք գրավող հնչյուններ մեզ հանդիպել են Երզնկայում, Արաբկիրում»¹²:

Եվդոկիայի միջբարբառում ձայնեղները բառասկզբում հանդես են գալիս մերթ խուլ, մերթ շնչեղ խուլ, մերթ ձայնեղ: Օրինակ՝ բերան-պերան, փերան, բերան: Սակայն պետք է նշել, որ միջբարբառում խոսքի շղթայում երբեմն նկատելի է միջավայրային արտասանությունը: Այսպես՝ ձայնեղների միջավայրում առկա է ձայնեղային և կիսաձայնեղային արտասանությունը, իսկ խուլերի միջավայրում խուլ է արտասանվում: Սակայն հարկ է նշել, որ անկախ դիրքի արտասանությունը հիմնականում կայուն է, այսինքն՝ բառասկզբի ձայնեղները արտասանվում են խուլ, օրինակ՝ բարի-պարի, բերան-պերան, գինի-կինի, իսկ բառասկզբի խուլերը մնում են խուլ, օրինակ՝ պաղ, կարաս, կըրագ և այլն:

Այս հարցի շուրջ հետաքրքրական դիտարկում է անում Դ. Կոստանդյանը «Երզնկայի բարբառը» ուսումնասիրության մեջ: «Խոսքի շղթայում, հնչյունական զուգորդումներին համապատասխան, խուլերի և ձայնեղների նման փոխհարաբերության անտեսումը հանգեցրել է մի քանի բարբառների (Երզնկայի, Ակնա, Շապին-Գարահիսարի, թերևս նաև Պոլսի) բաղաձայնական համակարգի ոչ ճիշտ գնահատման»¹³: Եվ մեջբերում է անում Հ. Աճառյանից, որը գտնում է, որ պոլսեցին երկու տեսակ արտասանություն ունի. մեկը բուն ժողովրդական կամ բարբառային արտասանությունն է, որը գործածվում է տանը, փողոցում, հասարակ խոսակցության ժամանակ, և գրական արտասանություն, որը գործածական է դպրոցում, գիրք կարդալու ժամանակ կամ էլ գրական անձերի հետ խոսելիս: Ըստ Հ. Աճառյանի՝ տարբերությունը *բ, գ, դ, ձ, ջ* տառերի արտասանության մեջ է, որոնք բարբառային ձևով հնչում են ձայնեղ կամ խուլ, իսկ գրական ձևով՝ թավ (*փ, թ, բ, գ, ջ*): Եվ բերում է այսպիսի օրինակ. միննույն *դուռը բաճ* նախադասությունը, եթե ուղղված է մի հասարակ դռնապանի, ապա

¹² Դ. Կոստանդյան, Խոտրջուրի բարբառային յուրահատկությունների լեզվաաշխարհագրական բնութագիրը, *Հայերենի բարբառագիտական ատլաս*, պրակ 2, Ե., 1985, էջ 49:

¹³ Լույնի, *Երզնկայի բարբառը*, Ե., 1979, էջ 34:

կարտասանվի *դուռը բա՛ց* կամ *տուռը պա՛ց*, իսկ երբ ուղղված է մի գրական անձի, արտասանվում է *թուռը փա՛ց*¹⁴: Եվ Ռ. Կոստանդյանը իրավացիորեն եզրակացնում է, որ *բ, գ, դ, ձ, ջ*-ի բարբառային հնչման այս երկվությունները կարող են բացատրվել միայն հնչյունական շղթայում այդ բաղաձայնների գրաված դիրքով: Այսօր էլ, մեր աչքի առաջ, նույն մարդը պաշտոնական միջավայրում նույն բառերը արտասանում է գրական հայերենով, իսկ կենդանի խոսքում՝ ժողովրդախոսակցական հնչերանգով:

Իսկ միջձայնավորային և բառավերջի հետձայնավորային դիրքում և *բ*-ից հետո գտնվող *բ, գ, դ, ձ, ջ* ձայնեղների դիմաց միջբարբառում առկա են շնչեղ խուլ *փ, ք, թ, ց, չ* հնչյունները: Օրինակ՝ *հաքնել, էք, խափել, օց, արչ, տառուցել, ուրփաթ, սրբփել* և այլն: Խուլերը բառամիջի միջձայնավորային և բառավերջի հետձայնավորային դիրքերում բարբառում դառնում են ձայնեղ *բ, գ, դ, ձ*: Այսպես՝ կատու>*կադու*, շապիկ>*շափիգ*, կարկուտ>*կարգուդ*, ազատել>*ազադել* և այլն: Սակայն միշտ չէ, որ այս օրինաչափությունը գործում է, օրինակ՝ ապրել>*ափրել*, ապրուստ>*ափրուստ*, ապրանք>*ափրանք* և այլն:

Չ. Գազանճյանն իր ուսումնասիրության մեջ գրում է. «Նշանակութեան արժանի է նաեւ... *տր, տռ, նր, նտր, նտռ* ամփոփուելով՝ հաւասարապէս մէկ ձայնի կը վերածուին եւ կը հնչուին իբրեւ *ռ*»: կտրել>*կռել*, կտրիճ>*կռիճ*, կտրել>*կտրել*, պատռել>*պատռել*, ծանր>*ծառռ*, սանտր>*սառռ*, հընտրել>*հըռռել*, փնտռել>*փռռել*¹⁵: Սակայն, ցավոք սրտի, մեր հավաքած նյութերում այս հնչյունափոխությունը լիովին արտահայտված չէ: Միայն *տր>ռ, նր>ռ* է դառնում պատռել>*պատռել*, մանրուք>*մառուք* բառերում: Թերևս այս երևույթը ևս, ինչպես երկբարբառների դեպքում է, պարզեցման միտում է դրսևորել: Իսկ *կոտրել* բառը միջբարբառում արձանագրել ենք 2 ձևով՝ *կօրդել* և *կօյրել*, կտրելը՝ *կըրդել* և *կըյրել*, Պետրոսը՝ *Պէտրօս* և *Պէյրօս* (ընդ որում բարբառախոսները նշում էին, որ Պէյրօսը մեկ այլ անուն է): Այսինքն՝ բարբառում գործում է միաժամանակ երկու հնչյունափոխական երևույթ. մի դեպքում տեղի է ունենում հնչյունների դրափոխություն (կտրել>*կըրդել*), մյուսում՝ *տր>յր* (*կըյրել*):

¹⁴ Տե՛ս Հ.Աճառյան, *Քննություն պոլսահայ բարբառի*, Ե., 1941, էջ 11-12:

¹⁵ Հ.Գազանճեան, նշվ. աշխ., էջ 18-19:

Ընդհանրապես միջբարբառում դրափոխություն տեղի է ունենում նաև այլ հնչյունակապակցություններում մեղր>մերդ, անձրև>արձեվ//արզեվ, ագռա>արգա, բարձր>պարս և այլն: Միջբարբառում նր հնչյունակապակցություն ունեցող որոշ բառերում տեղի է ունենում դ-ի հավելում (ըստ երևույթին, սանդղռի նմանությամբ), օրինակ՝ ծանր>ծանղռ, մանր>մանղռ, սակայն բարբառն ունի նաև սրանց զուգահեռ ծանղռ>ծարղ, սանղռ>սարղ բառաձևերը: Ծարղ, սարղ բառաձևերի գոյությունը ենթադրել է տալիս, որ սկզբնական փուլում տեղի է ունեցել դ-ի հավելում, այնուհետև գրաբարի մեկուկեսավանկանի բառերի ը-ն ընկել է, որին էլ հաջորդել է դրափոխությունը, իսկ կոշտ ո-ն էլ վերածվել է ը ձայնորդի: Մեղր, բարձր բառերի դեպքում պարզապես գաղտնավանկի անկում է տեղի ունեցել, և հետո՝ դրափոխություն (մերդ, պարս): Մյուս կողմից էլ այս բառաձևերի գոյությունը ևս մեկ փաստարկ է, որ նր հնչյունակապակցության դիմաց կարող էր լինել ո կամ ը, ինչպես արձանագրել է Հ. Գազանձյանը (ծանր>ծառ, սանր>սառ և այլն): Երզնկայի բարբառում ևս արձանագրված են նմանատիպ հնչյունափոխական երևույթներ¹⁶:

Եվդոկիայի միջբարբառում նլ//լն հնչյունակապակցություններում կատարվել է լիակատար առնմանական փոփոխություն. նլ, լն>նն, օրինակ՝ անալի>աննի, բանալի>բաննիք, խլնոտ>խըննիքոլ և այլն: Այս երևույթը ընդհանրապես բնորոշ է արևմտյան բարբառներին:

Եվդոկիայի միջբարբառում, երբ երկու դժվարահունչ բաղաձայններ են հանդիպում կողք կողքի, ձայնավորների ներդաշնակության կամ թեթև հնչման համար գաղտնավանկի ը-ն, ձեռք բերելով լիաձայնություն, դառնում է ու, օրինակ՝ գլուխ>կուլուխ, թթու>թուլու, խնոցի>խունոց և այլն:

Ձ, ծ, ց, ջ, ճ, չ բարդ հնչյունները բաղաձայնների նախորդելիս, կորցնելով իրենց պայթական բաղադրիչները (դ, տ, թ), հանդես են գալիս շփական հնչյուններով՝ ս, շ, ց, ժ: Այսպես՝ անձրեվ>արզեվ (ձ>զ), լվացք>վըլսսք (ծ>ս), իրիցակին>իրիսկին (ց>ս), կոճկել>կօժգել, ծածկել>ծազգել (ծ>զ), բարձր>պարցր>պարսր>պարս (ձ>ց>ս), անեծք>անէսկ, ամաչկոտ>ամըշկօղ (չ>շ) և այլն:

¹⁶ Տե՛ս նաև Դ. Կոստանյան, Երզնկայի բարբառը, էջ 43:

Երկբարբառներ

Եվդոկիայի միջբարբառը հին հայերենի երկբարբառների դիմաց ունի պարզ ձայնավորներ:

Հին հայերենի *այ* երկբարբառի դիմաց շեշտի տակ, շեշտանախորդ և բառավերջի դիրքերում համապատասխանում է *ա*-ի (*այ>ա*). *այո>աո*, *այլ>ալ*, *այն>ան*, *այս>աս*, *գայլ>կալ*, *ծայր>ձ/ծար*, *հայր>հար*, *երբայր>ախպար*, *փայտ>փառ*, *այսօր>ասօր*, *ակռայ>արգա*, *բակլայ>պայլա*, *տղայ>ղղա* և այլն:

Հին հայերենի շեշտանախորդ *այ*-ի դիմաց երբեմն հանդիպում է *է* (*այ>է*): Օրինակ՝ *այրել>էրէլ*, *այգուց>էքուց*, *այրիկ>էրիգ*, որը, կարծում ենք, այլ բարբառների փոխադեցության արդյունք է:

Ա երկբարբառը, հայերենի պատմական ընդհանուր հնչյունափոխությամբ պայմանավորված, դարձել է *օ* (*աւ>օ*)՝ *օրթնէլ*, *օր*, *օց*, *յօթ*, *գարօդէլ* և այլն:

Հինհայերենյան *ոյ* երկբարբառը Եվդոկիայի միջբարբառում պարզեցվել է *ու*-ի. *գրոյց>գուրուց*, *լոյս>լուս*, *ընկոյգ>ունգուգ*, *քոյր>քուր* և այլն:

Եա երկբարբառը սույն բարբառում հիմնականում դարձել է *է* (*եա>է*)՝ *պարէկ*, *ցօրէն*, *վառէգ* և այլն, մասամբ էլ՝ *եա>ւ*. *էրնսնկ*, *լւն*, *լւնրթ*:

Եա-ն դարձել է *ա* իրեար>իրար բառում և ութին ածանցով բառերի սեռական հոլովաձևում *ութեան*-ի դիմաց՝ *ութան*. *պառավութան*, *ախպարութան*, *մենծութան*, *քյնսիբութան* և այլն:

Շեշտի տակ հին հայերենի *իւ* երկբարբառի դիմաց առկա է *ու* ձայնավոր: Օրինակ՝ *ալուր*, *արուն*, *ախպարություն*, *ծութ*, *ձերություն*, *կօղություն*, *էրգանություն* և այլն:

Ղ-ից առաջ գտնվող *եւ(իւ)*-ի դիմաց միջբարբառում առկա է *է*. *գեւ>կէղ*, *կէղացի*, իսկ *եւ-ը*՝ *յէղ*:

Ձևաբանական առանձնահատկություններ

Թվի քերականական կարգը

Եվդոկիայի միջբարբառում հոգնակին կազմվում է *էր*, *նէր*, *դանք* (մասնակի դեպքերում), *վրդանք*, *ք* հոգնակերտներով: Հ. Գազանճյանն իր աշխատության մեջ նշում է նաև այլ հոգնակերտներ, որոնք բարբառն ուսումնասիրելիս մեզ չեն հանդիպել:

Այսպես՝ նա բերում է *ան* հոգնակերտը, որը դրվում է հիմնականում կենդանիների անունները ցույց տվող բառերի վրա, ինչպես՝ *եզան, ձիան, իշուան* և սրանց նմանությամբ՝ *գեղան, տեղան*:

Ստան - տարեստան.

Ունք - աչքունք, ձեռքունք.

Դիք - կընտիք, ախբըրտիք, նիրվըտիք (տեգոր կին), էրկըտիք, քըրվըտիք, տերվըտիք.

Շ. Գազանճյանը հիշատակում է նաև միջինհայերենյան *վի*-ից բաղադրված *վի+ներ>վըներ* հոգնակիի առկայությունը բարբառում՝ *ձեռվըներ, մատվըներ, ծընկըվներ, աչքվներ* և այլն: Մեզ միջբարբառում հանդիպել են *վի+ներ*-ով *ծունկ, մատ* բառերի ծընկըներ, մաղվըներ (ի դեպ, միայն այս երկու բառում) հոգնակիները, իսկ *ծիծ* բառի դեպքում՝ *ծիծվեր* հոգնակիին: Թերևս ժամանակի ընթացքում Շ. Գազանճյանի կողմից վկայված կրկնակի հոգնակիություն ունեցող բառաձևերի պարզեցում է տեղի ունեցել: Եվ, ինչպես նկատել է Յու. Ավետիսյանը, «Բարբառ-միջին հայերեն ճանապարհով արևմտահայերենին փոխանցվել է *ուի (վի)* հոգնակերտը, որը, հաճախ միանալով *ներ* վերջավորությանը, մարմնի գույգ և ավելի անդամներ ցույց տվող գոյականների համար կազմում է կրկնակ ձև՝ *աչուրներ, մատուրներ, ձեռուրներ, սոտուրներ* ևն: Դեռ 20-րդ դարասկզբի քերականագիտությունը այդ կազմությունը համարում է բարբառայնություն, որն արդեն դուրս է եկել արդի գրական լեզվի գործածությունից»¹⁷:

Եվրոկիայի միջբարբառում *եր, ներ* հոգնակերտներն այսպես են բաշխվում. բազմավանկ բառերը, ինչպես գրական հայերենում է, ստանում են *ներ* հոգնակերտ, օրինակ՝ *խունձօրներ, ծաղիզներ, աղիքներ* և այլն, իսկ միավանկ բառերը *եր* հոգնակերտ են ստանում, օրինակ՝ *ժամեր, օղբեր, ճուրեր, տուներ* և այլն:

Դանք հոգնակերտը փաստված է *ախպար>ախպըրդաք, վըղանք*-ը՝ *թօռ>թօռվըտանք, քույր>քուրվըղանք, ք-ն՝ դըղա>դըղաք* բառերում:

Ինչպես գրական արևմտահայերենին, այնպես էլ Եվրոկիայի միջբարբառին բնորոշ է ստացական հոգնակին, որը գոյականի հոգնակի թվի յուրահատուկ դրսևորում է: Խնդրո առարկա միջբարբառ-

¹⁷ Յու. Ավետիսյան, *Արևելահայերենի և արևմտահայերենի գուգադրական քերականություն*, Ե., 2007, էջ 44:

ռում ստացական հոգնակին այսպիսի օրինաչափություն է կրում: Բազմավանկ բառերում հոգնակի ստացականը *նի*-ով է կազմվում. Օրինակ՝ *պէրաննին, անգաջնիդ, լուզուննիս*: Իսկ միավանկ բառերում հոգնակի ստացականությունը դրսևորվում է՝ սովորական հոգնակիին՝ *եր*-ին, հավելելով *նի* հոգնակերտը (*եր+նի*). օրինակ՝ *հացերնիս, ձեռքերնիս, աշկերնիս* (Օրթումնիս հաղավ: Կրթիվնին ժամանագ: Տունէրնիս թողուցանք):

Լեզվաբանական գրականությունից հայտնի է, որ միջին հայերենում *նի* հոգնակերտը հանդես է գալիս երկվանկ բառերում որպես բուն հոգնակերտ: Իսկ միավանկ բառերի դեպքում նախ բառը ստանում է *եր* հոգնակերտ, այնուհետև գուգորդվում է *նի*-ով: Հոգնակի ստացականության այսպիսի ձևեր արձանագրվել են նաև Երզնկայի, Տիգրանակերտի բարբառներում:

Եվ այս առումով մի ուշագրավ դիտարկում է անում Դ. Կոստանդյանը¹⁸: Նա կարծում է, որ *նի*-ն բարբառի կազմավորման ժամանակ բուն հոգնակերտի իմաստով է գործածվել, սակայն հետագայում *նի*-ն (ինչպես նաև *եր*-ով և *վի*-ով բաղադրված *երնին, վընին*), բարբառում պահպանելով գործառության վաղեմի ոլորտը, կորցրել է բուն հոգնակերտության իմաստը, և *նի*-ով բառը ստացել է հոգնակի ստացականության իմաստ, որը միշտ հանդես է գալիս ստացական հոդերի հետ:

Հոլովի կարգը

Ինչպես *Կը* ճյուղի մյուս բարբառները, այնպես էլ Եվրոկիայի միջբարբառը ունի վեց հոլով՝ ուղղական, սեռական-տրական, հայցական, բացառական և գործիական:

Ուղղական հոլովը բառի ուղիղ ձևն է, ունի հոլովական զրո վերջավորություն, որով էլ այս հոլովը տարբերվում է մյուսներից և հակադրվում նրանց:

Սեռական-տրական հոլովն ունի *ի(ն), վա(ն), ան, ու, օչ* հոլովակերտները, որոնք դրվում են բառի ուղիղ ձևի վրա՝ հիմնականում բառահիմքը թողնելով անհնչունափոխ, որը բնորոշ է նաև Պոլսի բարբառին¹⁹:

¹⁸ Տե՛ս Դ.Կոստանդյան, *Երզնկայի բարբառը*, էջ 61, Ա.Հանեյան, *Տիգրանակերտի բարբառը*, Ե., 1978, էջ 65:

¹⁹ Տե՛ս Հ.Աճառյան, *Քննություն պոլսահայ բարբառի*, էջ 101:

Ի հոլովման ենթարկվում են Եվդոկիայի միջբարբառում առկա բառերի գերակշռող մասը, նույնիսկ այն բառերը, որոնք այլ բարբառներում պահպանում են գրաբարյան ձևերը, այստեղ ստանում են *ի* հոլովիչ, օրինակ՝ *տ/դունի, շունի, անունի, ծունի* և այլն:

Ի դեպ, ըստ Հ. Գազանճյանի՝ *տուն, շուն* և նման բառերը Եվդոկիայի միջբարբառում *ա* ներքին հոլովման կամ *ան* արտաքին հոլովման են ենթարկվում, ինչպես օրինակ՝ *տան, շան, ձնան* և այլն:

Ու հոլովակերտ են ստանում որոշ տեղանուններ և սրբավայրեր՝ *Սըվազու, Թոխաթու, Սըշու, Սըփ Կարաբեդու, Ավանու* և այլն:

Ու հոլովման են ենթարկվում *ի*-ով վերջացող որոշ բառերը՝ *ի*-ն կորցնելով, որը գրեթե ընդհանրական է հայերենի համար, օրինակ՝ հօքի>*հօքու*, քեռի>*քեռու*, զինի>*զինու* և այլն: Այս դեպքում, ինչպես գիտենք, *ու*-ն համապատասխանում է գրաբարի *ույ*-ին՝ *զինի>զինույ>զինու*: Սակայն պետք է փաստել, որ *ու* հոլովման ենթարկվող բառերը *ու*-ին զուգահեռ հոլովվում են նաև *ի* հոլովակերտով, օրինակ՝ *օսկիին, զինիին* և այլն: *Ու* հոլովմանն են ենթակվում նաև սահմանափակ թվով այլ բառեր՝ *հավուն, կօվուն, ժամուն, արեվուն, կըլխուն, թաքավորու* և այլն:

Ինչպես ընդհանրապես գրական հայերենում և այլ բարբառներում, այնպես էլ Եվդոկիայի միջբարբառում *ու* հոլովման են ենթարկվում անորոշ դերբայները, օրինակ՝ *մըղաձեղու, խօսեղու, մեռնելու* և այլն:

Ու հոլովման են ենթարկվում գոյականները հոգնակի թվում *եր, ներ* հոգնակերտներով ձևերում, օրինակ՝ *պերաններուն, տուներուն, յափրախներուն, կօվերուն, օսկօններուն, օշխարներուն, ճուրերուն* և այլն:

Վա հոլովման ենթարկվում են ժամանակ ցույց տվող բառերը՝ *ամառվան, առավօտվան*, կիշերվան, տարվան, ծրմնավան, իսկ *երեկո* բառը հոլովվում է կրկնակի հոլովակերտով՝ *վան+ ու՝ իրզվանու*:

Ուղղ.	օր
Մեռ.	օրվան
Տր.	օրվան
Հայց.	օրը
Բաց.	օրվրնէ, օրէ
Գործ.	օրով, օրվնօվ

Ան հոլովում: Այս հոլովմանն են ենթարկվում գրաբարյան *ն* վերջնահնչյունով բառերի մի մասը՝ *տըռան, թօռան, լւնռան, ծըզան, ինչպես նաև՝ կընիգ>կընզան, էրիգ>էրզան, ախչիգ>ախչըզան, ծի>ծիան* և այլն:

Օչ հոլովակերտ են ստանում ազգակցություն ցույց տվող բառերը՝ *անէրօջ, կէտուրօջ, դւնքրօջ, քուրօջ, դէրօջ* և այլն:

Ուղղ.	քուր
Սեռ-տր.	քուրօջ
Բաց.	քուրօջմէ//քուրօջմէն
Գործ.	քուրօջմով

Ա ներքին հոլովման են պատկանում *-ուրին* ածանցով բառերը՝ *նէղուրին>նէղուրէան, նէղուրէնէ, նէղուրէանով* և այլն: Ըստ Գազանճյանի՝ *ուրին* ածանցը բարբառում դրսևորվել է *ուրին* տարբերակով, սակայն մեր բարբառախոսների խոսքում այն հիմնականում *ուրուն*-ով է արտահայտված, միայն երբեմն խոսքում սպորում են *ուրին*-ով, *ուրէն*-ով բառաձևերը: Օրինակ՝ *ախպարություն> ախպարության, պատավություն>պատավության, ծանդուրին> ծանդուրան, տաքուրին>տաքության* և այլն:

Ո ներքին հոլովման են ենթարկվում *հար* (հայր), *մար* (մայր), *ախպար* (եղբայր) բառերը: Օրինակ՝ *հար, հօր, հօրմէ* կամ *հօրէ, հօրմով* կամ *հօրօվ*: Ի դեպ, Հ. Գազանճյանը վկայում է, որ Ամասիայում անսովոր չեն նաև *հարօջ, մարօջ*, այսինքն՝ *օչ* հոլովակերտով ձևերը²⁰:

Ա արտաքին հոլովման են ենթարկվում որոշ տեղանուններ և սրբեր ու սրբավայրեր՝ *Անթապա, Տաճկաստանա, Լուսավորչա, Աստվածածնա* և այլն:

Միջբարբառում *հոգնակի թվի* սեռական-տրականի հիմնական հոլովակերտը *ու*-ն է, որը դրվում է *եր, ներ* հոգնակերտների վրա, օրինակ՝ *պէրանէրուն, տունէրուն, յափրախնէրուն, կօվէրուն, օսկօնէրուն, օշխարնէրուն, ճուրէրուն* և այլն:

Եվդոկիայի միջբարբառում մեզ հանդիպել է նաև սեռական-տրականում *ք/ց* հերթազայությամբ երկու բառ՝ *մարթիք>մարթօց, դըղաք>դըղօց* (*Դըղօցի դունի քընաց*):

²⁰ Տե՛ս Հ.Գազանճեան, նշվ. աշխ., էջ 80:

Բացառական հոլովը Եվդոկիայի միջբարբառում դրսևորվում է գրաբարյան -էն ձևությամբ, որը դրվում է և՛ ուղղական-հայցական, և՛ սեռական-տրական հիմքի վրա. *աշխարքէն, աներօչէն, աներներէն, կէղէն, պախտէն, պախտերէն, լուգուէն, լուգուներէն, տունէն, մուգէն* (Հ. Գազանճյանի ուսումնասիրության մեջ փաստված են օրե/օրվընէ ձևերը):

Էն ձևությոց բացի միջբարբառում տեղ են գտել նաև *ւ*-ով բաղադրված *մէն, մնէ* բացառականի հոլովակերտները. անձ ցույց տվող բառերը կազմվում են *մէն* հոլովակերտով՝ *հօրմէն, մօրմէն, ախպօրմէն քորօչմէն, (մուկ բառի հոգնակի բացառականն է մըզէրվէն),* իսկ ժամանականիշ բառերը՝ *մընէ՝ տարիմընէ, ամիսմընէ, շապատմընէ* և այլն:

Միջբարբառում շատ հազվադեպ նկատվել է նաև գրաբարից եկող տրականաձև բացառականը, օրինակ՝ «Շաղ *մըղաձէրուն* տըխրեց, *Ձորուցէրուն* կուլուխի ցավաց: *Նէղանալուն* վաղացավ»:

Հոգնակի բացառականը կազմվում է՝ բառի հոգնակի ուղղական-հայցականին ավելացնելով *էն* բացառականի հոլովակերտը. *կալէրէն* (գայլերից), *կէղէրէն, պէրաններէն, տունէրէն, լուգունէրէն* և այլն:

Գործիական հոլով: Այս հոլովը դիտարկվող միջբարբառում արտահայտվում է *օվ* հոլովակազմիչով, որը դրվում է բառի ուղղական-հայցական և սեռական-տրական հիմքի վրա, օրինակ՝ *ծննքօվ, ծօլօվ, քորօչօվ, տունօվ* և այլն: Մեր բարբառախոսը *համով* բառը արտասանում էր *համօք*. Չենք կարող ասել՝ սա պատահականություն էր, թե՞ գրաբարյան հին համակարգի մնացուկ: Քանի որ, ըստ Հ. Գազանճյանի՝ Եվդոկիայի միջբարբառում հոգնակի գործիական հոլովի *օք* մասնիկով գործածությունը սովորական է (դրդօք, գավակօք, կամօք և այլն): Իսկ մեր բարբառախոսների հաղորդած տվյալների համաձայն՝ հոգնակի գործիականը կազմվում է՝ միայն ուղղական-հայցական հիմքի վրա *օվ* վերջավորությունը դնելով: Օրինակ՝ *էքինէրօվ, տունէրօվ, կէղէրօվ, ծօլէրօվ, կուլխընէրօվ* և այլն:

Ինչպես արևմտյան մյուս բարբառներում, այնպես էլ Եվդոկիայի միջբարբառում ներգոյական հոլովի հատուկ ձև չկա: Այս հոլովաձևի իմաստը միջբարբառում արտահայտվում է սեռ.-տրական հոլովաձև + մեջ կապով: Օրինակ՝ *փօրին մէչի, փօրէրուն մէչի, օրօցին մէչի (օրէսկին մէչի), ճուրին մէչի, ճուրէրուն մէչի* և այլն:

Առկայացման կարգը

Բարբառում առկա են որոշյալության, ստացականության և դիմորոշության ենթակարգերը: Եթե գրական հայերենում և բարբառների որոշ մասում որոշյալությունը արտահայտվում է *ը*, *ն* հոդերով, ապա մի շատ հետաքրքրական երևույթ է նկատվում Եվդոկիայի միջբարբառում, որը Հ. Գազանճյանի աշխատության մեջ զարմանալիորեն վկայված չէ: Այստեղ ևս, ինչպես մյուս բարբառներում, ձայնավորով վերջացող բառերը ստանում են *ն* որոշյալ հոդը: Իսկ բաղաձայնով վերջացող բառերը *ը* հոդի փոխարեն ստանում են *ի* (իհարկե, այս *ի*-ն թույլ *ի* է): Այսպես՝ Լուգուն էրգան է: Աս շնֆթնյուն համոզ է: Բայց՝ Ծառ*ի* (ծառը) ծախկեցավ: Հար*ի* (հայրը) քննաց: Գով*ի* (կովը) ծընէր է: Ախքաղ*ի* (աղքատը) նըստէր է Քառսուն Մանուկի ժամուն պաղին տագ*ի* (տակը):

Ը որոշիչ հոդի փոխարեն այլ հոդերի գործածությունը բնորոշ է նաև արևմտյան այլ բարբառներին: Որոշիչ հոդերի բազմազանությամբ հատկապես աչքի է ընկնում Տիգրանակերտի բարբառը, որն ունի *ն*, *է*, *ւն* որոշիչ հոդերը: Եվ ինչպես նշում է Ա. Հանեյանը, նրանք ունեն իրենց գործածության հատուկ ոլորտները: Բարբառագետը նույնիսկ փաստում է, որ բարբառում երբեմն հանդիպում են կրկնահոդության երևույթներ՝ *ն*-ի մթագնման հետևանքով: Օրինակ՝ Փօշ*ի*-նէ քըլխուս փերեցիր: Ռօզ*ի*նէ նըպիր էլվանէ²¹: Ինչպես գիտենք, կրկնահոդության երևույթը բնորոշ է նաև այլ բարբառներին (օրինակ՝ Բայազետի բարբառում՝ Չի*ն*ը սատկավ):

Եղեսիայի բարբառում էլ որոշյալությունը ձևավորվում է *ա*, *ն* որոշիչ հոդերով: Ա-ն բաղաձայնահանգ բառերում՝ ձա՛նա, բա՛ղա, (Ա՛ն տըրկալա (գդալը) ու փախի՛ր): Այստեղ ևս ձայնավորով ավարտվող մի քանի բառեր դրսևորվում են կրկնահոդությամբ՝ ծի՛նա, գա՛ղու՛նա, տըրաջի՛նա և այլն²²:

Ածական անուն

Որակական ածականների բաղդատական աստիճանը ձևավորվում է շարահյուսական հետևյալ կառուցվածքով: Համեմատելի առարկան դրվում է բացառական հոլովով, օրինակ՝ Աս դունի ան

²¹ Տե՛ս Ա.Հանեյան, նշվ. աշխ., էջ 79:

²² Տե՛ս Լույնի, Եղեսիայի բարբառը, *Հայերենի բարբառագիտական ատլաս*, պրակ 1, Ե., 1982, էջ 217:

դունեն մենձ է: Գերադրական աստիճանը ունի վերլուծական կառուցվածք. կազմվում է *ամեն* կամ *ալայ* դերանվան բացառական հոլովածնով և ածականի դրական աստիճանով՝ *ամենեն մենձ//ալայեն մենձ, ալայեն կէշ, ամենեն աղէգ* և այլն:

Թվական անուն

Միջբարբառի քանակական թվականներն են՝ *մեգ, էրգու, իրէք, չորս, հինգ, վեց, յոթ, ութ, ինը, թ^սաս, քրսան, էստուն//անտուն, քատտուն, հիծուն, վածուն, յոթանաստուն, ութանաստուն, ինըստուն, հարուր, հազար*: Տասնավորների և միավորների հարադրումը կատարվում է տասնավորների նախադաս շարադասությամբ: Մեր բարբառախոսների կողմից փաստվել է *տասավերկու լուզու* բառակապակցությունը: Հ. Աճառյանը գտնում է, որ պոլսահայ բարբառում միայն երկու և երեք թվականներն են, որ ստանում են *վ*, որը, նրա կարծիքով, և շաղկապի կրճատումն է²³, իսկ Դ. Կոստանդյանը *տասավերգու, տասվիրէք* թվականներում *վ*-ի առկայությունը պայմանավորված է համարում ու շաղկապով՝ *տասուերգու, տասուիրէք*, որը, ըստ նրա, ձայնավորներից առաջ օրինակափորեն դարձել է *վ*²⁴:

Թվականի բաշխականությունը դրսևորվում է քանակական թվականի կրկնությամբ՝ *երգու-երգու, իրէք-իրէք, հինգ-հինգ* և այլն:

Դասական թվականները միջբարբառում ձևավորվում են գրական լեզվի *-օրթ, -րօրթ, -էրօրթ* ածանցներով՝ *յէրօրթ, չօրօրթ, հինգէրօրթ, յէրգրօրթ* և այլն:

Բացարձակ թվականները կարող են փոխանվանաբար գործածվել որպես անձներական թվականներ՝ *Էրգուքն* ալ, *իրէքն* ալ, *վեցն* ալ, *հինգն* ալ և այլն:

Դերանուն

Եվդոկիայի միջբարբառում առկա են անձնական, ցուցական, հարաբերական, անորոշ, որոշյալ և ժխտական դերանունները: Ինչպես ընդհանրապես հայերենի, այնպես էլ Եվդոկիայի միջբարբառի դերանուններին (մասամբ) հատուկ են թվի, դեմքի, հոլովի քերականական կարգերը: Թիվը՝ եզակի, հոգնակի, առկա է երեք դեմք՝ առաջին, երկրորդ, երրորդ:

²³ Տե՛ս Հ.Աճառյան, *Քննություն պոլսահայ բարբառի*, էջ 105:

²⁴ Տե՛ս Դ.Կոստանդյան, *Երզնկայի բարբառը*, էջ 72:

Անձնական դերանուններն են՝ *էս, թուն, անի, ինք, մենք, թուք, անօնք, իրէնք*: Անձնական դերանունները հոլովվում են դերանվանական հոլովմամբ, այսինքն՝ հոլովման հարացույցում տարահիմք են և ունեն վեց հոլով.

Անձնական դերանուն

Ուղղ.	էս	թուն	անի	մէնք	թուք	անօնք
Մեռ.	իմ	քու	անօր	մէր	ծէր	անօնց
Տր.	ինձի	քեզի	անօր	մէզի	ծէզի	անօնց
Հայց.	ինձի	քեզի	անօր	մէզի	ծէզի	անօնց
Բաց.	ինձմէն	քեզմէն// քեզմէ	անկէ//անօր //անօրմէն	մէզմէն	ծէզմէն	անօնցմէն
Գործ.	ինձանօվ	քեզանօվ	անօրմօվ	մէզանօվ	ծէզանօվ	անօնցմօվ

Անձնական դերանվան բացառականի *մէ* և *մէն* հոլովակերտների առկայությունը պայմանավորված է, ամենայն հավանականությամբ, անվանական հոլովման հետ ընդհանրանալու միտումով: Այսինքն՝ *էս, թուն* դերանունների բացառականը կազմվել է՝ տրականի հիմքից անձնանիշ բառերի հոլովմանը հատուկ *մէ* կամ *մէն* ձևայինների հավելումով (*քեզմէ, անօրմէն* և այլն):

Ինչպես հոլովման հարացույցից երևում է, *նա* դերանվան բացառական հոլովը ունի *անգէ, անգէց* և ավելի սովորական *անօրմէն* տարբերակները: Բացառականի այս ձևերը առկա են նաև Երզնկայի բարբառում, և Դ. Կոստանոյանը սրանցից հնագույնը համարում է *անգէ* ձևը և կարծում է՝ հնարավոր է բխեցնել գրաբարի *այն* դերանվան *այնմիկ* ձևից՝ *մի*-ի անկումով. *այնմիկ > այնկ > անգ*, որից էլ բացառականի է հոլովակերտի հավելումով *անգէ* ձևը: Իսկ *անգէց* ձևի առկայությունը, ըստ բարբառագետի, պայմանավորված է արևելյան բարբառներին բնորոշ բացառականի *-ից* և արևմտյան բարբառների բացառականի *-է* ցուցիչների միաժամանակյա գործածությամբ²⁵:

Հարկ է նշել, որ Հ. Գազանճյանի ուսումնասիրության մեջ հայցական հոլովի համար փաստված է *զիս*, իսկ գործիական, բացառական հոլովների համար համապատասխանաբար *ընծիմէն, ընծիմօվ* հոլովաձևերը, որոնք թերևս հարյուր տարվա ընթացքում դուրս են մղվել միջբարբառից: Եվ դեռևս 1899 թ. Հ. Գազանճյանը փաստում է, որ գործածությունից դուրս են մղվում *ի, զ* նախադիրները. միայն

²⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 77:

երևում են *զիս, զինք, ինքզինք, զիրար, իրենքզիրենք, մեկզմեկ* ձևերում, իսկ *ի* նախդիրը *իլլիք (լիքը), իժիր, մուրս ի վըրան, մուրս ի քթին* և նման մի քանի բառերում ու բառակապակցություններում²⁶:

Հ. Աճառյանը, «Քննություն պոլսահայ բարբառի» աշխատության մեջ խոսելով առաջին դեմքի դերանվան հայցական *իս* ձևի մասին, շեշտում է, որ այն ամենահին ձևն է, և ավելի նոր է *ընձի*-ն, իսկ ամենից սովորականը՝ *ինձի*-ն²⁷: Մեր ձեռքի տակ եղած նյութերում, ինչպես նաև խոսքի շղթայում մեր բարբառախոսը *զ* նախդիրը գործածում էր *ինքը* դերանվան հայցական հոլովի եզակի և հոգնակի ձևերում (էս *զինքս*, խօրանի *զիրենց*, անի ինք *զիրեն* կուզե, անօնք *զիրենց* կուզեն)²⁸.

Ուղղ.	ինք	իրենք
Մեռ.	իր	իրենց
Տր.	զիրեն	զիրենց
Հայց.	զինք	զիրենց
Բաց.	իրենե	իրենցմեն
Գործ.	իրմօվ	իրենցմօվ

Եվրոկիայի միջբարբառի ցուցական դերանուններն են՝ *աս, աղ, անի, ասի, աղի, ասօնք, աղօնք, անօնք, ասանգ, աղանգ, անանգ, հօս, հօղ, հօն*:

Հ. Գազանճյանը փաստում է նաև *սրվի, դըվի, նըվի, սըվօնք* ցուցական դերանունները, որոնք հոլովվում են *անի*-ի պես (*սըվօր, դըվօր, նըվօր, սըվօնք, սըվօնց*): Վերջիններս հավանաբար փոխարինել են *աս, դա, նա* ցուցական դերանուններին, ինչը, սակայն, դարձյալ մեր բարբառախոսների խոսքում չի դրսևորվել: Ցուցական դերանունները հետևյալ կերպ են հոլովվում.

Ցուցական դերանուն

Ուղղ.	աս	աղ	անի	ասօնք	աղօնք	անօնք
Մեռ.	ասօր	աղօր	անօր	ասօնց	աղօնց	անօնց
Բաց.	ասօրմեն	աղօրմեն	անօրմեն	ասօնցմեն	աղօնցմեն	
			//անգեց		//աղօցմեն	
Գործ.	ասօրմօվ	աղօրմօվ	անօրմօվ	ասօնցօվ	աղօնցօվ	անօնցօվ

²⁶ Տե՛ս Հ.Գազանճյան, նշվ. աշխ., էջ 87:

²⁷ Տե՛ս Հ.Աճառյան, Քննություն պոլսահայ բարբառի, էջ 108:

²⁸ Տե՛ս ՀԲԱ նյութեր, տեսք թիվ 429:

Հարցական դերանուններն են՝ *օվ, ունչու, ինչ, քանի, իշքան, իշչափ, օրանգ. Էփ, ուր, օրդէխէն, վօրքէ, օր մէգի, օրթին, ուրգէ, ուրգէց:*

Հիշյալ դերանուններից հետաքրքրական է *օվ* հարցական դերանվան հոլովման համակարգը.

Ուղղ. օվ
Մեռ. օրի//ոււմ
Բաց. օրգէց//օրմէն
Գործ. օրօվ

Ով դերանվան գործիականի իմաստը արտահայտվում է կապային կառույցով՝ *օրի հէդ:* Շատ հնարավոր է՝ անձնական դերանվան սեռական հոլովածի *օրի*-ն *որ* հարցական դերանվան բարբառային տարբերակ լինի, մանավանդ որ հոգնակին *օրօնք* կամ *օրանք* տարբերակով է դրսևորված: (Սա *օրի* դունն է, Անի *ոււմ* դէսավ, *օրօնք* էգան և այլն²⁹):

Անորոշ դերանուններն են՝ *մէգի, մէ մը, ուրիշ, մէգալ, ֆիլանի:*

Որոշյալները՝ *ամէն, ամէն մէգի, ամէն ինչ, ամէն պան, տիպ, ալայն (Ալային ըսածի սութ է):*

Ժխտականները՝ *վօջ մէյն, հէջ մէյն (այս դերանուններում մեկ-ի կ>յ), հէջ պան,:*

Հ. Գազանճյանի գրքում փաստված են նաև *իրար (իրար, իրարու, զիրար, իրարմէ, իրարմօլ), մէկզմէկ (մէկզմէկ, մէկզմէկու, մէկզմէկէ, մէկզմէկօլ) փոխադարձ դերանունները, որոնք ՀԲԱ ծրագրով հավաքված տետրում վկայված չեն:*

Բայ

Բարբառում առկա է վեց դերբայ՝ անորոշ, վաղակատար, հարակատար, ենթակայական, ժխտական և ընթացակցական:

Անորոշ	կըրել	մընալ	կառթալ
Վաղակատար	կըրէր	մընացէր	կառթացէր
Ենթակայական	կըրօղ	մընացօղ	կառթացօղ
Ժխտական	կըրէր	մընար	կառթար
Հարակատար	կըրած	մընացած	կառթացած
Հարակատար	կըրէլէն		կառթալէն

²⁹ Տե՛ս նույն տեղում:

Խնդրո առարկա միջբարբառում գրաբարյան ապամնի դերբայը բացակայում է: Անորոշ դերբայի հին լծորդական շարքերի դիմաց Եվդոկիայի միջբարբառում, ըստ ՀԲԱ ծրագրով հավաքած նյութերի, դրսևորված է երկու լծորդություն՝ *ել, ալ (պրոնել, պոալ)*: Եվդոկիայի միջբարբառը, թվում է, պիտի ունենար արևմտյան բարբառներին բնորոշ *ի* լծորդություն, սակայն այն արձանագրված չէ անորոշի դերբայական ձևերում, այնինչ խոնարհման համակարգում առկա է նաև *ի* լծորդությունը:

Ընդ որում՝ Հ. Գազանձյանի աշխատության մեջ բերված բառացուցակում բազմաթիվ են այն բայերը, որոնք *ի* լծորդության են պատկանում՝ *գանհիլ* (զզվել), *գրնտիլ* (գունդ անել), *խեղըռիլ, խօսիլ, ծաղիկը պատիլ* (ծաղիկը պատռել՝ ուրախանալ)³⁰ և այլն: Կարծում ենք՝ Եվդոկիայի միջբարբառը այս դեպքում ևս, կտրվելով ընդհանուր բարբառային միջավայրից, նահանջել է: Իսկ *ու* լծորդության հետքերը Եվդոկիայում պահպանվել են *թօղուցինք, ցուցուց*, ինչպես նաև պատճառական բայերի որոշ բառաձևերում՝ *անցուց, փախուց* (Մանուգին ախչըզանի դրդեն քուրօշի *փախուց, անցուց* Պօլիս):

Վաղակատար դերբայի *էր* վերջավորությունը համապատասխանում է գրաբարի անցյալ դերբայի *եսլ* վերջավորությանը: Ե խոնարհման պարզ և ածանցավոր բայերի դեպքում վաղակատարի *էր* վերջավորությունը դրվում է բայի ներկա հիմքի վրա (*պէրէր, տըրէր*), իսկ *ա* խոնարհման պարզ և ածանցավոր բայերի դեպքում՝ անցյալի հիմքի վրա (*խաղացէր, սօղէր*): Պատճառական բայերի վաղակատարը դարձյալ կազմվում է անցյալի հիմքից՝ *խաղացուցէր, փախցուցէր, լօղացուցէր* և այլն:

Ենթակայական դերբայը ձևավորվում է *օղ* վերջավորությամբ: Ե խոնարհման բայերի դեպքում *օղ*-ը դրվում է ներկայի հիմքի վրա (*պարօղ, ուղօղ, ափրօղ, պէրթի ինօղ*՝ բերդ ընկնող): *Ա* խոնարհման բայերի ենթակայական դերբայը կազմվում է կատարյալի հիմքից՝ *խաղացօղ, կօղացօղ, պառցրացօղ* և այլն:

Հարակատար դերբայը կազմվում է *աձ* վերջավորությամբ, որը դրվում է կա'մ ներկայի, կա'մ անցյալի հիմքի վրա՝ *էփաձ, քընացաձ, առաձ, սիրաձ*: Ի դեպ, հարակատար դերբայը Եվդոկիայի միջբարբառում գործածվում է նաև բայի երկրորդական բաղադրյալ ժամանա-

³⁰ Տե՛ս Հ. Գազանձեան, նշվ. աշխ., էջ 19-65:

կաձևերում՝ օր.՝ Մէր ադ քախքին թաքավուէրը *մէռաձ է էղէր*, ադ ձաքն ալ դէօլվէթ *դուշի է էղէր*: Հ. Աճառյանը Պուլսի բարբառում ևս հիշատակում է հարակատար դերբայով երկրորդական բաղադրյալ ժամանակներ, օրինակ՝ *սիրաձ բիդի ըլլայի, սիրաձ էղաձ բիդի ըլլամ, գացաձ էղաձ ըլլայի* նէ և այլն³¹:

Ժխտական դերբայը կազմվում է՝ անորոշ դերբայից՝ լ-ն փոխարինելով *ր-ի, լ/ր* հերթագայությամբ՝ *մընար, կըրէր, կառթար* և այլն:

Արդեն փաստել ենք՝ Եվդոկիայի միջբարբառն ունի նաև արևմտահայերենին բնորոշ **ընթացակցական** դերբայ, որը ձևավորվում է անորոշ դերբայի վրա ավելացնելով *էն* վերջավորությունը՝ *ուղէլէն, խընդալէն* և այլն:

Ինչպէս ընդհանրապես հայերենում, այնպէս էլ Եվդոկիայի միջբարբառում բայերն ունեն երկու հիմք՝ ներկայի և անցյալի:

Ներկայի հիմքը լինում է պարզ և ածանցավոր, իսկ անցյալինը՝ արմատական կամ ցոյական: Ներկայի հիմքը կազմվում է անորոշ դերբայից *էլ, ալ* վերջավորությունները հանած, իսկ ածանցավոր բայերի դեպքում ածանցները մտնում են ներկայի հիմքի մեջ: Ներկայի հիմքի մեջ մտնում են *վ* կրավորական ածանցը, *ցն* պատճառականը (*հաքցընէլ, կէրցընէլ*), *ն* սուկաձանցը (*փախնէլ, դառնալ, մէնձնալ*), *չ* սուկաձանցը՝ *տըպչէլ*:

Էլ վերջավորությամբ պարզ բայերի և *ալ* վերջավորությամբ բոլոր բայերի անցյալի հիմքը ցոյական է (*չափէցի, մաղէցի, մընացի, աղացի*): *Իսկ էլ վերջավորություն ունեցող ածանցավոր բայերի անցյալի հիմքը արմատական է (հասա, առալ, գորալ)*:

Խոնարհում: Եվդոկիայի միջբարբառում օժանդակ բայը գրաբարի համեմատությամբ ունի հետևյալ արտահայտությունը.

գրաբար	բարբառ	գրաբար	բարբառ
էմ էմք	էմ էնք	էի էաք	էի էանք
էս էմք	էս էք	էիր էիք	էիր էիք
է են է	էն	էր էին	էր էին

Եղանակներ: Միջբարբառում բայն ունի հինգ եղանակ՝ սահմանական, ըղձական, պայմանական, հրամայական և հարկադրական:

³¹ Տե՛ս Հ.Աճառյան, Քննություն պոլսահայ բարբառի, էջ 138-140:

Եվդոկիայի միջբարբառը ունի երկու ներկա: Մեկը ցույց է տալիս միշտ կամ ընդհանրապես կատարվող գործողություն, երկրորդը՝ որ խոսելու պահին է գործողությունը կատարվում: Հ. Աճառյանը Պոլսի բարբառում ևս փաստում է շարունակական ներկայի առկայություն, որը, ըստ նրա, թուրքերենի ազդեցությամբ է պայմանավորված³²: Ըստ Հ. Աճառյանի՝ Եվդոկիայի շարունակական ներկան Մեբաստիայի և Պոլսի բարբառի նման արտահայտվում է *կոր* մասնիկով³³: Սակայն, ըստ մեր բարբառախոսների հաղորդած տվյալների, շարունակական ներկան և անկատարը դրսևորվում են *օր* մասնիկով. օրինակ՝ Առստախեն խօղ *կըթափի օր*: Թոթոնի (ծուխը) էրթիզեն *կէլէ օր*:

Սահմանական եղանակի **ներկա** ժամանակը ունի հետևյալ պատկերը.

կըսիրեմ	կըսիրենք	կուքամ	կուքանք	կըկըրենք
կըսիրես	կըսիրեք	կուքաս	կուքաք	կըկըրեք
կըսիրե	կըսիրեն	կուքա	կուքան	կըկըրեն
	կըմընամ	կըմընանք	կուզեմ	
	կըմընաս	կըմընաք	կուզես	
	կըմընա	կըմընան	կուզե	

Շարունակական ներկա

կուդեմ օր	կուդենք օր	կըկատթամ օր	կըկատթանք օր
կուդես օր	կուդեք օր	կըկատթաս օր	կըկատթաք օր
կուդե օր	կուդեն օր	կըկատթա օր	կըկատթան օր

Անկատար անցյալ

Կազմվում է գրաբարյան ստորադասական անցյալին ավելացված *կը* մասնիկը.

կըգուրուցեիմ	կըգուրուցեանք	կափրեիմ	կափրեանք
կըգուրուցեիր	կըգուրուցեիք	կափրեիր	կափրեիք
կըգուրուցիր	կըգուրուցեին	կափրիր	կափրեին

³² Տե՛ս նույն տեղում, էջ 134:

³³ Տե՛ս **Նույնի**, *Հայ բարբառագիտություն*, էջ 233:

կըմընայիմ կըմընայանք
 կըմընայիր կըմընայիք
 կըմընար կըմընային

Անցյալ անկատարի խոնարհման հարացույցում հետաքրքրական է այն, որ եզակի առաջին դեմքերը հանդես են գալիս դիմորոշ հոդերով, իսկ հոգնակի առաջին դեմքերը ամբողջությամբ պահպանել են գրաբարյան վերջավորությունը՝ ուղղակի հավելելով ն աճականը՝ *էաք>էանք, այաք>այանք (կափրէիմ, կըմընայիմ, կըմընայանք, կափրէանք)*: Ի դեպ, այսպիսի ձևերը բացակայում են Պոլսի բարբառում՝ հակառակ Հ. Գազանճյանի և Հ. Աճառյանի այն պնդումներին, որ քերականությունը Պոլսի բարբառի նման է և նորություններ չի պարունակում³⁴:

Եվոդկիայի միջբարբառում ևս, ինչպես Պոլսի բարբառում, առկա է շարունակական անցյալ անկատարը.

Անցյալ անկատար (շարունակական)

կափրէիմ օր	կափրէանք օր	կըթափէիմ օր	կըթափէանք օր
կափրէիր օր	կափրէիք օր	կըթափէիր օր	կըթափէիք օր
կափրիր օր	կափրէին օր	կըթափիր օր	կըթափէին օր

Սահմանական եղանակի *սպասոնի* ժամանակաձևը դրսևորվում է երկու ձևով:

Մեկը *կը* եղանակիչով է դրսևորվում, ինչպես ներկա ժամանակը.

կուդէմ	կուդէնք
կուդէս	կուդէք
կուդէ	կուդէն

Հ. Աճառյանը «Քննություն պոլսահայ բարբառի» աշխատության մեջ գրում է. «Սպասոնի դերբայը երկու ձև ունի՝ *սիրէլու, սիրէլիք*. առաջինը էապես դերբայ է, բայց կարող է նաև իբրև ածական գործածվել, ինչպես՝ ուղէլու էմ, ուղէլու էյի, բայց ուղէլու հաց չունի, սիրէլու դըղա է: Երկրորդը՝ իբրև դերբայ չի կարող գործածվել, այլ միայն իբրև գոյական կամ իբրև ածական. Ինչպես՝ ըսէլիքդ ըսի՞ր, Քրէլիքտ չըմօնաս: Աս անօր ընէլիք բա նն է»³⁵:

³⁴ Տե՛ս **Նույնի**, *Հայ բարբառագիտություն*, էջ 233, **Նույնի**, ՀԼՊ, մաս 2, էջ 350:

³⁵ **Նույնի**, Քննություն պոլսահայ բարբառի, էջ 158:

Սակայն մի ուշագրավ իրողության ենք հանդիպում լիք-ով ապառնի դերբայի դեպքում. Եվրոկիայի միջբարբառում դրանով ձևավորվում է ապառնիի մյուս ժամանակաձևը:

Ապառնի

երթալիք են	երթալիք ենք	ուղելիք են	ուղելիք ենք
երթալիք ես	երթալիք եք	ուղելիք ես	ուղելիք եք
երթալիք է	երթալիք են	ուղելիք է	ուղելիք են

Վաղակատար ժամանակի ներկայի և անցյալի ձևերը կազմվում են վաղակատար դերբայի և օժանդակ բայի ներկա և անցյալ ժամանակների հարադրումով: Վաղակատար դերբայը Եվրոկիայի միջբարբառում ել-ի փոխարեն արևմտյան բարբառներին բնորոշ *էր*-ով է ձևավորվում:

Վաղակատար ներկա		Վաղակատար անցյալ	
քըրեր են	քըրեր ենք	քըրեր էյիմ	քըրեր էյանք
քըրեր ես	քըրեր եք	քըրեր էյիր	քըրեր էիք
քըրեր է	քըրեր են	քըրեր էր	քըրեր էին

Հիշյալ միջբարբառում **հարակատար** դերբայով ժամանակաձևերը սակավ են հանդիպում (Մեզ ձարի պերնին *տըրրաձ էր*, մէյն ալ էրգինքի *հասուցաձ էր*): Այն հիմնականում արտահայտվում է վաղակատարի ժամանակաձևերով:

Դիտարկվող Եվրոկիայի միջբարբառում **անցյալ կատարյալը** դրսևորվում է երկու տեսակ վերջավորությամբ՝ ներգործաձև (*էցի, էցիր, էց, էցանք, էցիք, էցին*) և **անցյալի կրավորաձև վերջավորություն** (*ա, ար, ալ, անք, արք, ան*):

Անցյալ կատարյալ

մաղեցի	մաղեցանք	փօխեցի	փօխեցանք
մաղեցիր	մաղեցիք	փօխեցիր	փօխեցիք
մաղեց	մաղեցան	փօխեց	փօխեցին
նստեցա	նստեցանք	ափրեցա	ափրեցանք
նըստեցար	նըստեցաք	ափրեցար	ափրեցաք
նըստեցավ	նըստեցան	ափրավ//ափրեցավ	ափրեցան

Անցյալ կատարյալը մի խումբ բայերում եզակի երրորդ դեմքում հանդես գալիս է կրավորաձև վերջավորությամբ, ինչպես օրի-

նակ՝ առավ, փերավ, հասավ, նըստավ, դ/տըրվավ, փացավ, զարգավ, լացավ:

Կրավորական սեռը է խոնարհման բայերում դրսևորվում է և՛ կրավորական վ ածանցով, և՛ կրավորական խոնարհմամբ (ազատվեցա)

Սահմանական եղանակի **անկատար ներկայի** և **ենթադրական ապառնիի** ձևերն են՝ կըրպըռնըվիմ, կըրպըռնըվիս, կըրպըռնըվե կըրպըռնըվինք, կըրպըռնըվիք, կըրպըռնըվեն:

Սահմանական եղանակ, **անցյալ կատարյալ՝**

պըռնըվեցա, պըռնըվեցար, պըռնըվեցավ, պըռնըվեցանք, պըռնըվեցաք, պըռնըվեցան, ազատվեցա, ազատվեցար, ազատվեցավ, ազատվեցանք, ազատվեցաք, ազատվեցան, կըռողըվեցավ, պըսաքվեցավ և այլն:

Պատճառական բայերի անորոշի հիմքը ձևավորվում է *ցուն* պատճառական ածանցով: Օրինակ՝ թըռցունեղ, հաքցունեղ, քընցունեղ, մըղցունեղ, լացացունեղ, լողացունեղ և այլն:

Պատճառական բայերի խոնարհումը կատարվում է է խոնարհման պարզ բայերի նման: Ստորև ներկայացնում ենք պատճառական բայերի խոնարհման հարացույցը.

Սահմանական եղանակ
Ներկա

կըխըմցընեմ	կըխըմցընեք	կըզարմացունեմ	կըզարմացունեք
կըխմցընեցս	կըխըմցընեք	կըզարմացունես	կըզարմացունեք
կըխըմցընե	կըխըմցընեն	կզարմացունե	կըզարմացունեն
	կուլօղցունեմ	կուլօղցունենք	
	կուլօղցունես	կուլօղցունեք	
	կուլօղցունե	կուլօղցունեն	

Անցյալ կատարյալ

լօղացուցի	լօղացուցանք	խըմցուցի	խըմցուցանք
լօղացուցիր	լօղացուցիք	խըմցուցիր	խըմցուցիք
լօղացուց	լօղացուցին	խըմցուց	խըմցուցին
	հասկացուցի	հասկացուցանք	
	հասկացուցիր	հասկացուցիք	
	հասկացուց	հասկացուցին	

Պատճառական բայերի եզակի հրամայականը ձևավորվում է *ցուր* վերջավորությամբ. օրինակ՝ *պառցրացո՛ւր, կերցո՛ւր, նստեցո՛ւր, քընցո՛ւր, խըմցո՛ւր, իչեցո՛ւր, հեռացո՛ւր* և այլն:

Հղձական եղանակի *անցյալ ապառնին* դրսևորվում է հին հայերենի անցյալ անկատարի տիպի բայաձևերով՝ ուղղակի դարձյալ առաջին դեմքի դիմորոշ հոդի առկայությամբ:

Անցյալ ապառնի

կըրեյիմ	կըրեյանք	մընայիմ	մընայանք
կըրեյիր	կըրեյիք	մընայիր	մընայիք
կըրեր	կըրեյին	մընար	մընային

Ենթադրական եղանակը արտահայտվում է *ըղձական* եղանակի բայաձևերի և *կը* եղանակիչի հարադրությամբ.

Ենթադրական ապառնի

կըկըրեմ	կըկըրենք	կըմընամ	կըմընանք
կըկըրես	կըկըրեք	կըմընաս	կըմընաք
կըկըրե	կըկըրեն	կըմընա	կըմընան

Ենթադրական անցյալ

կըսեյիմ	կըսեյանք	կըկատթայիմ	կըկատթայանք
կըսեյիր	կըսեյիք	կըկատթայիր	կըկատթայիք
կըսեր	կըսեյին	կըկատթար	կըկատթային

Խոնարհման հարացույցից ակնհայտ է դառնում, որ սահմանական եղանակի անկատարի *կը* մասնիկին հատուկ է բազմիմաստությունը. Եվրոկիայի միջբարբառում այն բացի ներկայի կազմությունից՝ մասնակցում է նաև սահմանական եղանակի ապառնի և ենթադրական եղանակների կազմությանը: Այս երևույթը բնորոշ է ընդհանրապես արևմտյան տարածքի բարբառներին:

Հարկադրական եղանակը կազմվում է *բիդի* եղանակիչի և խոնարհվող բայի ըղձական եղանակի ժամանակների հարադրությամբ.

Հարկադրական եղանակ (ապառնի)

բ/պիդի կըրեմ	բիդի կըրենք	պիդի մընամ	բիդի մընանք
բիդի կըրես	բիդի կըրեք	պիդի մընաս	բիդի մընաք
բիդի կըրե	բիդի կըրեն	պիդի մընա	բիդի մընան

Հարկադրական անցյալ

բ/պիդի կրելիմ պիդի կրելյանք պիդի մընայիմ բիդի մընայանք
բիդի կրելիբ պիդի կրելիք պիդի մընայիբ բիդի մընայիք
բիդի կրելբ բիդի կրելիին բիդի մընար բիդի մընային

Ի դեպ, ըստ Հ.Աճառյանի՝ Օրդուի ենթաբարբառում հարկադրականը (սպառնին) ձևավորվում է *բիդի-ի բ* կրճատ եղանակիչով՝ *բէրթամ* (պիտի երթամ):

Հրամայական եղանակ

Ե խոնարհման պարզ բայերի հրամայական եղանակը եզակի թվում ստանում է է վերջավորություն: Օրինակ՝ *ափրէ՛, փրոնէ՛, կրրէ՛, էփէ՛* և այլն: Իսկ *ե* խոնարհման ածանցավոր բայերի հրամայական եղանակի կազմությունը եզակի թվում արմատական հիմքով և *իբ* վերջավորությամբ ձևավորվում. օրինակ՝ *անցի՛ր, կըդի՛ր, մըդի՛ր, իջի՛ր, հասի՛ր* և այլն:

Հոգնակի թվում հրամայական եղանակը անցյալի ցոյական հիմքով է դրսևորվում. այսպես՝ *փածնէցէ՛ք, կըովըդէցէ՛ք, կըրդէցէ՛ք, էփէցէ՛ք, պըռնէցէ՛ք* և այլն:

Ա խոնարհման պարզ բայերի հրամայականը եզակի թվում ներկայի հիմքով և *ա* վերջավորությամբ է կազմվում: Օրինակ՝ *աղա՛, իսաղա՛, մընա՛, իընտա՛, հավաղա՛* և այլն:

Իսկ *ա* խոնարհման ածանցավոր բայերի դեպքում եզակի թվում անցյալի ցոյական հիմքով և *իբ* վերջավորությամբ է արտահայտված: Ինչպես՝ *տըմացի՛ր, իմացի՛ր, մօռացի՛ր, վէ՛ր պառցրացիբ և այլն* (բայց՝ *վըլա՛*, որովհետև լվալ բայից է կազմվում հրամայականը և ոչ թե լվանալ), իսկ հոգնակի թվում անցյալի ցոյական հիմքով՝ *իմացէ՛ք, վըլացէ՛ք, մօդէցէ՛ք, պառցըրացէ՛ք* և այլն:

Գալ բայի հրամայականի կազմությունը *եկ* հիմքից է, որը միջբարբառում եզակի և հոգնակի թվերում դրսևորված է և՛ *եզօ՛, էզօցէ՛ք, և՛ օզօ՛, օզօցէ՛ք տարբերակներով*:

Պակասավոր բայեր: Եվդոկիայի միջբարբառի պակասավոր բայերն են՝ *էմ, կամ, ունում* (ունեմ), *կըդիմ* (զիտեմ), որոնք ունեն միայն ներկա և անցյալ ժամանակներ:

Ներկա

Էմ	Էնք	կամ	կանք	ունում	ունունք	կրդիմ	կրդինք
Էս	Էք	կաս	կաք	ունուս	ունուք	կրդիս	կրդիք
Է	Էն	կան	կան	ունու	ունուն	կրդէ	կրդին

Անցյալ

Էյի	Էյանք	կայի	կայանք	ունէյի	ունէյանք	կրդէյի	կրդէյանք
Էյիր	Էյիք	կայիր	կայիք	ունէյիր	ունէյաք	կրդէյիր	կրդէյիք
Էր	Էին	կար	կային	ունուր	ունէյին	կրդէր	կրդէյին

Անկանոն բայեր: Քալ, լալ, դալ, ուղէլ, ըլլալ:

Սահմանական եղանակ ներկա՝ կուքամ, կուքաս, կուքա, կուամ, կուլաս, կուլա, կուդամ, կուդաս, կուդա կուդէմ, կուդէս, կուդէ

Անկանոն բայերի անցյալ կատարյալը Եվդոկիայի միջբարբառում՝ էգա, էգար, էգավ, լացի, լացիր, լացէց, դըվի, դըվիր, դըվավ, գէրա, գէրար, գէրավ:

Հրամայական՝ օգօ՛ կամ էգօ՛, օգօցէ՛ք, էգօցէ՛ք, լա՛ց, լացէ՛ք, դու՛ր, դըվէ՛ք, գէ՛ր, գէրէ՛ք:

Ժխտական խոնարհում: Եվդոկիայի միջբարբառում ժխտական խոնարհումն ունի յուրօրինակ կառուցվածք հատկապես սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերում: Նրանք կորցնում են կը նախամասնիկը և կազմվում են բայի դիմավոր ձևերի և բայի ժխտական ձևերի գուգակցմամբ՝ ժխտական դերբայի փոխարեն:

Սահմանականի ժխտական ներկա	Ժխտական անցյալ անկատար		
չէմ մընամ	չէնք մընանք	չէյիմ մընայիմ	չէյանք մընայանք
չէս մընաս	չէք մընաք	չէյիր մընայիր	չէյիք մընայիք
չէր մընար	չէն մընան	չէր մընար	չէյին մընային

Նմանատիպ ժխտական խոնարհում ունի նաև Տիգրանակերտի բարբառը³⁶:

Հարկադրական եղանակի ժխտական խոնարհման ժամանակ չ մասնիկը գուգակցվում է բայաձևին.

³⁶ Տե՛ս Ա.Հանեյան, նշվ. աշխ., էջ 129:

Էս պիղի չըսեմ մենք պիղի չըսենք պիղի չըկըրեյիմ պիղի չըկըրեյանք
 թուն բիղի չըսեմ թուք բիղի չըսեք պիղի չըկըրեյիր պիղի չըկըրեյիք
 անի բիղի չըսեմ անօնք բիղի չըսեն բիղի չըկըրեյր բիղի չըկըրեյին

Արգելական հրամայականը ձևավորվում է *մի* արգելականի *մը* տարբերակով, որը միջբարբառում նախադաս կիրառությանը է հանդես գալիս: Օրինակ՝ *մը՝ խաղար, մը՝ մընար, մը՝ էրթար, մը՝ տըպչիր: Մի-*ով կազմվող արգելականի հոգնակին դրսևորվում է բայաձևի հոգնակիությամբ, իսկ *մը* արգելականը մնում է անփոփոխ, օրինակ՝ *մը՝ էրթաք, մը՝ խաղաք, մը՝ մընաք, մը՝ կըրեք* և այլն:

Հ. Գազանճյանը փաստում է միջբարբառում առկա բազմապատկական բայերի «չառ մը այլազան գեղեցիկ ձևեր, որը բուն բային նշանակած գործողության քանի մը անգամներ և վրայէ վրայ կրկնվիլը նշանակելու կը ծառայեն»³⁷: Այսպես՝ *լըզվըռտիլ, խածկըտեյ, վագվըռտեյ, պահվըտիլ, շվստալ, հիրմշտկեյ, նետրտեյ, զըտօրտըկիլ* և այլն: Հեղինակը բերում է նաև փոխադարձ և անդրադարձ բայերի մի շարք՝ *պագտըվիլ, ծեծկըվիլ, զըզվըտիլ, կըռվըդիլ*:

Եվդոկիայի միջբարբառը գրանցելիս մեր նշումներում փաստել ենք *կըկըռվըդեք, ժողվըռտենք* նմանօրինակ բայաձևերը:

Հ. Աճառյանը Պոլսի բարբառում ևս արձանագրել է բազմապատկական բայերի նմանատիպ կազմություններ³⁸:

Անորոշությունը Եվդոկիայի միջբարբառում արտահայտվում է *մի* անորոշ դերանվամբ, որը հանդես է գալիս *մի, մէ, մը* դիրքային տարբերակներով և հիմնականում հետադաս կիրառությամբ, երբեմն էլ միաժամանակ և՛ նախադաս, և՛ հետադաս գործածությամբ: Օրինակ՝ *Մէ մառթի մէ կընիյ մը կունենա: Մէ օր մը աթ մառթի հըվընթցավ: Կու քա օր թանդի մի: Աս զըբըխտան պըդառ մի արձեվ վաթեցավ:*

Մակբայներ: Եվդոկիայի միջբարբառի մակբայներն են՝ *հիմի, վաղի, էրգու օրի հետքի, իրավ, կօղդուգ, նօրէն, պարաբ տեղի, ուզուր, աղէն, ժոււմ, անզեց հէտքի, առաչի, քօվ, անթին, ասթին, վար, վանզուց (վաղ առավոտ), տուրուստի (ճիշտ), ուրկեց, ինչանգ, օրանգ* և այլն:

³⁷ Հ. Գազանճեան, նշվ. աշխ., էջ 87:

³⁸ Հ. Աճառյան, Քննություն պոլսահայ բարբառի, էջ 152:

Եվրոկիայի միջբարբառի **կապերից** ունենք արձանագրված *հըմար, վըրա, մէշի, ունչօր (մինչև), քօվ, տէղի (փոխարեն), ղ/կնյորու* (բացի) և այլն:

Միջբարբառի շաղկապներն են՝ *օր, ալ* (որը, ինչպես Պոլսի բարբառում, այնպես էլ Եվրոկիայում երբեմն հանդես է գալիս կրճատ՝ *ա*), *նէ* (եթե)(Մոնթսոնի (ծոծրակը) տէսնէս *նէ*, ադ պանի չէս դէսնէս օր), *ըմա* (բայց), *թէ, քի* և այլն:

Այսպիսով՝ Եվրոկիայի միջբարբառը, ըստ մեր ձեռքի տակ եղած փաստացի նյութի հիման վրա արված դիտարկումների (նյութը, ցավոք սրտի, երբեմն մեզ հնարավորություն չի տալիս լիարժեք և հանգամանալից քննություն կատարելու), բնութագրվում է հետևյալ հիմնական հատկանիշներով.

1. Եվրոկիայի միջբարբառի ձայնավորական համակարգը հին հայերենի համեմատությամբ նույնն է, միայն ավելանում են *ü, üi, ö* առաջնալեզվային ձայնավորները, որոնցից *üi, ö*-ն հանդես են գալիս միայն փոխառյալ բառերում: Երկբարբառային հնչյուններ չկան, թեև Հ. Գազանճյանը նշում է *օէ* կամ *ուէ* երկբարբառը:

2. Բաղաձայնական համակարգը խախտված է: Պայթական և կիսաշփական բաղաձայնները բնորոշվում են որոշ անկայունությամբ. հին հայերենի խուլերը բառասկզբի դիրքում տատանվում են բուն խուլերի և ձայնեղների միջև՝ արտաբերվելով մերթ որպես խուլ, մերթ որպես ձայնեղ, իսկ ձայնեղները բառասկզբում հանդես են գալիս մերթ խուլ, մերթ շնչեղ խուլ, մերթ՝ ձայնեղ:

3. Հոգնակերտ մասնիկներն են՝ *էր, նէր*, առանձին դեպքերում՝ *դանք*: Միավանկ բառերի ստացական հոգնակին կազմվում է *էրնի*, բազմավանկերինը՝ *նի* ձևությոներով:

4. *Ը* որոշյալ հոդի փոխարեն հանդես է գալիս *ի*-ն (հայրը՝ հարի, փայտը՝ փադի):

5. Ի տարբերություն Պոլսի բարբառի՝ Եվրոկիայի միջբարբառում խոնարհման համակարգում նկատելի են մի շարք տարբերություններ:

ա) Սահմանական եղանակի ապառնին կազմվում է նաև *էլիք, ալիք* վերջավորությամբ ապառնի դերբայով (*էրթալիք էմ, թօղէլիք էն*):

բ) Անցյալ անկատարի խոնարհման հարացույցում եզակի առաջին դեմքերը հանդես են գալիս դիմորոշ հոդերով, իսկ հոգնակի

առաջին դեմքերը ամբողջությամբ պահպանել են գրաբարյան վերջավորությունը՝ ուղղակի հավելելով *ն աճականը՝ էաք>էանք, այաք>այանք (կափրէիս, կըմընայիս, կըմընայանք, կափրէանք)*:

գ) Եվդոկիայում շարունակական ներկան արտահայտվում է *օր* մասնիկով. օր.՝ Առստախեն խօղ կըթափի օր:

դ) Առանձնահատուկ ձև ունի սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակների ժխտական խոնարհումը: Հիշյալ ժամանակաձևերը կորցնում են *կը* նախամասնիկը և կազմվում են բայի դիմավոր ձևերի և բայի ժխտական ձևերի գուգակցմամբ՝ ժխտական դերբայի փոխարեն (չեմ մընամ, չէյիմ մընայիմ, չէս մընաս և այլն):

Այսպիսով՝ Եվդոկիայի միջբարբառի քննությունը մեկ անգամ ևս գալիս է հաստատելու, որ բարբառային հայերենն անսպառ նյութ է պարունակում, որը ժամանակի ընթացքում շատ հարցերի պատասխան է տալու՝ երբեմն էլ ճշգրտելով ու վերանայելով որոշ տեսակետներ:

Նմուշ Եվդոկիայի միջբարբառի.

Սութ ասօղի

Կըլլա-չըլլա, թաքավօր մի կըլլա: Աս թաքավօրի գիրեն էրգըրին մէչի կըսէ օր. «Օ՞վ անանգ սուօ ըսէ, օր էս ըսիմ սուօ է, իմ թաքավօրութան կէսի կուդամ անօր»:

Չօբանի կու քա օր, կըսէ.

– Թաքավօրի արբաձ կէնա, իմ հարի չօբանի փադ մի ունուր, օր աստեղեն փադի տըպչէր նէ, էրգինքի իրարու կըլլէր օր:

– Կըլլա,– կըսէ թաքավօրի,– իմ պաբուզն ալ մէգ չըբուխ մը ունուր, մէգ ձարի պէրնին տըրաձ էր, մէյն ալ էրգինքի հասուցաձ էր, արեվի կըզարնէր, օր վառէր:

Սութ ըսօղի կուլօխի քէրէլէն տուս կէլլէ օր:

Կու քա թանգի մի: Կըսէ օր.

– Նէրօղութին, թաքավօր, էս թէգ բըղի քայի, ուշացա: Էրէգ շաղ արձէվ էգավ, կայձագի տըրաքէցավ, էրգինքի պառէցավ, քընացի օր կարգըղէմ:

– Հա', աղէգ ըրէր էս,– կըսէ թաքավօրի,– ըմա աղէգ չըկարգըղվէցավ, աս գըբըխտան պըդառ մի արձէվ վաթէցավ:

Աս ա տուս կէրթա:

Ներս կըմըղնի օր քննսիք մի կեղացի, կօղի (չափի) թեվին դա-
զին:

– Թուն ի՞նչ կուգես օր, ա՛յ մարթ,– կը հարցընէ օր թաքավօրի:

– Թուն կօղ մի օսկի բըղի տալիք էյիր, էգէր էմ տանէմ:

– Կօղ մի օսկի՞,– շաշմիշ կըլլա թաքավօրի: – Սուք կըսես օր, էս
քէզի օսկի տալիք չէմ:

– Թէ օր սուք կըսէմ, թաքավօրութընիդ գեսի դո՛ւր:

– Չէ՛, չէ՛, տուրուստի կուգուրուցէմ օր,– խօսքի կըփօխէ թաքա-
վօրի:

– Տուրուստի կըսէմ, իմ բարդքիս դո՛ւր, կօղ մի օսկին դո՛ւր:

Հարկ ենք համարել ներկայացնել մեր բարբառախոսների բա-
նավոր խոսքից գրառված մի քանի պատահիկներ.

Թօխաթի մի պ/բաղի մէջ է,

Կարթի մի փարչի մէջ է,

Թօխաթեն յար սիրօղի

Սիրդի յեղի մէջ է:

Սուրփ Կարաբէդ խօրան-խօրան

Մէչն ալ իլլիք Ավեղարան

Էկէք ախպըրդանք կառթանք

Մէգ-մէգ պէրան

Յա գօրավօր Սուրփ Կարաբէդ:

Դէր Զօրի գարմունջը նեղ չի անցնըվիր,

Արուն է լըսված, մի փաժակ ճուր չըխըմվիր,

Էդքի փախչօղից մեզի չի պըռձընիր,

Հավաղի համար քընացօղ հայեր,

Թուրքի ձնոսով էրգու գօղմէ շարված,

Թ ուրքերի գարմունջէն դիփ ջուրի լըցած

Փըռթաձնին կըլէցնէն:

Չարին էդքի պարի կըլլա:

Զօռով փան չըլլար:

Նախանձ մառթուն.
Քեզ սելաֆն ա դանի
Նախանձ մառթու
Կարմընջով մը՝ անցնիր,
Մը՝ քընիր աղվեսին տալրային,
Ուղեին անե, արյուձի թօղ ուղե:

Համեմատության համար ներկայացնում ենք նաև «Եվդոկիոյ հայոց գաւառաբարբառը» աշխատության՝ Հ. Գազանճյանի «տեղացիներու բերնէն քաղուած» նմուշները³⁹.

Գող պապուկը

Իրկուանը մէկը դարիպ հալւոր պապուկ մը կ'երթայ տան մը դուռը կը գերնէ: Դուռը կը բանան: Պապուկը կըսէ քի- Ես դարիպ եմ, ինչ կըննայ, ինձի աս գիշեր ներս առեք, թեք ախոռին քեօշէն տեղ մը տուեք, պառկիմ: Տանը մարդիկն ալ վրան խղճալով ներս կ'առնեն պապուկը, կը տանին օտան կը նըստեցնեն: Տան տղաքը կը ժողվին մարդուն գօխը.- Պապուկ, պապուկ, ինչ կ'ըննա, մեզի հեքիեաթ մը ըսէ տէ մտիկ անինք, կ'ըսէ: Պապուկն ալ- Ես հեքիեաթ-մեքիեաթ չեմ գիտեր, կ'ըսէ: Տղաքը նորէն կ'աղաչեն պապուկին քի իլլէ (անպատճառ) իրենց հեքիեաթ մը ըսէ: Պապուկն ալ ճարը հատած՝ ինչ ըսիմ տէյի մտածելով աչքերը չորս դին պտօցնելու ատենը՝ կը նէյի քի պատը վզի մը օսկի կախուած է, ըռաֆն (դարակ) ալ նորուկ կարմիր բապուճ մը կայ, մեմընալ ախոռէն ջորի մը խրխնջալու ձանը կը լսէ: Ան ատենը պապուկը տողոցը դառնալով՝- Ես հեքիեաթ-մեքիեաթ չեմ գիտեր ըմմա՝ ձեզի բան մը ըսիմ՝ տէ գիտցեք, կ'ըսէ. Պատին ճընկըլիկը ծոցիկս, ըռաֆին կարմրուկը տոտիկս, ախոռին քքքուկը տկուկս, վանկուց (առավոտ)՝ պապուկը ու՛ր կը գտնե՛ք...Տղաքը պապուկին հեքիեաթին միտքը չի հասկնալով՝ նորէն նորէն ըսել կուտան ու շատ կը խնդան: Ասանկով գիշեր կ'ըննայ, ամենքն ալ կը պառկին կը քնանան: Վանկուց կ'արթննան կ'ելլեն, պապուկ կը փնտռեն, պապուկ չի կայ, գնացեր է: Պատը կը նէյին քի օսկին ալ չի կայ, ըռաֆը կընէյին քի բապուճն ալ չի կայ. Մեմալ

³⁹ Հ. Գազանճեան, նշվ. աշխ., էջ 5-7:

ախտոր կերթան կը նէյին քի ջորին ալ չի կայ...: Մէր աս պապուկը խաբեբայ գող մըն է եղեր. Գիշերանց օսկին, փաբուճը, ջորին առեր փախեր է: Ան վախթը կը հասկնան քի իրիկուան ըսած հեքիեաթին միտքն ալ աղի է եղեր:

Օույլ հարսը

Ժամանակին թեմպել հարս մը կայ եղեր, անտար թեմպելքի տանը հեօջ մէկ գործին չի նէյիր, նէ՛ ուտելիք կ'եփէ, նէ՛ հաց կ'անէ, նէ՛ լաթ կը վլայ, մինչի անգամ աւտուք ժողվտուք մը պիլէ չ'աներ եղեր: Կեսուրը շատ կ'աշխատի քի աս թեմպել հարսինը բան բանիլ սորվեցնէ, ըմմա ինչ կ'անէ նէ ֆայտա չ'աներ: Ճարը հատած օր մը երկանը կ'ըսէ քի- քա', էկու սրւիսանկ (այսպիսի) բան մը անինք, ես օտան ալելու ատենս դուն ալ ոտքի ել, աւելը ձեռքէս առնելու եղիր ես պիտ' ալիմ տէյի, պէքի (պէքի, թերես) հարսը աս բանը տեսնելով քեզիմէն կ'ամչնայ տէ ինք կ'ելլէ կ'ալէ: Ասանկ կը խրատուին աղապապա (սկեարայր) ու կեսուր, ասանկ ալ կ'անեն: Օր մը կեսուրը օտան ալելու ատենը՝ հեմէն աղապապան ոտքի կ'ելլէ, աւելը կը խըլէ, ես պիտ ալիմ ըսելով. Կեսուրը աւելը չի տար – քա մեղքը չէ՛ս մը, մեղայ, հեօջ տեսնուած բան է մը քի կնիկ մարդը դրած՝ երիկ մարդն աւել ալէ: Ասանկ՝ ես պիտ' ալիմ, դուն պիտ' ալես ըսելով աւելը իրարու ձեռքէ քաշքշելու ատեննին՝ հարսը անդիէն նստած տեղէն ինչ ըսէ նէ աղէկ.- Ճանըմ, ինչու՞ կռիւ կ'անեք կոր, ասօր մէկերնիդ ալեցեք, վաղն ալ մէկալնիդ...:

Բանահյուսական փոքրիկ պատառիկներ ենք ներկայացնում նաև «Բյուրակն» հանդեսում հրատարակված Օրդուի խոսվածքի⁴⁰ և Մարզվանի ենթաբարբառից⁴¹.

Ձմեռան աւանդական երգը (Օրդու)

Անձրև կուգա, ձիւն կ'ուգայ,
Շաճի պապան տուն կ'ուգա,
Փիլավ պ'եփեմ եղ չիկայ,

⁴⁰ Բիւրակն, Կ.Պոլիս, 1900, էջ 74:

⁴¹ Նույն տեղում, էջ 427:

Քէլ մարիկին տեղ չիկայ:

Հանելուկներ (Մարգվան)

Իրիկունը դրի մաղ մը հավկիթ,
Վանկուց (առավոտյան) չկար հիչ մեկ հատիկ:
(երկնքի լուսավորներ)

Տուն մը ունիմ, դուռ չունի,
Դուրսը արծաթ, մեջն ոսկի
(հալգիթ)

Կրծիկ մը թէլ ունիմ, կծկեմ, կծկեմ, չի հատնիր:
(ճամբա)

Ելայ լեռը,
Քաշեցի բեռը,
Թափեցի սիսեռը:
(կարկուտ)

Փուռ մ'ունիմ, չորս հաց կառնե:
(ընկոյզ)

Աւեցի, ժողվեցի,
Կուզիկ պատուր նստեցուցի:
(ճախարակ)

Առածներ

Ապուր կեր, դուռը ել,
Փիլավ կեր, լեռը ել:

Աղէկ օրիդ երեսիդ խնդացող շատ կ'ըլլայ:

Հաջող շունը չի խածներ:

Սուտ խել եղեր՝ վանքին հաւը կուտե:

Հայկանուշ Մեսրոպյան
(ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ)

**ՌՈՂՈՍԹՈՅԻ ԿԱՍ ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅԵՐԻ ԲԱՐԲԱՈԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Բարբառագիտական ուսումնասիրություններում Բուլղարիայի հայկական համայնքի լեզվական հաղորդակցության միջոցը հայտնի է Ռոդոսթոյի բարբառ անունով:

Հայկական առաջին բնակավայրերը Բալկաններում հիմնվել են վաղ միջնադարում: Պատմական աղբյուրները վկայում են, որ 8-11-րդ դարերում Բյուզանդիայից հայ գաղթական խմբերը անցնում են Բուլղարիա և Մերձդանուբյան տարածքներ: Կրում (803-814) և Օմուրտագ (824-831) խաների նախաբուլղարական շրջանի մի արձանագրության վկայությամբ նրանց մոտ Բյուզանդիայից Բուլղարիա էին եկել հայ զինվորականներ Վարդանը, Գարջույը և Տրդատը¹:

Անվանի հնագետ, արվեստաբան Ա. Լ. Յակոբսոնը գրում է, որ «բուլղարների անմիջական շփումը հայերի և սիրիացիների հետ... կարող էր տեղի ունենալ... հենց բուլղարական մայրաքաղաք Պլիսկայում կատարվող բուռն շինարարության շրջանում»²:

Ղեռնա Անիի անկումից առաջ հայ քաղկեդոնականներն արտագաղթում են Ռուսաստան, Միջին Ասիա, Կիլիկիա, նաև Ռոդոսթոն: Հետագայում՝ XVII դ. ևս կամախցիների, երզնկացիների, սեբաստացիների, կեսարացիների մի ստվար խումբ բնակություն է հաստատում նախ՝ Ռոդոսթոյում, որտեղ ապրում էին բյուզանդական ժամանակների երևելի հայ ընտանիքների շատավիդները, ապա՝ աստիճանաբար Բուլղարիայում:

¹ Տե՛ս **Ր.Բարտիկյան**, О протоболгарских надписях ханов Крума (803-814) и Омуртага (814-831) и некоторых вопросах организации раннеболгарского государства. – *Լրիբեր հիստորիական գիտությունների*, 1981, N 4, էջ 77:

² **Ա.Լ.Եակոբսոն**, К изучению раннесредневековой болгарской архитектуры (армянские параллели). – *Византийский временник*, М., 1968 (т. 28), стр. 206:

Ռոդոսյոթ, հունարեն Հռեթեսյոթն տեղանունը բառացի նշանակում է «վարդագույն լեռ»³ Բյուզանդական ժամանակներում այն կոչվել է *Բյուզանդ, Ռեդեսյա, Աֆրոդիզիա, Ռեդեստոն*: Ճենովայի վաճառականների ու նավագնացների խոսքում *Ռեդեսյոթ* հունական ձևն ստանում է իտալական հնչերանգ՝ վերածվելով *Ռոդոսյոթի*, որով էլ հայտնի է հայերիս: Օսմանյան թուրքերը քաղաքը գրավելուց հետո կոչում են *Ռոդոսչուք* (փոքր Ռոդոս)⁴, հետագայում Ռոդոս կղզու հետ չչփոթելու համար վերանվանում են *Թեքվոր* կամ *Թեքիր դադ*, որ նշանակում է «Իշխանաց լեռ»⁵: Ներկայիս Թեքիրդադը տեղակայված է այդ լեռան լանջն ի վեր:

Ըստ «Պատկերագարդ բնաշխարհիկ բառարանի»՝ XX դարասկզբին քաղաքի 25000 բնակչությունից 3030 տունը հայեր էին⁶: 1915 թ. 1544 ընտանիք, մոտավորապես 9700 հայ, ենթարկվում է բռնագաղթի: Ողջ մնացած ռոդոսյոթցիները ցրվում են աշխարհով մեկ:

Օսմանյան հինգդարյա լուծը թոթափած Բուլղարիան հայոց եղեռնից հետո դառնում է հայության, ինչպես նաև ռոդոսյոթցիների գերակշիռ մասի երրորդ հայրենիքը: Հայկական լեռնաշխարհի տարբեր մասերից եկած և կրթական, մշակութային, հասարակական, քաղաքական ամուր կառույցներ հիմնած, հայերեն պարբերական մամուլ և գրահրատարակչություն ստեղծած հայերը հիմնականում բնակություն են հաստատում Վառնայում, մերձակա Գալաթայում, Բուրգասում, Ռիլայում, Դորրիչում, Ռուսեում, Այթոսում, Ստարա Ջագորայում, Թրոնովոյում, Նովա Ջագորայում, Պիլսկայում, Փիլիպոպոլիսում, Մոֆիայում և այլուր, որտեղ որպես հաղորդակցության միջոց գործառում են նախկին բնակավայրի՝ Ռոդոսյոթի բարբառը:

Անդրադառնալով բուլղարահայերի բարբառի առանձնացմանը՝ Հ. Աճառյանը «Քննություն Առտիալի բարբառի» գրքում գրում է.

³ 2014 թ. այդ տարածքում բարբառագիտական ուսումնասիրություններ կատարելիս վարդագույն լեռ չտեսանք:

⁴ Առաջնորդանիստ Ռոդոսյոթն գտնվում էր Ադրիանապոլսի կուսակալության Ռումելիի գավառում:

⁵ Տե՛ս **Սարգիս Գ. Փաչաճեան**, *Յուշամատենն Ռոտոսյոթի հայերուն* (1606-1922), Երկրորդ եւ լրացեալ հրատարակութիւն, տպ. Տոնիկեան, Պէրյուք, 1971, էջ 20: Ըստ <http://www.dictionnaires-machtotz.org> կայքի:

⁶ Տե՛ս **Ս.Էփրիկեան**, *Պատկերագարդ բնաշխարհիկ բառարան*, հ. 2, Վենետիկ, 1907, էջ 33:

«Առտիալի բարբառը ունի 4 ճյուղ. Լեհաստան, Հունգարիա, Սուչավա և Ռումինիա. առաջին երկուսը իրար նման են, վերջին երկուսը՝ իրար նման: Խոսք չկա այն մասին, թե Բուլղարիայի հին հայ գաղութն էլ, որ վերջին դարում տաճկախոս էր, պատկանո՞ւմ էր այդ խմբին, թե ոչ: Ես կարծում եմ, որ ոչ. բուլղարահայերը, ինչպես տաճկախոս լինելուց իմացվում է, շարունակություն են կազմում Սիլիվրիի, Չոռլուի⁷ և Ադրիանուպոլսի հայության, որ ամբողջովին տաճկախոս է: Բուլղարահայերը անցյալ դարի վերջում հայախոս դարձան, բայց այդ հայերենը հին բուլղարահայ բարբառը չէր և չէր կարող լինել, այլ Պոլսից և Փոքր Ասիայից 1890-ական թվերին գաղթած հայերի բարբառը, որ նրանք էլ սովորեցին և օրինակեցին»⁸:

Ըստ միահատկանիշ ձևաբանական դասակարգման՝ Ռոդոսթոյի բարբառը պատկանում է արևմտյան խմբակցության բարբառների կը ճյուղին, ըստ Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման՝ Փոքր Ասիայի կամ արևմտյան բարբառախմբի Պոլսի միջբարբառի խոսվածք է. այս շարքում անվանի լեզվաբանը նշում է նաև Ջոյունիայի, Նիկոմեդիայի, Պարտիզակի, Օրդուի, Տրապիզոնի և Ադաբազարի բարբառները⁹:

Գ. Ջահուկյանը, ըստ 40 հատկանիշ պարունակող ցուցակի, 5-րդ դարի գրաբարին և արևմտահայ գրական լեզվին մերձավոր բարբառների թվում նշում է նաև Ռոդոսթոյի բարբառը¹⁰:

Մարմարի ծովի հյուսիսարևմտյան ափին գտնվող Ռոդոսթոն¹¹ բնակավայրի տեղագրության, քաղաքում տեղի ունեցած պատմական նշանակալից իրադարձությունների, թուրքերի կողմից գրավվելու, հայկական համայնքի, եկեղեցաշինության, նշանավոր ռոդոսթո-

⁷ «Չոռլուի հայերը Եողկատեն եկած են 1610-1620 թուականներուն» (տե՛ս **Ս.Գ.Փաշաճեան**, նշվ. աշխ., էջ 200):

⁸ **Հ. Աճառյան**, *Քննություն Առտիալի բարբառի*, Երևան, 1953, էջ 9:

⁹ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 133:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 215-217:

¹¹ Ռոդոսթոյից հայերի արտագաղթելու և Բուլղարիայում բնակություն հաստատելու մասին գեղարվեստորեն նկարագրում է Սևդա Սևանը «Ռոդոսթո, Ռոդոսթո...» վեպում. տե՛ս **Սևդա Սևան**, *Եռագրություն (Ռոդոսթո, Ռոդոսթո..., Ինչ-որ տեղ Բալկաններում, Դեր Ջոր)*, Ե., 2003, էջ 18:

ցիների¹², նրանց բարքերի ու սովորույթների, քաղաքական, տնտեսական և այլ հարցերի մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում Ս. Փաշաճյանը «Յուշամատենան Ռոտոսթոյի հայերուն (1606-1922)» աշխատության մեջ:

Որպես հիմք ունենալով Գրիգոր Դարանաղցու «Ժամանակագրության» մեջ վկայաբերված փաստերը՝ Ս. Փաշաճյանը գրում է. «Ռոտոսթոհայ գաղութին հիմնադիրներուն ամենաստուար մասը եկած է Կամախեն ու նուազ չափով ալ Երզնկայէն, Սեբաստիայէն ու Կէւարիայէն: Հետեւաբար, Ռոտոսթոյի հայութիւնը կրնանք նմանցնել մարդկային փունջի մը, որուն կազմութեան համար իրենց մասնակցութիւնը բերած են կամախեցիք, երզնկացիք, սեբաստացիք եւ կեսարացիք իրենց զանազան թիփերով, զանազան սովորութիւններով ու այլազան խառնուածքով»¹³: «Մարդկային այս փունջը» XVII դ. սկսած ստեղծում է հայերենի տարածքային այնպիսի մի տարբերակ, որը, հետագայում միավորվելով Բուլղարիայում վաղուց անտի ապրող հայերի լեզվական մշակույթի հետ, մինչև XX դարավերջ և անգամ մեր օրերը ծառայում է որպէս հաղորդակցության միջոց բուլղարահայության համար:

Հ. Աճառյանը Ռոտոսթոյի բարբառի մասին գրում է, որ «Շատ նման է Պոլսոյ բարբառին, բայց ձայնական դրութիւնը նոյն է Մալաթիոյ հետ»¹⁴: Ապա Հ. Աճառյանը նշում է բաղաձայնական մեկ առանձնահատկություն. գրաբարի ձայնեղ բաղաձայնները խլանում են, իսկ խուլերը՝ ձայնեղանում: Բայական համակարգի մասին հիշատակում է մի քանի ակնառու հատկանիշ: Բայերի *ե* լծորդությանը համապատասխանում է *ի* լծորդությունը, անկատար և կատարյալ ժամանակների հոգնակի առաջին դեմքը կազմվում է *ա*-ով, ինչպէս՝ *զը սիրէանք*, *սիրեցանք*: Շարունակական ներկան Պոլսի և Եվրոկիայի բարբառի նման կազմվում է *գօր* մասնիկով, ապառնին կազմվում է *բըրըր*, *բըրըր* եղանակիչներով, որը կարող է լինել և՛ առաջադաս, և՛ հետադաս, *բըրըր վազզիմ* կամ *վազզիմ բըրըր*:

¹² Ծագումով Ռոտոսթոյից են Վազգեն Ա կաթողիկոսը, Հրայր Աճառյանը, Վազգեն Շուշանյանը, Բարսեղ Կանայանը, Անրի Վեռնոյը և այլք:

¹³ Ս. Փաշաճեան, նշվ. աշխ., էջ 26:

¹⁴ Հ. Աճառյան, *Հայերեն գաւառական բարբառն*, Թիֆլիս, 1913, էջ 36:

Ռոդոսթոյի բարբառի մասին որոշակի տեղեկություններ են ամփոփված Ս. Փաշաճյանի գրքի Թ մասի «Ռոդոսթոցիներու լեզուն, բառերը, տօներն ու սովորութիւնները» ենթավերնագրի ներքո: «Առանց փորձելու լեզուագիտական հարցերու մէջ մտնել, պիտի ուզէինք ընթերցողին մասամբ մը միայն ծանօթացնել ռոտոսթոցիներու բարբառին ամենէն յատկանշական գիծերուն՝ երեք սեղմ բաժանումներով»¹⁵, - պարզաբանում է հեղինակը:

Առաջին՝ «Հնչաբանական» կոչվող բաժնում հեղինակը ներկայացնում է բարբառին բնորոշ բաղաձայնական և ձայնավորական մի քանի առանձնահատկություններ:

Բառամիջի *ր* ձայնորդին նախորդող *տ* խուլ պայթականը դառնում է *յ* կիսաձայն. օրինակ՝ **կոտրիլ - կոյրիլ, Պետրոս - Պէյրոս, կտրել - կյրել**: Այս շարքում հեղինակը գետեղել է **սանտրել - սանյել** բայագույզը, որում, համաձայն հնչյունափոխական օրինաչափության, սպասելի էր, որ լիներ **սանյրել**:

Եթե բառավերջի *ր* ձայնորդին նախորդում է *ն* բաղաձայն, *ր*-ն վերածվում է *ռ* եռաբարբառի. օրինակ՝ **ծանր - ծաներ, մանր - մաներ**:

Բառամիջի և բառավերջի *չ* և *ջ* պայթականներին համապատասխանում է *ջ* չչական բաղաձայն. օրինակ՝ **իջնալ-իջնալ, քիչ մը - քիշ մը, աչքդ - աշկդ, մէջքս - մէշկս**:

Ամփոփելով բաղաձայնական հնչյունափոխությունների այս շարքը՝ Ս. Փաշաճյանը գրում է. «Ատոնցմէ զատ կան նաև «գնոց»¹⁶ եւ «շիտակ» բառերը որոնց մէջ գտնուող «ն» եւ «տ» գիրերը սաստկութեամբ կը հնչուին»¹⁷: Ապա որպէս օրինակ բերում է **գնաց - գննաց, վազեց - վազզեց** բայերը և **շիտակ - շիտտակ** արմատական ածականը:

Չայնավորական հնչյունական համակարգից ներկայացված են միայն *ե, ո, այ և ոյ* երկհնչյունների դրսևորման կերպերը: Բառակզբի *ե* երկբարբառը պարզվում է **երկու, էրես, էրթամ, էրդում, էլլել** և այլ բառերում: Բառակզբում կամ բառամիջում *ե* -ն երբեմն կարող է

¹⁵ Ս. Փաշաճեան, նշվ. աշխ., էջ 235:

¹⁶ Չի բացառվում, որ *գնոց*-ը վրիպակ լինի, որովհետև հաճախադեպ է *զընաց*, հատկապես *քընաց ա* ձայնավորով ձևը:

¹⁷ Ս. Փաշաճեան, նշվ. աշխ., էջ 235:

հնչյունափոխվել *h* ձայնավորի. օրինակ՝ **իրեք, հրիշտակ, քիրական, իրիսկին** և այլն:

Ո երկբարբառը վերածվում է *վ* շրթնատամնայինի. օրինակ՝ **ով - վո՛վ, ո՞ւր - վո՛ւր, ոտք - վոտք, ոսպ - վոսպ** և այլն:

Այ երկհնչյունին համապատասխանում է պարզ *է* ձայնավոր. օրինակ՝ **այգի - էգի, այրել - էրիլ, այրիկ - էրիկ** և այլն:

Ոյ երկբարբառը հնչյունափոխվում է *ու* ձայնավորի. օրինակ՝ **լոյս - լուս, քոյր - քուր, ոյժ - ուժ** և այլն:

Ձայնավորական վերը նշված շարքը Ս. Փաշաճյանն ամփոփում է *կոր* մասնիկի մասին իր դիտարկումով. «*Կոր* վերջամասնիկը, բայերու սահմանական ներկայի և անկատարի վրայ աւելցուելով, կը ծառայէ ցոյց տալու, թէ գործողութիւնը խօսուած ժամանակն իսկ կը կատարուի՝ *կը կարդամ կոր, կ'ըսեմ կոր* եւ այլն¹⁸»: Ինպէս նկատում ենք, տվյալ դեպքում ունենք *կոր* խուլ պայթականով հնչատարբերակը՝ հակառակ Հ. Աճառյանի՝ վերը նշած *գոր* ձայնեղացումով տարբերակին, որը կարելի է բացատրել բարբառի զարգացման գործընթացով:

Երկրորդ՝ «Քերականական» ենթավերնագրի ներքո շատ համառոտ ներկայացված է բայ խոսքի մասին վերաբերող բարբառային մի քանի առանձնահատկություն: *Ե* խոնարհման բայերը սահմանական եղանակի ներկա ժամանակաձևում ունեն *h* խոնարհիչ. այսպէս՝ *կը վագիւմ, կը քայինք, կը կոտրին*: Սահմանական եղանակի անցյալ անկատար ժամանակի կազմության ժամանակ հոգնակի 1-ին դեմքի *էինք* բայական վերջավորությունը դառնում է *էանք*. օրինակ՝ **կը վագէինք - կը վագէանք** («վագում էինք»), **կը քալէինք - կը քալէանք** («քայլում էինք»), **կը կոտրէինք - կը կոտրէանք** («կոտրում էինք»):

Ապառնիի իմաստն արտահայտվում է *պիտի* եղանակիչի միջոցով, որը բարբառում ստանում է *պըտը* ձևը. **պըտը վագիւմ**: Տվյալ դեպքում ևս *պիտի* եղանակիչը պահպանել է գրական ձևը՝ ի տարբերություն Հ. Աճառյանի նշած *բըղը* ձայնեղացումով բարբառային համարժեքի:

Այս բաժինն ամփոփվում է անձնական դերանվան եզակի առաջին դեմքի հայցական հոլովաձևի մասին առանձնակի դիտարկումով: Նախադասության մեջ որպէս այս հոլովի համարժեք գործածվում է

¹⁸ Նույն տեղում, էջ 236:

դերանվան ուղիղ ձևը. ինչպես՝ **ես փնտռեր են, ես կանչեցին, ես ուզեր են** և այլն:

Թ մասի երրորդ՝ «Բառամթերք» բաժինն իրենից ներկայացնում է 69 գլխաբառից բաղկացած բարբառային բառարան՝ համապատասխան բացատրություններով: Նշենք դրանցից մի քանիսը. **ալլտիլ** («հոգնել»), **առոյայ** («ատամ»), **բդուկ** («կարաս»), **գրցըփոփիկ** («խեղձուկրակ»), **գիշերհաուուկ** («չղջիկ»), **գոթոտ** («գեր»), **դմտոկիլ** («ուռչել»), **դոժկիլ** («թմրել»), **եզմը** («շատ»), **ընտալ** («ապուշ»), **թըթախ** («աղտոտ»), **թոնկոլիլ** («գլորել»), **խալկին** («մեծ կաթաս»), **ծին** («մանր ձավար»), **կիրկիր** («մարդամոտ»), **կզկել** («փախչել»), **համարաթ** («աշխատասեր»), **ձաձուրիկ** («վախկոտ»), **ճանդը** («ժանգ»), **մարմա** («թաշկինակ»), **մեռոլ** («մեղր»), **պլշկիլ** («վարակվել»), **ստալ** («ձվաձև»), **վալա** («սփռոց»), **վիրա** («միշտ») և այլն:

Բառացանկն ամփոփվում է *բա՛ն ծէ՛* կոչական մասնիկներով, որոնք հատկանշվում են սեռային տարբերակումով. առաջինը գործածվում է կին կամ աղջիկ կանչելու դեպքում, երկրորդը տղամարդու կամ տղայի դիմելաձև է:

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտում կան Ռոդոսթոյի բարբառին վերաբերող նյութեր՝ գրառված բարբառակիր Գևորգ-Մեսրոպուհի Թանգարանյանի կողմից¹⁹:

Ըստ հայերենի բարբառագտական ատլասի նյութերի հավաքման ծրագրի²⁰ կատարված գրառումներում ներկայացված են Ռոդոսթոյի բարբառի բառային՝ հասկացական-բառանվանողական և բառիմաստային, քերականական և հնչյունական զուգաբանությունները, նախադասություններով արտահայտված բազմաթիվ օրինակներ, ինչպես նաև մեկ տեքստ՝ ըստ Հ. Թումանյանի «Մուտասանը» («Մուղունջին») հեքիաթի, համաձայն որոնց էլ ստորև ներկայացնում ենք բուլղարահայերի հաղորդակցական լեզվի հիմնական հատկանիշները²¹:

¹⁹ Գևորգ-Մեսրոպուհի Թանգարանյանը (ծն. 1916 թ.) 1922 թ. ռոդոսթոյցի մոր և պարտիզակցի հոր հետ տեղափոխվել է Բուլղարիա, իսկ 1965 թ. հայրենադարձվել է Խորհրդային Հայաստան:

²⁰ Տե՛ս *Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր*, ՀՄՍՀ ԳԱ հրատ., Ե., 1977, 142 էջ:

²¹ Տե՛ս *ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի N192 ձեռագիր նյութ*:

Ձեռագրի ներածականում ներկայացված են նաև Ռոդոսթոյի պատմությանը և տեղագրությանը վերաբերող ծանուցումներ, նաև բարբառին բնորոշ մի քանի հատկանիշներ՝ ըստ Ս. Փաշաճյանի «Յուշամատեան Ռոտոսթոյի հայերուն» գրքի:

«Բարբառը շատ նման է Մալկարայի²² խոսվածքին: Հիմնական տարբերությունը շարունակական ներկայի կազմության մեջ է. Ռոդոսթոյում կազմվում է *օր*, Մալկարայում՝ *յոր* մասնիկով», - գրում է «Ռոդոսթո» ձեռագիր աշխատանքի հեղինակը:

Բարբառակիրը նշում է, որ Ռոդոսթոյին շատ մոտ գտնվող Մալկարայում բարբառը պահպանված է՝ հակառակ Չոռլու մոտակա բնակավայրի, որտեղ հայերի բառապաշարում մեծ թիվ են կազմում թուրքերեն բառերը, և շատերը թրքախոս են: 2012-2014 թ. այս վայրերում բարբառագիտական դաշտային աշխատանքներ կատարելիս բարբառախոս հայերի չհանդիպեցինք, չնայած նրանց թաղամասերի և տների մասին գիտեր յուրաքանչյուր թեքիդաղցի, մալկարացի, չորլուցի, սիլիվրեցի և այլն:

Բարբառը ձայնավորների կազմով հարում է գրական արևմտահայերենին, և գրաբարի համեմատությամբ ձայնավորները հիմնականում փոփոխության ենթարկված չեն. օրինակ՝ **կաթ>գաթ, ծափ>ձափ, ծով>ձով, դուռ>թուռ, տանձ>դանձ, բարձր>փարցրր, բանջար>փանջար, բամբակ>փամբագ, ջարդել>չարթել, տանջանք>դանջանք, գանգատ> քանքաղ** և այլն:

Մի շարք բազմավանկ բառերում առկա են ձայնավորների հետևյալ հնչյունափոխությունները. *ա>ը* (ասել>ըսել, ամաչկոտ>ամըշկոզ, կարկատան>գարգըդան, ամաչել>ամըշնալ), *ա>է* (ավելանալ>էվէլնալ, բառնալ>փեռցանել, առաջ>եռէջ, ֆանար>ֆէներ), *ա>օ* (անանուխ>աննուխ, արածել>արձել, նեղանալ>նէղնալ, աղաջուր>ախջուր, բուսանել>փուսնել, գողանալ>քողնալ, դադարել>թաթրել, զարկանել>զարնել, թեթևանալ>թէթէվնալ, թաթախել>թաթխել, հաւանել>հավնել, ճախարակ>չաեիրա, շալակել>շալզել, տապակել>դարգել, ցամաքել>ցամքել, փաթաթել>փաթթել), *n>օ* և գրո՝ *օ* (ժողովել>ժօղվել, սովորել>սօրվել), *է>օ* և *է>է* (վախենալ>վախնալ, ավելել>ավլլել, վայե-

²² «Մալկարայի հայերը գաղթած են Կամախի Բագառիճ գիւղէն 1606-1610 թուականներուն» (տե՛ս Ս. Փաշաճեան, նշվ. աշխ., էջ 199):

լել>վայլել), *ի>ը* (լիզել>լըզել), *ու>ը* (ուղեղ>ըղեղ), *ու>օ* (ուղարկել>խըրզել) և այլն:

Երկայնանալ բայի *երզըննալ* բարբառային հնչատարբերակում միաժամանակ առկա են *ե>է*, *այ>ը* և *ա>ը*, **ավելանալ>ելվելնալ** բայի մեջ՝ *ա>է*, *ե>է*, *ա>օ*, **առաջնակ>առջինեզ** բառում՝ *ա>օ* և *ա>է* ձայնավորական հնչյունափոխություններ:

Բառասկզբի *ո*-ի դիմաց բարբառն ունի *լօ* երկհնչյուն կամ պարզ *օ* ձայնավոր. օրինակ՝ **ոչխար>վօշխար**, **ոռնալ>վօռնալ**, նակ՝ **օռնալ**, **որդնել>օրթնօղել**, **ոջիլ>օջիլ**, **ոսկի>օսգի**, **որդի>օրթի** և այլն: Մյուս բոլոր դիրքերում *ո*-ն հիմնականում ունի պարզ *օ* համարժեք: *Ոլորեղ* բառի մեջ տեղի է ունենում երկու կարգի հնչյունափոխություն՝ *ո>օ* և *ո>ը*, այսպես՝ **օլըրել**:

Գրաբարի *այ*, *ոյ*, *իւ*, *եա* երկբարբառները պարզվել են՝ համապատասխանաբար դառնալով *այ>է* կամ *ա* (**այդ>ադ**, **փայտ>փադ**, **այսօր>ասօր**, **ծայր>ծար**, **կայծ>գաձ**, **ձայն>ցան**, **մայր>մար**, **հայր>հար**), *ոյ>ու* (**բոյթ>փութ**, **ընկոյզ>ունգուզ**, **կապոյտ>գաբուդ**, **թոյլ > թուլ**), *եա>է* (**բարեալ>փարեվ**, **դայեակ>թայեգ**, **լեառն>լեռ**), *իւ>ու* և *է* (**ալիւր>ալուր**, **աղբիւր>ախփուր**, **արիւն>արուն**, **գիւղ>գեղ**, **ճիւղ>ջեղ**, **հարիւր>հարուր**, **ձիւն>ցուն**, **ձիւթ>ցութ**, **սիւն>սուն**), իսկ *ուիթին* ածանցում՝ *ի* (**ալեւորութիւն>հալիվօրութիւն**, **գողութիւն >քողութիւն**, **եղբայրութիւն>ախփարութիւն**, **երկայնութիւն>երգանութիւն**, **խաղաղութիւն>խաղաղութիւն**, **ծանրութիւն>ձայնութիւն**, **կարճութիւն>գարջութիւն** և այլն):

Հետագայում հիմնականում թուրքերենից կամ այլ լեզուներից ներթափանցած մի շարք օտարաբանություններում առկա են քմային ձայնավորներ, ինչպես **բւրեզ** (թխվածքատեսակ), **բծվէլեզ** (բոռ), **գյնլ** (լիձ), **գծլ** (մոխիր), **թծյ** (փետուր), **հնքծմ անէլ** (իշխել), **ծժդէ** (փշատ), **փծթծն** (բոլոր), **քնփրծ** (կամուրջ), **քնմծր** (ածուխ), **քծլինգ** (քլունգ), **քնչէ** (անկյուն), **քնք** (արմատ) և այլն:

Ի տարբերություն ձայնավորների՝ բաղաձայնական համակարգում գործում են մի շարք փոփոխություններ:

Գրաբարի ձայնեղ բաղաձայնները, այսինքն՝ *բ*, *գ*, *դ*, *ձ*, *ջ*-ն վերածվել են շնչեղ խուլերի՝ այսինքն՝ *փ*, *ք*, *թ*, *ց*, *չ*-ի, իսկ խուլերի խումբը, այսինքն՝ *պ*, *կ*, *տ*, *ծ*, *ճ*-ն՝ ձայնեղների (**բերան>փերան**, **բարեկամ>փարեգամ**, **բոկիկ>փոբիգ**, **գիւղացի>քէղացի**, **գիւղ>քէղ**, **գիր>քիր**, **գոզնոց>քօքնօց**, **դրացի>թրացին**, **ձուկ>ցուկ**, **պատ>բադ**, **պակաս>բա-**

գաս, կանուխ>գանուխ, ճակատ>ջագադ, ճրաք>ջըրաք, ծալել>ծալլել, ծռել>ծրռել, կախել>գախել, կտաւ>գըդավ, կճեպ>գջէր և այլն): Օրինակները ցույց են տալիս, որ հին հայերենի պայթական և կիսաշփական բաղաձայնների եռաստիճան համակարգին, այսինքն՝ *բ, պ, փ*-ին, համապատասխանում է երկաստիճան խլազուրկ, տեղաշարժով համակարգը, այսինքն՝ *փ, բ (բ>փ, պ>բ, փ - փ)*:

Բացի նշված բաղաձայնական օրինաչափ, համակարգային փոփոխություններից, բարբառին բնորոշ են բաղաձայնական հնչյունափոխության այլ տեսակներ:

1) Ը բաղաձայնից առաջ գտնվող *տ*-ն դառնում է *յ*. **կոտրել>գոյրել, Պետրոս>Բէրթոս, կտրել>գըրլել** և այլն: Ինչպես նկատում ենք, վերը բերված այս օրինակներում բառակերպի խուլ բաղաձայնները ձայնեղացումով չեն նշված:

2) Բառավերջի *նր* տառակապակցության *ր*-ն վերածվում է *յ*-ի. վերջում ավելանում է *ը*. **ծանր>ձանյը, մանր>մանյը, սանր>սանտր>սանյը, մանրուք>մանյուք** և այլն:

3) Բառամիջի *նլ* և *լն* հնչյունակապակցությունների դիմաց գրանցված է առնմանական *լլ* և *նն*, օրինակ **գնաց>քըննաց, ելանել>ելնել>էլլէլ, խըլնտ>խըլլոտ, շնի > շըլլինք** և այլն:

Կարող են կրկնվել նաև այլ բաղաձայններ ևս, **վագել>վագգել, շիտակ>շիդդաք, գերեզմանոց>քերեզմաննոց, երդվել>էրվըննալ** և այլն:

4) Բարբառը չունի *դ*-ով սկսվող բառեր, այն փոխարինվում է *խ*-ով (օրինակ՝ **Ղազարոս>խազարոս, Ղուկաս>խուգաս, դարիբ>խարիբ, դամաթ>խըսմէթ, դագ>խագ, դական>խագան, դասաբ>խասաբ, դոչ>խոչ, դուշ>խուշ**, նաև **դուշ** և այլն):

5) *Ռ* ռնգայինից առաջ փոխառյալ բառերում ավելանում է *ը* ձայնավոր. **ռաստ>ըռաստ, ռանգ>ըռնգ, ռադ>ըռադ, Ռաֆիկ>ըՌաֆիկ** և այլն:

Դրափոխության և հնչյունական անցման արդյունքում **տաշեղ** բառը դարձել է **թալաշ**:

Ձեռագիր նյութը Ս. Փաշաճյանի գրքի տվյալների հետ համեմատելիս նկատում ենք որոշակի տարբերություններ: Դրանք հիմնականում առնչվում են խուլ բաղաձայնների ձայնեղացմանը կամ ձայնեղների շնչեղիլացմանը: Կարելի է ենթադրել, որ առկա փոփոխությունների պատճառը Ռոդոսյոյի բարբառի՝ նոր լեզվական միջավայրում՝

Բուլղարիայում հայտնվելու, նաև գրական արևմտահայերենի ազդեցության հետևանք է:

Անվանական հարացույցում հոգնակին ունի *էր* և *նէր* ձևային տարբերակով կազմված քերականական զուգաբանություններ: Ինչպես գրական հայերենում է, *նէր*-ը բնորոշ է բազմական, գրաբարյան բաղաձայն-միավանկ, մեկուկես վանկանի, միավանկ վերջին բաղադրիչով բարդ բառերի հոգնակի կազմությանը, օրինակ՝ **թանազ** («դանակ») - **թանագներ**, **ձաղիգ** («ձաղիկ») - **ձաղգրներ**, **ախբուր** («աղբյուր») - **ախբուրներ**, **դախթագ** («տախտակ») - **դախթագներ**, **թրացին** («դրացի») - **թրացիներ**, **փանիք** («բանալի») - **փանիքներ**, **աստղ** - **աստղներ**, **փեռ** («բեռ») - **փեռներ**, **քառ** («գառ») - **քառներ**, **թուռ** («դուռ») - **թուռներ**, **ձառ** («ձառ») - **ձառներ** և այլն:

Շունկն բառը կարող է ստանալ կրկնակի հոգնակերտների **ձունգ** - **ձրնգներ** կամ **ձունգվրներ**:

Հարսն գոյականի հոգնակին կարող է կազմվել *ն' էր*, և *ն' ներ* հոգնակերտներով. **հարսեր**, նաև **հարսներ**:

Միավանկ բառերն ստանում են *էր* վերջավորություն, ինչպես՝ **աշք** - **աշքեր**, **բաղ** («պատ») - **բաղեր**, **քող** («գող») - **քողեր**, **գուղ** («կորիզ») - **գուղեր**, **քեղ** («գյուղ») - **քեղեր**, **ձեր** («ծեր») - **ձերեր**, **գով** («կով») - **գովեր**, **դուն** («տուն») - **դրներ**, **դաքք** («տեգր») - **դաքքեր** և այլն:

Չեռք և *մատ* բառերը ստանում են *վի* և *նէր* կրկնակի հոգնակերտներ, **ցառք-ցեռվրներ**, **մաղ** - **մաղվրներ**:

Տղա գոյականի հոգնակին կազմվում է գրաբարյան *ք* հոգնակերտով (դրդաք):

Հատկացուցիչը հիմնականում գործածվում է *ը* և *ն* որոշիչ հոդերով, ինչպես **աներոջ** - **աներոջը**, **քարուն** («գարուն») - **քարանը**, **զրնիգ** («կին») - **զրնգանը**, **գետուր** («սկետուր») - **գետուրը**, **դեր** («տեր») - **դիրոջը**, **զրնգաար** («կնքահայր») - **զրնգաորը**, **ցորեգ** («ցերեկ») - **ցորեգվան** և այլն: *Արխաղաշ* թուրքերեն փոխառությունը սեռական հոլովում ունի ոչ թե *արխաղաշը*, այլ *արխաղաշին* ձևը: *Ին* հոլովական վերջավորություն են ստանում նաև **հալա** («հորաքույր») - **հալային**, **թեյգե** («մորաքույր») - **թեյգեին**, **նքծգ** («եգ») - **նքծգին** և այլ օտարաբանություններ: *Ին* հոլովիչը բնորոշ է նաև *ի* հոլովման պատկանող բազմաթիվ հայերեն հասարակ և հատուկ անունների. օրինակ՝ **փրսիգ** («կատու») - **փրսգին**, **ցաք** («ձագ») - **ցաքին**, **գյանք** («կյանք») - **գյանքին**, **ցեռք** («ձեռք») - **ցեռքին**, **Արթինին** («Հարությունի»), **Թաքույին**

(«Թագուհու»), **Սուրփուզին** («Սրբուհու»), **Բօլսին** («Պոլսի»), **Աքարագին** («Ագարակին») և այլն, բայց և՛ զուգահեռաբար՝ **դունին/դանը, շունին/շանը, անունին/անվանը, Ղարսա//Ղարսին, Վանա//Վանի** և այլն:

Հանդիպում է նաև միաժամանակ հոդավոր և անհոդ գործածություն. **գրոնագ** («կրնակ») – **գրոնագի//գրոնագին, ձունգ** («ծունկ») – **ձրնգան/ձրնգանը, թուռ** («դուռ») – **թրշան// թրշանը, ցուգ** («ձուկ») – **ցրգան/ցրգանը, ձառի դերեվ//ձառին դերեվը, քեղի չուր//քեղին չուրը, բառվի քեշի ցաքեր //բառվին քեշին ցաքերը** >պատասխ ուկեր և այլն:

Եզակի և հոգնակի բացառականին բնորոշ են *-էն, -մէն* վերջավորությունները. **քուլուխեն<զլխից, քեղեն<ցյուղից, քուրերեն<քուրերից, խօղեն<հողից, ախպօրմեն< եղբորից, աներօջմեն<աներօջից, հօրմեն<հորից, մօրմեն<մորից, մարթօցմեն<մարդկանցից, քրօջմեն <քրոջից** և այլն:

Հոգնակի ձևերը, ինչպես արևմտյան բարբառներում և արևմտահայ գրական լեզվում է, պատկանում են *ու* հոլովման, որոնք հանդես են գալիս միայն *ն* որոշիչ հոդով. ինչպես, օրինակ՝ **փերաններուն<բերանների, թրոնախներուն<եղունգների, չուրերուն< ջրերի, թրացիներուն<հարևանների, փարցերուն<բարձերի, դուներուն< տների, օսգրներուն<ուկորների** և այլն:

Հ. Պետրոսյանը, առաջնորդվելով Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ առկա դիտարկումներով, նշում է, որ բոլոր հոլովներն ստանում են որոշիչ հոդ²³: Սակայն մեր ձեռքի տակ եղած ձեռագիր նյութերն այդ չեն հաստատում: Որոշիչ հոդ են ստանում սեռական, բացառական հոլովները, ինչպես նաև վերլուծական ներգոյականի *մէչ* կապը, օրինակ՝ **դերդերին** («տերտերի»), **դասըմին** («աշնան»), **քեղը** («ցյուղի») կամ **քեղին մէչը, խօղը** («հողի») կամ **խօղին մէչը, էքին** («այգու») կամ **էքին մէչը, սալընջախը** («օրորոց») կամ **սալընջախին մէչը, փերանը** կամ **փերանին մէչը, փօրը** կամ **փօրին մէչը** և այլն:

Գրառումներում գործիական հոլովի որոշյալ հոդով ձևերի չհանդիպեցինք. **էքիօվ** («այգով»), **աշխըրքօվ** («աշխարհով»), **քեղօվ** («գետով»), **ձօվօվ** («ծովով»), **դունօվ** («տունով»), **քրօջօվ // քուրօվ** և այլն:

²³ Հ. Պետրոսյան, *Հայերենագիտական բառարան*, Ե., 1987, էջ 532:

Ածական խոսքի մասը գրառումներում ներկայացված է մեկ հատկանիշով՝ գերադրական աստիճանի արտահայտությամբ. այն կազմվում է *էն* համեմատական մասնիկով՝ **էն մէնձը** («ամենամեծ»), **էն աղէզը** («ամենալավ»), **էն քէշը** («ամենավատ»), **էն ըռընդիզը** («ամենագեղեցիկ»), **էն բըզդիզը** («ամենափոքր»), **էն ձանյը** («ամենածանր») և այլն:

Լեզվական հետաքրքիր իրողության ենք հանդիպում դերանվանական հարացույցում, որտեղ առաջին դեմքի *ես* անձնական դերանվան թեք հոլովածներին համապատասխանում է ուղղական հոլովածը, օրինակ՝ **ինձ փնտրում են>ես փընդըրցեր ին, ինձ կանչեցին>ես կանչեցին, ինձ ուզում են>ես ուզեր ին** և այլն: Ինչպես արդեն տեսանք, լեզվական այս դրսևորումն ուշադրության է արժանացել նաև Ս. Փաչաճյանի կողմից:

Ցուցական դերանունների շարքերն են՝ *աս //ասիզա // ասիզազ // ասիզազը //սըվիզա //սըվիզագ, աղ // աղիզա // աղիզազը // աղիզագ(ս) // դըվիզա, ան // անիզա // անիզագ //անիզազը //նըվիզա (աս դունը, աղ ձառը, ասիզազը ձառ է, աղիզազը դուն է, անիզա կը սիրէ աղ* և այլն): *Հօս // հօստէդուզ // ասղէղ // աս թարաֆը, հօղ // հօղտէդուզ // աղղէղ // աղ թարաֆը, հօն// հօնղէդուզ // ան թարաֆը // անղէղվանքը* և այլն:

Անդրադառնալով Ռոդոսթոյի բարբառի բայական համակարգին՝ Հ. Աճառյանը նշում է անորոշ դերբայի մեկ՝ *ի* լծորդություն²⁴, սակայն անտիպ նյութերում նշված են երկու խոնարհիչ՝ *ա* (**բօռալ, փանալ, քիդնալ, թառնալ, ձերանալ, թուլնալ, վախնալ, մըղնալ, վըլալ, հավղալ** և այլն) և *է* (**թընէլ, լէցունէլ, գօրսըվէլ, փըռնէլ** և այլն): Շատ հազվադեպ հանդիպում են նաև *ի* լծորդությամբ բայեր (**փախչէլ// փախչիլ, մարիլ** - «ուշաթափվել» և այլն): Կարելի է կարծել, որ *ա* և *է* լծորդությունները բարբառը հետագայում է ներմուծել, և Հ. Աճառյանի դիտարկումներն ավելի վաղ են կատարվել:

Բարբառը չունի անկատար և ապառնի դերբայներ:

Վաղակատար դերբայի իմաստը դրսևորվում է հարակատար դերբայի միջոցով, որը կազմում է ժամանակային դիմաձևեր՝ **ինչպես՝ քըրաձ իմ** («գրել եմ»), **քըրաձ էյանք** («գրել ենք»), **քէղը մընացաձ է** («մնացել է գյուղում») և այլն: Մակավ գործածությամբ օժտված վաղա-

²⁴ Հ.Աճառեան, *Հայերէն գաւառական բառարան*, էջ 36:

կատար դերբայն ունի *ր* վերջավորություն՝ **դուն շըներ է** («տուն է շինել»), **հաց գեր է** և այլն:

Ռոդոսթոյի բարբառում հարակատար դերբայը դրսևորվում է այնպես, ինչպես գրական արևմտահայերենում է: Այսպես՝ **քընացած դըրդա** («քնած երեխա») – **դըրդան քընացած է** («երեխան քնած է»), **հունցած հաց** («թխած հաց») – **հացը հունցած է** («հացը թխած է»), **նըշանած աղջիգ** («նշանված աղջիկ») – **աղջիգը նըշանած է** («աղջիկը նշանված է»): **Աս նամագը էս քրած իմ** («Այս նամակը էս եմ գրել»): **Քիշերը էրած դէսած իմ** («Գիշերը էրած եմ տեսել»):

Ենթակայական դերբայը ևս գրական արևմտահայերենի նույն դերբայի կազմության առանձնահատկություններն ունի: *Ա* խոնարհման բայերի ենթակայականը կազմելիս անցյալի հիմքակազմիչի **ա(ց)** կամ **է(ց)** ձայնավորը որոշ բայերում պահպանվում է (**աղացող, փարցրացող, մօղէցող, ուրախացող**), մի շարք բայերում սղվում (**քօղցող, խաղցող, վախցող**) կամ հնչյունավորվում է (**հասագըցող**):

Ժխտական դերբայը կազմվում է անորոշի հիմքով՝ **էր, ար, իր** վերջավորություններով:

էր -ով. չիմ ըսէր, չէս ըսէր, չըսէր, չինք ըսէր, չէք ըսէր, չին ըսէ, չէի ըսէր, չէիր ըսէր, չեր ըսէր, չէանք ըսէր, չէիք ըսէր, չէին ըսէր:

Ար -ով. չիմ գէնար, չէս գէնար, չը գէնար, չինք գէնար, չէք գէնար, չին գէնար:

Իր -ով. չիմ խօսիր, չէս խօսիր, չը խօսիր, չինք խօսիր, չէք խօսիր, չին խօսիր:

Ժանդակ բայը խոնարհվում է հետևյալ կերպ. ներկա՝ **իմ, էս, է, ինք, էք, ին** (թրացին իմ- «հարևանն եմ», **թրացին էս, թրացին է, թրացին ինք, թրացին էք, թրացին ին**), անցյալ՝ **էի, էիր, էր, էանք, էիք, էին** (թրացին էի, **թրացին էիր, թրացին էր, թրացին էանք, թրացին էիք, թրացին էին**):

Սահմանական եղանակի ներկա ժամանակը կազմվում է *զը* նախադաս և *կոր* մասնիկի մաշվածքից առաջացած *օր* ետադրությամբ՝ **զը քըրիս օր** («գրում եմ»), **զը քըրիս օր, զը քըրէ օր, զը քըրինք օր, զը քըրէք օր, զը քըրին օր, զը գէնամ օր** («մտում եմ»), **զը գէնաս օր, զը գէնա օր, զը գէնանք օր, զը գէնաք օր, զը գէնան օր** և այլն:

Գալ, լալ, տալ միավանկ բայերի անկատար ներկան կազմվում է **գու** նախամասնիկով և **օր** վերջնամասնիկով. **էս գու քամ օր** («ես գալիս եմ»), **թուն գու քաս օր, ան գու քա օր, մենք գու քանք օր, թուք գու**

քաք օր, անօնք գու քան օր, գու դամ օր («տալիս եմ»), **գու դաս օր, գու դա օր, գու դանք օր, գու դաք օր, գու դան օր** և այլն: Նշված բայաձևերի ժխտական խոնարհումն ունի հետևյալ պատկերը. **չիմ(ը) լար օր** («չեմ լալիս»), **չես(ը) լար օր, չի լար օր, չինքը լար, չէքը լար, չինը լար, չիմ(ը) դար օր** («չեմ տալիս»), **չես(ը) դար օր, չի դար օր, չինքը դար, չէքը դար, չինը դար** և այլն: Ինչպես նկատում ենք, օժանդակ բային կցվող *ը* որոշիչ հոդը առավելապես գործուն է հոգնակի ձևերում, իսկ եզակի բայաձևերում կարող է հանդես գալ գուգահեռաբար՝ որոշյալ հոդով և առանց հոդի:

Ապառնի ժամանակը կազմվում է **բըդը** («պիտի») բայական մասնիկի միջոցով, որը կարող է հանդես գալ և՛ առաջադաս, և՛ ետադաս դիրքով: Օրինակ՝ **ըսիմ բըդը, ըսես բըդը, ըսե բըդը, ըսինք բըդը, ըսեք բըդը, ըսին բըդը**, նաև՝ **ես բըդը ըսիմ, թուն բըդը ըսես, ան բըդը ըսե, մենք բըդը ըսինք, թուք բըդը ըսեք, անօնք բըդը ըսին**: Ժխտական ձևում **բըդը** եղանակիչը ետադաս է: Այսպես՝ **չըզենամ բըդը, չզենաս բըդը, չըզենա բըդը, չըզենանք բըդը, չըզենաք բըդը, չըզենաս բըդը**: Բերված օրինակները հիմք են տալիս ենթադրելու, որ **բըդը** մասնիկը բայից առաջ է դրվում, երբ կառույցում գործածվում է անձնական դերանուն:

Բարբառն ունի շարունակական ներկայի ժամանակաձևեր, որոնք կազմվում են **գը** նախամասնիկով և **գօր** («կոր») բայական բաղադրիչի մաշվածքից առաջացած **գօ** կամ **օր** վերջնամասնիկով, ինչպես **գը քըրիմ օր, գը գենաս օր, գը խօրաթէի օր, գու քամ գօր** և այլն: Մահմանական եղանակի ապառնի ժամանակը և հարկադրական եղանակը կազմում են քերականական համանուններ՝ որպես եղանակաժամանականիշ ունենալով **բըդ/բըդը/բըդըր** եղանակիչը (**ըսիմ բըդըր, բըդ ըսիմ, գենամ բըդը, գենայի բըդը, գենայանք բըդը** և այլն)²⁵:

Հաճախ եղանակիչի և բայական ձևի ձուլում է տեղի ունենում (**բըդը ուղիմ** կամ **բուղդիմ** -«պիտի ուտեմ», **բըդը ուղես** կամ **բուղդես**, **բըդը ուղե** կամ **բուղդե**, **ուղինք բըդը** կամ **բուղդինք**, **ուղեք բըդը** կամ **բուղդեք**, **ուղին բըդը** կամ **բուղդին**):

Անցյալ կատարյալը կազմվում է գրական արևմտահայերենի քերականական կանոնների համաձայն: Այսպես՝ **խըմեցի, խըմեցիր**,

²⁵ Այս մասին տե՛ս նաև **Հ. Պետրոսյան, Ս. Գալստյան, Թ. Ղարապոյան, Լեզվաբանական բառարան**, Ե., ՀՄՍՀ ԳԱ հրատ., 1975, էջ 265:

խըմեց, խըմեցանք, խըմեցիք, խըմեցին, մընացի, մընացիր, մընաց, մընացանք, մընացիք, մընացին, խընդացի, խընդացիր, խընդաց, խընդացանք, խընդացիք, խընդացին և այլն:

Վաղակատար ժամանակաձև որպես այդպիսին Ռոդոսթոյի բարբառը չունի: Այն հարակատար ժամանակի հետ կազմում է քերականական համանունություն. **շաշմիշ էղաձ իմ** («զարմացել եմ» և «զարմացած եմ»), **շաշմիշ էղաձ ինք, շաշմիշ էղաձ էի, շաշմիշ էղաձ էանք, շաշմիշ էղաձ էիք, շաշմիշ էղաձ էին** և այլն:

Ըղձական, պայմանական և հրամայական եղանակները ևս հիմնականում կազմվում են գրական արևմտահայերենի քերականական օրենքների համաձայն:

Պատճառական բայերի ածանցն է՝ *ցուն* (**փախցունել, զարմացունել, էչեցունել, լացունել, լօքցունել, թռցունել, խօսեցունել, հաքցունել, հասզրցունել, հասցունել, հեռացունել, մըղցունել, քնացունել** և այլն):

Բայական հարացույցի մյուս առանձնահատկությունների մասին մանրամասն տեղեկություններ կարելի է ստանալ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի N192 ձեռագիր նյութերից:

Ինչպես բնորոշ է արևմտահայերենին, այստեղ ևս անորոշ հոդը ետադաս է. *մարթ մը իլեն զընիզ մը գան եղէր* («Մի մարդ ու մի կին են լինում»): *Օր մը աս մարթը գը հիվընդնա* («Մի օր այս մարդը հիվանդանում է»):

Շարահյուսական մակարդակում անձի առման դեպքում չկա ուղղական և հայցական հոլովաձևերի տարբերակում, ինչպես՝ *Արմենը կը սիրէ Աստղիկը, աղյիզը սիրէլ, հարսը դանել, դըղան ձէձէլ և այլն: Իրի անուններում ուղիղ խնդիրը դրվում է հայցական հոլովով: Այսպես՝ Ազօփը դուն գը շինէ օր: Մինասը քար գը դաշէ, խօղ գը փէրէ օր: Վարբէղին ցէխ դու: Դունըս գը քանթէ օր* («Տունս քանդում է»): *Քէրէզմանի քարը գը դաշէ օր: Խօղը բաղին դագը լէցու* («Հողը լցրու պատի տակ»): *Ինքը դերանվան հոգնակի ուղիղ խնդիրը կիրառվում է գրաբարյան գ նախդիրով: Անօնք իրէնք զիրէնք գը սիրին: Զ նախդիրն առկա է նաև իրար-զիրար կրկնավորում:*

Անորոշ դերբայով արտահայտված նպատակի պարագան ունի ուղիղ ձև: *Հաց ուղէլ էգավ: Աղյիզ ուզէլ էգան:* Անորոշ դերբայը երբեմն զուգահեռաբար կարող է գործածվել սեռական հոլովով: *Մօշ քաղէլ //քաղէլու քացին: Արդը չըրէլ //չըրէլու քըննաց:*

Տեղի պարագան արտահայտվում է հայցական հոլովով կամ սեռական հոլովի և *մէշը* կապի միջոցով: *Էքին գը փանի օր* («Աշխատում է այգում»): *Թաշըը թօփլայվէր ին* («Հավաքվել են դաշտում»): *Ան քէղը գաբրի* («Նա ապրում է գյուղում»): *Ամանին մէշը չուր գա* («Ամանում ջուր կա»): *Դաշդին մէշը հաց չի գա* («Տաշտում հաց չկա»):

Հոլովառությանը և խնդրառությանը վերաբերող քերականական մի շարք առանձնահատկություններ արտացոլված են N192 ձեռագրի բազմաթիվ բնագրային օրինակներում:

Ռոդոսթոյի բարբառային բառապաշարում բավականին մեծ թիվ են կազմում թուրքերենից և թուրքերենի միջոցով կատարված փոխառությունները: Ինչպես օրինակ **սարը** («դեղին»), **սինիր** («ջիդ»), **յախա** («օձիք»), **երքեզ** («որձ»), **էքսյօզ** («ոքր»), **յավլար** («պաղատանք»), **սեբեք** («պատճառ»), **յօնդա** («տաշեղ»), **մենեմշէ** («մանուշակ»), **բօյունդուլիս** («լուծ»), **շօփէ** («կասկած»), **բաշախ** («հասկ»), **խըսմէթլի** («բախտավոր»), **դամագ-դարդա** («կաշաղակ»), **արալըխ** («ճեղք»), **ֆըրթունա** («քամի»), **օրթա** («միջնեկ»), **ֆիստան** («զգեստ»), **մուշմուլա** («զկեռ»), **ուսդուրա** («աձելի»), **ըռաաթ** («հանգիստ»), **դավի** («հաստ»), **ջելլաթ** («դահիձ»), **գավալը** («խեղձ»), **դեմէթ** («խուրձ»), **չէքիրդէ** («մարախ»), **թաշմիշ** («վարար»), **չայիր-չիմեն** («արոտ»), **դուրշուն** («արձիձ»), **դարթալ** («արծիվ»), **մօրշուբա** («փարչ»), **քլեփօք** («փրվուր»), **այվա** («սերկևիլ»), **դէյրմեն** («ջրաղաց»), **քլեփրօ** («կամուրջ»), **օմր/էմօր** («կյանք»), **ինջիր** («թուզ»), **իյդէ** («սինձ»), **էնգինար** («կանկար»), **բունջուլիս** («ուլունք»), **բաշխա** («ուրիշ»), **չիֆլիզ** («ֆերմա»), **միսաֆիր** («հյուր»), **սեվդա** («սեր»), **հալա** («հորաքույր»), **ամուջա** («հորեղբայր»), **թէյզէ** («մորաքույր»), **թըրնախ** («եղունգ»), **սաման/դէրման** («հարդ») և այլն, և այլն:

Հ. Աճառյանը Ռոդոսթոյի բարբառի մասին ասում է, թե «Այս բարբառին վրայ տող մանգամ չկայ ուսումնասիրութեան եւ ոչ ալ որեւէ բնագիր մը»²⁶, ուստի այս աշխատանքի վերջում հարկ ենք համարում ներկայացնել մեր ձեռքի տակ եղած բնագրային օրինակներին:

Ներկայումս Թեքիրդաղի ծովահայաց բարձրադիր տարածքում տեղակայված են հայկական Ս. Թագավոր և Ս. Խաչ թաղամասերը, դեռևս կանգուն են հայերի տներն ու մշակութային կառույցները:

²⁶ Հ. Աճառյան, *Հայերեն գաւառական բարբառան*, էջ 36.

Ինչպես Թուրքիայի Հանրապետության բոլոր բնակավայրերում, այստեղ ևս ապրում են բացահայտ և ծպտյալ թրքախոս հայեր:

Բուլղարահայերի ներկայիս լեզվական պատկերը, համաձայն մեր հարցումների, նաև Սոֆիայի համալսարանի դասախոսներ հոգելեզվաբան Յորա Բիրինի, հայագետ Անտուանետա Անգելովայի և Շումենի համալսարանի լեզվաբանության ամբիոնի վարիչ Տատյանա Չալրևովայի հավաստումների, ունի որոշակի շերտավորում: Ավագ սերունդը բարբառախոս է, լավ է տիրապետում Ռոդոպոյի բարբառին, և նրանց խոսքը հստակորեն տարբերվում է արևմտահայ գրական լեզվից: Միջին սերնդի խոսքում բարբառը նկատելիորեն տեղի է տվել ներառելով արևմտահայ գրական լեզվի տարրեր: Հայկական կիրակնօրյա դպրոցներում գործառում է գրական արևմտահայերենը: Այս լեզվով է իրականանում բուլղարահայ թեմի քրիստոնեական քարոզչությունը և ոչ ծավալուն հայերեն գրահրատարակչությունը: Որոշակի քանակ են կազմում նաև վերջին ժամանակներս Հայաստանի Հանրապետությունից Բուլղարիա արտագաղթածները, որոնք հիմնականում բնակվում են Սոֆիայում, մասամբ նաև Վառնայում, Պլովդիվում, Բուրգասում և հաղորդակցվում են գրական արևելահայերենի խոսակցական տարբերակով: Երիտասարդ սերունդը առավելապես օտարախոս է և համարյա թե չի տիրապետում ո՛չ Ռոդոպոյի բարբառին, ո՛չ գրական արևմտահայերենին, ո՛չ էլ արևելահայերենին: Նոր սերունդը նկատելիորեն հեռացել է մայրենի լեզվից ու հայկական կրթությունից: Շատերի համար նախընտրելի են դարձել բուլղարերենը և անգլերենը:

Սուղունջին

(ըստ Հովհաննես Թումանյանի)

Էղեր է, չէղեր է, թաքավոր մը եղեր է:

Աս թաքավորը իր էրզրրին մէջ հըրաման գընէ. «Վօվ անանգ սուղ մը ըսէ, քի էս ըսիմ սուղ է, թաքավորութանըս գէսը գուղամ անոր»:

Չօբան մը գութա, գըսէ.

– Թաքավորըս թող շող աբրի: Իմ հարըս անանգ փավ մը ունէր օր, աս թարաֆէն

Գէրգընցունէր թախքը էրգինքը, ասողերը գը խառնէր:

– Գըրնա ըլլար,– ջուղաբ գու դա թաքավորը,– իմ մենձ հարըս ա թուրունի անանգ սիբսի մը ունէր քի, մէգ ձարը, փէրնին գը թընէր, մէգալ ձարն ա գերգէնցունէր, արէքագէն գը վառէր:

Սուրունջին քըլօխը քէրէլօլ թուս գէլլէ:

Թէրզի մը գուքա ու գըսէ.

– Աֆ գանիս, թաքավօ՛ր, էս դահա չաբուխ քայի բըղը, ամա ուշացա, չօնքօ էրէգ փէք շաղ առգէվ էգավ, գայձագնէրը գարգին, էր-գինքը բաղոճեցին: Քացաձ էյի գարգըղէլու:

– Հա՛ աղէգ էս արէր,– գըսէ թաքավորը, – ամա ընդօ բէղք է նէ չէյիր գարգըղաձ. Աս առդու քիչ մը գէնէ արգէվ թափէցալ:

Աս ա թուս գէթա:

Նէրս գը մըղնա ախքաղ քէղացի մըֆ շինիգը թէվին դագը թըրաձ:

– Թո՛ւն ինչ գուգէս, ա՛ մարթ,– գը հարցունէ թաքավորը:

– Հէ՛չ, ինձի շինիգ մը օսգի բարդըգան էս, էգաձ իմ քի դանին:

– Շինիգ մը օսգի՛, – շաշմիշ գըլլա թաքավորը,– սուղ գը գուրցէս, էս քէզի օսգի պարդըգան չիմ:

– Էգէր սուղ իմ նէ թաքավորութանըդ գէսը դու ինձի:

– Չէ՛, չէ՛ շիդդագ էս,– խօսքը թէրս գը թարցունէ թաքավորը:

– Քանի քի շիդդագ իմ նէ շինիգ մը օսգին դու:

* * *

Լէռանը թէփէն էլալ: («Բարձրացալ սարի գագաթը»): Օտմանը քացին փաղ փէրէլու: («Գնացին անտառ փայտ բերելու»): Արգէվէն յէղքը ձիբանի քօղին էլալ: («Անձրևից հետո ծիածան կապեց»): Ֆուրթունան փօթօն յափրախները դարալ: («Քամին քէց բուր տերևները»): Խօղէրուն վըրան շաղ նըստալ: Դամլա մը չուր: («Մի կաթիլ ջուր»): Սաղանախ արգէվ էգալ: («Տեղատարափ անձրև եկալ»): Սէլը դարալ: («Հէղէղը տարալ»): Գարգուղը արդէրը գարգալ: («Կարկուտը փչացրեց արտերը»): Էխդիարները բաղին շուքը նըսդաձ էին: («Օտբունիները նստած էին պատի ստվերում»): Չառին շուքը էրգընցալ: Դըղան քէղինը նըստեցալ: («Երեխան նստած են գետնին»): Չամփան օտմանին մէչէն գանցներ: («Ճանապարհն անցնում էր անտառով»): Մէգ թի գէցի: («Մի կողմ կանգնի»): Քէղինը քիձ մը քաշէց: Չուվանին ձարը ինձի դու: Թուրին էշիգին գայնաձ էր: («Կանգնել էր դռան շեմին»): Ավէլը դունին քյձէն է: Քյձէ-բուշախ ալըլըրգէցի:

Քիրեմիդին վրբան ցուն գա: («Տանիքի վրա ձյուն կա»): Թավանէն խօղ գը վաթեր: («Առաստաղից հող էր թափվում»): Դունը ավըլըրգեց, չօփը թուս հանեց: («Տունը ավեց, աղբը դուրս տարավ»): Հավերը բօխումվար էշմիշ գանին: («Հավերը քուջուջ էին անում աղբանոցում»): Չուրին բօրուն թէնէքեօլ գը շընին: («Ջրհորդանը շինում են թիթեղից»): Գըրագին ք¹/₄մօր էվէլցու: («Ածուխ լցրու կրակի վրա»): Մէգարըլըր գանանչ խօղ փուսեր է: («Գերեզմանին կանաչ խոտ է բուսել»): Գընիգները քերեզման քացին: Դերդերը ժամ քըննաց: Արաբայօլ քերը քացանք: Դերէին չուրը արդերուն գաբեցին: («Առվի ջուրը կապեցին արտերին»): Ջիվամանը չամուրին (կամ բաթախը) մէչը մընաց: («Կոշիկը մնաց ցեխի մեջ»): Էռէչ գեղը թըրիք գը վառէին: Գըրագեն գաձ մը ցաղգեց: («Կրակից կայծ թռավ»): Թաց փաղը վառէս նէ շաղ մուխ գըլլա: Չառին քնքը խօրունգը քացեր է: Դըղան ձառին վըրայէն խէջ ժօղվեց: Խարպուզի գուղ: («Ձմերուկի կորիզ»): Ղայխիի գուղ: («Ծիրանի կորիզ»): Քիսխա: («Սոխի սերմ»): Թըսթուն գըձիկ: («Գինձի սերմ»): Վարթի թօխում: («Վարդի սերմ»): Յօրէնի հունդ: («Յօրենի սերմ»): Միսիրի ալուրօլ միսիր բնրէլի գը շընին: («Եգիպտացորենի այլուրից խաշիլ են պատրաստում»): Ֆասուլյա յախնիսին²⁷ համօլ գըլլա: Շէֆթալին փէք համօլ յէմիշ է («Դեղձը համօլ միրգ է»): Ախլաթը այիները գուդին: («Վարդի տանձը արջերն են ուտում»): Յուզ ուղօղը վերէն, փուրթ քըլօխը վարէն, դաջիզը՝ օրթան ֆընդըլի բէս գը չարթին²⁸: Բայամը խայխիին գուդին գըլմանի, ամա քիչ մը էվէլ խօշօր է: («Նուշը ծիրանի կորիզի նման է, բայց մի քիչ ավելի մեծ է»): Ինձի քնո ըսօղը բարէմ ինք բաղէմ գնգլի՝ ըլլա («Ինձ կույր ասողը գուցե ինքը նուշ աչք ունենա»): Ջիվալ մը ունգուզ փէրավ: Ունգուզի մուչուգօլ իլէն շիրայօլ շարօց²⁹ գը շընին: Հալօջի ձառին յէմիշը դասկմին գը հասնի: («Մնձենու պտուղը հասնում է աշնանը»): Գուզ մը խավօղ դու ինձի: («Մի ողկույզ խաղող տո՛ւր»): Դահա չհասաձ խայխիին չաղալա գըսին: («Խակ ծիրանին ասում են չաղալա»): Քարնան էոչինէգ ձաղիզը քար չիչէլին է: («Գարնան առաջին ձաղիկը ձնձաղիկն է»): Յօնջան գօթին վըրա իրէք-իրէք յափրալի ունի, ձաղիգներն ա գըլօր ին: («Երեքնուկը

²⁷ Տապակած կանաչ լոբին ռոդոսթոցիների խոհանոցին բնորոշ է:

²⁸ Ակնարկվում է 1877 թ. ռուս-թուրքական պատերազմը:

²⁹ Ռոդոսթոյում ընդունված չէր **քոզունաղ** պատրաստելը, այլ խաղողի հյութով **սուճուխ** (**շարօց**) էին պատրաստում:

ցողունի վրա ունենում է երեքական տերևներ, ծաղիկներն էլ գնդաձև են»): Խավախին փաղեն դիրեզ գը շընին: («Բարդու փայտից գերան են պատրաստում»): Քարունը քա նե շիթիկները գը սեղիթին: Գարմիր փանջարը գը խաշին, յեղով քացախով սալաթա գանին: Փանջարի յափրախներով թուրշի գը թընին: Դըղան հավուջ գուդեր օր: («Երեխան գազար էր ուտում»): Թուլթումե ուչեղ: («Դղումի մուրաբա»): Ըւըրդանը գըջօղ խօղ է: («Եղինջը կծան բույս է»): Չաթրինը բայիր դեղերը գը փուսնի: («Ուրցը սարերում է աճում»): Քուշ քօնմազին գանանչ գօթը գը դարգին: («Օնեբեկի դալար ցողունը տապակում են»): Չնգըլմանգըլին հունդը գօջագի բիչիմ է («Փիփերթի սերմը կոճակի նման է»): Թուրշիին մեչը թերե ըթի թի: («Թթվի մեջ սամիր դիր»): Գօլին եռեչը քօֆե մը երթ լեցուց: («Կուլի առջև մի քթոց հարդ լցրեց»): Ցօրենին իլեն քարիին գօթերուն շեղ գըսին: Ցօրենին բաշախները գը թափին: Ձեմբիլին մեչը շեֆթալի, խավօղ իլեն ինջիր գար: Մեփեթները ցիուն փեռցուցին: Էոչի վախդը խօղը փաղե սաբանով գը փօրեին: Դարդըղնաձ խօղերը փօցելիով հավքեց: Յաբայով խօղը արաբան գը թընին: Մըխը խօղը քօլինգօվ գը քանթին: Բիլեի քարով թանագը բիլեմիշ գանին: («Հեսանով դանակ են սրում»): Չեփիջօվ բադին չիվի մը գարգավ: Դաշդին խըմօրը ազիշօվ³⁰ գը քերին: Յայըխին յեղը: («Խնոցու կարագ»): Քինին ֆըչիին մեչը գը բային: («Գինին պահում են կարապի մեջ»): Փըղուզին խուլփը ինգեր է: Բարխաչօ առավ, գօլը գըթեղու քըննաց: Էոչի վախդը քինին, յեղը, շըրըղանը, բանիրը դիգի մեչ գը բայեյին: Շիշեին փերանը մանթարով քօցեց: Քինին շիշին մեչը հունիով լեցուց: Չահրայով թելը գը մանին: Էխթիյար գընիգը իլիգօվ թել գը մաներ օր: Շիշերօվ չօրաբ գը հիսեր («Շյուղերով գուլպա էր գործում»): Մեղիրին վըրան խալի փըռաձ է: Հելլաք եղաձ յաթախ մըղան, քընացան: Գնգլիկօվ գը գարթարօր: Փեք բաղ էր, եղիվենները թըրավ: Չարխը հաքավ, գաբիչներն ա գաբեց: Օքչեղի վօղնամաններ («Բարձրակրունկ կոշիկներ»): Աշքուսի համար մծողե ուզեց: Լօուսային խավիձ դուվին: («Օննդկանին խավիձ տվին»): Էրիգը գընգանը գը բեքլեթօր: Ներօշը առղան գը ցավեր օր: Մեղ ձերը փեք բայիրյօխարի փաներ գընե բազի-բազի: Դըղադ ի նչ է, մա նչ է յօխաս ախչիգ: Մեր թըրացինին

³⁰ Ռոդոսթոցիները թոնիր չունեին: Հացը թխում էին փուռում: Գաթա որպես այդպիսին չգիտեին: Թխվածքի մեջ դրված միսը, ընկույզը, պանիրը և այլն կոչում էին **փօր**:

հարսը հեմ ըռընդիգ է, հեմ ծշգծօգար: («Մեր հարևանի հարսը թե՛ գեղեցիկ է, թե՛ ճարպիկ»): Ժամին թուր դիլինջի լեցունգ է: Սույօջին էգավ. ցանը առի. «-Հէ՛յ ջանըմ, չուր գուգէ ք: -Չինք ուզեր...»: Մալախը չուրը մըղավ: Դըղաքը թօսբաղի մը փըռնած էին: Քիշերավուգը մութին գը թըռչի: Քերթէնքելէն (մողեսը) արելին դագ գը տաքնա օր: Մէվ բնէն (կարիճը) փէք գէյիրլի է: Մամումըը (սարդ) գալ գը հուսէ քի ջանջ փըռնէ: Արգելէն յետքը սօղուջան (անձընորդ) լեցավ օրթալըխը (ամեն կողմ): Ջաղիգ բնջէյին գարմիր բնջէգ մըն է, քի սէվ բուղեր ա ունի: Սութուն լուս-բնջէյին (լուսաստիկ) թըռոջ գաձերու գըլմանի: Մայլանգնգը (խխունջ) նէմ դեղերը գըլլա: Հինդին ձանյը-ձանյը գը բըղըրդգի օր բախչան: Աղաջ գագան (փայտփորիկ) իրէն սուր գագայօվը ձառը գը փօրէ: Գուգուվաքը (բու) ցօրեգնէրը քնը է, փան չըդէսնար: Խամագ-խարդան (կաչաղակ) երգան խոյթուլի (պոչ) ունի: Իբիբիգը (հոպոպ) քըլօխը սանյ ունի: Գարթ հավը փիլիջնէրը ժողվըրթըգէց, դանադնէրուն (թև) դագը առավ: Խարդային թօյը սէվ է: Յին իր դույրուխտվը ջանջէրը կը վըռընդէ: Մեղուն գըջէց, չալըն մաղըս մընաց: Անօր առդան գը ցավի օր: Յումրուխօվ (բռունցք) ուժօվ մը գըռնագին գարգավ: Էքսէն (ծոծակ) քերէց: Գօվին մեգ բոյնուգը (եղջուր) ինգեր է: Վերի բըռդունքը ոռած է: Սըղըրի (տավար) ջիէր դարգէցի: Չիշի ջանփային մէչը քար գա: Էրեսին վըրան ֆըշխըրնէր (պգուկ) էլած էին: Ջիվին վըրան մէնձգագ ուռէցք մը գար: Մադնէրուն վըրան գօձիձնէր (գորտնուկ) գային: Դըղան սըթմա (տենդ) փըռնէց: Քուրթէշը (կարմրուկ) դըղու բըլաշըխ հիվընդութին է: Քէսգին (ուժեղ) նէվագիլի (հարբուխ) ադէն գը փըռըշդան: Ջէյի խըմեց դէ մեռավ: Մեռէլին հօքուն հօքօց (հոգեհաց) ըրավ: Մաձունօվ չօրբան գէփէն մաձունօվ, ցօրէնօվ յաութ (կամ) փըրինձօվ: Սըղըրի ջիվօվ էփաձ փաչա: («Տավարի տոտիկներից պատրաստված խաշ»): Հիվընդին սօթլաջ (կաթնապուր) դու: Գարթին դայմախը (սեր) քաշած իմ: Հարսը աման մը մաձուն փըռնէց (մերեց): Ջօքանչը փէսին դայդանա (ձվածեղ) գերցուց: Փէքմէգը գը շընվի թութի յաութ (կամ) խավօղի շիրայօվ: Հարսը սախըգ (ծամոն) գը ձամեր: Դօբաչը (հոլ) մեգ դեղ մը գը ֆըռա: Դըղան գախօրան (ճոճանակ) նըստած էր: Ախչիգնէրը բէրէք-բէրէք (տիկնիկ) խաղալ գը սիրին: Չօբանը խըլյախ դօղօք չալէլ քիդէ: Անանգ շամառ (ապտակ) մը գարգավ էրեսին քի... Քըռքին (ուժեղ) քօֆօր մը դուվավ: Աղ ինդօ ձագաշք մարթ էր: Աղ մարթը փախուգ (խենթ) է: Ջըլըգ սեղիր: («Նվագ սաճիլ»): Գծդօլ ձառ: («Նվագ ծառ»): Ջայիֆ

(նիհար) հայվընին միսը համարզ է: Գուղը աջի է: Խուլ թանագ: («Ոչ սուր դանակ»): Մարը բաշաղ: («Դեղին ցորեն»): Դիլսիզ դրդա («Համր երեխա»): Քեքե լեգու է («Թլվատ է»): Էրեսն ա չիլի է վախրմ («Կարծեմ երեսը պեպենտոս է»): Ձաղիզ հիվընդութենեն յեղքը քիչ մը գրողաձ (ծաղկատար) մընաց: Խըվըռոջըխ (գանգուր) մագեր ունի: Թեմբելու-թինը փարա չաներ, քիչ մը իշգօղար (գործունյա) էղի: Չուրով լեցունկ աման: Ցորէնօվ լեցունկ ջիվալ: Յունուշախ հաց: Ղարա փարց: («Փափուկ բարձ»): Յուվարլախ խարփուզ: Թեմիզ յաթախ («Մաքուր անկողին»): Ղույրուխսուզ հավը դայիբ էղեր է: («Անպոչ հավը կորել է»): Հըզըլը գըրբազ («Թեժ կրակ»): Աս մաղմաղ գըրբագին վըրան խաղվե մը էփե: Օրթախլամա (կիսրար) գը փանեին, առաձնին գեսվագես գանեին: Մենձ մարըս ցորեն իլեն սեյրեզ խավուրմիշ արավ: («Տասս ցորեն ու կանեփ բովեց»): Թերցանին գաբը քագեց: Թաբախ ինգավ, գոյրեցավ: Փաթաթեզին դաբուխը գըբեցին: Խավօղին քթթօզը քնլեմիշ էղեր է: («Խաղողի մատը արմատակալել է»): Դօմաթեը ավուջին (ափ) մեչը ջըմըռեց: Ղօթուխին դագը էթեբերի մը (կամացուկ) խըղըխ արավ, էփեյի խընդացանք: Չալըն ֆիսդանին փագավ: («Փուշը կպել էր շորին»): Ամն ն, աս ընդօ փագըրդան մարթ է, քա՛: Թօֆէնզը առի, ավջութան քացի: Գընգանը, դըղաքը ցըբեց, քացավ (քըննաց) քաղաք: Բըլաշըխը (ափսե) ցողվեց: Անօնց դունը ցուցուր: Շափղաղ (զլխարկղ) ձուռ է, դօզցու: Քօթը բիթմիշ արավ: Վախեն գագագել բաշլայեց: Հավերը էշլեմիշ (բուջուջ) գանեին: Սօխին գըձուեն աշվըներս գըսգըձացին: Մըսեցա դե վուջուղը գը չարթըվի օր: («Մըսել եմ, մարմինս կոտրատվում է»): Սօխախը քալաձ վախըր արխաղաշին ըռասղ էգավ: Գըռեվ անօղները մեգըզմեզեն գադեցին: Խօղը յունուշաղցեր է: Մադնին արեվին դագը փառըլ-փառըլ գուքար օր: Հիվանըր ըռննդցավ // աղեկցավ: Շաղ փանեցավ դե ալըրդեցավ (հոգնեց): Գօվը դայիբ էղաձ էր, օմանեն քըդան: Փեք գըջան լեգու ունիս, այօլ: Գըրբագը բիրդեմբիրե փըռընգեցավ: Դա քօրձեն վա՛զ անցի, ջա՛նըմ: Մենձ մարըս մուգներեն փեք գը քանի (զզվել): Բօշ փանե մը քեն գաներ, հեղս չեր խօրաթեր: Ձաթը թուն փեք գը սիրես ույդուրմիշ անել: Նաֆիլե (իգուր) գը խօրաթես, ան քեզ մըղիզ չաներ օր: Նա սըլ էս: («Ինչպե՞ս ես»): Ղասըմին մեյ մը ավջութուն քացանք: Աս քանի խըղար է, փախըրթ գը փերե օր: Բարաբար գը քաղեին օր: Մեխլ (ափսոս), ձառը գը չօրնա օր: Իշղե էգավ: Սօլուխը փըռնաձ է, յանի յա // սանքի դե մեռաձ է: Թուն ի՛շ խըղար ցի ունիս:

* * *

Դարձվածային, հարադրավոր, պատկերավոր արտահայտություններ **ցունը թեփէիս** («ձյունը գլխիս»), **խխմախ ըսլագան** («արև եղանակին բարակ անձրև»), **յոյ չի քիդեր** («պատշաճությունը չի հարգում»), **էշիզը գը փերէ** («այս տան սովորությունն է»), **չամիչ ֆունդո՞ւ փէ**, **ինչ է** («ասվում է ընտիր, համադամ կերակուրի մասին»), **ցուզ ուղող** («ռուս»), **փուրթ քըլօխ** («բուլղար»), **թօյը վար արէ** («հետը հարմարվի ր»), **առալը մարթ է** («հեղինակավոր մարդ է»), **թավա լըզող** («ցուցամատ»), **օրթա դիրէզ** («միջնամատ»), **մադնիի մադ** («մատնեմատ»), **բիլի մադ** («ճկույթ»), **խենթը բույնուզու չըլար** («խենթը պոզով չի լինում»), **դախդագը բագաս** («խենթ»), **աջի բադեմ** («դառը նուշով պատրաստված խմորեղեն»), **փօրը գուննա չալէ** («շատ քաղցած լինել»), **դիշլեմիշ անէլ** («ատամնավորել»), **փագչըդան մարթ** («կպչուն, ձանձրալի անձնավորություն»), **դըվօր հեղը միյնար** («դրա հետ գլուխ մի՛ դնիր»), **յուվարլամիշ անէլ** («գլորել»), **բիթմիշ անէլ** («ավարտել»), **փեք լըմընցեր է** («նիհարել է»), **դօղմիշ ըլլալ** («սառչել»), **շիշլեմիշ անէլ** («ծակծկել»), **աջէլէ անէլ** («շտապել»), **շաշըրմիշ անէլ** («շփոթվել»), **քարի փըռնէլ** («քարկոծել»), **յումուշախլամիշ ըլլալ** («փափկել»), **փառլամիշ ըլլալ // փառըլ-փառըլ քալ** («փայլվել»), **թօմբալախ անէլ // քըթլավախ անէլ** («գլուխկոնծի տալ»), **գըզըզ անէլ** («կքել»), **գուգուզ անէլ** («պպզել»), **յան քալ** («թիկնել»), **սծալեմիշ անէլ** («զարդարել»), **փիրիփաթօ անէլ** («զբոսնել»), **խաղը վասդըզէլ** («շահել»), **երեսին դերին բադըռաձ է** («անամոթ է»), **խըրս էլլէ** («բարկանալ»), **ոյդուրմիշ անէլ** («հորինել»), **երես էլլէ** («շփանալ»), **չուրթափ անէլ** («միզել»), **յախան ցըքէլ** («հրաժարվել»), **ամի երթալ** («որսալ»), **թեսթերեմիշ անէլ** («սդոցել»), **քեբաք անէլ** («խորովել»), **քեն անէլ** («խոովել»), **գարգավաթի բախչէ** («պարտեզ»), **թօյ քուշու** («արոս»), **զեջէ քուշու** («չղջիկ»), **թեփե իբիզ** («աքլորի կատար»), **յավաշամիշ անէլ** («որոճալ»), **դայամիշ ըլլալ** («թիկնել»), **յավլարլամիշ ըլլալ** («աղաչել»), **սաբան դեմիրի** («խոփ»), **դունին վըրան** («տանիք»), **հնքձմ անէլ** («իշխել»), **վըրան քօցէլ** («կոծկել»), **սիվրի սինէզ** («մժեղ»), **էլլեմիշ ըլլալ** («զբաղվել»), **մուխայէթ ըլլալ** («զգուշանալ»), **քէշ ըլլալ** («հուզվել»), **դուռուվմիշ անէլ** («հստակեցնել»), **խըրսլանմիշ ըլլալ** («բարկանալ»), **թօփլանմիշ // թօփարլամիշ անէլ** («հավաքել») և այլն:

Գարիկ Մկրտչյան

(ԵՊՀ,

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ)

ՏԱԼՎՈՐԻԿ-ՄՈՏԿԱՆԻ ԲԱՐԲԱՌԻ ԴԻՐՔԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ ԵՎ ՆՐԱ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տալվորիկը և Մոտկանն առանձին տարածքներ են Արևմտյան Հայաստանում, որոնց խոսվածքները, ինչպես կտեսնենք, ունեն գրեթե նույն լեզվական հատկանիշները: Այս հանգամանքը, ըստ էության, պատճառ է հանդիսացել, որ Գ. Ջահուկյանը հայերենի բարբառների բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման մեջ¹ երկու տարածքները միավորի՝ կոչելով **Տալվորիկ-Մոտկան** ընդհանուր անվամբ:

Տալվորիկ-Մոտկանի տարածաշրջանների (նախկինում՝ գավառակներ) ժողովրդագրության, բնակավայրերի և նրանց վերաբերող պատմական կարևորություն ունեցող տեղեկությունները ներկայացնում ենք ըստ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում² և Հայկական սովետական հանրագիտարանում³ եղած տվյալների:

Տալվորիկը (Դալվորիկ, Տալվորի, Տալվորիկ-Քարակ, Քարակ) գյուղախումբ-գավառակ է Արևմտյան Հայաստանի Բիթլիսի նահանգում՝ Մասունի Խուլվի կամ բուն Մասունի գավառում: Տալվորիկը տարածված էր Տիգրիսի ձախակողմյան Մասնո գետ վտակի վերին հոսանքի շրջանում՝ Ծովասար, Խարզան և Ստորաքար լեռների միջև ընկած լեռնային, ջրառատ, անտառախիտ ու անմատչելի վայրում: Գավառակի կենտրոնը եղել է Տալվորիկ գյուղը: Մոտկանը (Մոդկան, Մոտզան, Մոտրզի, Մոտիկան) նույնպես սահմանակից է Տալվորի-

¹ Տե՛ս Գ. Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 28-36:

² Տե՛ս *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 5, Ե., 2001, էջ 16, հ. 3, Ե., 1991, էջ 868:

³ Տե՛ս *Հայկական սովետական հանրագիտարան*, հ. 11, Ե., 1985, էջ 549:

կին, տարածվում է Մուշ քաղաքից հարավ՝ Հայկական Տավրոսի փեշերին: Մոտկանը 19-րդ դ. վերջերին և 20-րդ դարի սկզբներին ուներ 69 գյուղ՝ 22612 բնակչով, որոնցից հայեր էին շուրջ 8000-ը: Մոտկանի տարածքը մոտավորապես համապատասխանել է պատմական Աղձնիք նահանգի Գգեղի գավառին:

Ըստ տվյալների՝ 20-րդ դ. սկզբում Տավրոսիկի հայկական բնակավայրերի քանակը շուրջ մեկ ու կես տասնյակ էր՝ շուրջ 1600 բնակչությամբ և 300 տնտեսություններով: Տավրոսիկի և Մոտկանի հայտնի գյուղերից էին **Տավրոսիկը**, **Արտխոնքը**, **Հրքմանքը**, **Հլոդինը**, **Փուրխը**, **Տվախինքը**, **Հոսնուտը**, **Հարթքը**, **Սպղանքը**, **Շղգարդը**, **Չորերը**, **Խլիովիտը**, **Քորախուն**, **Սգրենը**, **Կոռը**, **Նիչը**, **Արփին**, **Պուգնուրը**, **Մրցանքը**, **Շենը**, **Գերմավը**, **Քրդամանքը** և այլն:

Տավրոսիկի և Մոտկանի հայերը հայտնի էին իրենց քաջությամբ և ազատասիրությամբ: Իգուր չէ, որ 19-րդ դ. վերջին Տավրոսիկում հայ զինվորների քանակը հասել էր հինգ հարյուրի: Մեծ եղեռնի ժամանակ տավրոսիկցիներն աչքի են ընկնում նրանով, որ կազմակերպում են համառ ինքնապաշտպանություն և միայն թուրքական զերակշռող ուժերի դեմ անզիջում մարտերից հետո թողնում են գավառակը, որն իսպառ ավերվում և ամայանում է:

Մեծ եղեռնին նախորդած և հաջորդած ժամանակահատվածում Տավրոսիկ-Մոտկանի գյուղերը հրկիզվել են և ավերվել: Մոտկանի հայերը մեծ մասամբ զոհվում են, իսկ տավրոսիկցիների փրկված սերունդներն այժմ բնակվում են ՀՀ Արագածոտնի մարզի **Աջնակ**, **Շղարշիկ**, **Իրինդ**, **Ավան**, **Սասունիկ**, **Լեռնարոտ** գյուղերում, ինչպես նաև Արմավիրի մարզի **Ապագա** գյուղում:

Տավրոսիկցիներն ու մոտկանցիներն ինչպես պատմական հայրենիքում, այնպես էլ Արևելյան Հայաստանում զբաղվել են արհեստներով, խաշնարածությամբ, այգեգործությամբ ու զինեգործությամբ: Հռչակված էին տավրոսիկցի դարբինները, իսկ Այգետունը (Էգետուն) հայտնի էր խաղողի այգիներով:

Տավրոսիկ-Մոտկանի տարածքին բնորոշ լեզվական առանձնահատկություններով լեզվաբանները հիմնականում զբաղվել են 20-րդ դ.: Հ. Աճառյանը «Հայ բարբառագիտություն. Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների» աշխատության մեջ այս տարածքի խոսվածքի բարբառային պատկանելության մասին որևէ խոսք չի ասում: Հ. Աճառյանի տարածքային բաժանումներից ընդամենը ենթադրում ենք,

որ այն չի առանձնացվում Մասունի խոսվածքից: Նշենք, որ Մասունի խոսվածքը Հ. Աճառյանը ներառում է Մշո բարբառի մեջ⁴:

Հայերենի բարբառների շարքում Տալվորիկ-Մոտկանի բարբառի դիրքը վերջնականորեն ճշգրտել է Գ. Ջահուկյանը «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատության մեջ: Ըստ նրա՝ Տալվորիկ-Մոտկանի բարբառը մտնում է հայերենի բարբառների արևմտյան խմբակցության Մուշ-Տիգրանակերտի կամ հարավկենտրոնական բարբառախմբի մեջ: Տալվորիկ-Մոտկանի բարբառի լեզվական առանձնահատկությունները Գ. Ջահուկյանը ներկայացնում է երկու՝ **Նիչի** և **Այգետունի** խոսվածքներով⁵:

Տալվորիկ-Մոտկանի բարբառի վերաբերյալ եղած լեզվական նյութը սահմանափակ է: Սույն հետազոտության համար հիմք են հանդիսացել Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման մեջ բերվող տվյալները* և Հայերենի բարբառագիտական ասոլասի (ՀԲԱ) նյութերի հավաքման ծրագրով գրանցված հինգ տետրերի տվյալները⁶:

Տալվորիկ-Մոտկանի բարբառի խոսվածքներն ունեն ընդհանուր օրինաչափություններ: Որպես այդ համակարգից շեղում՝ նրա առանձին խոսվածքներ զանազանում են իրարից հնչյունական որոշակի իրողություններ: Այսպես՝ Գ. Ջահուկյանը հայերենի բարբառների բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման մեջ բացառում է Տալվորիկ-Մոտկանի բարբառում քմային ձայնավորների գործառույթը բնիկ և փոխառյալ բառերում, սակայն, ըստ այս բարբառը ՀԲԱ ծրագրով գրանցած բարբառագետների բերած փաստերի, այստեղ քմային ձայնավորներ բնիկ ու փոխառյալ բառերում դրսևորվում են՝ *թսնթ, դրժվնթ, հրմզն, կրրիրն* (գյուղ **Մցու**), *կըսմնթ, շնֆտալի*

⁴ Տե՛ս Հ. Աճառյան, *Հայ բարբառագիտություն. Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների* (=ԷՎինեան ազգագրական ժողովածու, հ. Ը), Մոսկուա-Նոր Նախիջեան, 1911, էջ 116:

⁵ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 134:

* Գ. Ջահուկյանը Տալվորիկ-Մոտկանի բարբառի առանձնահատկությունները քննում է հայերենի բարբառների բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման համապատասխան լեզվական գուգաբանությունները ներկայացնելիս, և բարբառիս հատկանիշները տեսնում ենք հայերենի մյուս բարբառների հատկանիշների քննության համատեքստում:

⁶ Տե՛ս ՀԲԱ ծրագրով լրացված 33, 380, 381, 400, 404 համարների տետրերը:

«դեղձ» (գյուղ **Կոռ**), **սփեղնալ**, **պուլվնր**, **ֆըլանգ**, **ֆաննր**, **ռանգ**, **տըն-վնր**, **քանի**, **սնսոր**, **սննանա**, **վննեգ**, **վննտանրեղ** (գյուղ **Նիչ**), **վննիս**, **դըժվնր**, **վննխենալ** (գյուղ **Մրցանք**) և այլն:

Ըստ բարբառը գրանցած մասնագետների՝ Նիչի և Մրցանքի խոսվածքներում առկա է նաև քմային **սն** ձայնավորի ռնգայնացած արտասանություն, ինչպես՝ **զպրգուլ**, **ջպհեղ**, **կրոտան**, **երեխալ**, **ագրոալ**, **տըղալ**, **իեալ**, **արալ**, **հպրոր**, **հպճիլ**, **ագրոալ**, **սնսոր** և այլն: Նշյալ խոսվածքներում այս երևույթն այնքան ընդգրկուն է, որ տարածվել է անգամ որոշ դերանունների, հոլովածների և բայի եզակի հրամայական եզակի ու այլ ժամանակածների վրա՝ **սն** «այդ», **լա** «էլ», **սն** «այն», **սա** «այս», **ամըռվալ**, **կըրալ**, **պըռալ**, **խաղալ**, **սիրալ**, **ծեպալ**, **չըկալ**, **կալ** և այլն: **Նիչում** այսպիսի արտաբերում ունի նաև օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի ձևը՝ **թօն սն**, **անձըրեվ եգե**, **երգինք անըղնագ սն բըռնե**, **մըր տան առկից հ^աօղ սն կը թապի** և այլն: Ռնգային այս հնչյունը բայական և դերանվանական մասնակի դրսևորումներում կա նաև **Սցուի** խոսվածքում՝ **սսիլ**, **մսճեր իլ**, **սս**, **սն**, **սն** «սա», **դա**, **նա**, **սնի** «նա», **ընդրալ** «դրա», **սսօնք** «սրանք» և այլն: Նշենք, որ ռնգայնացած արտաբերում ունեցող **սն**-ն նման է կարճ արտաբերում ունեցող **լ** հնչյունին:

Այս բարբառի ձայնավորային համակարգն ունի յուրահատկություններ: **Սցուի** խոսվածքում տարբերակվում է կարճ արտաբերման **լ** ձայնավոր: Այն հատկապես ի հայտ է գալիս բայի հրամայական եղանակում՝ **բըռնե**, **խաչե**, **սիրե**, **ծեպե** և այլն:

Ըստ այս բարբառի խոսվածքները հետազոտած մասնագետների՝ **Նիչի** և **Սցուի** խոսվածքներում կան նաև քմային **սն** ձայնավորի գործառնական դեպքեր: Ընդ որում, քմային **սն**-ն ի հայտ է գալիս գրաբարի **իս** երկբարբառի դիմաց, ինչպես՝ **ձիթ>ձսիթ** (**Սցու**), **յաջողութիւն> աճողուտսն**, **գողութիւն>գօղուտսն**, **ախպէրուտսն**, **նէղուտսն** (**Նիչ**) և այլն: Երևույթը կա նաև **սնու**ն բառում՝ **անսնն** (**Սցու**):

Բարբառի ձայնավորային համակարգի համար բնութագրական է, որ **ե**-ից առաջ **յ**-ի (**ե>յե**) և **ո**-ից առաջ շրթնային տարրի հավելում (**ո>վօ, վե, ուօ, ուե**) տեղի չի ունեցել՝ **օջիլ, օխչար, օղօղիլ, օռնալ, օսկի, օտտընիլ, եղան, էլլիլ, եր^նեւ, երագ, երգուս, երգիր, էպիլ, երգանք, երգըննալ** և այլն: Միայն **Կոռի** խոսվածքն է բառասկզբում տարբերակում նաև **ե**, **յ**, **ուօ**, **ուե** երկբարբառները՝ **ե^նեւ/ե^նեւ<եւ, յեղնիգ<եղնիկ, յերք<երգ, ոստ<ոտք, օոնց<ոնք, օոթի<ոթիլ** և այլն: Այս նույն խոսվածքում առկա է **եփ** գոյականի **հ՛եփ** տարբերակը՝ հնչյունափոխական հետևյալ անցումով՝ **եփ>եփ>հ՛եփ**: Ի տարբերություն բառասկզբի դիրքի՝ բառամիջի շեշտակիր դիրքում բարբառում տարբերակվում են բարձրացող **ե**, **ուօ** երկբարբառները՝ **մե՛ն, վե՛ր, կօրե՛գ, չորուտե՛ն, վե՛ց, տե՛խ, գե՛տ, ասե՛ղ, թե՛լ, կե՛ղտ, կ^աօրձ, կ^աօրտ, հ^աօղ, շ^աօր, պ^աօլակ, սըղ^աօցիլ, կ^աօղ, թ^աօք, ս^աօխ, ն^աօր, ճ^աօկ, տ^աօղ, ծ^աօր, կ^աօմ, կ^աօրձ, լ^աօր, ամչգ^աօղ** և այլն: Բառի աճման դեպքում հայտնվելով ոչ շեշտակիր դիրքում՝ այս երկբարբառները վերածվում են պարզ ձայնավորների:

Կոռ գյուղի խոսվածքում հոգնակիի **-եր** վերջավորությունն արտաբերվում է **-եր** ձևով՝ **սարեր>սարեր, տրներ>տրներ, մագեր>մագեր** և այլն: Արտասանական այս նույն պատկերը տեսնում ենք նաև վաղակատար ժամանակաձևերի կազմության ժամանակ՝ **ուգե՛ր իմ, պերե՛ր իմ, մագե՛ր իմ, կատագե՛ր իմ** և այլն: Հետաքրքրական է, որ **այ, իւ/եւ** երկբարբառներից ծագող է ձայնավորը ևս երկբարբառացել է՝ **գայլ>գել>կե՛լ, լայն>լեն>լե՛ն, իւղ/եւղ>ե՛ղ** և այլն:

Տավորիկ-Մոտկանի բարբառում հինհայերենյան երկբարբառների փոխարեն գործառում են մենաբարբառացած պարզ ձայնավորներ՝ **ձին>ձուն, ճիւղ>ձուղ, ալեր >ալուր, արին>արուն, ուրախութիւն>ուրախութե՛ն, երկիւղ>երգուղ, քաջութիւն>քաճուտու/մն, ձիւթ<ձութ** և այլն: Ընդ որում բարբառում համակարգային է ոչ միայն շեշտակիր **այ**-ի դիմաց առաջին շարքի ձայնավորի, այլև ոնգայնացած արտաբերում ունեցող ձայնավորի գոյությունը՝ **աւ<այս, աղ<այր, աւն<այն (Նիչ, Մցու)** և այլն:

Տավորիկ-Մոտկանի բարբառի ձայնավորային համակարգում կան նաև հնչյունափոխական հետևյալ դրսևորումները՝ **ծում<ծում, էվէնալ<ավելանալ, կումէշ<գումէշ, կիշեռք/կիշեռիլ<կշեռել, մուտմուտ<մրտու, պըլիլ<պահել, ըսսիլ<ասել** և այլն:

Ուսումնասիրվող բարբառի բառասկզբի դիրքում տարբերակվում են ձայնեղներ, խուլեր և շնչեղ խուլեր: Բարբառիս այսպիսի բնութագիր է տվել նաև Գ. Ջահուկյանը հայերենի բարբառների բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման աղյուսակներում բերվող տվյալներում⁷: Ընդ որում համակարգային է բառասկզբի դիրքում հինհայերենյան ձայնեղ պայթականների ու կիսաշփականների խլությունը՝ **ձյուն>ծուն, գարուն>կարուն, բաժին>պաժին, բամբասանք>պամպասանք, բարձ> պարց, բարի>պարի, բարիկենդան>պարկենթան, դուռ>տուռ** և այլն, ինչպես նաև՝ նույն դիրքում հինհայերենյան խուլ պայթականների և կիսաշփականների ձայնեղությունը՝ **ծաղիկ>ձաղիգ, կատու>գադու, կաքավ>գաքավ, տըտում<դդում, տալամ< դալար, կօքնօց< գոգնց, պարան> բարան, կոփել<գօփիլ, տուն>դուն** և այլն:

Մոտկանի **Կոռ** գյուղի խոսվածքում բաղաձայնական վերոնշյալ համակարգն ամբողջությամբ չի գործում: Ըստ տետր 404-ի տվյալների՝ բառասկզբի դիրքում խուլերը, ի տարբերություն բուն Սասունի և Տավրոսիկ-Մոտկանի բարբառների, չեն ձայնեղանում՝ **տուն>տուն, տանել>տանիլ, կաքավ>կաքավ** և այլն: Նիշ գյուղի խոսվածքում նույնպես խուլերը մնում են անփոփոխ, սակայն կանոնավորապես ձայնեղանում են բառամիջի և բառավերջի դիրքերում: Մեկ այլ տետրի՝ 380-ի ընձեռած փաստերի՝ Մոտկանի **Մցու (Մացու)** գյուղի խոսվածքում ձայնեղ հնչյունները բոլոր դիրքերում մնում են անփոփոխ, սակայն հատկապես բառասկզբի և բառավերջի դիրքերում կան գործածություններ, որոնցում ձայնեղները խլացել են: Այս նույն խոսվածքում խուլերը ձայնեղանում են բառամիջի և բառավերջի դիրքերում, հազվադեպ օրինակներում նաև՝ բառասկզբում, օրինակ՝ **պետ>բեղ** և այլն, սակայն խլության երանգ է զգացվում բառավերջի, երբեմն՝ բառամիջի դիրքերում: Այս ամենից ենթադրում ենք, որ հինհայերենյան խուլերի ամբողջական ձայնեղացումն ավարտված իրողություն չէ այս տարածքում, ինչպես՝ **բամբազ/կ, ավիլուզ/կ, բարազ/կ** և այլն:

Գ. Ջահուկյանն այս բարբառում ընդհանուր օրինաչափություն է համարում **ք**-ից հետո, միջձայնավորային ու բառավերջի ետձայնավորային դիրքերում գտնվող հին հայերենի խուլ պայթականների և

⁷ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 56-57:

կիսշփականների ձայնեղությունը⁸՝ **կարբեղ, գորդ, սիրդ, արձաթ, կարջ, ուղէ, մաձուն, վիշաբ, շադ, տադ, տանագ, տարդագ, պարագ, թիագ, պամբագ, կրագ, լուձ** և այլն: Մակայն ըստ տեսք 404-ում բերվող տվյալների՝ **Կռոի** խոսվածքում բառամիջի դիրքում հին հայերենի ձայնեղները խլանում են՝ **ակա< ագահ, իճնիլ<իջնել, էրսիկ< էրդիկ, էկի>այգի** և այլն: Այս երևույթը կա նաև Նիչի խոսվածքում: Ընդ որում Նիչում բառավերջի դիրքում խլության կանոնավորությունը փոքր-ինչ նվազում է: Այս դիրքում նկատվում են նաև շնչեղության երևույթներ՝ **գուբ<կուփ, էգ>էք** և այլն:

Եթե Այգետունի խոսվածքում **բ**-ից հետո, միջձայնավորային ու բառավերջի ձայնավորային դիրքերում գոյություն ունի հինհայերենյան ձայնեղ պայթականների և կիսաշփականների շնչեղ խլության երևույթը՝ **՞օրփ, պուրթ, խափիէ, սուք, մ՞էչ** և այլն, ապա **Նիչի** խոսվածքում այս իրողությունը բացակայում է՝ **Իէրգ, բարձ, արջ, տաղար, թագավոր, օձիք, օջիլ, գուբ, բադ, օձ** և այլն:

Տալվորիկ-Մոսկանի բարբառում բառասկզբի դիրքում շնչեղ խուլերը որևէ փոփոխության չեն ենթարկվում, սակայն բառամիջի և բառավերջի դիրքերում կանոնավորապես ապաշնչեղանում են: Մակայն **Նիչի** խոսվածքում բառավերջի դիրքում շնչեղ խուլերի ապաշնչեղացման երևույթն ավարտված իրողություն չէ: Բառավերջում համակարգային են շնչեղ խուլերի գործածությունները: Նույնպիսի բնութագիր ունի նաև **Մցուի** խոսվածքը. որոշ չափով բառամիջի և ավելի հաճախ բառավերջի դիրքերում շնչեղությունը պահպանվում է, օրինակ՝ **ձաք, ցամաք** և բազմաթիվ նմանատիպ այլ բառերի բառավերջում կան հետևյալ անցումները՝ **ձաք/ձակ, ցամաք/ցամակ, դիք/ դիկ, բաց/բած** և այլն: **Կռոի** խոսվածքում նույնպես ձայնավորների միջև շնչեղ խուլերի ապաշնչեղացման գործընթացն օրինաչափորեն չի կատարվում:

Ինչպես տեսանք, Տալվորիկ-Մոսկանի բարբառում շնչեղ ձայնեղները բացառվում են բառասկզբի դիրքում: Մակայն **Մցուի** խոսվածքը տարբերվում է. բառասկզբի դիրքում ունի և՛ ձայնեղներ, և՛ շնչեղ ձայնեղներ՝ **բամբասանք, բամբագ, գագան, դաս, դադ, ձաք, ջօջ, գառ, գործիլ, գումէշ, գ՞արուն, ձի, բ՞էռ, ձ՞ուրթ, բ՞արց, բ՞ուսիլ, ջ՞արսիլ, ջ՞աղաց, բ՞ուրտ/թ, բ՞ուկ/ք, ձ՞ու, ձ՞ուկ, ջ՞ուր** և այլն, երբեմն էլ՝ խու-

⁸ Տե՛ս նույն տեղում:

լեր՝ պուսիլ, ճաղաց, կառ, ճօջ, կօրծիլ, կօմէշ, պուրսո, պուկ/ք, ծու, ծուկ, ճուր, ծի և այլն: Սա, ամենայն հավանականությամբ, Մշո բարբառի ազդեցությամբ պայմանավորված իրողությունն է:

Ինչպես փաստերն են ցույց տալիս, հետազոտվող բարբառիս բաղաձայնական համակարգը կայունացած չէ: Խոսքը հատկապես վերաբերում է բառամիջի դիրքում հպական ու կիսահպական բաղաձայնների ունեցած դրսևորումներին: Եթե բառակցքի դիրքը հնարավորինս կայուն է՝ բացառությամբ **Մցուի** խոսվածքի, որում կան նաև շնչեղ ձայնեղներ, ապա բառամիջում տարբերակվում են ձայնեղներ, խուլեր և շնչեղ խուլեր: Անհամակարգային են հատկապես **Մցուի** և **Նիչի** խոսվածքները. միննույն բառը կարող է ներկայանալ և՛ ձայնեղով, և՛ խուլով կամ շնչեղ խուլով, և՛ ձայնեղով կամ խուլով: Ընդ որում՝ այդ անհամակարգությունները չեն վերաբերում մի քանի բառի, այլ ընդգրկում են մեծ բառախմբեր, որը երիցս ցույց է տալիս, որ բարբառիս բաղաձայնական համակարգը դեռևս կայունացած չէ և գտնվում է պատմական զարգացման մեջ:

Ստորև բերում ենք փաստեր այդ անհամակարգային դրսևորումներից: **Մցուի խոսվածք՝** աղջուր/ աղճուր, առճինէկ /առճինէգ, ավիլուգ/ավիլուկ, բամբազ/բամբակ, ձաք/ձակ, ցամակ/ ցամաք, ուրց/ուրծ, ութ/ուտ, սուկ/սուք, վըլացկ/ վըլածկ, յեփ/յեպ, յերկ/յերգ, երգանկ/ երգանք, երգինկ/երգինք, խէկ/խէք, ցեց/ցէձ, կարբեդ/կերբետ, երէգ/երէկ, էք/էկ, մէճկ/ մէջկ, թըրիք/թըրիկ, զըրուց/զըրուծ, եզուց/ էկուց, օձնիլ/օձնիլ, յօթ/յօտ, գըրկիլ/գըրգիլ, թըրջիլ/թըրճիլ և այլն: **Նիչի խոսվածք՝** ամչըկօդ/ամճըկօդ, չապ/չափ, քածախ/քացախ, օջիլ/օճիլ, ^mօրց/^mօրծ, սըղօծիլ/սըղօցիլ, սուկ/սուք, տիգ/տիկ, կէձ/կէձ, օղղ^mօրտ/օղղ^mօրթ, օրփըվերի/ օտպըվերի, օձեր/օցեր, կարդածեր իմ/ կարդացեր իմ, ասվածածին/ ասվածածին, ճըքնավօր/ճըգնավօր, ճօտ/ճօթ, էղած/ էղած, ճախարակ/ճախարագ, մանտըրիլ/ մանդըրիլ և այլն:

Ինչպես կենտրոնական Հայաստանի բազմաթիվ բարբառներում է, այնպես էլ այս բարբառում նախաբաղաձայնական դիրքի մի շարք կիսաշփական բաղաձայններ վերածվում են շփական բաղաձայնների, ինչպես՝ **իջնէլ>իշնէլ, խցկէլ> խսկէլ, կոճկէլ >կօճկէլ, աչք>աշկ/աշէլ** և այլն:

Տավորիկ-Մոտկանի բարբառի բաղաձայնական համակարգի բնութագրական գծերից է նաև այն, որ որոշ բառերում կան ետնալեզվային բաղաձայնների քմայնության դրսևորումներ՝ **գձամ** «ձիու

բերանակալ», **քրբաբ** (**Կոռ**), **քյանի** (**Մցու**) և այլն: Այս բարբառում կան նաև տևական բաղաձայններ՝ **կաննիլ** «կանգնել», **ալլի** «ալանի», **պալլինք** «բանալի», **երգրննալ** «երկարել», **էլլի** «լինել», **ըսսիլ** «ասել» (**Կոռ**), **զիննալ**, **ըմմէն**, **ուլլինք**, **կամմազ** (**Նիչ**) և այլն: Ի դեպ, Գ. Ջահուկյանը **Նիչում** ետնալեզվային բաղաձայնների քմայնության երևույթը ոչ փոխառյալ բառերում համակարգային է համարում, իսկ Այգետունի խոսվածքում այս երևույթը բացառում է⁹:

Կոռ գյուղի խոսվածքում **ես** դերանունը հոգնակի թվում միաժամանակ ունի և՛ **մէնք**, և՛ հնատիպ **մէք** ձևերը: Մրանից եզրակացնում ենք, որ այս բարբառում **մենք** դերանվան մեջ **ն**-ի հավելումն ուշ շրջանի երևույթ է: **Կոռ** գյուղի խոսվածքի լեզվական տվյալները լրացրած բարբառագետը կարևորել է, որ բարբառախոսը խոսքի մեջ երբեմն կիրառել է առանց **ն**-ի ձևեր՝ **մէք>մէնք**, **մէձ>մէնձ**, **կերաք>կերանք**:

Տավորիկ-Մոտկանի բարբառում ու նրա խոսվածքներում կա որևէ դիրքում **հ** խուլի դիմաց **յհ**, **յ** ձայնորդի առկայություն կամ կա սղում՝ **բայի**, **դայիձ**, **Թակույի**, **Բսկույի**, **պըյիլ**, **այ**, **սայման**, **Տիրույի** և այլն: Ուսումնասիրվող բարբառը համակարգայնորեն ունի **ֆ** հնչյուն՝ **ֆոֆոալ**, **ֆասուն**, **ֆլան**, **ֆայմ**, **ֆանդ**, **ֆըթիլ**, **ֆըլան**, **ֆանար** և այլն: **Նիչի** խոսվածքում **ֆ**-ի գործառույթներն այնքան են ընդլայնվել, որ կա **վ>ֆ** անցման դեպք **շընրավոր> շընաֆոր** բառում: Այսօրինակ անցում կա նաև **Մրցանքի** խոսվածքում՝ **արծիվ> առձիֆ**:

Դիտարկվող բարբառում առանձնահատկություններ ունեն նաև ձայնորդները: Ձայնորդ **լ**-ն իր արտասանական բազայով նույնական է բոլոր խոսվածքներում, միայն **Նիչի** խոսվածքում **լօղ** բառում այն ունի թույլ քմայնություն՝ **լօղ**: Ըստ Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման աղյուսակների տվյալների¹⁰՝ այս բարբառում մահացման կամ վերացման փուլում է **ռ** և **ր** ձայնորդների շփոթության երևույթը ոչ նախաբաղաձայնական դիրքում՝ **բար/բառի**, **գարի/գառի**, **սարի/սառի**, **ջուր/ջուռ**, **եռալ/երալ** և այլն:

Տավորիկ-Մոտկանի բարբառում կայուն գործածություն ունի նաև արաբական ծագման **կ** հնչյունը՝ **կազ**, **կազան**, **կօչ**, **կալմըկալ**,

⁹ Տե՛ս նույն տեղում:

¹⁰ Տե՛ս նույն տեղում:

կայնագ, կասար, կըլիւ, կարիբ, կըսմնթ, կութի, կուշ, կուկաս, կագար
 (Մցու, Նիչ) և այլն: Նշելի է, որ այս բառերը բարբառում գործածվում են նաև բարբառախոսներին ավելի հարագատ **խ** հնչյունով՝ **խագ, խագան, խալմախալ, խայնագ, խասար, խօշ, խըլիւ, խարիբ, խըսմնթ, խութի, խուշ, Խուկաս, Խագար** (Մրցանք, Այգետուն) և այլն: Իսկ Կոո գյուղում գործածելի են և՛ **խ**-ով, և՛ **կ**-ով տարբերակները՝ **խագ/կագ, խագան/կագան, խարիբ / կարիբ** և այլն: Չնայած նրան, որ փոխառյալ այս հնչյունը **Նիչի** խոսվածքում գործածության լայն շրջանակներ ունի, Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգման աղյուսակներում ուսումնասիրվող բարբառն այս հատկանիշով չի բնութագրվում¹¹: Փոխառյալ **ի** հնչյունը նույնպես բացակայում է Տավորի-Մոսկանի խոսվածքներում:

Լեզվական նյութի քննությունը ցույց է տալիս, որ ձայնավորներից առաջ հավելական **հ**'-ն գրեթե գործածություն չունի այս բարբառում: Այս հանգամանքը փաստել է նաև Գ. Ջահուկյանը¹²: Սակայն պետք է նշել, որ այս հարցում **Մցուի** խոսվածքը բացառություն է: Եթե **Նիչի, Մրցանքի, Կոոի** խոսվածքներում կան **առեճ, առճի, առճ, իրզուն, իմնալ, ուր** կայուն ձևերը, ապա **Մցուի** խոսվածքում զուգահեռ ունենք **հ /առեճ, հ /առճին, հ /առճ, հ /իրզուն, հ /իմնալ, հ /ուր, հ /ուշար**: Բարբառիս համար բնութագրական է նաև այն, որ բացառված է բառասկզբի դիրքում **հ**-ի դիմաց ոչ առնմանական **խ**-ի գործածումը:

Տավորիկ-Մոսկանի բարբառում համակարգայնորեն գործում է շեշտից կախված հնչյունափոխությունը: Շեշտի նկատմամբ թույլ դիրք գրավող **ա, ի, ու**, մասամբ է ձայնավորները սղվում են, հնչյունափոխվելիս հիմնականում վերածվում են **ը** ձայնավորի կամ մեկ այլ հնչյունի՝ **դանագ>դանգի, քաղաք>քաղքի, կակավ>կակվու, գուգու>գըգվի, մաղնիք>մաղընքի, պինչ>պընչի, ծուռ>ճըռու, ճուր>ճըրի, մեճ>մեճի, շ՞օր>շօրու, ծիլ>ճըլու, կիր>կըրու, ցուռ>ցըռոու, սիռ>սըռոի, տեգ>տեգի, տեմ>տեմի, էշ>էշի, խիժ>խըժի, կեւ>կիսու, տեր>տիրու, ծեթ>ծեթի** և այլն:

¹¹ Տե՛ս նույն տեղում:

¹² Տե՛ս նույն տեղում:

Տավորիկ-Մոտկանի բարբառին բնորոշ հնչյունափոխության որոշ դրսևորումները, այդ թվում փոխազդեցական, բերում ենք ստորև՝ **ըս, ադ, ըն<այս, այդ, այն, առցըսունք< արտասուք, կըդալ<դգալ, էդգեցի<եկեղեցի, արխտ^աօր<սխտոր, կըրիրա< կրիա, հօպպօ/հօպիզ<հորեղբայր, մըռճ^իւմ<մրջին, լաբըստազ<նապաստակ, նըվթ< նաթ, մընի<նման, մընիլ<նմանել, հուշաբ<վիշապ, օռնջկըդալ<յորանջել, տալըվ< տալ, տէսնալ<տեսանել, փոխինձ< փոխինդ, օրշնէլ<օրհնել, օրշնիք< օրհնանք, կըդունց<կըտուց** և այլն:

Տավորիկ-Մոտկանի բարբառի ձևաբանական համակարգի առանձնահատկությունները համառոտակի կներկայացնենք ըստ Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման աղյուսակներում բերվող տվյալների¹³:

Գոյականի քերականական կարգերն ունեն հետևյալ դրսևորումները՝ 1) հոգնակերտներ՝ **-էր, -նէր, -վի** (նրանով բաղադրված բաղադրյալ հոգնակերտները նույնպես), **-նի, -անի** (նրանցով բաղադրված բաղադրյալ հոգնակերտները նույնպես), **-անք, -տիք, -ստան** հոգնակերտների գործածություն, 2) հոլովի և հոլովման համակարգերում բնորոշիչ են հետևյալ գծերը՝ **-է(ն)**-ով բացառական (**-է, -էն, -ան**), **-ց**-ով բացառական (**-ից, -ուց, -իծ**), 3) վերլուծական (ետադրությամբ արտահայտվող) բացառականի և գործիականի (կապով արտահայտվող) գոյություն, 4) բարբառում ընդհանուր է այն, որ հոգնակի թիվը ենթարկվում է **-ու** արտաքին հոլովման՝ **տաշտ^իերու, քար^իերու, մեր^իերու** և այլն, 4) բարբառիս համար տիպական են նաև դերանունների թեք հոլովաձևերում **ի-ի** առկայություն՝ **ընծի, ձեզի, մեզի, քըզի** և այլն, 5) անորոշ հոդի ետադաս գործածություն՝ **մարդ մը, մարդ մի, մարդ մէ** և այլն, 6) **զ** նախդիրի գործածություն, 7) կապերի նախադաս գործածություն՝ **հետ մարդու** և այլն, 8) ուղղականի հետ որոշյալ հոդի սահմանափակ կիրառություն, սովորաբար տարածված են անհոդ կիրառությունները՝ **ջուր տաք ա** և այլն:

Բայական համակարգի առանձնահատկություններն են՝ 1) այս բարբառի համար բնութագրական է այն, որ անորոշ դերբայն ունի **-ել, -ալ, -իլ** վերջավորությունները՝ **-իլ-ի** գերակշռությամբ՝ **էվէնալ, էրգըննալ, թէթվընալ, վախէնալ, հէռէնալ, նէդանալ, կօղնալ, գարմանալ, զըրզիլ, ավիլի, պանիլ (բանել), ժողվիլ, ցողվիլ, պուսիլ (բուսել),**

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 93-94:

թանթըխիլ, լողկըվիլ, վայելիլ, սովորիլ, լըզիլ, փագիլ, քամիլ, աճիլ, կօրիլ և այլն, 2) անկանոն **գալ, լալ, տալ** բայերը ներկայանում են **իգալ, իլալ, իդալ** տարբերակներով, 3) բարբառում առկա է առաջին և երկրորդ (-ել և -իլ) լծորդությունների անաձանց բայերի խոնարհման ձևերի տարբերակվածություն՝ **խօւէմ, խօւէցի, խօւիմ, խօւէցա** և այլն, 4)-**ուլ** լծորդության առկայություն միայն պատճառական բայերում, 5) **կու-**ով (**կը-, կ-, գը-, գ-**) ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերի արտահայտում, 6) **կու-**ի (**կը-, գը-**) ետադաս գործածություն, 7) **կի-**ով ներկայի գոյություն, 8) **ման-**ով և **-ուկ-**ով հարակատար դերբայի գործածություն, 9) **ը-**ով վաղակատար դերբայի գործածություն, 10) օժանդակ բայի անցյալ անկատարի երկձայնավոր ձևերի մեջ ձայնավորներից մեկի սդում կամ թուլացում (**ի-**ի սդում կամ վերածում **յ-**ի, 11) **-օնք** տիպի դերբայով բաղադրյալ ապառնիի կազմում՝ **գրօնք էմ** և այլն, 12) ժխտական դերբայի հատուկ ձևերի առկայություն՝ **լ-**ի կամ **ը-**ի անկմամբ՝ **ի-**ով կամ և **ա-**ով վերջացող՝ **չէմ խաղա, չէմ գրրի** և այլն, 13) անցյալ անկատարի եզակի առաջին դեմքի փոխարեն հոգնակի ձևի գործառում՝ **ես կը գրրէնք/գրրինք** և այլն:

Գ. Ջահուկյանը հայերենի բարբառների բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման մեջ¹⁴ վկայում է ձևաբանական (հատկապես դերանվանական համակարգի) երկու իրողություններ, որոնցով Տավրոբիկ-Մոտկանի բարբառի երկու խոսվածքները՝ **Նիչն** ու **Այգետունը**, տարբերվում են իրարից: Եթե **ինջի-**ով դասական թվականի արտահայտումը (**երկունջի** և այլն) **Այգետունի** խոսվածքում սկզբնավորման կամ ձևավորման փուլում է, ապա **Նիչի** խոսվածքում՝ մահացման ու վերացման: Եթե **Այգետունի** խոսվածքում (**ի**)**կ-**ով (**իկ, իգ, կ, գ**) դերանվանական ձևերը գործուն կառույցներ են՝ **եսիկ, քուկ, ինձիկ** և այլն, ապա **Նիչի** խոսվածքում դրանք չեն գործածվում:

Ըստ Գ. Ջահուկյանի՝ նկարագրվող բարբառում հետևյալ հատկանիշները գտնվում են մահացման և վերացման փուլում՝ 1) ցուցական դերանունների երկադիմությունը, 2) առաջին դեմքի բացակայությունը, 3) շարունակական ներկայի և անցյալ անկտարի գործածությունը¹⁵:

¹⁴ Տե՛ս նույն տեղում:

¹⁵ Տե՛ս նույն տեղում:

Գ. Ջահուկյանն իր դասակարգման աղյուսակներում¹⁶ ձևաբանական ու շարահյուսական հետևյալ հատկանիշները բացառում է Տավորիկ-Մոտկանի բարբառում՝ 1) գոյականների հոգնակի թվում **-ի** հոլովման պատկանելը, 2) ներքին թեքման հոլովումների արտաքին թեքման ենթարկելը, 3) գործիական հոլովում **ով**-ից տարբեր, այդ թվում հնչյունական տարբերություններ ունեցող տարբերակների գոյություն, 4) ձևաշատ բացառական հոլովի տարբերակներում **մ**-ի առկայություն, 5) ներգոյական հոլովի **ում** մասնիկի առկայություն, 6) հատկացուցչի հոդառությունը, 7) անձի և իրի առումների տարբերակումը (անձի առման դեպքում որոշյալ ուղիղ խնդիրը տրականաձև կազմություն ունի), 8) շարունակական ժամանակաձևի իմաստ արտահայտող մասնիկները, 9) **ում**-ով և **լիս**-ով ներկա և անցյալ անկատար, 10) օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի **ա**-ով ձև, 11) անորոշ դերբայով և **-լից** տիպով ապամիության արտահայտում՝ **գրելոց եմ** և այլն, 12) **պիտի** եղանակիչի աղված ձև՝ **պի, պ, բի, բ**, 13) անցյալ կատարյալում **ե** լծորդության բայերի համար կրավորաձև վերջավորությունների առկայություն, 14) ժխտական բաղադրյալ ձևերի կրկնադիմության բացակայություն՝ **չեմ գրեր եմ** և այլն, 15) ժխտական մասնիկների (**մի, ոչ**) ետադաս գործածություն և այլն:

Տավորիկ-Մոտկանի բարբառի բառապաշարը ներկայանում է ընդհանուրհայերենյան, տարաբնույթ բաղադրյալ ու տարբեր լեզուներից կատարված փոխառյալ բառերով: Այս բարբառի բառապաշարի միջուկը կազմում են են տավորիկցիների ու մոտկանցիների կենսագործունեությունը վերարտադրող բառամիավորները, այսինքն՝ տարատեսակ արհեստներ, գյուղատնտեսության տարբեր ոլորտներ (խաշնարածություն, այգեգործություն ու զինեգործություն և այլն) բնութագրող բառամիավորները: Տավորիկ-Մոտկանի խոսվածքներում հանդիպել ենք այնպիսի բառհասկացությունների և բառամիավորների, որոնք հատուկ են միայն այս տարածքին, այն է՝ **սէլի** «որբ», **հէսրուտընօսլ** «դժվար», **իրգըման** «իրիկուն», **ուխալ** «կճուճ», **հօղվէրք** «այգողք», **միգան** «հիմա», **ժուժու** «ոգնի», **լան ցան** «կեռիկ», **ֆիդօ** «ֆիդայի» և այլն:

Տավորիկ-Մոտկանի բարբառը չի կարելի դասել վերջնականապես կորած ու անհետացած բարբառների թվին: Անցյալ դա-

¹⁶ Տե՛ս նույն տեղում:

րասկզբին Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած եղերական իրադարձությունների պատճառով ուսումնասիրվող բարբառի կրողները կորցրել են իրենց պատմական բուն հայրենիքն ու կենսավայրը: Այս հանգամանքը խախտել ու թուլացրել է բարբառի տարածական հիմքերը, սակայն չի չհանգեցրել բարբառի վերջնական վերացումն ու անհետացումը: Բարբառի գոյությունը շարունակվում է, այն կրող բազմաթիվ բարբառախոսներ հանգրվանել են Հայաստանի Հանրապետության տարբեր բնակավայրերում, և մինչև օրս շարունակում են կրել մայր բարբառը: Որպես եզրակացություն կարելի է նշել, որ այս հետազոտությամբ հնարավորինս վերականգնվում է տավրիկցիների ու մոտկանցիների՝ մինչ բուն եղեռնը՝ 1915 թվականը, ունեցած լեզվական պատկերը:

Սուղսսսսսն մատո*

Տավրիկ-Մոտկան (Նիչ)

Գեղնի-չեղնի մեզ թակավօր գեղնի. սսս թակա^ոօր մըչ ուր էրգրին խաբար գիղս. «Որ սնպես սուղ ասս, օր իս ասիմ սուղ ս, իմ թակա^ոօրուտյան կես կիղամ ընդրան»: Գիկս մի հօվիվ: Գսսսս.

– Թակա^ոօր արբած կենս, ըմ բաբ մի պիր ուներ, օր հիտէխեն գերգընծեր, մըչ էրգընկին աստիսեր գը խառնէր:

– Գեղնի,– գսսսս թակա^ոօր: – Ըմ ճօթօն լս մի խսլօն ուներ: Մեզ ծեր ուր պերան գըտըրէր, մնգէլ ծեր գերգընծէր, արեկակից գը վառէր գուր խալօն:

Սուղսսսսն գուր կըլուխ քերէլօլ տուրս գերտս: Գիկա մի տերծակ, գսսս.

– Ներօղուտոն, թակա^ոօր, իս թեզ բըղի կենք, ուշածէր իմ: Էրեզ շաղ անձըր^իէվ էգավ. Կիձագներ գսրգէծին, էրգինկ պաղըռվավ, կաց^իեր էնք կարգըղէլու:

* Տավրիկ-Մոտկանի բարբառի նկարագիրն ամբողջական լինելու համար «Սուտասանը» հեքիաթը ներկայացնում ենք ուսումնասիրվող բարբառի մի քանի խոսվածքներով:

– Հա, լավ իս էնիէ,– գայաց թակա՞նոր,– պայց լավ չըր կարգըդնէ.
իդայ առվեդուն մէ քիչ անձըրէվ թակալավ:

Իդայ լայ տուրս գերտայ:

Ներս գը մըդնի ախկատ կեդացի մը, կոդ ուր անթէ տագ:

– Տու ինչ ա գուզիս, այ մատտ,– գը հարծու թակա՞նոր:

– Ընծի մի կոդ օսկի իս պառտկ, էգեր իմ գը տանում:

– Մի կոդ օսկի՞,– գը գայրմանայ թակա՞նոր:

– Մուդ ա գասիս, քըզի օսկի պարտկ չիմ:

– Թը վօր սուդ ա գըսիմ, քու թակա՞նորուտյան կէս տուր:

– Չէ, չէ, օդորտ ա գայսիս,– իսօսկ գը փօխը թակա՞նոր:

– Օդորտ ա գայսիմ, գըմ մէգ կոդ օսկին տուր:

Մուդայան մատտ

Տավորիկ-Մոտկան (Մցու)

Կեդնի-չեդնի մի թակալօր գեդնի. մս թակա՞նոր մըչ ուր էրգըրի մէչ կը հայդընէ. «Որ մնալ սուդ մը ըսէ, օր յես ասեմ սուդ է, զիմ թակա՞նորուտյան կէս կիդամ ընդըրան»: Հօվիվ մը գիկն: Կայսէ.

– Թակա՞նոր արբաժ կէնա, իմ պաբ բիր մը ունէր, օր ըստեղից կը պարգեր, գերգընկի աստըդեր խառներ իրար:

– Կավդընամ,– կայսէ թակա՞նոր:– Իմ ճօթօն լէ մի չըբուխ ունէր. մի ծեր ուր բիերնին կըդըներ, գէն կը պարգեր արեվից գուր կալօն կը վառէր:

Մըդախօս գուր գըլուխ քերէլօվ դուրս կերտա: Թանրզի մէ գիկն: Կայսէ.

– Ներօդուտուն, թակա՞նոր, յես շուդ բըդի կէնք, ուշացա: Հայրեգ շադ անձըրիէվ էգավ. կէձագներ տըրակվան, հերգինկ պադըմվավ, գայցիեր էնք կարկըդնիէլու:

– Հա, լավ իս էնի՛է,– կայսի՛է թակա՞օր,– համա լավ չըս կարկըդնի՛երի. սս լուսմուս քիչ մէ անձըրե՛վ անձըրե՛վ թապը՛վալ:

սս լէ դուրս կէրտա:

Ներս գիկա մի խեղջ գեղացի, կօդ ուր անտէ տագ:

– Դու ինչ գուգի՛ես, այ մառտ,– կը հարցու թակա՞օր:

– Թակա՞օր ընծի՛ մի կօդ օսկի պարտկ իս, էգէր իմ տանէմ:

– Կօդ մը օսկի, – կը գանմանա թակա՞օր:

– Սուդ կայսես, յես քըզի օսկի պարտկ չիմ:

– Թայ օր սուդ ա կայսի՛էմ, քու թակա՞օրուտյան կէս տուր ընձի:

– Չէ, չէ, օղորտ կայսի՛ես,– գուր խօսկ կը փօխի՛է թակա՞օր:

– Ճիշդ ա կսսի՛էմ՝ զիմ մէ կ՞օդ օսկին տու:

Սուղբսան

Տալվորիկ-Սոսկան (Մրցանք)

Գեղնը-չէղնը՝ թըկը՛վօր մը գեղնը: Իդը թըկը՛վօր ուր էրգրին խաբար գէնը. «վըր օր ըմալ սուդ ըսը, օր յես ըսիմ՝ սուդ ը, իմ թակավօրուտան գէսըն գիդամ ուրին»: Կիկը հօվիլ մը: Գըսը.

– Թըկը՛վօր սախ մընը, ըմ բաբուն գօպալ մը գէր, օր օծկը կէրգընծուծէր, էրգընկի աստըղներ գը խառնէր իրարու:

– Գեղնը,– բադասխան գիդը թըկավօր: – Իմ ճօթօին լը խալօն մը գէր, օր մէգ ձէր պէրան կըտըրէր, մըգէլ ձէրըն գը հասուծէր արե՛վուծ գը բուժէր:

Սուղբսան ուր կըլուխ քէրէլէն տուս գէրտը: Կիկը շ՞օր գար՞օդ մը, Գըսը.

– Նէրօդուտուն, թըկը՛վօր, յես շուտ բէտկը իկէնկ՝ անկըծը: Էրէգ անձրի՛վ շաղ էգավ. գէձգընէր դըրական, էրգինկ բադոավ, կաձի՛եր էնկ փինէնկ:

– Հա, լավ իս էնի՛եր իս,– գըսը թըկը՛վօր,– պըլը ագէգ չըր փինը: Լուսուն փըշումը անձրի՛վ թապավ:

Իդը լը տուս գէրտը:

Ներս գը մըղնը ախկաղ կէղաձի մը՝ գօդ ուր ընտըդագ տըրուգ:

- Տու ինճ ը գուզիս, հայի,- գը հարծու թըկըվօր:
- Ընձի գօղ մը օսկի իս բարսկ,- էգէր իմ դանիմ:
- Կօղ մը օսկի՞,- գը գարմանը թըկըվօր:
- Մուղ ը գըսիս, յիէս քըզի օսկի բարսկ չիմ:
- Թը սուղ ը գըսիմ, քու թակավօրուտյան գէսըն դուր ընձի:
- Չէ, չէ, օղօրս ը գըսիս,- ուր խօսկ գը փօխը թըկըվօր:
- Օղօրս ը գըսիմ՝ գօղ մը օսկին դուր:

Մուտ ըսսող

Տավորիկ-Մոսկան (Կոռ)

Կէղնի, չէղնի թըքըվ՞օր մէ գէղնի: Իդա թըքըվ՞օր ուր էրգըրի մէչ գը հայդընէ. «Կը ը էմալ սուտ էնէ, ՞օր յիէս ըսսիմ սուտ է, իմ թըքըվ՞օրի կէս կիդամ ուրին»

Սարուց գիկա մէ հօվիվ: Գըսսէ.

- Թըքըվ՞օր ապրած կէնա, իմ պաբ պիր մէ ունէր, ՞օր օղի պառցըրցէր, աստըղնիէր էրգընքին գը ճըվվըլէն:

- Կը քըսի,- գըսսէ թըքըվ՞օր: - իմ ճօթօն չըբուխ մէ ունէր. Մէգ ձէր գըսըրէր ուր պէրան, մէգ լէ արիէվուց գըվառէր:

Մուտ ըսսող ուր կըլուխ քէրէլօվ տուրս գիկա:

Գիկա մէ թաուլի: Գըսսէ.

- Նէրօղուտիէն, թըքըվ՞օր, յիէս շուղ գիկէնք, հէղըցա: Էրէգ շաղ անձրիէվ էգավ. կիէձագնիէր պայտան, էրգինք պադըռավ, կացէր էնք գէրգինք փինէնք:

- Հա, աղէգ իս էնի,- գըսսէ թըքըվ՞օր, հըմը աղէգ շլ՞օր փինէ, ըսսօր առվէդուն քիչ մէ անձվիէր էգավ:

Իդա լէ տուրս գէրտա:

Նիէրս գը մըղնի մէ քըսիբ կիէղացի, չապ լէ ուր անտէտագ:

- Տուն ի նչ է գուզիս, այ մարտ,- գը հարցու թըքըվ՞օր:

- Տուն չապ մէ օսկի իս ընձի պառտք, էգիէր իմ տանում:

- Չապ մէ օսկի՞,- գը գարմանա թըքըվ՞օր:

- Մուտ է գը ըսսիս, յիէս քըզի օսկի տալլիբ չիմ:

- Թը օր սուտ գըսսիմ, ըգթըքըվ՞օրի կիէս տուր:

- Չէ, չէ, օղ՞օրս է գըսսիս,- խօսք գը փօխէ թըքըվ՞օր:

- Օղ՞օրս է գըսսիմ՝ զիմ չապ օսկին տուր:

Նորայր Պողոսյան
(Երևանի պետական համալսարան)

ԿՈՐՄՎԱԾ ԱՐԵՎՍՏԱՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ ՀՈՒՇԱԳՐԱԿԱՆ ԵՐԿԵՐԻՑ

Իրենց բնօրրանից տարագրված արևմտահայ բազմաթիվ մտավորականներ 20-րդ դարի կեսերին, անկասելի մի մղումով լծվեցին հայրենի բնակավայրի, տարածքի, գավառի մասին հուշագրական երկեր ստեղծելու գործին:

Հուշագրական այս գրքերի թռուցիկ հայացքն իսկ ի ցույց է դնում հեղինակների մի զգացողությունը, որ պարունակում է մորմոքի, կարոտի, գորովանքի, կորստյան ցավի, վերադարձի անհնարության միախառն արտահայտություններ: Այդ երկերն անբաժան են ինքնակենսագրական տարրերից, յուրաքանչյուր հեղինակ իր ու ընտանիքի գլխով անցած դառնությունների, բռնությունների, տարագրության ու մահերի միջոցով նկարագրում է մի ողջ ժողովրդի ճակատագիրը: Անհատների նման պատմություններից է գոյանում 20-րդ դարի սկզբի մեր ժողովրդի հավաքական պատմությունը: Եվ հավաքական այդ պատմության բաղադրիչները լիապես գտնում ենք այս երկերում:

Նման խտացված մի դրվագ միայն հիշատակենք: Արաբկիրցի Ս.Բախտիկյանն իր բնակավայրին նվիրված գիրքն սկսում է «Քեզի» վերնագրված խոսքով, ուր համառոտ, բայց խիստ տարողունակ նկարագրում է իր տատի՝ Էննեի շնորհիվ եղեռնից իր մազապուրծ լինելու դրվագը. «Հակառակ քու ութսուն տարիներու բեռին՝ զիս շալակեցիր Արաբկիրեն մինչև Մալաթիա, մինչև Ֆրընձիլեր ամբողջ երեք ամիս քալելով, ուր մահն ու մարդը դեմ դիմաց մէկտեղ գտանք: ...Ոճրագործ գազանները մարդակերպ գաղթականներուն մէջ ինկած արական կը փնտռէին, երեխայ արականները, որովհետև տարեցները մեզմէ քիչ մ'անդին քարայրի մը մէջ գլխատուած կը քնանային իրենց յաւիտենական քունը շաբաթէ մը ի վեր: Ես ալ արական էի հագիւ հինգ տարեկան և դատապարտված մահուա՛ն, բայց դո՛ւն զիս քղանցքիդ տակ առիր, չի շարժեցար հակառակ թիկունքիդ ստացած

հարուստներուն ու զիս ազատեցիր այն սուիններէն, որոնց վրայ կը ճօճէին անմեղ մանուկները»¹:

Նեղինակները գրեթէ միշտ պարզաբանում են իրենց երկերը գրելու դրդապատճառները: Կարինապատում գրքում Ղազար-Չարըզը, օրինակ, գրում է. «Շատ հեռու է եւ աւերուած մեր ծննդավայրը, նահատակուած է մեր ժողովուրդը, մեռած են արդէն կամ մահուան դռները հասած այն մնացորդացը, որ տեսած է հայրենի երկիրը, ապրած ու գործած է հոն, իր մէջ ունի տակաւին անոր շունչն ու ոգին: Բայց հակառակ այս դժուարութիւններուն, խղճի պարտք մըն էր եւ հայ կեանքի համար անհրաժեշտութիւն մը՝ խլել հայրենի յուշերն ու յիշատակները ժամանակի երախէն, **կազմել գրատր թանգարան մը, պանթէոն մը, զայն կտակելու համար յաջորդական սերունդներուն**»²: Այս ծրագիրն ընդհանուր է բոլոր հուշագրական երկերի համար: Դրանք պարունակում են գրավոր մշակույթի հնարավոր բոլոր դրսևորումների մասին հույժ կարևոր տվյալներ:

Հուշագրական երկերը, ունենալով սկզբնաղբյուրի արժեք, միաժամանակ հսկա նյութ են ամբարում մեր կորսված բարբառների բոլոր դրսևորումների ու լեզվական մակարդակների մասին: Դրանց մի մասը, ի դեպ, գիտական հանրությանը դեռևս անհայտ է:

Ներկա հրապարակմամբ փորձել ենք ընդհանուր գծերով ներկայացնել հետեղեռնյան շրջանում ստեղծված հուշագրական երկերի բարբառագիտական նպաստը:

* * *

Հուշագրական երկերը խիստ արժեքավոր տվյալներ են պարունակում բարբառների հնչյունական համակարգերի, քերականական կառուցվածքի, բառապաշարի այս կամ այն իրողության վերաբերյալ, թեև դրանց մի մասը ճշգրտման կարիք ունի այն իմաստով, որ հեղինակները հաճախ լեզվաբանական անհրաժեշտ հիմնություններ չեն ունեցել, կամ բարբառի մասին տվյալների գրանցումը եղել է 40-50 տարի անց, կամ այդ տվյալները գրառել են միջնորդավորված կերպով: Այդուհանդերձ հուշագրություններում բարբառների մասին

¹ **Ս.Ա.Բախտիկեան**, *Արարկիր և շրջակայի գիւղերը (պատմական, ազգագրական համառոտ տեսութիւն)*, Պէյրուօ, 1934, էջ 7:

² **Ղազար-Չարըզ**, *Յուշամատեն Բարձր Հայքի. Կարինապատում*, Պէյրուօ, 1957, էջ 6:

պահպանված նյութը՝ իր եզակի նմուշներով, գիտական մեծ արժեք է ներկայացնում, որը կփորձենք ցույց տալ մի շարք օրինակներով:

Սարգիս Գ.Փաշաճեանը Ռոդոսթոյին նվիրված մենագրության առանձին բաժնում՝ «Ռոտոսթոցիներու լեզուն, բառերը, տօներն ու սովորութիւնները», համառոտ, բայց ուշագրավ դիտարկումներ է անում տեղի բարբառի հնչյունական, քերականական և բառային շերտերի մասին՝ նշելով. «Առանց փորձելու լեզուագիտական հարցերու մէջ մտնել, պիտի ուզէինք ընթերցողին մասամբ մը միայն ծանօթացնել ռոտոսթոցիներու բարբառին ամէնէն յատկանշական գիծերուն»³ : Հնչյունական հատկանիշներից հիշատակում է, օրինակ, *ը>լ* փոփոխությունը՝ *կորրիլ, կյրել*, ն-ից հետո բառավերջում *ը>եր* ծանրը, *մաներ*, երկար բաղաձայնների առկայությունը՝ *վազզեց, շիտտակ* և այլն: Քերականական հատկանիշներից ուշագրավ են անկատարի հոգնակի առաջին դեմքում գրաբարակերպ կազմությունը՝ *կը վազէանք, կը քալէանք, կը կոտրէանք, ես* դերանունն ուղիղ խնդրի պաշտոնում ուղղականաձև գործածելը՝ «*Ես փնտռեր են*», փոխանակ ասելու «*Ձիս փնտռեր են*», նաև «*Ես կանչեցին*», «*Ես ուզեր ես*» և այլն:

Հաճընի բարբառի մասին տվյալներ հաղորդելիս Հ.Պողոսյանը բայի խոնարհման համար մասնավորապես նշում է ապառնիի *պի* մասնիկով կազմությունը՝ *պի հագնիմ, պի հագնիս*, ներկա ապառնիի ձև ունենալը, որ կազմվում է *էյ* մասնիկով՝ *կ'ուզիէմ էյ հագնի, կ'ուզիէս էյ հագնի, կ'ուէ' էյ հագնի* և այլն⁴:

Լևոն Սրապյանը բազմաթիվ տվյալներ է հաղորդում Քդիի խոսվածքի մասին, որոնք հաճախ տարբերվում են մայր Կարնո բարբառից: Ըստ «Քդի» տեղագրական-ազգագրական աշխատության⁵ բարբառային նյութի՝ այս խոսվածքում *ը*-ն ձայնավորից կամ *տ*-ից հետո դառնում է *յ*, օրինակ՝ *հարս-հայս, սանտր-սայր, բարձ-բայձ, մարդ-մայր, Պետրոս-Պեյոս, կտրել-կյել*: Ոյ երկբարբառը վերածվել է *ո* պարզ ձայնավորի՝ *ըյս-ըոս, բոյս-բոս* և այլն: Հոգնակին *-ի*-ով վերջացող բառերի դեպքում կազմվում է *-ստան* մասնիկով՝ *ջորիստան, էգիստան*,

³ Ս.Գ.Փաշաճեան, *Յուշամատենան Ռոտոսթոյի հայերուն* (1606-1922), Պէյրութ, 1971, էջ 235:

⁴ Տե՛ս Բ.Պ.Պողոսեան, *Հաճընի ընդհանուր պատմությունը եւ շրջակայ Գօզան-տաղի հայ գիւղերը*, Lou Անճէրս, 1942, էջ 297-336:

⁵ Տե՛ս Լևոն Սրապեան, *Քդի* (տեղագրական եւ ազգագրական), Անթիլիաս, 1960, էջ 70-72 «Գասապայի (Քդիի) գաւառաբարբառը»:

օսկիստան: Բառասկզբում կամ բառամիջում է ունեցող միավանկ բառերի հոգնակին կազմվում է *-ան* մասնիկով՝ *էշ-իշան, գէշ-գիշան, տէր-տիրան*: Անձ ցույց տվող գոյականներն ու դերանունները ստանում են *մինէ* մասնիկը՝ *աղբօրս մինէ, պապուս մինէ, քուրոջս մինէ*: *Կեկ* և *կակ* մասնիկները դրվում են ածականի վրա «իմաստը չափաորելու համար»՝ *կարճկեկ, մեծկակ*: *Ընակ* մասնիկը հոմանիշ է *-ական* ածանցին՝ *կնիկ-կնկրնակ, ճիժ-ճկկրնակ*: Հազարավոր են, ըստ հեղինակի, «ձայն արտայայտող» բառերը, բնաձայնություններն ու նրանցից կազմված բառերը, օրինակ՝ *լիւրտտալ, ճթըրտտալ, նոնտալ, վզըրտտալ, վժըրդալ, փթըրտտալ* և այլն: Սրանց գոյականները կազմվում են սովորական *-ոց*-ի փոխարեն *-իչ* մասնիկով՝ *կըմկըմիչ* (կմկմոց), *ճըզոտիչ, փըթոդիչ*: Կան այս բարբառի միջնորդությամբ թուրքերենին անցած հայերեն բառեր՝ *էյիշ-ակիշ, փէթէկ-փեթակ, փէրկէտէնք*-բարեկենդան:

Բենիամին Ժամկոչյանի հուշագրությունը նվիրված է Հայնիին⁶, որտեղ (էջ 100-105) հեղինակը, որպես բարբառակիր, տալիս է հնչյունական կողմի համառոտ նկարագիրը, օրինակ *ը>է՝ կ՛ըսեմ-կէսիմ, ո>ու՛ ձոր-ձուր, հ>խ՛ հող-խուղ* և այլն: Քերականությունից հիշատակելի է բացառականի *-ա, -ու* մասնիկներով կազմությունը, ապառնիի *մըն* մասնիկով կազմությունը՝ *մըն ի գամ, մըն ի տաս* և այլն:

«Խարբերդի հայեվարը» անվամբ գլխում Խարբերդի բարբառի մասին է խոսում Վահե Հայկն իր «Խարբերդ և անոր ոսկեղէն դաշտը» գրքում⁷ (էջ 1366-1374): Նշվում է, որ խոսվածքին տեղացիները «*հայեվար*» բնորոշումն էին տալիս. «Խարբերդի բարբառը կը պատկանի պոլսական երակին», որից բերում է հնչյունական, բառակազմական ու քիչ թվով նաև քերականական ձևեր, որոնք հատուկ են Խարբերդին, ինչպես՝ *-տուն* մասնիկի տարածվածությունը՝ *կարմրտուն* «կարմրած», *պճլտուն* «փայլ ունեցող», բառաձևերից՝ *հանդէ* «հոն», *հանսէ* «հոս»: Անկատար ներկայի հոգնակի առաջին դեմքը խնարհվում է *կը գրէանք, կը մեռնէանք* ձևով, նույն ժամանակաձևի

⁶ Տե՛ս **Բ. Կ. Ժամկոչյան**, *Հայնի* (տեղագրական, ազգագրական, պատմագրական), Պէրոս, 1951, էջ 100-105:

⁷ Տե՛ս **Վահէ Հայկ**, *Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը. Յուշամատենան ազգային-պատմական-մշակութային եւ ազգագրական*, Նիւ Եորք, 1957, էջ 1366-1374:

կրավորականը՝ *կը գրուէանք*, նույնն է նաև ապառնիի դեպքում՝ *պիտի գրէանք* և այլն:

* * *

Քերականական, հնչյունական տվյալներից է՛լ ավելի ստվար է հուշագրություններում պահպանված **բառապաշարային նյութը**: Հարյուրավոր (կամ գուցե հազարավոր) բարբառային եզակի բառեր, բառաձևեր ու դարձվածքներ կարելի է գտնել նրանցում, որոնց մեծ մասն ուղղակի քարտագրված չէ: Մեր հրապարակման վերջում՝ «Հավելվածում», ընթերցողը կարող է գտնել նման բառերի մի փունջ: Այստեղ միայն նշենք, որ այդ բառերի մի զգալի հատված տեղ չի գտել «Հայոց լեզվի բարբառային բառարանում» (ՀԼԲԲ) կամ ներկայացվում են հայտնի բառերի իմաստափոխված ուրույն տարբերակներ:

Բարբառային բառերին նվիրված մի անտիպ ամբողջական բառարան է «Քղիի բարբառի բառարանը»: Հեղինակն է Տիրայր արք. Տեր-Հովհաննիսյանը: Այն պահպանվել է Երևանի Արվեստի և գրականության թանգարանում ձեռագիր վիճակում: Պարունակում է 1024 բառային միավոր՝ բացատրություններով, հոմանիշներով, որոնց մեծ մասը հանդիպում է միայն Տիրայր արք.-ի բառարանում, օրինակ՝ *զլզլուկ, գլիկ, հարանիկ, լալգուշտել* և այլն:

* * *

Հուշագրություններում առկա լեզվական մի զգալի շերտ վերաբերում է մեր տեղանուններին և հատկապես մանրատեղանուններին: Մ.Բախտիկյանն, օրինակ՝ բերում է Աղինի գյուղախմբի (Արաբկիրում) 20 գյուղերի մեջ զուտ թրքաբնակ այն գյուղերը, որոնք ունեն զուտ հայերեն անուններ՝ *Անդրի, Հաստէք* (Հաց-տաք), *Ջրին Բաղնիք, Խոզաղբյուր, Գողբնիկ, Հերենիկ* (Հերանիկ), *Էքրէք* (Ագարակ) և այլն: Նշված գյուղերը, հնարավոր է, նախկինում հայաբնակ են եղել և պարպվել են հայերից, կամ՝ հավատափոխ եղած հայեր են բնակվելիս եղել, որոնք շարունակել են կրել բնիկ հայ անվանումներ և ներկայացնել տարածքի բնիկներին: Լեզվաբանական թևավոր խոսքին համահունչ՝ «**Տեղանունները հողի լեզուն են**» (Ա.Նիկոնով):

Քղիի տարածաշրջանի բնակավայրերից (360 գյուղեր զուտ հայաբնակ են եղել) էին՝ *Տարման, Խուփս, Ծերմակ, Առեգ, Հագստուն, Օրօր, Քերպոչ, Սեմկելըիկ, Չան, Չանախչի, Հերտիֆ, Չումախ, խառն բնակչությամբ՝ Սեղանք, Աստղղբերդ, Ճպրոզեղ, Սագաձոր, Օսնակ* և այլն:

Մանրատեղանունների հսկայական քանակություն կարելի է քաղել բացառապես հուշագրություններից: Օրինակ Կարնո շրջակա գյուղերի մանրատեղանուններից՝ *Միանծում*, *Շուշանքար*, *Օուվառ*, *Օրդնուկձոր*, *Սեյտընդիր*, *Կարուն*, *Քարանձոր* (կամ Քարականձոր), *Մառատակ* (մի քանի բարբառներով՝ սառատ «խոշոր անցքերով մաղ», սառատ-ակ) և այլն, որոնք շատ դեպքերում ուրույն կազմություններ են և այլ աղբյուրներում չեն հանդիպում:

Այդ տեղանունների մի մասը բացակայում է հայերենի տեղանունների բառարաններից, այդ թվում՝ «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանից»⁸, քանի որ բառարանի հեղինակները Սփյուռքում տպագրված մի շարք աշխատություններ ուղղակի չեն ներառել իրենց քննության, քարտագրման շրջանակի մեջ: Մեզ մոտ առկա է նման մոտ 120 աշխատության ցանկ, որոնք լրացուցիչ քարտագրման կարիք ունեն հենց թեկուզ միայն Արևմտյան Հայաստանի կորսված տեղանունները պարզելու, քննելու տեսակետից:

* * *

Հուշագրությունների հեղինակներն իրենց խոսվածքով ներկայացնում են առածներ, ասացվածքներ, դարձվածքներ, զրույցներ և ժողովրդական բանահյուսության այլ դրվագներ: Այդպիսով հուշագրական երկերը նաև ազգագրության և բանահյուսության շտեմարաններ են: Ս.Բախտիկյանն Արաբկիրին նվիրված գրքում բերում է առածներ, օրհնություններ, անեծքներ՝ տեղի բարբառով⁹: Դրանք գուցե և չեն բավարարում մերօրյա գիտական տառադարձության խիստ պահանջներին, սակայն բավականաչափ նյութ են մատուցում բարբառները հետազոտողներին: «Ինձի քէլ ըսողին գոնէ գլուխը մազ ըլլէր նէ», «Խրատ տուրող շատ կ'իլի, ըմմա հաց տուրող քիչ», (ենթակայական դերբայը կազմվում է հրամայականի հիմքից), «Հացն ալ խսին կերէ է» (անցյալ դերբայ առանց –լ վերջնամասնիկի), «Ձուրը կուգայ կ'աղակու, խենթը կ'ուտէ խաղակու» (կու մասնիկի միաժամանակ նախադաս և հետադաս կիրառություն) և այլն:

⁸ Տե՛ս Թ.Հակոբյան, Ստ.Մելիք-Բաշկյան, Հ.Ֆարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հտ. 1-5, Եր., 1986-2002:

⁹ Տե՛ս Ս.Ա.Բախտիկեան, նշվ. աշխ., էջ 72-77:

Հայոց ցեղասպանության աննկարագրելի մարդկային, նյութական, մշակութային, հոգևոր կորուստների թվում պետք է թվարկել նաև լեզվական կորուստը: Մենք կորցրել ենք լեզվական հսկա մի շերտ, բնիկ հայերի լեզուն՝ բարբառային, տեղանվանական, բանահյուսական և այլ դրսևորումներով: Կարծում ենք անառարկելի է, որ այդ հարցը միջազգային իրավունքի տեսակետից պետք է մշտապես ներառվի հայոց ցեղասպանությանը վերաբերող փաստաթղթերում, գիտական ուսումնասիրություններում և այլ նյութերում:

Հավելված

Բարբառային բառեր հուշագրական երկերից¹⁰

Աբաղու, *ՀՃ*. արեղա

Ագիլ, *Հյն*. անդրադառնալ, հասկանալ

Ախաս, *Սս*. աղուհաց

Աղբուխ, *ՀՃ*. ծանրութիւն, բեռ

Աղջըկնութիւն, *Կր*. կուսութիւն

Անգապար, *Հյն*. ոստայն

Անեկան, *Կր*. շատ արդիւնք տուող ալիւր

Անիբոն, *Սիս*. անօրէն

Անկըճկըլէ, *Քղի*. պռատիկ (բարի լուր բերողին տրվելիք ընծա)

Անպարպընալի, *ԹՎգ*. անսպառ, անհատնում

Աշխփուկ, *Արբ*. տղայոց խաղ, որուն մէջ մէկուն աչքը կը գոցեն

Առաւելիկ, *ԹՎգ*. արեւածաղիկ

Արատամ, *Կր*. խոփին միացած փայտէ մասը

Բալլի, *Արբ*. բանալի, յոգնակի՝ բալլիստաններ

Բարքփոխ, *Կր*. յի կին (ՀԼԲԲ ունի բարփոխ)

Բերքիբ, *Սս*. մանր հատիկով խաղող

Բզղնտիլ, *Արբ*. հագուստին վրայ՝ մաշած, թել-թել եղած մաս (ՀԼԲԲ այլ իմաստ)

Բրբզնտիլ, *Քղի*. խիստ զայրանալ

Բրեշակ, *Քղի*. աներակ տուն

Գըլտիկ, *Կր*. մոծիբով շինուած վառելիք գունդ

Գլուկ, *Նրբ*. գնդակ ընկուզի մեծութեամբ, խաղի մէջ գործածելի

¹⁰ Բարբառային բառերի բացատրությունները բացառապես տրված են ըստ հուշագրությունների հեղինակների:

Գոթոտ, *Ռ.* գէր
Գուրգուրթան, *Հյն.* շատախօս
Գուտ, *ՀՃ.* գտնել բայի հրամայականը, գտի՛ր
Դղիկ, *Արբ.* պէս, նման, «կի՛նէ հացին դղիկը մի դառնուցներ»
Դոտոխ, *Կր.* փոքրերու ոտքեր, մորթուած անասունի ոտքեր
Դոր, *Արբ.* ուղիղ, շիտակ, «դորը խօսեց, դոր դիր» (ՀԼԲԲ այլ իմաստ)
Ընտալ, *Ռ.* ապուշիկ
Ընքապոպ, *Սս.* կնքապապ
Թագուկ, *Հյն.* հագուստներու վրայ բանուած զարդ
Թակոլ, *ՀՃ.* խոշոր կար
Թնտրխուփ, *Կր.* թոնիրի ծածկոց, երկածէ գործիք
Թոնկոլիլ, *Ռ.* զլտորիլ
Ժամժար, *Թմգ.* եկեղեցասէր
Իշնաւոր, *Սս.* շնորհաւոր
Լայոիլ, *ՀՃ.* լարուիլ նստիլ, քէն քշել
Խէլխէլ, *ՀՃ.* յարդ լեցնելու տոպրակ
Խօսքմոուկ, *Խրբ.* խօսք մտիկ ընող, հնազանդ տղայ
Օէ՛, *Ռ.* մարդ կամ տղայ կանչելու կոչական մասնիկ
Օեգեկ, *Կր.* յանկարծ մեջտեղ ելլել, ծագիր
Օին, *Ռ.* մանր ձաւար
Կաթոռս, *Սս.* կաթողիկոս
Կադտնակ, *Խրբ.* գլխուն ճակտէն վեր գտնուող մասը (ՀԼԲԲ այլ իմաստ)
Կըլծոն, *ՀՃ.* կրծան, կաշառք
Կոքիլ, *Արբ.* կքիլ, «տեները կոքեր է»
Կպլիլ, *Արբ.* անուշեղէն ուտելէն յագենալ
Կտավոց, *Արբ.* վառուած լաթ, վառած լաթի հոտ
Հօրարսակ, *Խրբ.* կէսօրէ ետք, ուշ
Չաձուրիկ, *Ռ.* շուտ վախցող
Չանուձուն, *ՀՃ.* ծանուցում (եկեղեցոյ մէջ)
Ճըկճըկքան, *Արբ.* մաքուր, կահաւորուած սենեակ
Մաստոռայ, *Արբ.* դէրտէկին վրայ լեցուած թէլ
Մեխոռ, *Կր.* գինեմոլ
Մեռոլ, *Ռ.* մեղր
Յումմի, *Արբ.* միասիտ, «յումմի կնիկ»
Յուտուտիկ, *Արբ.* խօսք տանող բերող

Նոյ, ՀՃ. ըլլալ
 Պառայոթ, ՀՃ. ախորժակ
 Պառօշ, Արբ. լայն բերանով պղինձէ խորունկ աման
 Պիտիի, Սու. պիտանի
 Պիտիկ, ԹՎգ. փոքր
 Պլանողակ, Ռ. աման լուալու լաթ
 Պլըի, Արբ. հասուն պտուղ
 Պկկալ, Արբ. վերքի ցաւ, «եարաս պկկանը»
 Պուլպատիկ, Կր. թաթխուած
 Սլուրուկ, Արբ. սրածայր (ՀԼԲԲ սուլուլիկ, սուրուրիկ... նույն նշ.)
 Սլվուրուկ, Արբ. ողորկ մարմին
 Սոսոլ, Ռ. հաւկթաձէւ -օ-
 Սրուկ, ԹՎգ. սահուն, ողորկ, լպրծուն (ՀԼԲԲ սրուկ, սրոգ «փոքր-ինչ սուր»)
 Սուրջալ, Սու. շուրջառ և այլն:
 Տըլղըծուն, Կր. խառնակ
 Տուցանք, Կր. այլանդակ
 Ուննոլ, ՀՃ. ունենալ
 Փիանից, Կր. անառակ
 Քիլեր, Արբ. մառան, cellar (ՀԼԲԲ քիլար «տան մեջ բաժանմունք, որտեղ պահում են կենսամթերքը», պարսկ. kilar>տաճկ. բառից)
 Քուռնիթ, Կր. ածան հաւի հաւկթասերմերը
 Օթուրակ, Սու. աթոռակ
 Օտից, Արբ. ոտնաման, կօշիկ
 Օրսակ, Արբ. կէսօր

Քարբաների համառոտագրություններ

Արբ. – Արաբկիր
 Խրբ. – Խարբերդ
 Հյն. – Հայնի
 ԹՎգ. – Թումարգա
 Կր. – Կարին
 ՀՃ. – Հաճրն
 Ռ. – Ռոտոսթո

